



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ԴՕԿ. Ս. ԹԱՐԱՎԵԼԻ

ԲԱՆԱՏԵՂ-ԻԴԵԱԼԻՍ

ԾԻԼՀԵՐ

II.

1903



83.092 շիլլեր

թ-25

46

ԲԱՆԱՏԵՂՄ - ԻԴԵԱԼԻՍ



# Ա Շ Ի Լ Լ Ե Բ

(Schiller)

ՊԱՏԿԵՐԱԳԱՐԴ



ՀՅՈՒԱՀԻԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԱՐԻԹՈՎԱՀՅ

ԳՐԵՑ


ԴՕԿ. ՓԻԼ. Ս. ԹԱՐԱՎԵԱՆՑ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏՈՎ» ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

1903

2003



XII.

Յուլիսի 21-ին մտաւ Շիլէրը Վեյմար և իշխանով հիւրանոցում՝ շուտով տեղափոխւեց մի մասնաւոր բնակարան։ Ամեն բանից առաջ զնաց Շիլէրը բարեկամուհուն տեսնելու։ Շարլօտան արդէն մի քանի շարաթ շարունակ սպասում էր և հոգեկան սաստիկ յուղմունքից յոգնել, թուլացել, նիշարել էր։ Երբ Շիլէրը յանկարծ ներս մտաւ, խեղճ կինը բոլորովին շփոթւեց. ուրախութիւնը, վիշտը, կարօտը, գաղտնի սէրը բոլորը միմեանց խառնւելով, ընկճեցին նրան և նա զիտէր, թէ ինչպէս թաղցնէ իւր տրամադրութիւնը, կամ ինչպէս արտայայտէ իւր սէրը։ Ինքը բանաստեղծն էլ սաստիկ յուղւեց. չէ որ նրա սիրար քար չէր։ Միւս օրը, որ կիրակի էր, Շարլօտան չթողեց Շիլէրին հեռանալ իւր մօտից. զոնէ մի օր կամենում էր նա սփոփել իւր տանջւած սիրար, երկու տարի չտեսնելուց յետոյ զոնէ մի օր խօսակցել նրա հետ։ Բանաստեղծը իւր կողմից զմայլած, հիացած էր նրանով, ուստի որքան էլ կամենում էր լոռութիւն պահել այդ մասին, դարձեալ չէր կարողանում։ «Շարլօտան մի արտաքոյ կարդի էակ է—զրեց նա Կէրնէրին—նա ինձ համար ուսումնասիրութեան մի ընտիր նիւթ է, մի գեղեցիկ երեսթ, որը ինձանից աւելի մեծ հոգիներին կարող է բաւականաչափ սնունդ տալ։ Որքան աւելի մոերմանում է մեր յարաբերութիւնը, այնքան աւելի գեղեցիութիւններ եմ դանում ես նրա հոգոյ մէջ, որոնք ինձ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 12 Сентября 1902 года.




„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ 4.

4310  
41

հիացնում ու զմայլեցնում են, որպէս բնութեան դեղեցիկ տեսարանի գեղեցկագոյն արտայայտութիւնները»:

Ապա սկսեց Շիլէրը ծանօթանալ Վէյմարի կարեռ ներկայացուցիչների հետ: Եւ այդ ծանօթութիւնների համար անհրաժեշտ ցուցմունքներն ու խորհուրդները Շարլոտան էր տալիս: Նախ և յառաջ այցելեց Շիլէրը ծերունի բանաստեղծ Վիլանդին, որը ընդունեց նրան ամենայն սիրով: «Մենք պի-



Վէյմար:

աի փոքր առ փոքր բարեկամանանք — ասաց Վիլանդը — մենք կաշխատենք ժամանակ տալ մեզ, միմեանց հետ մտերմանալու համար»: Ուրեմն ծերունի բանաստեղծը լուրջ կերպով էր նայում բարեկամական յարաբերութեան վրա: Նա այն մարդկանցից չէր, որոնք հենց առաջն պատահումից միմեանց վզովն են ընկնում, և յետոյ շուտով սկսում են միմեանց ուաքի տակը բանդել: Վիլանդը կամենում էր, որ չափաւորից սկսելով, հետզետէ ամրապնդէր իւր և երիտասարդ բանաստեղծի յարաբերութիւնը: Յետոյ այցելեց Շիլէրը յայտնի հրապարակախօս

և քննադատ Հերդէրին, որը Գէօտէի նախկին ուսուցիչը և ներկայ պաշտողն էր: Նա յայտնի էր մանաւանդ հրէական բանաստեղծութեան մասին զրած աշխատութեամբ և պատմութեան փիլիսօփայութեան առաջին հատորով: Հերդէրի խօսակյութիւնը լաւ տպաւորութիւն արաւ. նա խօսում էր տրամաբանօրէն և մեծ աշխոյժով: Մանաւանդ սուր մտքեր էր յայտնում սիրոյ և ատելութեան մասին: Ինքը Հերդէրը երկու որոշ զգացմունք ունէր. սիրել և ատել միջին դրութիւն չէր հասկանում նա: Գէօտէին, ինչպէս ասացինք, սիրում էր նա, իսկ օրինակ Վիւրտէմբերգի գքսին ատելով ատում էր: Շիլէրի հետ Հերդէրը երկար խօսեց զանազան փիլիսօփայական և քաղաքական ինդիրների մասին, Վէյմարի և Գէօտէի մասին, յիշեցին Շուբարտին, որին նոր էին դուրս բերել բանտից, այն էլ միանդամայն ընկճաւած ու փոխւած: Ի վերջոյ Հերդէրը ինդրեց բանաստեղծին յաճախ այցելել իրան:

Որպէս Շիլէրն էր հետաքրքրում հասակաւոր զրողներով, նոյնպէս էլ Շիլէրով հետաքրքրում էին նրանից աւելի երիտասարդ զրողները: Մի օր երբ Շիլէրը կամենում էր դուրս գալ տանից, յանկարծ դուռը բացւեց և ներս մտաւ մի փոքրիկ երիտասարդ և յայտնեց, թէ կամենում է տեսնել Շիլէրին, «Դօն - Կարլոսի» հեղինակին և թէ ինքը նոյնպէս զրող է և կոչում է Վուլպիուս: Ուշաղրութեամբ նայեց նա մի ըոպէ բանաստեղծի վրա, իւր հետաքրքրութեան բաւականութիւն տւաւ և իսկոյն դուրս գնայ: Այդ երիտասարդը Գէօտէի կող էղբայրն էր:

Մի քանի օրից յետոյ գնաց Շիլէրը Վիլանդի հետ միասին ծիփուրտ, որը գտնուում էր Վէյմարի մօտակայքում, ուր հրաւիրել էր նրան մայր-գքսուհին: Բանաստեղծին ընդունեց գքսուհին շատ սիրալիք կերպով, առանց որ և ձևականութեան: Մի քանի օրից յետոյ կրկին հրաւիրւեց նա մայր-գքսու-

հու կազմած երեկոյթին, այս անգամ արդէն տիկին Շարլոտայի հետ միասին։ Վերջինս շարունակ խորհուրդներ էր տալիս Շիլլէրին, պալատական նիստ ու կացի մասին։ Շիլլէրը բաւական լու էր պահում իրան, միայն երբեմն սխալումէր։ Յիշեալ երեկոյթի ժամանակ, երբ դքսուհին Շիլլէրին հարցեր



Մայր - դքսուհի

էր առաջիս Շարլոտայի ներկայութեամբ, բանաստեղծը, պատասխանելու ժամանակնայումէր Շարլոտային, որով ի հարկէ մեղանչումէր ընդունւած կարգերի գեմ։ Այդ մասին յետոյ Շարլոտան նկատողութիւն արաւ Շիլլէրին, որը երբէք չէր վիրաւորւմ, երբ իրան մի նոր բան էին ասում։ Այսպէս արագութեամբ աճումէր Շիլլէրի ծանօթների թիւը Վեյմարում։

և նոյն իսկ Վեյմարից գուրս։ Շուտով առիթ ունեցաւ նա Շարլոտայի միջոցով ծանօթանալու տիկին Ռէյնհօլդի հետ։ Նարլոտան և Շիլլէրը ուղեկցեցին տիկինոց Ենա, որը հեռու չէ Վեյմարից, ուր բանաստեղծը ծանօթացաւ նրա ամսւնոյ, սլրօֆեսօր Ռէյնհօլդի հետ։ Ռէյնհօլդը փիլիսօփայութեան սլրօֆեսօր էր և այնպէս ոգեսորւած էր Կանտի փիլիսօփայութիւններով, որ հաւատայնում էր թէ ապագայում Կանտը պիտի Յիսուս-Քրիստոսի չափ հեղինակութիւն ունենայ։ Ռէյնհօլդի աղղեցութեան տակ Շիլլէրը մտքումը դրեց ծանօթանալ Կանտի դրւածքների հետ։ Ենայից վերադառնալով, Շիլլէրը հրաւիրւեց Գէօտէի տունը, մասնակցելու բանաստեղծի ծննդեան տօնախմբութեան։ Գէօտէն ինքը իտալիայում ճանապարհորդումէր, բայց նրա բարեկամները չկամեցան տօնը յետաձգել։ Շիլլէրն էլ ուրիշների հետ միասին խմեց բացակայ բանաստեղծի կենացը և այդպիսով հիմք դրեց իւր ամենակարևոր ծանօթութեան։

Օդափոխութիւնը աղղեց։ Նոր ծանօթութիւնների և տպաւորութիւնների աղղեցութիւնից Շիլլէրի արամազրութիւնը նորից վերականգնեց։ Եռանդը և աշխցժը նորոգեցին կրկնակի սյժով։ Նա հասկացաւ յառաջ դնալու գլխաւոր դաշտնիքը։ «Հաւատան ինձ — զրումէ նս Հուբէրին — մենք չափանց շատ միջոցներ ունենք, մինչև այժմ մենք չենք գիտակցել մեր հարստութիւնը։ Այդ հարստութիւնը — ժամանակն է։ Ժամանակի խելացի ու բարեխիղճ զործագրութիւնը շատ մեծ բան կարող է յառաջ բերել մեզանից։ Եւ որքան գեղեցիկ, որքան միիթարական է այն միաքը, որ միայն ժամանակի կանօնաւոր գործադրութեամբ, առանց կախւած լինելու արտաքին հանգամանքներից, կարող ենք ձեռք բերել կեանքի բոլոր բարիքները։ Ի՞նչ իրաւունքով կարող ենք մենք գանգաւուել մեր վիճակից կամ երկնքից, թէ նա մեզ աւելի պակաս է

նպաստել, քան ուրիշներին: Նա մեղ ժահանակ է շնորհել, կրնշանակէ մենք ամեն բան ունինք, եթէ միայն խելք և զօրեղ կամք ունենանք՝ այդ զրամագլուխը շահեցնելու»: Եւ իսկապէս Շիլէրը շուտով դադարեցրեց զանազան այցելութիւնները և սկսեց օրական տասն ժամ տանը նստած աշխատել: Միայն այցելումէր նա տիկին Շարլոտային: Շիլէրը կամենումէր իւր կեանքի ու դործունէութեան համար ամուր դրութիւն ստեղծել: Իէնչողդը հասկացրեց Շիլէրին, որ եթէ նա կամենայ պրօֆեսօրի պաշտօն ձեռք բերել Ենայի համալսարանում, ոչ մի արգելքի չի հանդիպի: Բայց Շիլէրը չէր ուզում այդպիսի մի կոչում ունենալ: Նա կամենում էր անկախ մնալ, եթէ միայն գրականական դործունէութիւնը բաւարար դրութիւն ստեղծէր նրա համար: «Այդ հարցը—զրումէ նա Կէրնէրին—պիտի մի տարւայ ընթացքում պարզէի, այսինքն ես պիտի իմանամ, թէ որքան արդիւնաւէտ կամ ապարդիւն է իմ զրիչը, և որքան յաջող կամ անյաջող է իմ բաղդը: Իսկ աւելի ուշ ժամանակների համար ես ի նկատի կունենամ փախուստի տեղ համալսարանական ասպարիզում»:

Բայց Շիլէրը շատ լաւ դիտեր, թէ ինչ է հարկաւոր կանօնաւոր զբաղմունքի և յառաջադիմութեան համար: Շնչառը արարածների աշխարհում մենակութիւնը անտանելի է: Թռչունը թռչունով մենակ չի ապրում, այլ համապատասխան ընկեր է ունենում: Միթէ մարդը, որ արարածների շարքում ամենաբարձր, ամենապատւառը տեղն է բռնում, պիտի ինքնիրան զրկէ «ընկերական» կեանքի ուրախութիւններից: Երիտասարդ բանաստեղծի նամակների մէջ, որ նա այդ ժամանակ զրում էր Կէրնէրին, շարունակ արտայայտում է սեփական օձախ ունենալու տենչանքը: «Ես ստիպւած եմ—զրումէ նա — աշխարհքից անջատւած մնալ, բոլոր երջանկութիւնների մասին գաղափար ունենալ, բայց բոլոր երջանկու-

թիւններից զուրկ լինել»: Մի ուրիշ անգամ զրում է. «Ես մինչեւ այժմ թափառել եմ տիեզերքի մէջ, որպէս մի օտարական և ոչինչ չեմ ունեցել, որպէս սեպհականութիւն: Ամեն մի էակ, դէպի որը հակւել է իմ սիրտը, արդէն ուրիշի սեփականութիւն է եղել և այդպիսով իմ սիրտը ծարաւ է մնացել: Ես տենչում եմ տնային կեանք ունենալու»:

Հասկանալի է, որ այդ դրութեան մէջ Շիլէրը չէր կարող երկար մնալ: Ուստի նա կամենումէր, որ իւր և Շարլոտայի ըօմանը որեւէ լուծումն ստանայ:

Շիլէրը և Շարլոտան այլ ևս չին թագցնում ուրիշներից իրանց փոխադարձ սէրը և շրջապատողներն էլ իրանց կողմից ոչինչ անսովոր չին գտնում այդ բանի մէջ: Բարեկամները շատ անգամ նոյն իսկ միասին էին հրաւիրում նրանց: Մայօր Կայլբին նոյնպէս ամեն բան յայտնի էր, բայց նա առանձին կարևորութիւն չէր տալիս, հաւատացած լինելով, որ նրանք չին անցնում հոգեկան սիրոյ սահմաններից: Գուցէ պարոն Կայլբի համար շատ ծանր չէր հէնց միշտ այդ նոյն զրութեան մէջ մնալ. նա սէր չէր պահանջում իւր կնոջից և երկի չէր էլ վիրաւորւում, տեսնելով որ իւր իդէալիստ կինը ուրիշներին սիրումէ «իդէալական» սիրով: Բայց ինքը Շարլոտան այդպէս չէր մտածում: Նա բոլոր սրտով կամենումէր բաժանւել ամուսնուց և ամուսնանալ Շիլէրի հետ: Բանաստեղծն էլ իւր կողմից սպասում էր այդ օրին: Միայն թէ աիկինը բաւական հաստատուն կամք չունէր՝ մի անգամ ընդ միշտ իւր անելանելի դրութիւնից ազատւելու համար: Շուտով պարոն Կայլբը եկաւ Վէյմար: Շիլէրը և պարոն Կայլբը վատ չին վարւում իրար հետ և միշտ մօտաւորութիւն ունէին: Նրանք երկուսն էլ թոյլ էին տալիս, որ ամեն բան ընական ընթացքով գնայ, մինչեւ որ հարցը ինքնիրան լուծւի: Իսկ Շարլոտան տատանւում էր, ժամանակ առ ժամանակ

զիշումէր ամուսնուն և հաշտւելու տրամադրութիւն էր ցոյց տալիս: Այդ տատանումները ցաւով նկատեց Շիլէրը և ինքն էլ իւր կողմից մի քայլ յետ դրաւ և սկսեց տատանւել: Խնդիրը մանաւանդ դժւարանումէր այն պատճառով, որ Շարլոտային և իւր ամուսնուն վերաբերող նիւթական հարցերը չափազանց խճճած դրութեան մէջ էին, իսկ Շարլոտան չէր կամենում առանց այդպիսի հաշիւները պարզելու թողնել ամուսնուն և հեռանալ: Շիլէրը սկսեց հաւատը կորցնել, սկսեց զգալ, որ այդ Գորդեան հանգոյցը չէ լուծւելու, որովհետեւ այդ տեսակի դրամաները սովորաբար խաղաղութեամբ չեն վերջանում: Շիլէրը հասկացաւ, որ սխալ ամուսնութիւնը մի այնպիսի սարսափելի խորխորատ է, որից ազատւելու համար տակաւին մարդկային միտքը չէ կարողացել մի բաւարար ճանապարհ գտնել... Նա սիրում էր Շարլոտային, բայց ի՞նչ կարող էր անել, եթէ վերջինս բաւական կամք չունէր շղթան մի անգամից փշրելու համար... Մի օր էլ յանկարծակի Շարլոտան իւր ամուսնոյ հետ հեռացաւ Վէյմսրից: Տարակուսական մտքերի մէջ տատանուում ու տոչորւում էր բանաստեղծը, երբ յանկարծ մի նամակ ստացաւ տիկին Վոյլցօդէնից:


Հին բարեկամուշին Բառւէրբախումն էր, իւր որդոյ՝ Վիլհելմի և աղջկայ ու փեսայի հետ միասին, և շատ ցանկանում էր տեսնել Շիլէրին: Լսկ բանաստեղծի քոյրը Խրիստօֆինան գտնուումէր Բառւէրբախի մօտակայ Մէյնինքնուում, ուր ապրումէր իւր ամուսնոյ Ռէյնվալդի հետ և նոյնպէս փափագումէր տեսնել վաղուց կարօտած միակ եղբօրը: Շիլէրի խորտակւած սիրար թրթրաց և նա առիթը բաց չթողնելով, իսկոյն ճանապարհ ընկաւ:

Մի քանի օր մնաց Շիլէրը քրոշ մօտ, նոյնքան էլ Բառւէրբախում: Այդ բոլոր ժամանակը անցաւ նրա համար հանգիստ և անդորր: Բառւէրբախում նա մտաքերեց անցեալ

օրերը, երբ նա ապրումէր այստեղ իբր փախստական, մի համեմատութիւն արաւ իւր սրտում և եկաւ այն եղբակացութեան, որ հինգ տարւայ մէջ շատ մեծ փոփոխութիւն է տեղի ունեցել իւր մաքերի, զատողութեան և զգացմանքների կատարելագործութեան մէջ: Ի զուր չէին ուրեմն նրա կրած նեղութիւնները, հոգեկան տանշանքները, սիրային ճգնաժամերը... Ի միջի այլոց հանգստացաւ նրա սիրար քրոշ վերաբերեալ: Շիլէրը սկզբում համաձայն չէր, որ Խրիստօֆինան Ռէյնօլդին գնայ, որը բաւական մելամաղձու բնաւորութիւն ունէր: Բայց Խրիստօֆինան այնպիսի մի համեստ և խելացի անձնաւորութիւն էր, որ ամեն մի տղամարդի հետ կարող էր լաւ վարւել: Շիլէրը տեսաւ և համոզւեց, որ քշը չէ սխալւել, որովհետեւ նրանք թէեւ ապրումէին շատ չափաւոր կերպով, բայց իրանց բոլորովին բաղդաւոր էին զգում: Դարձեալ մի ապացոյց Շիլէրի համար, որ շատ չափաւոր միջոցներով անգամ կարելի է բաղդաւոր ընտանեկան կեանքով ապրել, եթէ միայն ամուսինները իրար ճանաչում ու գնահատում են:

Վերադառնալուց Շիլէրին ընկերացաւ Վիլհելմ Վոյլցօդէնը, որը ճանապարհը զցեց Ռուգոլշտատով, ուր ապրումէր նրա ազգական Լէսգէֆէլդի ընտանիքը, այսինքն այրի Լէսգէֆէլդը իւր երկու աղջիկների կարօլինայի և Շարլոտայի հետ: Այդ ընտանիքի հետ բուքէաբար ծանօթացել էր Շիլէրը գեռ Մանհայմում: Տիկինը իւր աղջիկների հետ մի ամբողջ տարի Շվեյցարիայում ճանապարհորդումէր: Վերադառնալու ժամանակ նրանք կանգ առին Շտուտգարտում, ուր գտնուում էր նրանց աղջական տիկին Վոյլցօդէնը: Տիկինը տարաւ նրանց Սոլիտիւդ և ծանօթացրեց Շիլէրի մօր հետ: Ճանապարհը շարունակելով մայրը և օրիորդները եկան Մանհայմ, ուր կամեցան բանաստեղծին տեսնել բայց տանը չգտան: Իսկ յետոց, երբ բանաստեղծը գնաց նրանց տեսութեան, նրանք արդէն

Ճանապարհությունը վրա էին, ուստի նրանց ծանօթութիւնը թռուցիկ անցաւ։ Այս անգամ Շիլլերը նրանց վրա ոչինչ տպաւորութիւն չարաւ։ Օրիորդների երեակայութիւնը տակաւին չէր հանգստացել Ալպեան լեռների հսկայական տեսարաններից, ուստի մարդիկ և մարդկային երեցթները չնչին ու հասարակ էին երեւում նրանց աչքին։ Միայն թէ ծանօթ լինելով «Աւազակների» վայրենի և հղոր գործողութիւնների



Լէնդէֆէլդի տունը։

Հետ, քնքոյշ օրիորդները չէին կարողանում հասկանալ, թէ Շիլլերի նման խեղճ և նուրբ մարդու մէջ ինչպէս կարող է գոյութիւն ունենալ այնպիսի աղմկալի և յանդուգն հանձար։ Նրանք շարունակեցին իրանց ճանապարհը, միանդամայն մռացութեան տալով բանաստեղծին և բոլորովին չգուշակելով որ ապագային շատ մեծ տեղ են բռնելու բանաստեղծի կենսագրութեան մէջ . . .

Հանգուցեալ պարոն Լէնդէֆէլդը մի լուսաւորւած մարդ

էր։ Նա լաւ ուշադրութիւն էր դարձնում իւր երեխաների թէ ֆիզիկական և թէ բարոյական զարգացման վրա։ Նա ներշնչեց իւր երեխաներին սաստիկ սէր դէպի մոտաւոր աշխատանքը, իւր անձնական օրինակով սովորյցրեց նրանց ազնիւ լինել և գնահատել ամեն մի ազնիւ մարդուն։ Հայրը մեռնելուց կարօլինան 13 տարօք էր, իսկ Նարլոտան 10 տարօք։ Երեխաների դաստիարակութեան գործը շարունակեց նրանց մայրը։ Բայց առանց այդ էլ արդէն հիմքը լաւ էր դրւած։ Դեռահաս օրիորդները լրացնում էին իրանց կրթութեան պակասը լուրջ ընթերցանութեամբ։ Պլուտարխի և Ռուսոյի աշխատութիւնները նրանց ամենազուրեկան գրքերն էին։ Այդ բոլորին աւելացաւ և շվեյցարական ճանապարհորդութիւնը, որը առ միշտ զրոշմեց նրանց սրաերի վրա գեղեցիկ բնութեան, գեղեցիկ կեանքի և «գեղեցիկ մարդկայնութեան» կնիքը։

Յառաջ քան Շիլլերի Պուդոլշտատ գալը երկու քոյրերն էլ արդէն իրանց համեմատ փոթորկալի օրեր էին ունեցել, որոնցից գեռ վերջնականապէս չէին ազատւել։ Կարօլինան թէ իւր բնաւորութեամբ և թէ վիճակով շատ նման էր տիկին Կայլրին, այսինքն նոյնպէս եռանդուն, նոյնպէս ուսումնասէր և նոյնպէս զոհ անբաղդ ամուսնութեան։ Նա ապրում էր իւր մօտ, բայց ամուսնուց գեռ օրինապէս բաժանւած չէր։ Իսկ Նարլոտան հանգիպել էր բոլորովին ուրիշ տեսակ փոթորկի։ Նա սիրահարւել էր մի երիտասարդի վրա, բայց աննպաստ հանգամանքները ի վերջոյ խորտակել էին նրանց սիրային յարաբերութիւնը։ Նարլոտայի սրտի վերքը բուժելու համար տանում էին նրան այս ու այնտեղ ճանապարհորդելու։ Ընթերցողի ուշադրութիւնն ենք հրաւիրում այն հանգամանքի վրա, որ այդ օրիորդի անունը նոյնպէս Նարլոտա էր և խնդրում ենք ըփոթել երեք Նարլոտաներին, որոնք են՝ Վոյլցօդէն, Կայլը և Լէնդէֆէլդ։ Կարծէս թէ Շիլլերի ճակատին Նարլոտաները

գրւած էին: Մեր նոր ծանօթ Շարլոտային տանեցիները կրծատած Լոտտա էին կոչում: Նրանց օրինակին կհետեւնք և մենք:

Զմեռային մի ցուրտ ու մռայլ օր էր, երբ երիտասարդ ձիւտորները, Շիլէրը և Վզլցողէնը, վերարկուների մէջ փաթաթւած մտան Ռուդոլշտատ, որը մի փոքրիկ ու սիրուն քաղաք էր: Փողոցով անցնելուց, լուսամուտից նկատեցին նրանց Լէնդէֆէլդի աղջիկները և Վիլհէլմին ճանաչեցին, թէւ նա կատակի համար երեսը ծածկել էր: Ինելով մօտակայ հիւրանոյում, երեկոյեան այցելեցին նրանք Լէնդէֆէլդի ընտանիքը: Միայն մի օր

անցրեց Շիլէրը  
Ռուդոլշտատում,  
բայց շատ գոհ մնաց  
այդ այցելութիւնից: Օրիորդները  
շատ հետաքրքրումէին զրակա-  
նական հարցերով:  
Խօսակցութիւն



Շարլոտա Լէնդէֆէլդ:

հարցը: Բայի այդ՝ նրանք շատ լաւ դաշնամուր էին ածում; իսկ Շիլէրը առհասարակ երաժշտութեան սիրահար էր և երաժշտութիւնը միշտ զարթեցնումէր նրա ստեղծագործական հոգին, որպէս պատահումէր Գէօտէի հետ նկարչութեան աղդեցութեան տակ: Տիկինը և օրիորդները շատ լաւ տպաւորութիւն արին Շիլէրի վրա: Վէյմար համելուց յետոյ Շիլէրը շարունակեց այցելել տիկին Շարլոտային: Երբ մի օր վերջինիս մօտ բանաստեղծը խօսք բացեց նոր ծանօթների մասին և գովեց օրիորդներին, Շարլոտայի աչքերը լցւեցին արտասունքով: Ինչ զգաց արդեօք տարաբաղդ Լատուրան...

բացւեց ի միշի այլոց Շիլէրի «Փիլիսօփայական նամակների» մասին, և մասնաւորապէս ուշագրութեան առնւեց այդ նամակների մէջ շօշափւած «սիրոյ և բարեկամութեան»

Այստեղ թշլ ենք տալիս մեզ մի բացատրութիւն տալ մեր լնթերցողին: Այսօրից սկսած Շիլէրի և տիկին կայլրի սիրային յարաբերութիւնը կարելի է ընդհատւած համարել: Ինչպէս պիտի տեսնենք, բանաստեղծի ծանօթութիւնը լէնդէֆէլդի լնտանիքի հետ օրէցօր լուրջ կերպարանք էր ստանում: Իսկ տիկին Շարլոտայի հետ նրա յարաբերութիւնը գնալով թուլացաւ, նրանց նամակագրութիւնն էլ փոքր յետոյ դադարեց և նրանք մնացին լոկ բարեկամներ: Մեզ պակասումէն հարկաւոր նիւթերը, այդ բօմանք մինչեւ վերջը մանրամասն արծարծելու հտմար: Եթէ մենք իսկապէս վէպ զրելու լինէինք, մենք կդիտենայինք, թէ ուր պէտք է տանել այժմ բօմանի լնթացքը, կմոնէինք հերոսների հոգեկան աշխարհը և կաշխատէինք լուսաբանել խնդիրը հոգեբանորէն: Տարաբաղդաբար մենք այստեղ միայն կենսագրութիւն ենք գրում, որը մեզ չոր ու ցամաք ֆակտերից բաց ոչինչ չէ տալիս: Միայն թէ մենք պիտի համաձայնութեան գանք մեր լնթերցողի հետ մէկ կէտին վերաբերեալ: Իրողութիւնն այն է, որ Շիլէրը վերջապէս ձեռք քաշեց տիկին Շարլոտայից և սկսեց աւելի ու աւելի մօտենալ Շարլոտա Լէնդէֆէլդին: Լամար արաւ Շիլէրը, թէ վատ: Ներելի՞ է նրա այդ քայլը, թէ մի տններելի սխալ է, որ նա իրան թշլ տւաւ: Այդ շատ նուրբ խնդիր է, որի մասին կարելի է իրար հակառակ ենթագրութիւններ անել: Խնդիրը իսկապէս պարզելու համար ոչ միայն անհրաժեշտ կիններ աւելի փաստեր ունենալ ձեռքի տակ, այլև շօշափել հարցը զանազան սօյիալական, հոգեբանական, տնտեսական, նոյն իսկ առողջապահական և սրանց նման տեսակէտներից: Ուրիշ խօսքով ասած, այդ հարցը լուծելու համար հարկաւոր կիններ մի ամբողջ հատոր զրել: Ուստի բաւականանում ենք մեր համեստ կարծիքը յայտնելով: Տակառակ բոլոր գերմանական կենսագիրներին, մենք պնդում ենք, որ Շիլէրի բայլը


սխալ էր: Շարլոտա Կայլիքը մի անդուզական կնամարդ էր, որի նմանը «գեղեցիկ սեռի» մէջ չափազանց սակաւ է պատահում: Նա տաղանդ էր, այն էլ զուտ կանացի տաղանդ, այսինքն օժտւած էր իւր սեռին յատկանիշ, երկնազմայլ սիրով և բոլոր բարեմանութիւններով: Իսկ Շիլլէրը որոշ չափով ենթակայ էր այն պատմական նախապաշարմունքին, թէ կինը պահանջար է: Կարելի է ասել, որ Շարլոտայի ինքնուրոյն և ներգործական բնաւորութիւնը մի տեսակ խորթ էր թւում Շիլլէրին: «Ես կամենում եմ— գրումէ նա Կէրնէրին — այնպիսի մի կին ունենալ, որին Ես կարողանամ բաղդաւոր անել»:  
Մի կողմ թողնելով այստեղ կանանց հարցը, կասենք միայն, որ Շիլլէրի սխալը ներելի էր այն պատճառով, որ գեղեցիկ սեռին բոլորովին անմիտ գեր յատկացնելու սկզբունքը, նոյն իսկ մեր ժամանակ մի հանրամարդկային նախապաշարմունք է: Դեռ մի քանի անդամ պիտի տեղի ունենան թէ սօցիալական և թէ բարոյագիտական յեղափոխութիւններ, մինչև որ քաղաքակիրթ աշխարհը բմբոնի գեղեցիկ սեռի իսկական արժանիքը, և ստիպէ նրան թողնել իւր այլասեռուած ստոր դրութիւնը և մի արժանաւոր դիրք բռնել կեանքի ու պատմութեան մէջ: Իսկ մինչև այն պէտք է ներողամիտ աչքով նայել անհատների սխալելուն, որքան էլ այդ անհատները բարձր տաղանդի տէր լինեն:

Այնուամենացնիւ այդ սխալի պատճառով մենք չպէտք է անհաշտ աչքով նայենք իդէալիստ բանաստեղծի վրա: Թող տանք, որ նա սիրէ, ում կամենում է և կազմակերպէ իւր վիճակը, որպէս կամենում է: Մենք կբաւականանք միայն դիտելով, թէ ինչպէս է շարունակում նա մաքառել կեանքի դէմ և ինչպէս է իրագործում իւր իդէալները:


Բուղութատից Վէյմար վերադառնալով, Շիլլէրի ուշը յետ էր մնացել, բայց բաղդաւորապէս Լէնդէֆէլդի ընտանիքն

էլ փոքր յետոյ եկաւ Վէյմար: Տիկին Լէնդէֆէլդը վաղուց մտադիր էր իւր կրտսեր աղջկան պալատական ֆրէյլին դարձնել, ուստի և կամենում էր այժմից մօտ լինել պալատին: Բանաստեղծը շարունակեց մէկ-մէկ տեսնել օրիորդի հետ: Փոքր ժամանակից յետոյ, երբ Լօտտան վերադառնում էր Բուղութատ, խնդրեց Շիլլէրին մի բան զրել իւր սյլեօմի մէջ: Շիլլէրը զրեց մի գեղեցիկ ոտանաւոր և աւելացրեց. «Գուցէ Դուք այնքան մեծ ցանկութիւն չունէք Զեր դաշտերը և լեռները տեսնելու, որքան ես»: Լօտտան յիշեցրեց նրան, որ նա խօստացել է գնալ ամառը իրանց մօտ: Շիլլէրը պայմանաւորեց նրա հետ, որ նա վարձէ իւր համար մի բնակարան Բուղութատատի շրջակայքում:

Սյդ ձմեռ Շիլլէրը բուռն եռանդով աշխատում էր: Նա շարունակում էր խմբագրել «Տալիան», որ լոյս էր տեսնում Լոյցիկում: Բացի այդ՝ մասնակցում էր բանաստեղծը Վիլանդի «Մերկուր» ամսագրին: Բայց նրա աշխատութիւնների մէջ այժմ առաջին տեղն էր բռնում «Նիդերլանդիայի ազատութեան պատմութիւնը»: Կէրնէրին դուր չէին գալիս այդ պարագմունքները: Նա կամենում էր, որ Շիլլէրը զբաղւէ որեւէ բանաստեղծական մեծ գործով և շարունակ նամակներով յանդիմանում էր բանաստեղծին, թէ նա մոռացութեան է տւել իսկական կոչումը: Շիլլէրը արդարացնում էր իրան ասելով, թէ ինքը պիտի ապրուստ ձեռք բերէ զրականական աշխատանքով, ուստի ստիպւած է գործ դնել իւր սյմերը գրականական աշխատանքի ստիպւած է աշխատանքի աշխատանքների վրա, որոնք աւելի ձեռնաուեն: Բանաստեղծութիւնը պահանջում է ներշնչութիւն, հոգեկան որոշ արամազրութիւն, իսկ պատմաբանական աշխատանքը միշտ հնարաւոր է: Աշլպէս ասում էր բանաստեղծը՝ բարեկամին հանգստացնելու համար: Բայց իւր սրտում նա ունէր ուրիշ աւելի համակրելի պատճառ, նա գգում էր, որ իւր մտա-



ւոր պաշտը բաւական սահմանափակ է առ այժմ; Համեմատելով ստեղծագործական եռանդի հետ: Զե՞ս որ անքնդհատ ստեղծագործութեան համար բաւականաչափ նիւթ պէտք է ունենալ: Իսկ Շիլէրի նման ստեղծագործողը, որ իւրաքանչիւր բառի մէջ իմաստ էր զնում, պիտի չբաւականանար մարդկային երեսյթների թռուցիկ ծանօթութեամբ, այլ պիտի մանէր կեանքի խորութեան մէջ: Աչա թէ ինչն էր իսկապէս կապում նրան պատմութեան հետ: Չնայելով ծանր աշխատանքներին, բանաստեղծը ուրախ էր, մտաբերելով որ շուտով դարնանային օրերը կսկսւեն և բուդոլշտատի շրջակայքում նա փոքր առ փոքր կրուժէ, կհանդստացնէ իւր յոզնած սիրար:



Շիլէրի տնակը Ֆոլկշտատում:

### XIII.

Մայիսի կէսին գնաց Շիլէրը Ֆոլկշտատ: Այդ գիւղն ընկած է Զատլ գետի ափին, լեռներով շրջապատւած մի գեղեցիկ հովիտի մէջ: Լոտառն արդէն վարձել էր Շիլէրի համար փոքրիկ սենեակ մէկ երգեցողութեան ուսուցչի տանը: Բանաստեղծի բնակարանի հանդէպ կար մի ծառաղարդ բլուր, ուր յաճախ նստում էր նա և զմայլում հովիտի ու լեռնագագաթների պատկերով: Տեռում երեսում էր փոքրիկ, բայց գեղեցիկ քաղաքը, որի ետեւում ապառաժի կրծքին կպած էր զքսի ամրոցը: Մի համեստ ուզի տանում էր գիւղից դէպի քաղաք, ոլորելով գետի ափով, արտերի ու այգիների միջով:

Ճարաբաղդաբար տեղ հասնելուց մի քանի օր յետոյ Շիլէրը մրսեց և սասահիկ կատարը ստացաւ: Մեծ հոգացութեամբ էին վերաբերում դէպի նա երգեցողութեան ուսուցչի ընտանիքում, այնպէս որ հիւանդը շուտով ոտքի կանդնեց և սկսեց վայելել գեղեցիկ շրջակայքի հրապարաքը: Նրա ամենասիրելի տեղն էր հովիտը, ուր գետակը գոռգոռալով վազում էր ապառաժների միջով, սոճիների շաքով: Այստեղից բանաստեղծը բարձրանում էր դէպի վանքի աւերախները, որոնք շատ

Նիւթ էին տալիս նրա ուսումնածարաւ սրտին: Երբ ամառային արեգակը երեկոյեան դէմ համեստ ու մեղմ կերպարանք ընդունելով խոնարհում էր դէպի հօրիզօն, երիտասարդ բանաստեղծի սիրար թրթրում էր... Նա վայր էր իջնում ապառաժից և հանդարտ քայլերով առաջ էր ընթանում գետակի ափերով: Գեղեցիկ էր գետակը, սրտագրաւ էին ստւերախիտ սոճիները, հրաշալի էր շողողում ու ժպառում խիտ ձիւղերի միջով արեգը, բայց այս բոլորը նսեմանում էր այն պատկերի առաջ որը աչա՛, աչա պիտի հանդիսանար կամուրջի ծայրից... Երբ մետաքսեայ, սպիտակափայլ ամպերը փուլում; տարածում էին արևմուեան հօրիզօնի վրա և կենսաբեր զեփիւռ համբուրելով սահում էր՝ նորից թարմացած տերևների վրայով, երբ անսահման երկնակամարը կարծես մի առանձին յստակութիւն էր ստանում՝ հիւրեկ լուսնեակին ընդունելու համար, սիրաբորբոք բանաստեղծը հանդիպում էր կամուրջի վրա իւր հրեշտականման բարեկամուհուն, սիրալիր քէնիի հետ միասին:

Շիլէրի խօսակցութիւնը նրանց հետ լուրջ էր, խելացի, և իւրաքանչիւր բառի մէջ արտայայտուում էր նրա բարի սիրտը: «Նրա խօսակցութիւնը ականչ դնելով — զրում է կարօլինան — ձեզ թւում է, թէ զբօնում էք երկնային աստղերի և երկրային ծաղիկների մէջ»: Բանաստեղծը առաջնորդում էր քըյրերին դէպի քաղաք, ուր սպասում էր անկեղծ բարեկամուների մի փոքրիկ շրջան: Շիլէրը, օրիորդները և սրանց մայրը այնպէս ընտելացան իրար, որ չին կարող մի օր անյուցանել առանց իրար տեսնելու և այդ տեսակցութեամբ ամենքն էլ ուրախ էին:

Բայց այդ ուրախ օրերումն էլ Շիլէրը չէր մոռանում կոչումը և նշն իսկ զւարձութեան և աշխատութեան ժամերից աշխատում էր որևէ դրական օգուտ քաղել: Բարեկամուհիների հետ միասին կարդում էր նա յունական բանաստեղծ-

ների զրւածքները, որոնք բացում էին նրանց առաջ մի աշխարհ, որտեղ հակասութիւն չկար մարդկային և աստուածային բաների մէջ, խելքը և ընութիւնը համերաշխ էին իրար հետ: Այն զգացումը, թէ յունական և գերմանական ոգիների մէջ ինչոր նմանութիւն կայ, հետաքրքրում էր Շիլէրին, ինչպէս և Գէօսէին: «Ես ոչինչ չեմ կարգում բացի հօմերոսից — գրում է նա կերնէրին — վճռել եմ այլես չկարդալ նոր զրողներին, որովհետեւ սրանցից ոչ մէկը բաւականութիւն չէ պատճառում ինձ, միայն հների մէջ եմ գտնում իսկական զւարձութիւն: Նրանք ինձ անհրաժեշտ են, որ զտեն իմ ճաշակը, որը կորցքել է իւր իսկական պարզութիւնը»: Այդ տողերը թէ վերաբերմամբ նոր զրողներին բաւական չափազանցրած են, այնուամենայնիւ ցոյց են տալիս, թէ որպիսի աչալրջութեամբ հսկում էր բանաստեղծը իւր ինքնակրթութեան վրա: Երբէք մի թերուս կամ տիմար զրիչ այդպէս անխնայ կերպով չի քննադատել ինքն իրան: Քոյրերը ինսդրեցին Շիլէրին, որ մի քանի կարևոր կտորներ թարգմանէ յունարէնից և նա ընտրեց էվրիպիդին, որի բանաստեղծական ուղղութիւնը Շիլէրի սեփականին նման էր, և թարգմանեց յատիներէնի օգնութեամբ բաւական յաջող կերպով, թէ յունարէն լեզուն լաւ չդիտէր:

Բայց Շիլէրը զբաղւում էր այդ ժամանակ և ինքնուրոյն զրւածքներով: «Մերկուր» ամսագրի մէջ լըս տեսան նրա նամակները իւր «Դօն - Կարլոսի» մասին, որ բաւական հետաքրքիր նիւթ էին տալիս գեղարւեսափ զիտութեան համար: Ապա Շիլէրը վերջացրեց «Նիդերլանդիայի աղատութեան» առաջին մասը: Այդ զրւածքն ըստ ծրագրի պիտի բաղկանար վեց հատորից, բայց ծրագիրը չիրագործւեց: Շիլէրը մասնագէտ պատմաբան չէր, այլ պատմութեան ասպարիզով անցնելը մի տեսակ ինքնակրթական շրջան էր, որ պիտի կատարէր փիլիսօփայ - բանաստեղծը: Այնուամենայնիւ Շիլէրի այդ կիսատ

գրւածքը մեծ ուշադրութեան արժանացաւ։ Շիլէրը առաջինն եղաւ, որ նայեց պատմութեան վրա բուն փիլիսօփայական տեսակէտից և փոխանակ թիւեր և անուններ միմեանց ետևից շարելու, կամ պատմական դէպքեր և անեկզօտներ պատմելու, ժաղանքար մոցրեց պատմութեան մէջ։ Բացի այդ՝ Շիլէրի պատմութիւնը գրւած էր պարզ լեզով և ախորժելի ոճով, այնպէս որ ժամանակակից պատմագիրները սկսեցին հասկանալ թէ ինչպէս պէտք է պատմութիւն դրել, որ նրան կարդացող լինի։ Եւ իսկապէս պատմական դրքերի ընթերցանութիւնը Գերմանիայում սկսւեց Շիլէրի թեթև ձեռքից։

Վաղուց էր Շիլէրը մատղիր այս պատմութիւնը դրելու։ Այդ միտքը ծագել էր նրա զիխումի, երբ «Դօն - Կարլոսի» համար ուսումնասիրումէր իսպանիայի պատմութիւնը։ Բայց սկսեց դրել Վէյմար գալուց յետոյ։ Կէրնէրը սահմանալով այդ տեղեկութիւնը, չուրախացաւ, որովհետեւ նա Շիլէրի կոչումը միայն բանաստեղծութեան մէջ էր տեսնում։ Շիլէրին չփոթեցրեց բարեկամի տարակուսանքը։ Նա լաւ էր դիտակցում, որ թէ իւր հոգեկան զարգացման համար և թէ իր դրամատիկ պիտի լաւ ծանօթ լինի պատմութեան հետ։ Եւ զէնց որպէս ընթերցանութեան նիւթ ժողովրդի համար, նրա կարծիքով մեծ նշանակութիւն ունի պատմական դրւածքը։ Հարցը միայն այն է, թէ գրողը ինչ ոգով է գրում։ Այդ տեսակէտից Շիլէրի գրիչը անզուգական էր։

Ամենալաւ կարնէրը գրեց Շիլէրը Բուդոլշտաառում։ Ինչ որ ցերեկը գրում էր, երեկօյեան կարգումէր քոյրերի համար։ Սրդէն սրանով մասամբ բացատրումէ այն չերմութիւնը, որ զգումէ մարդ այդ պատմութիւնը կարգալով։ Բայց չպէտք է կարծել, որ Շիլէրին առաջնորդողը սիրոյ անձնական զգացմունքն էր։ Ոչ այլ մի ուրիշ տարր կար, որ շատ աւելի ներգործութիւն էր անումնրա դրչի վրա։ Շիլէրին ողեռու-

դը մարդկային աղատութեան սկզբունքն էր, որ արտայայտաւումէ նրա բոլոր գրւածքների մէջ։ Երբ մարդ կարդումէ Շիլէրի թէ բանաստեղծական, թէ փիլիսօփայական և թէ պատմական գրւածքները, բոլորի մէջ էլ նախ և յառաջ զգումէ, որ Շիլէրի զրի աղը բուռն աղատութեան ձգտումն է.... Այդ բանը պարզապէս արտայայտումէ աղատասէր պատմագէտը իւր յառաջաբանի մէջ ասելով։

«Վեհ ու միիթարական է այն գիտակցութիւնը, թէ իշխանական գօրութեան յամառ ուննագութեան դէմգոյութիւն ունի մի միջոց ևս, թէ նրանց ամենանուրը ծրագիրները խորտակւումէն մարդկային աղատասէր ոգոյ առաջ, թէ քաջարի ընդդիմութիւնը կարող է ծալել բռնապետի երկարացրած բաղուկը և հերոսական մաքառումը կարող է խորտակել նրա սարսափելի գօրութիւնը։ Ոչ մի տեղ ևս չժափանցւեցի այդ ճշմարտութեամբ այնպէս կենդանի կերպով, որպէս այդ արժանաւոր ապսատամբութեան պատմութեան մէջ։ Ուստի որոշեցի կանգնեցնել աշխարհքի առաջ քաղաքացիական ոյժի այդ գեղեցիկ արձանը, ընթերցողի սրտում ինքնազիտակցութեան զգացմունք զարթեցնելու և մի նոր անհերքելի ապացոյց տալու համար, թէ ինչ կարող են անել մարդիկ առհասարակ և ինչ կարող են զլուխ բերել միացած ոյժերով»։

Եւ իսկապէս այդ յառաջաբանի ոգով թափանցւած է ամբողջ գրւածքը։ Բնաւորութիւնների նկարազրութիւնները, պատահած դէպքերի պատմութիւնը, նիւթի ընտրութիւնը և մշակութեան ձեր, մէջ բերած գատողութիւնները — բոլորն էլ յիշեալ նպատակին են ծառայում։ Իւրաքանչիւր քայլափոխում պատմագիրը հիմնումէ այդ սկզբունքի վրա և բոլոր երեսյթները բացատրումէ այս տեսակէտից։ Շարունակ ցոյց է տալիս նա իւր զայրացները հոգեորական տիրապետութեան ու քաղաքական բռնապետութեան դէմ, և ամենուրեք պաշտպա-

նումէ մարդկային անձեռնմխելի իրաւունքները, բնական մաքուր զգացմունքները և անհատի աղատ շարժողութիւնը, հակառակ պետական մեխանիզմի միատեսակութեան:

Որպէս պատմութեան մէջ աշխատումէր բանաստեղծ-նիլէրը գեղարւեստական տարր մտցնել, որպէսզի նա աւելի մատչելի և աղղեցիկ լինի, նոյնպէս միւս կողմից պատմագէտ-նիլէրը պատմական նիւթ և օրէնք էր մոցնում գեղարւեստի մէջ, որպէսզի վիրշինս իրական արժանիք և փիլիսօփայական կշու ստանայ: Առաջին դէպքում պատմագէտին օդնումէ բանաստեղծը, իսկ երկրորդ դէպքում բանաստեղծին նպաստումէ պատմագէտը: Նիլէրի առաջին աեսակի դրւածքների համար օրինակ կարող է համարել «Նիդերլանդիայի աղատութիւնը», իսկ երկրորդ տեսակի ներկայացուցիչն է «Արւեստագէտներ» կոչած քնարերգը, որ զրեց Նիլէրը նոյնպէս Ռուգոլշտատում: Առաջին դրւածքի մէջ ցոյց է տալիս, թէ աղատ ու մարդավայել կեանք ստեղծելու համար անհրաժեշտ է մարդկանց ցժերի միութիւնը, կամ ընդհանրական կամքի ներդործութիւնը: Իսկ «Արւեստագէտների» մէջ բանաստեղծը արծարծումէ այն միտքը, թէ մարդկային ցժերը և առհասարակ մարդու էութիւնը մշակելու, բարձրացնելու համար՝ ամենամեծ միջոյը գեղարւեստն է: Ընթերցողին աւելի գաղափար տալու համար յիշեալ բանաստեղծութեան մասին, կրերենք այստեղ նրանից մի քանի շարքեր.

Եղենեայ ճիւղը բռնած քո ձեռքին,  
Ազնիւ և հզօր դրօշմ քո դէմքին,  
Լուսաւոր մոքով, կատարեալ հողով  
Կանզնած ես, ով մարդ, նոր դարի շէմքին:  
• • • • • • • •  
Բայց պարծենալով տարած յաղթութեամբ,  
Մի մոռանար դու պարզամտութեամբ

Այն ձեռքը, որ զեռ քո կեանքի սկզբին  
Գտաւ սուզի մէջ անխնամ որբիկին,  
Վայրենի բնութեան անտէր զաւակին:  
Եւ գուշակելով բարձր ապագան,  
Կրթեց քո սիրտը խնամքով մայրական:  
• • • • • • • •

Պարզեց մարդկային քո սուրբ պարտքերը,  
Առաքինութեան նուրբ գաղտնիքները.....  
Մեղուից սովորի ժրաշանութիւն,  
Որդնը դաս կը տայ քեզ ճարպիկութիւն,  
Գիտութեան մէջ դու ոգոյն ընկեր ես,  
Իսկ գեղարւեստը միայն դու ունես: | +  
Գեղեցկութեան մեզմ լըսի միջոցով | +  
Գիտակցութեան մէջ ներս մոտար շուտով,  
Որպէսզի վարժւես բարձրագոյն տեսքին  
Պիտ' նախ սովորես գեղեցիկ շողքին:  
Նախ պիտ' մուղայի քնքոյշ քնարը  
Կրթէ, մշակէ սրտիդ նուրբ լարը,  
Հոգոյդ մէջ զարթնէ սրբագոյն յցոլը, | +  
Որ նա ըմբռնէ բարձրագոյն լըսը:  
• • • • • • • •

Զուտ Ճշմարտութեան սուրբ աստուածուհին,  
Անտեսանելի հողեղին աչքին,  
Նա որ երկնային վեհափառ գահից  
Դիտումէ անհուն երկինք աստղալից,  
Նա, որին միայն տեսնել կարող են  
Անհիւթ, անապակ ողիք հրեղէն,  
Գլխից վերցնելով բոցափառ թագը,  
Գահը թողելով, իշաւ աշխարհքը:  
Նա, գեղեցկութեան հանդերձն հաղած,

Եւ չքնաղութեան գօտիկը կապած,  
 Ինքն իրան տւաւ պատկեր մանկական,  
 Որ մանուկները ըմբռնեն ու զգան:  
 Բայց կը դամ՝ երբ գեղեցկութիւնը  
 կը փայլէ որպէս ճշմարտութիւնը:  
 Երբ արարիչը իւր պայծառ դէմքից  
 Հեռացրեց մարդուն, զրկեց երկնքից,  
 Ողիները նրան գտաւաննեցին,  
 Երես դարձնելով մենակ թողեցին,  
 Գեղեցկի ողին իշաւ երկնքից  
 Չուզեց բաժանւել անբաղդ ընկերից,  
 Եւ նրա շուրջը միշտ պար բռնելով,  
 Դրախտ է նկարում պայծառ գոյներով:  
 . . . . .  
 Ահա մօտեցաւ ամբոխը ապշած,  
 Արւեստագէտի գործով հիացած.  
 «Ճեսէք — ասաց նա — ինչպէս մարդն ինքը  
 Հրաշքներ է գործում, որպէս երկինքը»:  
 Եւ բանաստեղծի քաղցրիկ երգերը  
 Բարեփոխեցին մարդկանց բարքերը,  
 Մարդկային հոդին լցւեց յնծութեամբ,  
 Երկնային լցուի մեղմիկ բերկութեամբ...  
 . . . . .

Յաղթելով նա իւր վայրէնի կիրքը,  
 Թռաւ երկնային յնծութեան գիրկը.  
 Կորաւ նախնական բիրտ բնութիւնը,  
 Ցոլաց Ճակատին մարդկայնութիւնը:  
 Գլխումնոր զարթնած բարձր մաքերը  
 Փայլեցրին մարդու պայծառ պատկերը.  
 Հայեացք ուղղելով դէպի աստեղը

Իւր արքայական ցոյց տւաւ դէմքը,  
 Գոհունակ սրտով նայեց արեգին,  
 Սփոփեց լուսով իւր ծարաւ հողին:  
 . . . . .  
 Հերոսի սիրտը լցւեց բաղձանքով,  
 Նրան նմանւելու աղնիւ տենչանքով:  
 Արւեստագէտի ստեղծեց հանձարը  
 Վեհ գեղեցկութեան նախատիպարը...  
 Ոյս տողերից երևումէ, թէ որքան մեծ նշանակութիւն  
 էր տալիս Շիլէրը գեղարւեստին: Եւ այն հանգամանքը, որ  
 սյդպիսի քաղաքական-փիլիսոփայական հարցը կարողա-  
 նումէր Շիլէրը արծարծել քնարերգի ձեռվ, ցոյց է տալիս,  
 որ նրա սիրտը, միաքը, ամբողջ կեանքը լցւած էր գեղարւեստի  
 սիրով: Մեր կարծիքով այդ է պատճառը, որ Շիլէրը կարո-  
 ղացաւ առանց մեծ դժւարութեան հրաժարւել իւր Շարլօ-  
 տայից և նորից մի թարմ կեանքի ծրագիր մշակել: Շիլէրի  
 համար ընկերը, կինը, տուն ու տեղը, սէրը, ամուսնութիւնը  
 և ամեն բան ինքն բստ ինքեան նպատակ չէր կազմում: Բանա-  
 ստեղծի նպատակը բարձր հանրամարդկային բնաւորութիւն  
 ունէր, որի համար բոլոր ֆնայեալը միայն միջոց էր: Շիլէրը  
 կամենումէր տուն ու տեղ ունենալ, որպէսզի կարողանայ բոլոր  
 շյժով նւիրւել իւր բարձր կոչման: Կարելի է ասել, որ Շար-  
 լօտային նա հէնց սկզբից սիրումէր նախ և յառաջ այն պատ-  
 ճառով, որ նա կարողանումէր ըմբռնել բանաստեղծի կոչումը  
 և գնահատել նրան: Քանի գեռ բանաստեղծը շտա երիտասարդ  
 էր, չէր կարողանում որոշել իւր անհատական զգացումները  
 ընդհանուր բարձր ձգտումներից: Բայց հետզետէ նա որոշեց  
 իւր գիրքը, եկաւ այն եղբակացութեան, թէ «միաքը զարդա-  
 նումէ մենակութեան մէջ», ուստի և սկսեց պահանջել միայն  
 այնպիսի մի կին, որը հնարաւոր զարձնէր նրա անսյին-խա-

զաղ կեանքը: Իսկ այդպիսի մէկը հէնց Լոտանն էր որ կար: Շիլէրի և Լոտայի յարաբերութիւնը փոքր առ փոքր աւելի մտերմանումէր: Տիկին Լէնգէֆէլդը շատ էլ ուրախ էր այդ բանով: Նրա համար աւելի ցանկալի էր, որ իւր աղջիկը պալատական օրիորդ դառնայ, քան թէ մի նիւթապէս անապահով բանաստեղծի կին: Այդ միտքը ստիպեց նրան առժամանակ հեռացնել Լոտային Ռուդոլշտատից: Լոտային ուղարկեցին Կօխբերդ իւր աղջականների տունը, բայց նրա և Շիլէրի մէջ սկսեց չերմ նամակազրութիւն, որի իւրաքանչիւր բառը արտայայտումէր փոխադարձ համակրութիւն և չերմութիւն: Ամառայ վերջին վերադարձաւ Լոտան՝ Շիլէրին ճանապարհ գցելու: Բանաստեղծին շտապէյնումէին Վէյմարից: «Մերկուր» ամսագիրը հոգեարքի մէջ էր և Վիլանդը աղերսագին խնդրումէր բանաստեղծին վերադառնար, հաւատացնելով որ ամսագրի վիճակը նրանից է կախւած: Բայց յառաջ բան Վէյմար վերադառնալը, Շիլէրը բաղդ ունեցաւ մի նոր, շատ կարևոր ծանօթութիւն ձեռք բերելու:


Իտալական ճանապարհորդութիւնից վերադառնալով Գէօտէն եկաւ Կօխբերդ, իւր բարեկամուհի—աիկին Ֆօն-Շտէյնին տեսնելու: Կօխբերդը գտնւումէր Ռուդոլշտատից մի մղոն հեռաւորութեան վրա: Տիկին Ֆօն-Շտէյնի և մի քանի ուրիշ հիւրերի հետ միասին Գէօտէն այցելեց և Լէնգէֆէլդի տունը, ուր նրանք ճաշի մնացին Կարոլինայի բնակարանում: Հրաւիրւած էր, ի հարկէ, և Շիլէրը: Կարոլինան և Լոտան շատ յոյս ունին, որ երկու բանաստեղծները կմտերմանան այդ օրը: Բայց փորձը ցոյց տւաւ, որ նրանք սխալումէին: Գէօտէն և Շիլէրը թէկ ծանօթացան, խօսակցեցին իրար հետ, ինչպէս և բոլոր միւս հիւրերը, սակայն այդ բոլորը սահմանափակ ձեւականութիւններից դէնը չէր անցնում: Գէօտէն այժմ փոխւած էր և առաջւայ նման շատ ասել ու լսել չէր սիրում: Իտալիայից

վերադառնալուց յետոյ նա մի տեսակ հեռու էր պահում իրան: Յայտնի է որ նրա գեղարւեստական սկզբունքները այժմ մեծ փոփոխութեան էին ենթարկւել: Նախկին փոթորկալի ուղղութեան այժմ փոխարինումէր նուրբ-կլասիկական գեղարւեստը: Իսկ Շիլէրին նա ճանաչումէր իրը «Աւագակների» հեղինակի, որը նրա աչքին այլևս առանձին արժէք չունէր: Ի հարկէ Գէօտէն զգումէր, որ այնուամենայնիւ Շիլէրը նշանաւոր տաղանդ էր, և կարող էր հետզհետէ կատարելութեան հասցնել արւեստը: Ուստի փորձառու բանաստեղծը ոչ թէ իսկապէս խոյս էր տալիս Շիլէրից, այլ կամենումէր, որ գործը գնայ բնական ճանապարհով, բարեկամութիւնը փոքր առ փոքր յառաջ դայ: Բացելով սեղանի վրա դրած մի ամսագրի համարը, Գէօտէի աչքին ընկաւ Շիլէրի «Յունաստանի աստուածները» և նա թղյլտութիւն խնդրելով՝ իւր հետ վերցրեց ամսագրի համարը. կնշանակէ, որ նա հետաքրքրւումէր Շիլէրի գրւածքներով:

Որքան էլ Շիլէրը կամենումէր ամառը երկարացնել, այնուամենայնիւ հոկտեմբերին ստիպւած էր վերադառնալ: Քշյրերն էլ պիտի գնային էր փուրտ իրանց մի աղջականի տունը: Շիլէրը ճանապարհ գցեց քշյրերին և յետոյ ինքն էլ ուղղեց դէպի Վէյմար:

Նիդերլանդիայի պատմութիւնը մեծ ուշալիրութեան արժանացաւ: Միանգամից ամենքը հասկացան, որ Շիլէրը ոչ միայն բանաստեղծ է, այլ և նա ունի նշյնպէս գիտնականին յատուկ հետազոտող ողի և քննադատական զօրեղ ճաշակ: Այդ ժամանակ հեռացաւ Ենայից պատմութեան պրօֆեսօրը և նրա տեղը պէտք էր նորը նշանակել: Գէօտէի կարգադրութեամբ գաղտնի խորհրդ. Ֆօդտը սկսեց համոզել Շիլէրին, որ աշխատէ ձեռք բերել այդ աղատ տեղը: Շիլէրը շատ դէս ու դէն զցեց, բայց վերջապէս համոզւեց և մի ինդիրք գրեց

գքսի անունով։ Խճկիրքի դործը անյասլաղ ընթացք ստացաւ,  
որովհետեւ Գէօտէն աշխատումէր այդ մտսին։ Այնուամենայնիւ  
Շիլէրը առ այժմ կիսասիրտ էր վերաբերում դէպի դործը,  
ի նկատի ունենալով մի քանի հանդամանքներ։ Նախ Շիլէրը  
ինքն իրան անպատճաստ էր համարում պատմութեան պրօ-  
ֆեսօրի կոչման համար։ Միւս հանդամանքը այն էր, որ Շիլ-  
էրը իբր տակաւին «արտաքըյ - կարգի» պրօֆեսօր, ոսմիկ  
չէր ստանալու, այլ բաւականանալու էր դասերից ստացւած  
փողերով։ Սրա փոխարէն գեռ ինքը պիտի ծախս անէր նս-  
խապէս մազիստրոսի դիալոմ ձեռք բերելու համար, առանց  
որի չէր կարելի պրօֆեսօր նշանակւել։ Վերջապէս կար մի  
երրորդ հանդամանք՝ բանաստեղծին ցանկալի էր միշտ աղատ  
մնալ, աղատ թռչնի նման հարկաւոր ժամանակ դէս ու դէն  
թռչել։ Մանաւանդ ցաւացնումէր նրան այն միտքը, որ գար-  
նան չի կարողանալ թուգօլշաստ տեղափոխւել։ Աակայն հէնց  
թուգօլշաստի բարեկամուհու ապագան պահանջումէր, որ  
Շիլէրը որոշ գիրք ստեղծէր իւր համար։ Եւ այդպէս երկու  
կարգի հանդամանքները կշռելուց յետոյ, բանաստեղծը աւելորդ  
համարեց այդ քայլն անել։



## XIV.

Շուտով հաստատւեց Շիլէրը նոր պաշտօնի մէջ։ Իսկոյն  
գնաց նա ենա, համեստ բնակարան վարձեց, մի զրասեղան  
գնեց, որը կազմումէր նրա ամենաանհրաժեշտ կարասիքը տնա-  
յին զբաղմունքի համար։ Ապա իւր տնտեսական կեանքի  
համար մի շատ չափաւոր ծրագիր կազմելով, սկսեց պատ-  
րաստել դասախոսութիւնները։

Եկաւ նշանակւած օրը, երբ Շիլէրը պիտի սկսէր դասա-  
խոսութիւնները։ Նախապէս յայտարարել էր, որ իբր յառա-  
ջարան պիտի խօսէ պատմութեան նշանակութեան մասին։  
Առ այժմ ինքը լսարան չունենալով, որոշել էր դասախոսել  
պրօֆեսօր Բէյնհօլլի դաշլիճում, որ մօտաւորապէս հարիւր  
մարդ էր տեղաւորում։ Դասախոսութիւնը պիտի սկսւէր երե-  
կոյեան ժամի 6-ին, բայց մի ժամ առաջ արդէն այնքան  
ուսանող էր հաւաքւել, որ բոլոր դռները և սրահները լցւած  
էին։ Շիլէրը իւր բնակարանի լուսամուտից տեսնումէր, թէ  
ինչպէս ուսանողները գեռ շարունակում են նորանոր խմբերով  
գնալ դէպի լսարան։ Ուստի նա իսկոյն մարդ ուղարկեց մի  
ուրիշ պրօֆեսօրի մօտ, որ թոյլ տայ օդտւել իւր լսարանից,  
որն աւելի քան հինգ հարիւր մարդ էր զետեղում։ Կէս ժամից  
յետոյ ուսանողների աշաղին բազմութիւնը, գուրս վաղելով  
Բէյնհօլլի դաշլիճից, միմեանց հրելով վազումէին դէպի միւս  
լսարանը։ «Յօվհանիսեան» երկայնաձիգ փողոցը սարսափելի

կերպով դղբառումէր: Անցուդարձ անողները վախեցած՝ միմեանցից հարցնումէին, թէ ինչ է պատահէլ: Երկուս կանայք, շփոթւած թափուումէին լուսամուտների վրա, կարծելով թէ քաղաքը այրուումէ: Ճիշտ ժամանակին եկաւ բանաստեղծ—պրօֆեսորը և անցնելով ուսանողական անթիւ շարքերի միջով, հազիւ կարողացաւ դժուկ ամբիոնը, ուր բարձրանալով հայեցք գցեց իւր առաջ դիզւած աշապին բազմութեան վրա և մի փոքր շփոթւեց: Մի քանի ըոսէ նա մի տեսակ վախեցած էր և դժւարութեամբ էր գտնում խօսքի թելը: Բայց շուտով տիրապետեց իրան, կամ աւելի լաւ է ասել, մաքի ընթացքը տիրապետեց նրան: Այլևս Շիլէրը ոչ թէ դասախոսումէր, այլ ստեղծագործումէր մի առանձին ոգեսրութեամբ: Կարւած ուշադրութեամբ ականչ էր դնում կէս հազարից բաղկացած ուսումնածարաւ երիտասարդութիւնը, որը շատ լաւ էր զգում, թէ այս անգամ կանգնած է ամբիօնի վրա ոչ թէ չոր ու ցամաք պաշտօնեայ-գիտնականը, այլ ճշմարտութեան վարդապետը, ժողովրդի կարելից ուսուցիչը, բանաստեղծ-պրօֆեսորը:

«Ուրախայնող և պատւաբեր է — ասումէր նա — ինձ յանձնւած առարկան, որը մտածող և դիտող մարդուն տալիս է ուսանելի բազմաթիւ նիւթեր, աշխատասէր պաշտօնեային՝ աղնիւ օրինակներ, փիլիսօփային՝ կարեորագոյն հարցեր, և առանց բացառութեան բոլոր մարդկանց՝ ազնւագոյն զւարձութեան հարուստ աղբիւր: այդ առարկան ընդհանուր պատմութիւնն է... Արդիւնաւէտ և լայնածաւալ է պատմութեան ասպարէլը, նրա շրջանի մէջ է գտնում բարցյական ամբողջ աշխարհը: Պատմութիւնը դիտումէ մարդուն նրա մտաւոր զանազան գրութեանց մէջ, նրա յիմարութեան և իմաստութեան միջոցին, նրա ստորութեան և աղնութեան դէպքերում: Ամեն բանի մասին, ինչոր մարդը առել է կամ տւել է,

աղիտի պատմութիւնը հաշիւ ներկայացնէ: Զկայ ձեր մէջ մէկը, որին պատմութիւնը ոչինչ ասելիք չունենայ: Ձեր ապագայ կոչման զանազան ձանապարհները, բոլորն էլ այս ու այն կերպով կապւած են պատմութեան հետ: Ձեզ ամենքիդ միացնում է մի ընդհանուր կոչում, որ է մարդ լինելու կոչումը, իսկ պատմութեան խօսքն էլ հէնց ուղղակի Մարտ՝ ձակատին է ուղղած»:

Ապա երիտասարդ պրօֆեսորը բացատրումէ, թէ ինչպէս է նայում ինքը՝ ընդհանրապէս գիտութեան և մասնաւորապէս պատմութեան ուսումնասիրութեան վրա: Նա որոշումէ երկու տեսակի գիտնականներ: Մէկի համար գիտնական ասպարէզը ուրիշ բան չէ, բայց եթէ հաց ձեռք բերելու միջոց այսպիսիներին Շիլէրը անւանումէ հացի-գիտնականներ: Միւսի համար գիտութիւնը ինքն լստ ինքեան բարձր նպատակ է կազմում:

«Ուրիշ է այն ձանապարհը, որով ընթանումէ հացի գիտնականը, և ուրիշ է այն, որ տեսնումէ իւր առաջ խկական փիլիսօփայ-գիտնականը: Առաջինը ամենայն զգուշութեամբ ընտրումէ գիտութեան միջից այն, ինչ որ անձնական-նիւթական շահերին ձեռնտու է: Նա հաւաքումէ յիշողութեան մէջ մի այնպիսի պաշար, որը պահանջումէն նրանից նրան հաց տւող մեծաւորները: Գիտութեան իւրաքանչիւր յառաջադիմութիւնը, իւրաքանչիւր նոր քայլը անհանգստութիւն է պատճառումնրան: չլինի թէ նրա մինչև այժմ իմացածները աւելորդ և անպէտք բաներ հոչակւին: Ո՞վ է աւելի արգելառիթ հանդիսանում գիտութեան ասպարիզում անհրաժեշտ մտաւոր յեղափոխութիւններին, քան այդ որկրամոլ գիտնականները: Իւրաքանչիւր նոր ճրագ, որ վառում է հանձարը գիտութեան ասպարիզում, տեսանելի է դարձնում այդ որկրամոլների մնանկութիւնը: Ուստի նրանք մաքառում են

Եցսի դէմ զայրոյթով և յուսահատութեամբ, որովհետեւ այդ  
պատերազմի ելքից է կախւած նրանց ողորմելի գոյութիւնը»:  
«Բոլորովին ուրիշ կերպ է մատածում փիլիսօփայ - զիտնա-  
կանը: Մինչդեռ որկրամոլ զիտնականը, իւր շահը ի նկատի  
ունենալով, աշխատումէ սահմանափակել մասնազիտութիւնը,  
կղղիանալ նրա մէջ, չլինի թէ ուրիշ գիտութիւնները թար-  
մացնող աղղեցութիւն սնեն նրա մասնազիտութեան վրա,  
փիլիսօփայ - զիտնականը աշխատումէ վերականգնել այն կապը,  
որ անպայման գոյութիւն ունի բոլոր զիտութիւնների մէջ:  
Վաղուց համազւած լինելով, որ թէ մաքի ասպարիզումև թէ  
բնութեան մէջ բոլոր առարկաները շաղկապւած են իրար հետ,  
փիլիսօփայի ճշմարտասէր հոգին չի կարող բաւականանալ  
ճշմարտութեան փշրանքներով: Նա բուռն չանք է դործ գնում  
գիտութիւնը կատարելագործելու համար: Նա չէ կարող հան-  
գստութիւն զգալ, մինչեւ որ բոլոր զաղափարները դասաւորւեն  
և ներդաշնակ ամբողջութիւն կազմեն: Եւ երբ կիրագործւի  
այդ, կկանգնէ նա իւր սիրած գիտութեան դադալին և ուրախ  
հայեացք կզցէ դէպի ընդհանուր անսահման հօրիզոնը: Գիտ-  
նական նորանոր գիւտերը, որոնք յուսահատեցնումէն որկրա-  
մոլ գիտնականին, ընդհակառակն զւարձութիւն են պատճա-  
ռում փիլիսօփայ - զիտնականի ճշմարտասէր ազքերին: Թո՞ղ  
թէկուզ այդ նորութիւնները խորտակեն նրա ներկայ տեսու-  
թեան ամբողջ կազմակերպութիւնը. վնաս չունի՞: չէ՞ որ նրա  
համար զուտ ճշմարտութիւնը ամեն բանից բարձր է»:

Շիլլերը յօյս է յայտնում, որ իւր ունկնդիրները մէջ  
մասամբ այդպիսի հայեացք ունին գիտութեան վրա ընդհան-  
րապէս և պատմութեան վրա մասնաւորապէս: Իսկ որկրամոլ  
ուսանողներին խորհուրդ է տալիս նա բոլորովին նեղութիւն  
չքաշել մասնակցելու իւր զասախօսութիւններին: Ապա անց-  
նումէ նա որոշելու ընդհանուր պատմութեան էութիւնը, որը

բաւական հետաքրքիր նիւթեր է պարունակում: «Այն տեղե-  
կութիւնները, որ տալիս են մեզ ծովագնացները հեռաւոր  
երկիրների մասին, բացումէն մեր առաջ մի հետաքրքիր և  
ուսանելի տեսարան: Աշխարհքում կան դեռ բազմաթիւ  
աղգեր, որոնք կանգնած լինելով քաղաքակրթութեան զանա-  
զան աստիճանների վրա, շրջապատումէն մեզ, որպէս մեծ ու  
պստիկ երեխանները հասակաւոր մարդուն: Վերջինս նայելով  
մանրիկների վրա, գաղափար է կազմում իւր կեանքի անցած  
ժամանակների մասին: Այդպէս էլ զանազան աստիճանների  
վրա կանգնած ժողովուրդները գաղափար են տալիս մեզ մեր  
աղղի անցեալ կեանքի մասին: Բայց որպէս ամօթալի և տխուր  
է այդ պատկերը: Այնուամենայնիւ սա դեռ մեր սկզբնական  
զրութիւնը չէ: Մարդկային անցեալը շատ աւելի չնչին և ստոր  
է եղել: Մենք զտնում ենք այժմեան բոլոր աղղերը յամենայն  
գէպս հասարակական կազմութեան զրութեան մէջ: Բայց մոր-  
գը հէնց այդ աստիճանին էլ զժւարութեամբ է հասել: Եւ  
ի՞նչ են պատմում մեզ ճանապարհորդները այդ վայրենիների  
մասին: Շատերը գաղափար անզամ չունին ամենապարզ ար-  
հեստների մասին, չգիտեն ինչ է երկաթը, արօրը, իսկ ոմանք  
նոյն իսկ կրակից օգտական չգիտեն: Ոմանք տակաւին մրցումէն  
վայրի զաղանների հետ՝ ուտելիք կամ բնակարան ձեռք բերե-  
լու համար, իսկ շտաբերը նոյն իսկ լեզւից զուրկ են: Սրանց  
սակաւաթիւ բառերը հազիւ են տարբերում անասնական  
անորոշ հնչիւններից: Ոմանք ոչ մի զաղափար չունին «ամուս-  
նութեան» մասին, չեն հասկանում: թէ ինչ է նշոնակում սեփա-  
կանութիւն: Սակայն պատերազմը գոյութիւն ունի և այդ  
ժողովուրդների մէջ, իսկ յաղթողները ուտում են յաղթւածնե-  
րի միսր: Միւսները, որոնք զաղափար ունին կենսական որոշ  
յարմարութիւնների մասին, ցոյց են տալիս բռնապետութեան  
և ճորտութեան մի սարսափելի պատկեր: Աֆրիկայի բռնա-

պետը վաճառումէ իւր հպատակին՝ մի բաժակ օղի ստանալով։ Մի ուրիշ տեղ բռնապետի գերեզմանի վրա մորթումէն մի շարք հպատակներ, որպէսզի հանդերձեալ կեանքում իշխանը ծառայողների պահապութիւն չունենայ։ Մէկ տեղ ընկճումէ ժողովուրդը ճորտութեան և սնահաւատութեան լծի տակ, մի ուրիշ տեղ տիրապետումէ թշւառութիւնը՝ կարգ ու կանօնի բացակայութեան պատճառով։ Զրահաւորւած վայրենին շարունակ վախենումէ իւրաքանչիւր թփից և ականջ է դնում։ թէ արդեօք մի նոր ձայն չէ լսում անապատի կողմից։ Ամեն մի նոր բան նրա թշնամին է և վայ այն օտարականին, որին փոթորիկը զուրս կնետէ վայրենի երկրի ափը։ Նոյն իսկ այն տեղում, ուր մարդը արդէն հասարակական կազմակերպութիւն ունի, այնուամենայնիւ ներկայացնումէ մեզ մի աշուելի պատկեր։ Նրա բութ ճաշակը բաւականութիւն է որոնում թմրութեան մէջ, և գեղեցկութիւն՝ զարդարանքի մէջ... Նոյն իսկ նրա առաքինութիւնը մեզ սարսափելի կթւի, և այն, ինչ որ նա երշանկութիւն է համարում, կարող է յարուցանել մեղանում զգւանք կամ կարեկցութիւն։

Սյդպէս ենք եղել և մենք։ Իսկ ի՞նչ ենք մենք այժմ; ի՞նչ է ներկայացնում մեր երկիրը։ Մարդկային աշխատանքը մշակել է նրան և տոկունութեամբ հպատակեցրել է իրան ըմբոստ երկիրը։ Մէկ տեղ ծովը չորացնելով, վարելահող է ձեռք բերել, միւս տեղ անպտուղ անապատին գետեր է պարզել։ Երկրի զանազան գօտիները և տարւայ զանազան եղանակները միացրել է իրար հետ, արեւելքի քնքոյշ բյուերը ընտելացրել է սառն հիւսիսին։ Եւրոպան տեղափոխւել է հընդկաստան և հարաւային ովկիանոս, իսկ Ասիան նորից յարութիւն է առել Եւրոպայի սրառում։ Աչա անտառների միջով ժպտումէ պայծառ արևը, որովհետև մարդկային ձեռք պատառտել է խիտ անտառները և ձանապարհ է բացել արեւի

ճառագայթների համար։ Եւ աչա Բէյնի ալիքների մէջ արտացոլումէ ասխական խաղողի ծիթը։ Այն հաւասարութիւնը, որ կորցրել է մարդը հասարակական կազմակերպութեան շնորհիւ, նորից գտել է իմաստուն կարգեր սահմանելով։ Մարդկային հոգուր և աշխատութիւնը բաժանւած է մարդու օգտի համար։ Երկրագործի աշխատաւոր ձեռքը լցնումէ շտեմարանները, իսկ զինւորի սուրբը պաշտպանումէ հայրենիքի սահմանները։ Որքան ստեղծագործութիւն գեղարւեստի ասպարիզում, որքան հրաշալիքներ աշխատանքի շրջանում։ Որպիսի՛ լցո՞ւ զիտութեան բոլոր հովիտներում սկսեալ այն օրից, երբ մարդը ձեռք բերաւ իւր ոյժերը ազատ գործադրելու և իւր կոչման հետեւելու թանկագին իրաւունքը։ Խորտակւած են այն սահմանները, որոնք երկիրներին և ազգերին թշնամական ինքնամիրութեան պատճառ էին տալիս։ Բոլոր մատածող զլուխները շաղկապւած են այժմ իրար հետ հանրամարդկային կապերով։

Որպիսի՛ մեծ տարբերութիւն մեր նկարագրած երկու տեսարանների մէջ։ Պատմութիւնը պիտի պարզէ, թէ ինչպէս է կատարւ ել այդպիսի մեծ փոփոխութիւնը։

Ինչպէս ընթերցողը տեսնումէ, Շիլլէրը իբր բանաստեղծ, նոյն իսկ զիտնական գասախօսութեան մէջ մացնումէ գեղարւեստական տարրը։ Բայց այդ բանը բոլորովին չէ պակասեցնում գասախօսութեան գիտական արժանիքը, իսկ միւս կողմից մատչելի և ախորժելի է զարձնում գիտական սկզբունքները երիտասարդ ուսանողների համար։ Շատ լաւ էր սկսել Շիլլէրը համալսարանական գործունէութիւնը, եթէ միայն կարողանար այդպիս շարունակել...»

Ուղիղ այդ օրերը բռնկեց ֆրանսիայում հռչակաւոր Ժեղափոխութիւնը։ Փարիզում, կառավարութեան կամքին հակառակ, ազգային ժողովը շարունակումէր իւր նիստերը և մշակումէր իրաւունքների ծրագիրը, իսկ կատարի ժողովուր-

զը քարուքանդ էր անում Բաստիլիայի տիրահռչակ ամրոցը։ Ուրեմն երբ Ռէյն (Մաքուր) գետի ձախ կողմում սւինների և հրացանների միջոցով կործանումէին միջնադարեան փթած հիմնարկութիւնները, նոյն գետի աջ կողմում դիտնական կաթեղրօններից քարկոծումէին հնադարեան փթած մոքերը և դաղափարները։ Իսկ այդ երկու հարեւան երկիրների արանքով վազող Մաքուր գետը հաւաքում-տանումէր փթած մտքերի և փթած շնչքսերի բեկորները դէպի մեծ ովկիանոսը... Շիլլէրի դասախոսութիւնները հնէցնումէին նորոգւած դարի բողոքող ձայնը... Երկար դարերի ընթացքում քաղաքային ոչ մի մասնակցութիւն և ոչ մի իրաւունք չունէր հարազատ հայրենիքի կարեորագոյն գործերի մէջ։ Մարդիկ հնադանդումէին օրէնքներին՝ ոչ թէ նրանց օգտակար համարելով, այլ որովհետեւ վախենումէին, սարսափումէին... Իսկ ահա նոր արշալոյս էր բացւում։ Եւրոպային գրումէր իւր դրօշակի վրա «իրաւունք, արդարութիւն, հաւասարութիւն, ազատ միտք, ազատ խօսք, ազատ կրօն, ազատ կեանք և ազատ մահ...» գրումէր և դրօշակը դէպի երկինք բարձրացնում։

Երիտասարդ պրօֆէսօրը իւր դասախոսութիւնների չափ հետաքրքրումէր նոր բարեկամուհիներից շարունակ ստացւող նամակներով, որոնց նա ամենայն ախորժանքով պատասխանումէր։ Այդ նամակների լեզուն ու բովանդակութիւնը օրէցօր մաերմական էին դառնում և սկզբում եղած փոխազարձ համակրութիւնը Շիլլէրի և Լոտոպայի մէջ փոքր առ փոքր լուրջ կերպարանք էր ստանում։ «Տեսէք — զրումէ օրիորդը — Զատալ գետը մեր լեռներիցն է հոսում դէպի Զեղ, երկի նա Զեղ շատ անդամ բերումէ մեր բարեկամական բարեր»։ Մի անդամ եկան նրանք կարծ ժամանակով Ենա և իշեանեցին իրանց մի ազգականի տանը։ Բայց այստեղ մոտերիմ խօսակցութեան յարմարութիւն չունեցան, որովհետեւ միշտ հանդիսում

էին իրար ուրիշների ներկայութեամբ։ Ենայից գնալուց յետոյ Շիլլէրը զրումէ օրիորդին։ «Չեր ներկայութիւնը Ենայում ինձ համար մի երազ էր, որովհետեւ երբէք ես Զեղ այնքան շատ ասելիք չունէի, որքան այդ անդամ, թէ չկարողացայ ովհնչ ասել»։ Այդ նկատողութեան Լոտոտան պատասխանեց։ «Ինչո՞ւ էք կարծում, բարեկամ, թէ չէք կարող ինձ ասել բոլոր, ինչ որ մտածումէք։ Ես միշտ ուրախութեամբ եմ ականչ զնում, երբ Դուք հաւատացնումէք ինձ Զեր բարեկամութեան մէջ, որովհետեւ այդ է իմ կեանքի ամենամեծ ուրախութիւնը»։ Մի քանի օր սրանից յետոյ զնացին քըյրերը Լառւխշտատի շրերը, ուր պիտի մի քանի շարաթ մնային։ Այդ ժամանակ Շիլլէրը խօսք էր տւել Կէրնէրին՝ տեսակցել նրա հետ Լայպցիկում։ Լայպցիկ գնալով, բանաստեղծը մի փոքր ճանապարհից շեղւեց, որ մի օր մնաց Լառւխշտատում, և այդ մէկ օրը նրա համար վճռական նշանակութիւն ունեցաւ։ Կարօլինայի հետ խօսակցելու ժամանակ Շիլլէրը այլևս չկարողացաւ թագցնել իւր սիրար, Կարօլինան հասկացաւ և իւր կողմից հաւատացրեց նրան, որ Լոտոտան խսկապէս սիրումէ նրան։ Անբաղդ կինը հերոսութեամբ զսպեց իւր սիրար, որովհետեւ ինքը անտարբեր չէր դէպի Շիլլէրը։ Նա մի երկրորդ Շարլոտա էր և բանաստեղծը համսկրում ու կարեկցումէր նրան։ Բաւական է յիշեր որ Կարօլինան մահից առաջ խնդրեց զրել իւր տապանագարի վրա հետեւեալ խորհրդաւոր խօսքերը։ «Սիրեց, տանջեց, լուռ մնաց»։

Ցիշեալ տեսակցութիւնից մի ժամյետոյ Շիլլէրը շարունակեց Ճանապարհը, բայց նոյն օրը նամակ ուղարկեց Լոտոտային։ «Մի՞թէ Ճմարիս է, թանկագին Լոտոտա — զրումէ նա — կարո՞ղ եմ ես յուսալ, թէ Կարօլինան գուշակել է Զեր սիրար և Զեր սրտիցն է պատասխանել ինձ... Իմ ամբողջ գոյութիւնը, իմ թանկագին, նւիրումէմ Զեղ և եթէ ես աշ-

Խատում եմ կատարելագործել ինձ, այդ նրա համար է, որ Ձեզ աւելի ու աւելի արժանի լինեմ, որ Դուք աւելի բաղդաւոր լինեք: Հաստատեցէք այն, ինչ բանի մէջ կարօղնան հաւատացրել է ինձ: Ասացէք ինձ, որ Դուք կամենում եք իմը լինել: Ոչ, հաւատացրեք ինձ այդ բանի մէջ, միայն մի բառով: Ես իմ կեանքի բոլոր ուրախութիւնները Ձեր ձեռքն եմ տաղիս»: Լոտտան պատասխանեց. «Արդէն երկու անգամ սկսել եմ զրել Ձեզ, բայց գտել եմ, որ ես չափազանց շատ եմ զգում, ուստի և չեմ կարողացել զրել: Կարօղնան զուշակել է իմ սիրող և իմ սրտիցն է պատասխանել: Ձեր բաղդաւորութեան նպաստելու միտքը պարզ ու փայլուն կերպով կանգնած է իմ հոգոյ առաջ: Եթէ այդ բանը կախւած է ներքին սիրուց, ապա իմ չերմ ցանկութիւնը, որ է բաղդաւոր տեսնել Ձեզ, իրականացած է: Առ այժմ այսքանը բաւական է: Շուտով կրկին կը տեսնենք. Ֆնաք բարեւ. յաւիտեանս Ձեր հաւատարիմ՝ Լոտտան»: Փոքը ժամանակից յետոյ կրկին Շիլլերը և Քյորերը տեսակցեցին Ենայում և պայման դրին, որ ամեն բան գաղտնի պահպի առ այժմ, նոյն իսկ տիկին Լէնդէֆէլդից, միինչեւ որ Շիլլերը փոքը ի շատէ կարգի դնէ իւր անտեսական դրութիւնը: Նրանք չեն կամենում, որ իրանց մայրիկին այժմից հոգս անելու պատճառ տան, որովհետեւ նա չէր կամենում անապահով զրութեան մէջ տեսնել հարազատ երեխային:

Ոչ մի բան այժմ այնքան չէր զբաղեցնում Շիլլերին, որքան այն միտքը, որ իւր համար փոքը ի շատէ որոշ զրութիւն ստեղծէ և ամուսնանայ: Հարսնացուի և քենիի հետ միասին նրանք դանագան ծրագիրներ էին կազմում և յոյսեր էին դնում: Բայց ի վերջոյ եկան այն եղրակացութեան, որ միակ հիմնառոր յօյմը այժմ պրօֆէսօրական ռոճիկն է: Ի միջի այլոց սկսեց տարածւել նրանց դաղտնի նշանաղրութեան լուրը և հասաւ նոյնպէս դքսի ականչին: Վերջինս դէմ չէր Շիլլերին ռոճիկ


նշանակելու մտքին: Շուտով Շիլլերը մի նամակ գրեց ափկին Լէնդէֆէլդին: «Այն օրից սկսեալ — զրումէ նա — որ ես իմ ոտքը Ձեր տան դռնից ներս եմ զրել, Լոտտայի սիրելի պատկերը երբէք չեմ մոռացել: Մեր խաղաղ և մտերիմ յարաբերութեան մէջ կապւել է իմ կեանքի անքակտելի կապը: Կրկամնա՞ք արդեօք, օ սիրելի մայր, կրկամնա՞ք յանձնել իմ սրտին Ձեր ամենաթանկաղին գանձր: Ես Ձեզ աւելի շնորհակալ կինեմ, քան թէ առհասարակ աշխարհքում որևէ մէկից շնորհակալ լինել կարող եմ: Տիկինը, որը արդէն նոյն բանի մասին նամակ էր ստացել իւր աղջիկներից, պատասխանումէ պարզ և անկեղծ կերպով. «Այո, ես կամենում եմ իմ ամենաթանկաղին և ամենասիրելի գանձր, այսինքն իմ Լոտտան, նւիրել Ձեզ: Իմ աղջկայ սէրը դէպ Ձեզ և Ձեր մտածողութեան աղնիւ եղանակը զբաւական են ինձ իմ երեխայի բաղդաւորութեան համար և ես միայն այդ եմ կամենում: Բայց Դուք կարող էք Ձեր քնքոյշ սիրոյ հետ միասին նոյնպէս մի չափաւոր եկամուտ ունենալ Լոտտայիս համար: Հանգստացրէք ինձ այդ կէտի մասին և ես ուրախութեամբ Ձեզ իմ որդին կանւանեմ»:

Եւ ահա Շիլլերը գրաւոր խնդիրքով դիմեց դքսին, որ իրան գոնէ մի փոքրիկ ռոճիկ նշանակէ: Նոյն օրը անձայն անձպտուն գնաց Շիլլերը Վէյմար, ուր գտնւում էին օրիորդները: Դուքսը լսեց նրա գալու մասին և իսկոյն մարդ ուղարկելով, կանչեց իւր մօտ: Դուքսը հաւատացրեց, որ ինքը շատ կրկամենար որևէ կերպով ցցոյց տալ Շիլլերին իւր յարգանքը. «Բայց—աւելացրեց նա ծանր ու երկու ձայնով—առ այժմ կարող եմ միայն 200 տալէր նշանակել Ձեզ»: Շիլլերը ուրախանալով պատասխանեց, թէ հէնց իւր ցանկացածն էլ այդ է: Ապա դուքսը հարցրեց նրա ամուսնութեան մասին և ուրախութեամբ շնորհաւորեց բանաստեղծին: Այժմ Շիլլերը մօտ 800 տալէր տարեկան եկամուտ ուներ զանազան աղբեւր-

Ներից, որ և բոլորովին բաւական էր մի համեստ կեանք ունենալու համար: Երբ այդպիսով բոլոր արգելքները վերջացած էին, Շիլլերը զրեց ամեն բան իւր ծնողներին: Լուստան նոյնպէս իւր կողմից մի համեստ և սիրալիր նամակ զրեց նշանաձի մայրիկին: «Թէե Ձեղ համար — գրումէ նա — իմ ձեռագիրը օտար է, բայց իմ սիրար անշուշտ օտար չէ, եթէ Դուք արդէն կարտացել էք Ձեր որդյոյ, իմ սիրեցեալի նամակը: Սիրելի մայր, ես տալիս եմ Ձեր անունը որդիական ճշմարիտ սիրով: Ես կը կամենայի, որ Դուք ճանաչէիք ինձ, որ գուք իմանայիք, թէ որպէս եմ ես սիրում Շիլլերին»: Ապա յիշեցնելով նրանց, թէ ինչպէս ինքը թոռուցիկ կերպով այցելել է նրանց մի ժամանակ, աւելացնումէ: «Այն ժամանակ ովկ կարող էր գուշակել, որ Դուք այժմ իմ ծնողներն էք գառնալու»:

Թէ որպիսի զիտակցութեամբ և ներքին ուրախութեամբ էր անում Շիլլերը այդ կարեոր կենական քայլը, կարող ենք եղրակացնել այն խօսքերից, որ գրում է նու կերներին հարսանիքից մի քանի օր առաջ: «Ուրախ սրաով սպասում եմ իմ ապագայ վիճակին: Այժմ ես մօտ եմ իմ նպատակին, ինքս զարմանում եմ, թէ ինչպէս ամեն բան իմ սպասածից աւելի լաւ ընթացք ստացաւ: Նախախնամութիւնը ինքը յաղթեց բոլոր արգելքներին և մօտեցրեց ինձ իմ նպատակին: Մի քանի տարուց յետոյ ես կունենամ հոգեկան կատարեալ վայելչութիւն, այս, ես յըս ունեմ; որ կրկին յետ կը ստանամ իմ երիտասարդութիւնը: Բանաստեղծական-հոգեկան վեանուը նույն իւ վերաբարձնէ նոյն է հարցածը: Իմ վիճակը ինձ բանաստեղծ է դարձրել, և որքան էլ ես աշխատէի, չէի կարող հեռանալ այդ կոչումից»:

Հարունակ հոգեկան ուրախութիւն որոնող բանաստեղծը հեռու էր աղմկալի հարսանեաց հանդէս սարքելու մաքից: Ուստի այնպէս կարգադրեցին, որ պսակադրութիւնը տեղի



Համակրութիւն և սեր:

ունենար կատարեալ մէնակութեան մէջ: Փետրւարի քսանուերկուսին 1790 թւին, Շիլլէրը գնաց Ենայի մօտակայքում գտնւող Վէնիդէն զիւղը, ուր եկաւ Ռուդոլշտատից և տիկին Լէսդէֆէլզը Լօտտայի և Կարօլինայի հետ միասին: Այստեղ, գիւղական փոքրիկ եկեղեցում, կատարւեց պսակագրութիւնը, որից յետոյ բանաստեղծը դեռահաս կնոշ հետ գնաց իւր բնակարանը:

Այստեղ աւելորդ չենք համարում երկու խօսքով ծանօթացնել ընթերցողին բանաստեղծի ընտրեալի հետ: Լօտտան թէւ ձարտար լեզւից զուրկ էր, բայց շատ բանասէր էր և շատ լաւ ուշադրութիւն էր դարձնում ինքնակրթութեան գործին: Մինչեւ այժմ մնացել են Լօտտայի գրած մի քանի ոտանաւորները, որոնք շատ զգացմունք և նուրբ միաք են պարունակում: Շիլլէրի հետ ունեցած նամակագրութեան մէջ նա շատ անգամ շօշափում էր լուրջ ինդիրներ, նիւթ վերցնելով կարդացած գրքերից, որոնց գլխաւորները կը յիշենք. Բիւֆֆօնի «Երկրագունդի զարգացման տեսութիւնը», Շէֆսրիւրիի «Բնաւորութիւնները», Լամբէրտի «Տիեզերական նամակները», Բակոնի «Ճին ազգերի իմաստութիւնը», Մօնտէսկիօի «Օրէնքների ողին», և մի շարք պատմական, բնագիտական և գեղարւեստական գրւածքներ: Այդ գրքերից շատերը Լօտտան ոչ թէ մի անգամ, այլ մի քանի անգամ էր կարդացել, այն էլ խորին ուշադրութեամբ: Ահա թէ ինչու հասարակութեան մէջ նա երբէք չէր սիրում զբաղւել ունայն և անմիտ խօսակցութիւններով, այլ նոյն իսկ կանանց շրջանում լուրջ հարցեր էր ծագեցնում և չէր խուսափում իւր կարծիքը յայտնելուց: Այդ պատճառով ունայնամիտ կանայք և օրիորդները «ցուցամոլ» էին անւանում նրան, թէւ նրան խօսել տւողը ոչ թէ ցուցամոլութեան, այլ զուտ բանասիրութեան զգացմունքն էր...




Ի դեպ՝ տեսնենք թէ ինչպէս է երգում Շիլէրը կնոշ արժանիքը.

Պէտք է բարձր պահել կնոշ պատիւր, որովհետեւ նրանք են զարդարում երկրային կեանքը իրանց ստեղծած երկնային ծաղիկներով։ Նրանք են հիւսում սիրոյ կենսաբեր ժապաւէնր, նրանք են շարունակ վառ պահում դեղեցիկ զգացմունքների յաւիտենական կրակը։

Տղամարդի ճղութիւները մի տեսակ հակասական բնաւորութիւն ունին։ Վայրենաբար անցնումէ տղամարդը կեանքի ասպարիզով, ամեն բան չարդ ու փշուր անելով, առանց կանգ առնելու, առանց հանգստանալու։ Մերթ ստեղծումէ տղամարդը, մերթ կրկին կործանումէ իւր սեփական ստեղծածը։

Սրա հակառակ՝ կինը, բաւականանումէ աւելի խաղաղ երջանկութեամբ, նա աշխատումէ ձեռքից բաց չժողնել իրականապէս գոյութիւն ունեցող ծաղիկը։ Կինը իւր սրտի ասպարիզում աւելի հարուստ գանձեր է պարունակում, քան թէ տղամարդը իւր ամբողջ գիտութեան շրջանում։

Կնոշ զգայուն հողին զողումէ տանջանք տեսնելով, որպէս ցնցւումէ քնքոյշ տաւիզը մեղմ զեփիւռի շունչը զգալով։ Լցումէ կնոշ սիրար կարեկցութեան զգացմունքով և երկնային մարդարտանման ցողը ծածկումէ նրա աչերը...



Վէնիգէնի եկեղեցին։  
Շիլէրի լարանը։

XV.

Մէնակութիւնը անտանելի է իւրաքանչիւր կենդանի էակի համար։ Նոյն իսկ թուզունը չէ կարողանում մէնակութեան մէջ անցուցանել իւր կեանքը։ Ո՞վ չէ տեսել թէ ինչպէս աշնան վերջերին տարագնաց թուզունների ահազին երամակները համաչափ թուզով դէպի հարաւ են չւում։

Նոյնն է կատարում և ծովի խորքում։ Թմբած ձկնիկները խումբ-խումբ են լողում, խմբերով են իջնում ծովի յատակը, կամ ջրի երեսը գուրս գալիս։ Նոյնն է և մարդկային կեանքում։ Ոչ միայն նոյնն է, այլ մարդու ընկերական զգացմունքը աւելի զօրեղ է, նուրբ և զարգացած, որովհետեւ արարածների զիտակցական աստիճանի բարձրանալու հետ միասին, զօրեղանում ու նրբանում է այն զգացմունքը, որ որոշում է նրանց յարաբերութիւնը շրջապատի և առհասարակ ամբողջ տիեզերքի հետ։ Զանազան մարդկանց մէջ նոյնպէս ընկերական զգացմունքը զանազան ոյժ և նրբութիւն է ունենում։ Այստեղ

նոյնպէս զգացմանքի ասաիձանը նոյնքան բարձր է, որքան լնդհանրապէս զօրեղ է հոգեկան կեանքը, զիսակցութիւնը: Արտաքուստ նայելով, երեմն հակառակն է նկատում: Կարծում են թէ տաղանդաւոր անհատները այնպէս զգայուն և փափուկ չեն լինում: ինչպէս սովորական մարդիկ: Բայց այդ միայն թւում է սովորական մարդկանց, որոնց համար տաղանդների ներքին կեանքը առհասարակ մի հանելուկ է... Այդպիսիները հեշտութեամբ չեն մտերմանում, չեն ընկերանում, չեն սիրում: որովհետև նրանց ընարութեան փորձաքարը շատ նուրբ է, բայց երբ արդէն սիրում են, նրանց սէրը աւելի խոր է, քան մեծ ովկիանոսը...

Խմբային ընկերական կեանքի ամենապարզ և միաժամանակ ամենաամուր ձեւը ամուսնական կեանքն է: Ամուսնական կեանք ասելով մենք բոլորովին ի նկատի չունենք եկեղեցական պսակադրութիւնը կամ որևէ քաղաքացիական օրինական կապակցութիւն: Պայմանաւորութեան ձեւի մէջ չէ հարցը: Երբ մի տղամարդ և մի կնամարդ իրանց ազատ կամքով, առանց որևէ ուրիշ ստոր նիւթական շարժաւիթներ ունենալու, բուռն սրտով և պարզ զիսակցութեամբ ընարում են միմեանց և որոշում են միասին ապրելով փոխադարձ պաշտպանութեամբ դիմել դէպի մարդկայնական իդէալը, այդ ամուսնութիւն է: Խոկ սրանից դուրս կատարւած իւրաքանչիւր միաւորութիւն, ինչ աղօթքներով էլ համեմած լինի, աններելի սրբազնութիւն է, ուրիշ ոչինչ:

Ծնւելու օրից սկսեալ մինչեւ գերեզմանի դուռը իւրաքանչիւր մարդկային էակ սիրոյ կարիք ունի, միայն թէ այդ սէրը երկու որոշ շրջան է անցնում: Ծնւելու ըոսէից սկսեալ Դուռը սիրում էք Զեր մօրը և նա էլ Զեղ է սիրում: կը նշանակէ, որ Դուք մէնակ չէք: Ահա մեծանումէ երեխան, չափահաս է գառնում և պայմանները փոխւում են: Այն մտերմութիւնը,

որ զցութիւն ունէր երեխայի և մօր մէջ, խախտւումէ, տեղի տալով յարգանքի, կարեկցութեան և սրա նման երկրորդ կարգի զգացմանքներին: Չափահաս երիտասարդը կրկին մէնակ է զգում իրան և ընկեր է որոնում: Մէնք այսպէս ենք հականում ամսւանութիւնը, բայց տեղը չենք համարում երկար փաստաբանել: Կ'աւելացնենք միայն, որ այդպէս էր հասկանում ինքը Շիլէրը:

Թէ որքան մխիթարւած էր զգում իրան Շիլէրը Լուսայի սիրով, երեսումէ նրա նամակներից: Պատկագրութիւնից մի շաբաթ յետոյ գրումէնա Կէրնէրին. «Որքան գեղեցիկ կեանք եմ անցուցանում ես այժմ: Ես նայում եմ դէպի իմ շրջապատը անդորր հոգով և իմ սիրտը մեզմ: տեղական բաւականութիւն է ստանում: Իմ կեանքը մի տեսակ ներդաշնակ է գարձել: Այդ օրերը անցան ինձ համար անգորը ու հանդիսաւ: Ես շարունակում էի իմ զբական աշխատութիւնները, ինչպէս միշտ, միայն թէ ինքս ինձանով աւելի բաւական եմ այժմ: Աւելի ուշ մի ուրիշ նամակի մէջ խօսումէ Շիլէրը նոյն անգորը ոճով. «Երբ ես զբաղւած եմ լինում, ինձ ուրախ եմ զգում մտածելով որ „նա“ հեռու չէ ինձանից: Նրա սիրուն նիստ ու կացը, նրա հոգոյ մանկական պարզութիւնը և նրա սիրոյ անկեղծութիւնը տալիս է ինձ հանգստութիւն և համաչափութիւն, որը անհնար կլինէր հակառակ դէպքում իմ մելամաղձու բնաւորութեան պատճառով: Մէնք կարող ենք աստուածների պէս ապրել, եթէ միայն երկուս էլ միշտ առողջ մնանք»: Խոկ Լուստան ամսւանութիւնից փոքր յետոյ գրում է իւր հօրեղբօր որդի Վիլհելմ Վշլցօղէնին. «Քեզ յայտնի է, որ ահա երկու շրբաթ է ես ամսւանացել եմ Շիլէրի հետ: Դու կարող ես երեակայել, թէ որքան բաղդաւոր եմ ես, քանի որ մեղ միշնողը անկեղծ սէրն է: Ես երբէք չեմ երեակայել մի այդպիսի բաղդաւորութիւն: Իմ սիրտը կապւած է Շիլէրի հետ

սիրոյ անքակտելի կապերով: Ես ուրիշ ոչոքի հետ չէի կարող այդքան բազմաւոր լինել. իմ սիրով ես կը պայծառացնեմ նրա կեանքը և նա էլ բազմաւոր կ'լինի, այդ է ասում ինձ իմ սիրտը: Ո՞վ կարող էր գուշակել այդ բոլորը այն ժամանակ, երբ դու առաջին անգամ բերիր մեր մօտ իմ Շիլէրին»:

Նորապսակ զցզի կեանքը շատ պարզ էր: Նրանք մնացին բանաստեղծի նախկին բնակարանում, աւելացնելով միայն սենեակների թիւը: Առանձին խոհանոց չունէին, այլ ամեն բան պատրաստ ստանումէին տանտիրոջից, որ երկու պառաւ քոյրեր էին: Առհասարակ շատ չափաւոր կեանք էին անցուցանում՝ միանդամայն համապատասխան Շիլէրի սահմանափակ եկամուտներին: Ենայի հասարակութեան հետ շատ մաերիմ յարաբերութիւններ ունէին: Գրիգրախի ընտանիքը, որպէս նախկին ազգական, շատ շերմ ընդունեց Լոտային: Պրօֆէսօր Ռէյնհօլդի կինը դարձաւ նորահարսի ընկերուհին: Շիլէրի գիտնական բարեկամները շատ անդամ զբոսանքներ էին կաղմում, որին մասնակցումէին և տիկինները: Սրանք ժամանակ էին անցուցանում ուրախ խօսակցութեամբ և կատակարանութեամբ, կամ գնումէին շրչելու Ենայի գեղեցիկ հովիտներում: Չնայելով համալսարանի լուրջ պարապմունքներին, երիտասարդ գիտնականները բաւական ուրախ կեանք էին անցուցանում: Շիլէրը չնայելով բազմատեսակ զբաղմունքին, դարձեալ ժամանակ էր գտնում բիիհարդ և կէզի խաղալու համար: Յաճախ Շիլէրի հետ սեղան էին նստում նրա պաշտօնակիցներից կամ հայրենակից պանտուխտներից մէկը կամ միւսը: Սեղանի վրա խօսակցութիւն էր լինում ոչ միայն Սոկրատէսի լուրջ մաքերի մասին, այլև Արիստօֆանի և նրա նմանների ծիծաղաշարժ տեսարաններին վերաբերեալ: Շիլէրը երբեմն իւր կատակներին միանդամայն ընկերական-զւարձական բնաւորութիւն էր

տալիս: Այդպէս ուրախ և անհոգ անցնումէր ամուսնութեան առաջին տարին:

Այդ ժամանակամիջոցում Շիլէրը ձեռք բերաւ ի միջի այլոց մի նոր, կարեռ բարեկամ: Դանիական բանաստեղծ Բադէգէնը, վերադառնալով Շվեյցարիայից, կանգ առաւ Ենայում, ուր բարեկամացաւ պրօֆէսօր Ռէյնհօլդի հետ, որի միջոցով և Շիլէրի հետ: Բադէգէնը Շիլէրի տաղանդը գնահատող և գիտակցական կերպով դէպի նրա զրւածքները վերաբերող անհատներից մէկն էր: Նա ընդհանրապէս շատ չէր հաւանում «Աւագակները», բայց այդ պիեսի մէջ տեղ-տեղ արտայայտած կրակից եղբակացնումէր, որ Շիլէրի մէջ թագնւած է մի շատ մեծ ոյժ, թէև այդ ոյժը տակտուին անմշակ դրութեան մէջ է: «Ֆիէսկօյի» և «Սէր ու խարզաւանանք»-ի մէջ սկսել է արտայայտել թագնւած ոյժը, բայց նա գեռ մի տեսակ մառախլապատ զրութեան մէջ է: «Դօնկարլոս»-ի մէջ մառախուղը արդէն սկսել է պարզել և արեգակի մի քանի պայծառ ճառագայթները ցոլացել են: Բայց խսկական արեգակը — Բադէգէնի մարգարէտական կարծիքով — պիտի փայլէր ապագայում: Բադէգէնը ինքը բանաստեղծ լինելով, այնուամենայնիւ առանց մի կաթիլ նախանձի, առանց տիրելու, ընդհակառակն՝ սրտի բուռն ուրախութեամբ, խոստովանումէր արւեստակցի բարձրութիւնը և ոչ միայն խոստովանումէր, այլ մի տեսակ առաքելական կոչում էր վերցրել իւր վրա Շիլէրի ազդեցութիւնը տարածելու համար: Նա սիրումէր ամեն տեղ կարգալ ու բացարել Շիլէրի զրւածքները և խօսակցութիւն բացել նրանց մասին:

Ըստանեկան խաղաղ կեանքը շատ էր նպաստում Շիլէրի զբաղմունքներին և յառաջդիմութեան: «Այժմ միայն ես — զրումէ նա Կէրնէրին — առաջին անգամ իսկապէս զգումէմ ընութեան գեղեցիկութիւնը: Կրկին իմ աչքի առաջ կենդանա-

նումեն բանաստեղծական պատկերները և աղեկոծումեն իմ սիրտը... Ես ինքս զարմանումեմ, թէ որպիսի մեծ աշխոյժով եմ աշխատում այժմ, և այդ աշխոյժը իմ խաղաղ տնային կեանքի հետեւանքն է: Ես աշխատումեմ օրական տասնեչորս ժամ, և ինձ թւումէ, թէ երբէք ժամանակը այնպէս արագ չէ սահել, որպէս այժմ»: Շիլէրը աշխատումէր թէ իբր համալսարանի դասախոս և թէ իբր զրող:

Համալսարանում կարգումէր նա զուգընթաց երկու դասախոսութիւն: Մէկը՝ ընդհանուր պատմութիւնից, որի նիւթի և ուղղութեան մասին արդէն զաղափար տւառ մեզ նրա յառաջաբանը: Միւս դասախոսութիւնը վերաբերումէր գեղարւեստին, մասնաւորապէս ողբերգութեան: Իւր դասախոսութեան համար Շիլէրը չէր օգտում զանազան ձեռնարկներից, այլ ուղղակի հիմնւումէր անձնական փորձառութեան և սեփական դիտողութիւնների վրա, և իւր նախկին ուսուցիչ Աբէլին նմանւելով, օրինակները և ապացոյցները բերումէր թէ ուրիշների և թէ իւր գեղարւեստական դրւածքներից: Շիլէրը այդ դասախոսութիւնների մէջ շատ նոր ու հետաքրքիր երկոյթներ էր պարզում, սկզբունքներ էր դանում և գեղարւեստի համար կանօններ էր մշակում: Սյդ դասախոսութիւնից յառաջ եկան երկու նշանաւոր յօդւաճներ, «Ողբերգական գեղարւեստի մասին» և «Ողբերգութիւնից ստացւող դւարձութեան մասին»: Երկուսն էլ համարեա նոյն առարկային են վերաբերում:

Հեղինակը աշխատումէ լուծել այն հանելուկը, թէ ինչպէս են կարողանում մարդիկ զւարձութիւն ստանալ ո՞չե՞լաւիան գեղարւեստից: Եթէ մեր աչքի առաջ իսկական աղէտներ տեսնենք, մենք կսարսափենք, կտխրենք, կցաւենք: Ուրիշների իսկական տանջանքներին հանդիսատես լինելով, մենք կխղճանք, կիարեկցենք նրանց և ոչ թէ կզւարձանանք: Բայց թատրոնում

նստած՝ երբ մեր առաջ ողբերգութիւններ են ներկայացնում, մենք մի տեսակ զւարձութիւն ու բաւականութիւն ենք զգում: Այդ ի՞նչ է նշանակում:

Սյդ հակասական երկոյթի պատմառը Շիլէրը բացատրումէ, հիմնւելով այն սկզբունքի վրա, թէ մարդկային բնաւորութեան զիսաւոր արժանիքը նրա հարուստական ազնութեան է: Եթէ մենք կարողանում ենք ճշմարտութեան անունով կոխմղել զանազան արգելքների դէմ և յաղթող հանդիսանալ, կը նշանակէ մենք բարոյական զօրութիւն ունինք, կամ բարոյապէս աղատ ենք: Եւ մենք զւարձութիւն ենք զգում, երբ մեր առաջ բարոյական ցիֆի արտայայտութիւն ենք տեսնում: Իսկ բարոյական ցիֆը ոչ մի գէպքում այնպէս պարզ չէ արտայայտում, որպէս տանջանքի ժամանակ, երբ հերոսը ամենածանր սարսափների մէջ պահպանումէ բարոյական անկախութիւնը: Մարդկային բարձր էութիւնը յաղթող է հանդիսանում նրա Փիզիկական բնաւորութեան վրա և հէնց այդ երկոյթն է, որ շարժելով մեր սիրաը բարոյական բաւականութիւն է պատճաշարժելով մեր սիրաը բարոյական բաւականութիւն է պարզ զափարին, ամուր է պահում զրօշակը, այն ժամանակ մենք զափարին, ամուր է պահում զրօշակը, այն ժամանակ մենք զեղարւեստական զւարձութիւն ենք զգում, մեր սիրաը չերգմութիւն է զգում այդպիսի արժանավայել տեսարանի առաջ: Ուրեմն եթէ այդ գէպքում մենք արտասունք ենք թափում: Ուրեմն եթէ այդ գէպքում մենք արտասունք ենք թափում:

Դասախոսութիւններից աւել մնացած ժամանակը դորձ էր դնում Շիլէրը զրական աշխատանքների վրա: Տեսնելով որ գեղարւեստական գրւածքները անբաւարար են նիւթական արդիւնաւորութեան տեսակէտից, Շիլէրը ամուսնութեան առաջին տարին զբաղւումէր պատմական գրւածքներ արտադրելով զանազան ժողովածուների համար, որոնցից աւելի արդիւնք էր ստանում: Սյնուամենայնիւ բոլոր մանր թէ մեծ պատմական աշխատութիւնները համեմած էին լինում բանաստեղծական-փիլիսօփիայական հետաքրքիր տարրերով: Ամենանչին պատմական յօդւածի մէջ կարողանումէր նա մացնել բարձր հանրամարդկային սկզբունքներ: Քննելով հին Յունաստանի օրէնսդիր որդիների, Սոլօնի և Լիկուրգի օրէնքները, Շիլէրը աշխատումէ ցոյց տալ հասարակական կազմակերպութեան զանազան ձևերի լաւ ու վատ կողմերը: Ընթերցողին թւումէ, թէ կարդացածը ոչ թէ չոր ու ցամաք պատմութիւն է, այլ նորագոյն սօցիօդիայի մի կարեոր գլուխը: Խօսելով խաչակրաց պատերազմների մասին, Շիլէրը յայտնումէ այն միտքը, թէ ազգերի և մարդկութեան արժանաւորութիւնը պահանջումէ, որ նրանց ամբողջ գործունէութիւնը բղսէ բարձրագոյն յնդառնելչնց: Խաչակրական արշաւանքը, որքան էլ անհեթեթ ու մնասակար արիւնչեղութիւն համարւի, այնուամենայնիւ նա ապացոյց է, որ մինազարեան Եւրոպան զեկավարումէր ոչ թէ նեղ ստոր, չնչին եսական, անձնասիրական ձգտութիւնով, այլ բարձր, թէկուղ սխալ հասկացւած, դադափարներով: «Մովսէսի գրելը» քննելով Շիլէրը այնպիսի առողջ մտքեր է յայտնում, որոնց նմանը հաղիւ է պատահում նոյն խոկ նոր դարի «բանիմաց ու խորիմաստ» աստօւածաբանների շրջանում:

Խոկ ամենանշանաւոր պատմական աշխատութիւնը «Երեսնամեայ պատերազմն» է: Այստեղ արդէն բացարձակ կերպով

արտայայտւումէ Շիլէրի բանաստեղծական ողին: Շիլէրին հետաքրքրումէն ոչ այնքան պատերազմական կամքաղաքական երկոյթները, որքան այն նշանաւոր հերոսական անձնաւորութիւնները, որոնք դեր են խաղում ահռելի պատերազմի լնթացքում, այսինքն շվեդական թագաւոր Գուստավ Ադոյլֆը և Բօչէմիայի գնդապետ Վալէնշտէյնը, որոնք մարտնչումէին միմեանց դէմ: Սրանք երկուսն էլ վերին աստիճանի տաղանդաւոր անձնաւորութիւններ են, որոնք կարող են նիւթ դառնալ իւրաքանչիւր արւեստագէտի համար, լինի նա բանաստեղծ, նկարիչ, երաժիշտ, թէ քանդակագործ:

Եւ հէնց այդ բանաստեղծական աարքն է, որ Շիլէրի պատմական բոլոր գրւածքները դարձնումէ հիւթալի և հետաքրքիր: Շիլէրից առաջ պատմական զրւածքներ կարգումէին մասնագէտները կամ ուսանողները: Խոկ բանաստեղծ-պատմագէտը կարողացաւ պատմութեամբ հետաքրքրւող ընթերցողների մի ամբողջ բանակ առաջ բերել: Նա ինքը շատ էլ հիմնաւոր պատմագէտ չէր և իւր նիւթը մեծ մասամբ քաղումէր ուրիշ պատմագէտ չէր և իւր նիւթը մեծ մասամբ քաղումէր ուրիշ ների զուտ - մասնագիտական աշխատութիւններից: Սակայն նա կարողանումէր նիւթերի մէջ ձաշակով ընտրութիւն անել, կարողանումէր պատմել սահուն լեզով և նկարազրել երկոյթները պայծառ դշներով: Ուստի նրա պատմական գրւածքները աալիս էին հասարակ ժողովրդին ընթերցանութեան խիստ հետաքրքիր և ընտիր նիւթ:

Այսպէս ուրեմն Շիլէրը ըստ երկոյթին վերջնականապէս կարգադրել էր կենսական դրութիւնը: Նա ստանումէր բաւարար եկամուտ, վայելումէր ընտանեկան հանգիստ կեանք, նրա հեղինակութիւնները օրէյօր տարածւումէին ամբողջ Գերմանիայում, և հաստատ պաշտօնը ապահով ապագայ էր ծոստանումնրան: Այսուհետեւ բանաստեղծի կեանքը և դորիստանումնրան: Այսուհետեւ բանաստեղծի կեանքը և դորիստանումնրանը պիտի ընթանաւոր կանօնաւոր ուղղութեամբ,

պիտի աւելի ու աւելի արդիւնաւոր դառնար նրա զօրեղ զրիչը: Կեանքի և մարդկանց դէմ մղած կոփոր կարող էր վերջացած համարւել: Այժմ պէտք էր միայն նիւթ ծծել և ստեղծագործել....

Սակայն այն երկարամեայ կոփոր, որ մղել էր բանաստեղծը ծանր հանգամանքների դէմ: արդէն ի ներքուստ խորտակել էին նրա կեանքը....



## XVI.

Դեռ մանկութեան օրերում Շիլէրը շատ անդամ հեւանդանումէր: Ճեմարանական կեանքը շատ վատ աղղեցութիւն ունեցաւ նրա առողջութեան վրա: Յետոյ էլ թափառական տարիներում Շիլէրը ստիպւած էր միանդամայն անուշադիր թողնելու առողջութիւնը: Առանց բաւարար հագուստի ձմեռային ճանապարհորդութիւնը, յետոյ էլ Մանհայմում ստացած տենդը, թողել էին իրանց տխուր հետքերը: Վերջապէս հոգեկան հեարդային տանջանքները, տարակուսանքները, հոգսերը, վհատութիւնը, յուսահատական ծանր բոպէները... բոլորը իրար հետ միացած, աննկատելի կերպով քայքայել էին բանաստեղծի կազմաձքը, որպէս ապառաժի տակով կաթիլ - կաթիլ հոսող ջրերը փորումէն նրա պատւանդանը և մօտեցնումէն ապառաժը անդունդի ծայրին: Եւ հէնց այժմ... Օրէկան տասնեւչորս ժամւայ անընդհատ մտաւոր աշխատութիւնը, որ անհրաժեշտ էր նրան, չափաւոր ապրուստ ունենալու համար: Տասնեւչորս ժամ ասելով պէտք է հասկանալ քսանուչորս ժամ: որովհետև Շիլէրի նման մարդը „անդործ“ բոպէներին էլ հոգեպէս գործումէ, երազի մէջ անդամ նրա սիրոր և ուղեղը զբաղւած են լինում: Հասկանալի է, թէ ինչ հետեւանք պիտի ունենար այդ բոլորը, եթէ փոքր ի շատէ լուրջ առիթ լինէր, և այդ առիթը շուտով հանդիպէց:

Ամուսնութեան առաջին տարին անցած, Ծննդեան տօներին Շիլէրը կնոշ հետ գնաց էրֆուրտ, գահաժառանդ Դայլ-բէրգին այցելելու համար: Ընթերցողին զգուշացնում ենք չփոթել այդ բարի և մեծահոգի մարդուն իւր եղբօր, բարօն Դայլբէրգի հետ: Գահաժառանդը Շիլէրի լաւ բարեկամն էր և խօստացել էր, որ ինքը գահ նստելուց պիտի շատ կարեռը պաշտօն տար Շիլէրին և առհասարակ պիտի ամեն կերպ պաշտպանէր նրան: Էրֆուրտից վերադառնալու ժամանակ Շիլէրը մրսեց և Վէյմարում ծանր հիւանդացաւ թոքերի և ստամոքսի բորբոքմամբ: Մի քանի օր նա մահւան վտանդի մէջ էր, բայց շուտով ճգնաժամը անցաւ, և նա կարողացաւ անկողնից գուրս դալ: Հիւանդը իրան այնքան լաւ էր զգում արդէն, որ կնոշը թողեց Վէյմարում, իրը հիւր տիկին Շտէյնի մօտ, իսկ ինքը գնաց Ենա, որ դասախոսութիւնները շարունակէ: Բայց շուտով հիւանդութիւնը նորոգւեց և բանաստեղծը դողդոչուն ձեռներով գրեց կնոշը, որ անմիջապէս կառք վերցնի և օգնութեան համնի: Կինը անցալազ եկաւ և դտաւ, որ հիւանդութիւնը արդէն բաւական ծանր կերպարանք է ստացել: Զնայելով կնոշ սիրալիր խնամատարութեան, հիւանդը մօտեցաւ մահւան դռանի: Երրորդ օրը սկսեց արիւն թքել: Տարաբաղդաբար այն ժամանակ բժշկականութիւնը չափաղանց տղէտ էր այդպիսի հիւանդութիւններին վերաբերեալ և աւելի վնասումէր, քան օգնում: Հիւանդից արիւն առին, տղրուկ դրին և այդպիսով այնքան թուլացրին նրան, որ ամբողջ մի շաբաթ չկարողացաւ բերանը բան գնել, և միայն մի մի բաժակ դինի խմելով էր ապրում: Շարունակ տաքացնումէր հիւանդը և տաքութեան մէջ յնորումէր: Վերջապէս տաքութիւնը անցաւ և հիւանդը կարողացաւ օրէկան մի-երկու ժամ վերկենալ բայց միայն մի քանի շաբաթից յետոյ էր կարողանում մանգալ, գաւաղանին յենւելով: Այդ ծանր օրերին մի-

թարական էր բանաստեղծի համար տեսնել, թէ որպիսի հոգացողութեամբ էին վերաբերում զէպի նա իւր բարեկամները և աշակերտները: Նրանք վիճում էին իրար հետ, թէ ով պիտի զիշերը հսկէ հիւանդին, որովհետև իւրաքանչիւրը ինքն էր կամենում մատուցանել այդ ծառայութիւնը: Շուտով եկաւ Թուգուշատից Կարոլինան, որը քրոջ համար շատ կարեռ օգնական էր: Ենայում և Վէյմարում ամեն կողմից կարելցութիւն ու ցաւակցութիւն էին յայտնում և առողջութիւն էին յանկանում: Դուքսը ուղարկեց հիւանդի համար մաղերի թանկագին զինի, որով հիւանդը կազդուրումէր իւր ոյժերը: Հիւանդութիւնն անցաւ: Բայց Շիլէրը այնքան թոյլ էր, որ դասախոսութիւնների մասին չէր կարող խօսք լինել: Դուքսը անմիջապէս աղատեց նրան դասախոսելու պարտաւորութիւնից նոյն իսկ առաջիկայ ամսւայ համար: Հիւանդութիւնը որոշ հետքեր էր թողել: Խորը շնչելուց Շիլէրը կողքի ծակոց էր զգում և առհասարակ նրա շնչառութիւնը անբաւարար էր: Մայիս ամսին կրկին հիւանդութիւնը ծանրացաւ, մինչև անգամ առաջւանից աւելի սուր կերպարանք ստացաւ: Հիւանդի ձայնը կարւեց, շնչառութիւնը այնքան զժւարացաւ, որ կարծումէր, թէ ահա, ահա թոքերը տրաքւելու են և շատ անգամ հիւանդը ազքի առաջ մահը տեսնումէր: Սակայն նա բնաւ չէր վախենում մահից, միայն յուսահատւումէր գեռահաս կնոշ՝ պատճառով, մտածելով թէ նա չի դիմանալ այդ պատահարին: Բաղդաւորապէս հիւանդը կրկին կազդուրուեց և ոտքի կանգնեց: Բժիշկների անպայման պահանջին համեմատ՝ Շիլէրը կնոշ հետ գնաց ամառը կարլսբադի ջրերը: Այստեղ նա աշխատում էր լսու կարելցն աղատ լինել որևէ աշխատանքից, նոյն իսկ մամակներ չէր զրում: Օգտուումէր Կարլսբադի նշանաւոր ջրերից, մաքուր օղի մէջ ժամեր էր անցուցանում և վայելումէր գեղեցիկ բնութիւնը: Երբեմն նա զրօննումէր շրջակայքում,

Նոյն իսկ ձիի կամ էշի վրա նստած: Այդպիսով բաւական կաղ-  
դուրեւեց նա և նորից իրան աշխատելու ընդունակ զգաց:  
Միայն թէ նա պիտի շատ չափաւոր աշխատէր և լստ կարե-  
լոյն անհոգ կեանք անցուցաներ: բայց որտեղից... չիւանդու-  
թիւնը ամբողջովին կլանել էր վերջին տարիների արդիւնքը:  
Եւ եթէ նա այսուհետեւ անդադար չգրէր, ինչով պիտի ապրէր  
ինքը կամ իւր կինը: Իսկ եթէ նա կսկսէր կրկին օրէկան  
տասնեւորս ժամ աշխատել  
իսկյն կրացւէր նրա առաջ  
գերեզմանի դուռը, նա կմտնէր  
սև հողը, տանելով իւր հետ  
այնպիսի հագւաղիւտ տաղան-  
դը և մաքի ու փորձառու-  
թեան պաշարը: Վերջապէս  
նա դեռ ի՞նչ էր տեսել կեան-  
քից, կամ իւր հոգեկան ոյժե-  
րի որ մասն էր գործադրել...  
Չէ՞ որ նա դեռ նոր էր կա-  
նօնաւորել կեանքը և նոր  
պիտի կազմակերպէր իւր  
մաքերը, նոր պիտի լոյս ծծէր  
և ճառագայթներ արձակէր... Որքան էլ աշխատումէր հի-  
ւանդ բանաստեղծը հոգս չանել, չմտածել, բայց չէր լինում:  
Նա վհատումէր, տեսնելով թէ ինչպէս իւր իդէալները խոր-  
տակւելու մօտ էին: Անշուշտ այդպիսի վհատութեան ըոպէ-  
ներումն են ծնունդ առել նիլէրի սրտում այն գանդաները,  
որ անումէ նա դառնալով դէպի իւր իդէալները.



Բանաստեղծը հանքալին ջրերում:

Ո՛չ, պատանեկան ոսկեղէն օրեր,  
ինչու էք ուղում ինձնից բաժանւել,

Դաւաճանել ինձ, կորչէլ - չեռանալ,  
Ի՞նչպէս կարող եմ ես ձեզ մոռանալ:  
Ի՞նչպէս թողնեմ ես ազնիւ ցնորքներ,  
Իմ ուրախութեան գեղեցիկ ժամեր,  
Ինչու վազում էք արագ քայլերով,  
Դէպի անսկիզբ և անվախճան ծով....

Արդէն մարած են վառ կրակները,  
Դեռահաս կեանքիս լոյս - ճրագները,  
Խորտակւած են իմ իդէալները,  
Եւ կտրատւած են սրտիս թելերը:  
Իմ երազական քաղցր յոյսերը,  
Եւ սիրտս լցնող իմ անհուն սէրը,  
Հոգեկան կեանքը լոյս գեղեցիութեան  
Զոհւել է գառն իրականութեան:

Որպէս երբեմն սրտով չերմազին  
Սառ մարմարիօնի քարեղէն դէմքին  
Արեստագէտը տալիս էր զգացում:  
Կարծէս մարդկային հոգի ներշնչում:  
Ես պատանեկան սրտով բորբոքւած,  
Մեռած բնութիւնը իմ կրծքին սեղմած,  
Անշէ կրակով բանաստեղծական  
Կեանք էի տալիս նրան բնական:  
Եւ իմ լոյցավառ սրտից վառւելսվ  
Նիւթը խօսումէր մարդկային լեզւով,  
Համբոյր էր զրօշմում իմ պարզ ճակատին,  
Ականչ դնելով սրտիս մեղեղին:  
Ծառ ու ծաղիկը նոր կեանք էր շնորւմ:  
Արծաթեայ առուն բաղցը կարկաչում:  
Եւ բանաստեղծի բարձր արձագանքը  
Կենդանացնումէր մեռած աշխարհը:

Իմ ազատ կուրծքը անզուսպ, անարդել,  
 Ազատութիւն էր կամենում երդել,  
 Խօսքով ու գործով, ձայնով, պատկերով  
 Կեանք էր յոլացնում պայծառ դոյներով:  
 Պատկեր վեհութեան ունէր աշխարհը,  
 Երբ գեռ բացւած չէր կեանքի ծաղիկը,  
 Որպէս փոքրացաւ նրա կերպարանքը,  
 Երբ արձակւեցաւ բոլոր կապանքը:  
 Որպէս թռչումէր, սաւառնում դէպ' վեր՝  
 Երիտասարդը թռվ անվեհեր,  
 Իւր երազական յնորքներով լցւած,  
 Եւ կեանքի թռյնը դեռ չճաշակած:  
 Իսկ նրա համարձակ ծրագիրները  
 Համնումէին մինչ անշարժ աստղերը,  
 Սարսափելի չէր հեռուն, բարձրութիւն,  
 Հոգին դղումէր անհուն զօրութիւն:  
 Թեթև քայլերով առաջ էր վազում;  
 Ոչինչ նրա աչքին դժւար չէր թւում,  
 Եւ նրա երշանիկ կեանքը տեսներով,  
 Ուղեկցումէին ուրախ - յնծալով՝  
 Սէրը — թանկագին սուրբ ընծաներով,  
 Բաղզը — զարդարւած ոսկեղին պատկով,  
 Փառքը — աստղազարդ պապղուն թագով:  
 Ճշմարտութիւնը — արևի շուքով:  
 Սակայն տակաւին կէս ճանապարհին,  
 Ուղեկիցները նրան մէնակ թողին.  
 Մտերիմ ընկերից շատ շուտ կշտացան,  
 Միմեանց ետեից գնացին հեռացան:  
 Եւ թեթևոլիկ բաղզը չքացաւ,  
 Գիտութեան ծարաւն յագուրդ չստացաւ.

Զուտ ճշմարտութեան պայծառ պատկերը  
 Չի նշմարեցին իմ թոյլ աչքերը:  
 Տեսայ փառաշեղ սուրբ պսակները  
 Ջարդարումէին պիղծ գլուխները:  
 Անցան, գնացին քաղցրիկ օրերը,  
 Սիրոյ երշանիկ անգին ժամերը:  
 Եռանդ և աշխոյժ չքացաւ - գնաց,  
 Կեանքի շաւիղը ամայի մնաց.  
 Հազիւ մի գալկուն շող եմ նշմարում  
 Յաւիտենական յուսոյ շրջանում:  
 Այդ աղմկալի ուղեկիցներից  
 Ո՞վ է տակաւին ինձ ընկերակից,  
 Ո՞վ է մնացել սրտի սփոփիչ,  
 Մինչև գերեզման ինձ մսիթարիչ,  
 Դու ես բուժում միայն, դու, սրտի՛ս տէրը,  
 Իմ անբուժելի ծանր վերքերը,  
 Դու ես անողոք բեռը թեթեցնում;  
 Դու ես իմ տանշւած միրտը մեղմացնում:  
 Եւ զու բազմարդին աշխատանք ազնիւ,  
 Առաջ ես մղում իմ կեանքի անիւ,  
 Անընդհատ գործում շարունակ ստեղծում;  
 Միշտ կառուցանում, երբէք չես եղծում,  
 Տիեղերական մեծ շէնքսի համար  
 Աւազ ես կրում անթիւ - անհամար,  
 Բարեկամիս հետ ձեռք ձեռքի բռնած,  
 Դու ես թարմացնում իմ հոգին յոզնած:  
 Բայց հիւանդ բանաստեղծի վհատութիւնը երկար չտեսեց:  
 Մի բարեկամական ձեռք օգնութեան հասաւ նրան և ազա-  
 տեց նրան տաժան վիճակի սոսկալի սպառնալիքներից ....

Շիլէրի նոր բարեկամ դանիական բանաստեղծ Բագէղէնը, Դանիայի մայրաքաղաքում հիմնել էր «Շիլէրեան ընկերութիւն», որի անդամները ժողովներ էին կազմում, ուր զբաղւումէին Շիլէրի գրւածքների ուսումնասիրութեամբ։ Այդ ընկերութեան պատկանումէին և բարձրաստիճան անձինք, ի միջի այլոց հօլշտէյնի դուքս Ֆրիդրիխը և դանիական նախարար կոմն Շէմելմանը։ Նշն տարին, Երբ Շիլէրը հիւանդացաւ, «Շիլէրեան ընկերութիւնը» տօնախմբութիւն էր ծրագրել ի պատիւ Շիլէրի։ Նշանակւած օրը պիտի ընկերութեան անդամները իրանց ընտանիքներով դնային Հէլէրէկ զիւղը՝ մայրաքաղաքի շրջակայքում, և այնտեղ կատարէին ուրախ հանդէսը։ Հաղիւ նրանք պատրաստւել էին ճանապարհ ընկնելու, Երբ հասաւ նրանց մի սխալ լուր, իբր թէ Շիլէրը մեռել է։ Երբ ամենքը շւարած էին մնացել, կոմն Շէմելմանը դիմեց Բագէղէնին ասելով։ «Մէնք մտաղիր էինք գնալ Հէլէրէկ, որ ուրախանանք Շիլէրի „Ուրախութեան Երդը“ Երգելով։ Այժմ դարձեալ կդնանք, միայն թէ վշտացած սրտով կմէնք այդ Երգի իմաստալից խօսքերը»։ Այդպէս էլ արին։ Նրանք մնացին Երեք օր Հէլէրէկում, որ մի գեղեցիկ տեղ էր ծովի ափին, և քաշալերեցին ու ոգենորեցին իրար, ընթերցանելով Շիլէրի աշխատութիւնները։ Յետոյ այդ բոլորի մասին Բագէղէնը գրեց Ենայի պրօֆեսօր Ռէյնհօլդին, որը մի առ մի հաղորդեց բանաստեղծին, Երբ նա հազիւ վերադարձել էր Կարլսբադից։ Շիլէրի վրա շատ մսիթարական տպաւորութիւն արտաւ այս տեղեկութիւնը։ Խոկ Լոտտան, տանելով Ռէյնհօլդին մի կողմ, աբտասւելով ասաց նրան։ «Յայտնեցէք Բագէղէնին, զրեցէք Բագէղէնին...» և արտասուքից խեղղւելով չկարողացաւ ասել, թէ պրօֆեսօրը ինչ պիտի գրէր Բագէղէնին։ Ռէյնհօլդը դուրս գնաց և հէնց այդպէս էլ զրեց բոլորը դանիական բանաստեղծնաց և հէնց այդպէս էլ զրեց բոլորը դանիական բանաստեղծնաց։ Պրօֆեսօրը յայտնեց, որ Շիլէրը ոչ թէ մեռել է, այլ

բաւականաչափ կազդուրւել է, միայն թէ նա չէ կարող բոլորվին առողջանալ, որովհետեւ նիւթական միջոցներից զուրկ լինելով, ստիպւած է անընդհատ աշխատել, մինչդեռ նրան հանգստութիւն է հարկաւոր։ Բագէղէնը անմիջապէս հաղորդեց բոլորը կոմն Շէմելմանին, որը սկսեց խորհրդակցել թագաժառանգի հետ, թէ ինչ միջոցով կարելի է օդնութեան համել հիւանդ բանաստեղծին։

Շուտով Շիլէրը ստացաւ այդ ազնիւ պարոններից մի այնպիսի քաշալերական նամակ, որին կնախանձէին քսաներորդ դարի հարուստ իշխանաւորներից շատերը։ Աւելորդ չենք համարում ծանօթացնել ընթերցողին այդ նամակի հետ։

«Երկու բարեկամներ, որոնք միացած են հանրամարդկային քաղաքացիական շահէրով, ուղարկում են Ձեզ այս նամակը, ազնիւ պարոն։ Նրանցից ոչ մէկին չէք ճանաչում Դուք, բայց նրանք երկուսն էլ յարգում ու սիրում են Ձեզ։ Երկուսն ևս հիացնում է Ձեր հանձարի բարձր թռիչքը, որը Ձեր նորագոյն գրւածքների վրա դնում է մարդկային, ամենաերեսի ստեղծագործութիւններից կնիքը։ Նրանք գտնել են այդ աշխատութիւնների մէջ զդացմունք, միտք և ոգենորութիւն, որի հապերով և ամբացել է նրանց բարեկամնութիւնը։ Ուստի մեծ էր նրանց տիրութիւնը, Երբ լսեցին բարեկամի մահւան լուրը և ոչ պակաս արտասուք թափեցին ի շարս այն բազմուրը և մարդկանց, որոնք ճանաչում ու սիրում են Ձեզ։ Այդ կենդանի զդացումը, որ ներշնչում էք Դուք, թող արդարացնէ մեր անհամեստ համարձակութիւնը։ Ձեր առողջութիւնը քայլացւել է զժւարին և միշտ լարւած աշխատութեան պատճառով և պահանջում է առժամանակ կատարեալ հանգստութիւն, որպէսպի Դուք առողջանաք և Ձեր կեանքին սպառնացող վիտանգից ազատւեք։ Սակայն Ձեր հանգամանքները, Ձեր վիտանգից ազատւեք։ Պահանջում էն Ձեզ այդպիսի հանգստութիւն ունենալ։ Ճակը արդելում են Ձեզ այդպիսի հանգստութիւն ունենալ։

Կը կամենաք արդեօք ուրախութիւն պատճառել մեզ, թշլ  
տալով որ մենք հեշտացնենք Ձեր հանգստութեան հսարաւո-  
րութիւնը: Մենք առաջարկումենք Ձեզ իրը նուելը տարեկան  
հազար տալէր (մօտ 1500 ր.) երեք տարի շարունակ: Բնդու-  
նեցէք այդ նուերը, ազնիւ պարոն: Թող մեր տիտղոսը Ձեզ  
պատճառ չտայ մեր խնդիրը մերժելու: Մենք չենք ճանաչում  
աւելի բարձր տիտղոս, բան թէ հայր լինելու այդպահ: Մենք  
դիմումենք Ձեզ իրեւ մարդ, իրեւ Ձեր եղբայրները, ոչ իրեւ  
ունայն իշխանաւորներ»:

Շիլէրի վրա շատ լաւ տպաւորութիւն արաւ այդ մեծա-  
հոգի առաջարկութիւնը: Առանց տասաննելու ընդունեց նա  
առաջարկութիւնը և անմիջապէս յայտնեց իւր խորին շնորհա-  
կալութիւնը: «Սյնպիսի մի ժամանակ—գրեց նա—երբ տաժան  
հիւանդութեան հետքերը պղտորումեն իմ սիրառ և սար-  
սափեցնումեն իմ երեակայութիւնը մոայլ ու տիսուր ապա-  
գայի պատկերով, իբր երկու պահապան հրեշտակներ մեկնումէք  
դէպի ինձ ձեր ձեռները ամպերի միջից: Սյն մեծահոգի առա-  
ջարկութիւնը, որ գուք անումէք, գերազանցումէ իմ ամենա-  
յանդուգն ցանկութիւնը: Իսկ այն ձեր, որով գուք ձեր  
առաջարկութիւնը անումէք, աղատումէ ինձ ձեր բարեսրու-  
թեան արժանի չինելու երկիւղից: Ես պիտի ամօթից կամրէի,  
եթէ մի այդպիսի առաջարկութեան հիմքումորեէ ուրիշ բան  
ենթադրէի, բայց եթէ զուտ մարդասիրութիւն... Մաքուր  
սրտով և ազնւութեամբ ձեր տւածը, ես նոյն սրտով կարող  
եմ ընդունել»:

Ուրախացած յայտնումէ Շիլէրը Դրէզդէնի բարեկամին  
այդ նորութիւնը և աւելացնումէ. «Թէ ինչպէս եմ ես այժմ  
տրամադրւած, զու ինքդ կարող ես երեակայել: Ես մտադիր  
եմ գործերս բոլորովին կարգի բերել պարտքերս վճարել և  
մնունդի հոգսերից աղատւած լինելով, միանդամայն նւիւել

իմ ծրագիրներին: Այժմ չեշջաղէս ժամանակ իւնչնան սովորելու,  
նիւթ ժողովելու և յաւիտենականութեան համար աշխատելու»:  
Լաւ հանգստութիւն է... Ուրեմն դարձեալ սովորելը, ուսա-  
նել աշխատել... Ուժգին սիրտ ու զորեղ հոգի ունեցող  
արարածները գերեզմանի դռանն էլ կամենումեն շարունակ  
ուսանել, շարունակ ուսուցանել և այդ բանի մէջ հանգստու-  
թիւն որոնել...

Նոր տարին սկսեց հիւանդ բանաստեղծը ուրախ յշյսերով:  
Նա թէև դիտէր, որ իւր առողջական զրութիւնը անբաւարար  
է, բայց համբերութեամբ զիմանումէր ցաւերին, չկամենալով  
սեացնել շրջապատողների կեանքը: Որպէսզի հնար ունենայ օրէ-  
կան մի քանի ժամ զաշտերում զբօնելու, նա մի ձի գնեց:  
Ընկերական աղատ տեսակցութիւն ունենալու համար, Շիլէրը  
այնպէս արաւ, որ մի շարք բարեկամ երիտասարդներ ամեն օր  
գալիս էին ճաշելու նոյն տանը, ուր բանաստեղծը և իւր կինը  
ապրումէին: Իւրաքանչիւր մարդ ճաշում էր իւր հաշւին:  
Բնդհանուր սեղանի շուրջը շատ լաւ էր անցնում թէ բանա-  
ստեղծի և թէ բոլոր մասնակցողների համար: Ինքը Շիլէրը  
շատ չէր խօսում, բայց ժամանակ առ ժամանակ ուշակրու-  
թեան արժանի մինկատողութիւն էր անում, որը և նիւթ էր  
տալիս ամենքին: Մասնակցողներից շատերը հետաքրքրւումէին  
հռչակաւոր կանտի փիլիսօփայական նոր մաքերով, ուստի  
յաճախ խօսակցութիւնը արդէն դւարձական բնաւորութիւն  
էր ստանում, կամ թէ սկսումէին թուղթ խաղալ:

Բայց չպէտք է կարծել, որ նա անցուցանումէր օրէրը  
առանց զբաղմունքի: Այդ անհնար էր նրա համար: Ճշմարիտ է  
նա այժմ համարեա ոչինչ չէր զրում: Բայց փոխարէնը ինքը

շարունակ սովորումէր: Թէ որքան զօրեղ էր գեռ Շիլէրի ճշմարտութեան ծարաւը, երևումէ նրա հետեւեալ ոտանաւորից, ուր նա ճշմարտութեան ասպարէղը անսահման ծովի հետ է համեմատում; որի մէջ կարելի է յաւիտեանս լողալ առանց վերջնական կէտին հասնելու.


Հաղիւ մտած կեանքիս դարուն,  
Ես թողեցի հայրական տուն,  
Թողի խաղեր պատանեկան,  
Դարձայ մոլոր թափառական:  
Սիրտս լիքը յցս ու հաւատ,  
Ես մոռացայ ոսկի - արծաթ,  
Եւ մանկական անմեղ հոգով  
Առաջ գնացի ամուր ոտքով:  
Եւ մի զօրեղ գաղտնի զգացում  
Դրդումէր ինձ, առաջ զցում:  
Նա ասումէր. «Գնա՞ անխոռվ  
Աշեւլան ճանապարհով:  
Եւ հասնելով ոսկէ դռնին,  
Դու ներս մտիր նոյն բոպէին,  
Ուր չկայ կեանք անասնական,  
Այլ անարատ, անապական»:  
Գիշեր - ցերեկ առաջ գնացի,  
Հանգիստ կեանքին կարօտ մնացի,  
Բայց իմ ուզածն, իմ որոնած,  
Երբէք աչքիս չի երեաց:  
Խանգարեցին ինձ լեռները,  
Արդեւք դրին հեղեղները՝  
Մազլցեցի լեռնաշաւղով,  
Կամուրջ դրի գետի վրայով:

Հասայ կեանքիս երեկոյեան,  
Գետի ափը արևելեան:  
Վստահելով չըի հոսանքին,  
Ինձ յանձնեցի գետի կամքին:  
Ալիքների հետ խաղալով  
Մտայ վերջը անսահման ծով.  
Իսկ չրային անասլատում  
Ոսկէ դուռը չի երևում. . . .  
Ոչ մի ուղի մեղ չէ տանում,  
Տիեզերքի ափը հանում,  
Երկինք երկիր չեն միանում:  
Այնուելլ չէ այսորեւ դառնում:

Զնայելով այդ ախուր կարծիքին, այնուամենայնիւ Շիլէրը շարունակումէր լողալ . . . Անկողնի մէջ անգամ նա ձեռքից վայր չէր դնում Կանտի վիլիսօփայական դրւածքները: Կանտը մեծ ներգործութիւն արաւ Շիլէրի վրա, որը մի քանի տարի շարունակ լուրջ կերպով ուսումնասիրումէր Կանտի աշխատութիւնները: Ուստի աւելորդ չի լինի կարծ կերպով ծանօթանալ մեծ վիլիսօփայի հետ:

Կանտը ծնւել է Պրուսիայի Կէնիգսբերգ քաղաքում 1804 թւին: Նա մի թամբագործի որդի էր: Ֆիզիկապէս շատ էլ առողջ չէր. փոքրահասակ էր և սեղմւած կրծքով: Նրա ոսկրային կազմւածքը փոքր ինչ թցյլ էր և աչ ուսը ետեի կողմից փոքր ինչ զուրս ընկած էր: Զնայելով աննպաստ հանգամանքներին, նա կարողացաւ բարձրանալ ժամանակակից զետութեան գաղաթը: Դեռ երեխայ ժամանակ նա ստացաւ լուրջ կրօնական կրթութիւն: Ապա հայրենի քաղաքի համալսարանում սովորեց մատեմատիկա, ֆիզիկա և վիլիսօփայութիւն: Իննը տարի շարունակ տնային ուսուցչութեամբ պարա-

պելուց յետոյ, քննութիւն բռնեց և գօկաօրութեան դիպլօմ ստացաւ և յետոյ էլ պրիվատ-դոցէնտի պաշտօն։ Տասնուհինդ տարի սյդ պաշտօնը վարելուց յետոյ, նշանակւեց նա տրամաբանութեան և բնագանցութեան պրօֆէսօր՝ նոյն համալսարանում։ Ամբողջ կեանքում ամենալուրջ կերպով դրադումէր նա դիտնական ու փիլիսօփայտկան ուսումնական թիւններով և մի շարք յօդւածներ զրեց մարդկային մտքի ամենահիմնական հարցերի մտսին։ Վերշապէս ծերութեան օրերում երբ արդէն նրա մտաւոր զարդացումը հասել էր ամենաբարձր զրութեան, կանոր զրեց և հրատարակեց իւր ամենանշանաւոր աշխատութիւններ՝ 1) Զուտ մտքի քննութիւնը, 2) Գործնական մտքի քննութիւնը, 3) Դատողական ոյժի քննութիւնը։ Այդ երեք զրւածքները հիմնովին փոխեցին ամբողջ փիլիսօփայութեան ու դիտութեան ուղղութիւնը։



Կանտ։

Կանոր ամբողջ կեանքում հետամուտ էր դանելու բռն ճշմարտութիւնը՝ մարդկային կեանքին ու տիեզերական հարցերին վերաբերեալ։ Նա եկաւ վերջապէս այն եղրակացութեան, թէ մարդու ամբողջ դիտութիւնը փորձի և մտածողութեան միացած ոյժով ձեռք բերւած արդիւնքն է։ Առանց փորձի վրա հիմնելու, զուտ մտածողութեամբ մենք չենք կարող որեւէ ճշմարտութիւն ըմբռնել։ Մտածողութիւնը առանց փորձի և

փորձը առանց մտածողութեան կատարելապէս ոչ մի արժէք չունին։ Բայց որովհեաւ իւրաքանչիւր փորձ անպայման կապւած է մեր զգացմանքների հետ, ուստի այդ զգացմունքների աշխարհից գուրս մենք ոչ մի փորձ ունենալ չենք կարող։ Այդպէս անւանւած՝ վերացական երևոյթների մնախն մենք ոչինչ չգիտենք և երբէք էլ չենք կարող զիտենալ։ Այնպէս որ կանոր գուրս է վանդում մտածողութեան և գիտակցութեան ասպարէզից կրօնի, Աստուածային յայտնութեան և սրանց նման վերացական գաղափարները։ Բայց երբ գործնական մտքի քննութեան մէջ հերթը հասնումէ բարոյական հարցերին, կրկն կանոր տեղ է տալիս վերացական գաղափարներին։ Այդպիսով զուրս է դալիս, թէ վերացական գաղափարները ոչ թէ մտածողութեան այլ կամեցօղութեան արդիւնք էն։ Մարդու սրտում պարտաճանաչութեան զգայմունք կայ. այդ անհրաժեշտ է, որպէսզի մարդկային կեանքը հնարաւոր լինի։ Այդ զգացմանքին ընդհանուր բնաւորութիւն են տալիս կրօնի և Աստուածութեան գաղափարները։ Միայն թէ կրօնը, որի միակ նպատակը ամենաբարձր բարոյականութիւնն է, պիտի լինի ներքին, հոգեկան, արտէ կան, անկախ եկեղեցական որեւէ գաւանաբանութիւններից, որոնք ժամանակաւոր երևոյթներ են և ապագայում պիտի բոլորովին անհետանան։

Կանոր սկզբունքները բոլորովին նոր հողի վրա դրին բնական երևոյթների հետազոտութիւնը, դրական տարր մացրին երաւաբանական և մանկավարժական հարցերի մէջ։ Իսկ նրա մարդու ամբողջ կեանքութեան մէջ մայնողը և ժողովրդականացնողը նիլլէրը եղաւ։

Երբ նիլլէրը այդպէս խորասուզւած կանոր մաքերի մէջ, փիլիսօփայական միսիթարութիւն էր որոնում ծարաւ հոգոյ փիլիսօփայական մասիթարութիւն էր ունեցաւ նա նորից մանկական միսիթամար, յանկարծ բաղդ ունեցաւ նա նորից մանկական միսիթարութիւն և սփոփանք ստանալու։ Բանաստեղծի մայրը ժամանակութիւնը յանկարծ բաղդ ունեցաւ նա նորից մանկական միսիթարութիւն և սփոփանք ստանալու։

տեսութեան եկաւ նրան, բերելով իւր հետ Շիլէրի ամենա-  
փոքր քըռչ նանէտին: Շիլէրը երեխայի նման ուրախացել էր:  
Մայրը չնայելով քաշած նեղութիւններին և հոգսերին, շատ չէր  
փոխւել: Իսկ նանէտը, որին Շիլէրը փաքրիկ աղջիկ էր թո-  
ղել, այժմ մեծացել ու սիրուն օրիորդ էր դարձել: Նանէտը  
շատ էր սիրում գեղարւեսար և մատածումէր երբ և է բեմի  
վրա խաղալ Շիլէրի ստեղծած կանացի տիպերը: Առհասարակ  
Շիլէրի գեղարւեսարական հոգին որոշ չափով երեսումէր նանէ-  
տի մէջ, ինչպէս նրա փիլիսօփայական տարրը արձագանք էր  
գտնում Խրիստօֆինայի հոգոյ մէջ: Բանաստեղծը և իւր կինը  
չափաղանց լաւ ընդունեցին հիւրերին և տարան նրանց նոյն-  
պէս թուգոլշտատ: Ապա Եղիսաբէթը աղջկայ հետ վերագառ-  
նալով, խօսք առաւ Շիլէրից, որ նա առաջին հնարաւորու-  
թեան դէպքում ծնողներին այցելութեան գնայ: Նրանք ենթա-  
զրումէին, թէ Վիւրտեմբերգի գուքոր այլեւ չի նորոգիլ հին  
հաղածանքը և չի արգելիլ Շիլէրին հայրենիքը այցելու:

Մայրը գնալուցյեառյ Շիլէրը սկսեց պատրաստել՝ տոա-  
շիկայ կիսամեակի դասախոսութիւնները շարունակելու համար:  
Նա պիտի դասախոսէր էստետիկայի մասին, որի հիմնական  
սկզբունքները լուրջ կերպով քննել էր Կանտը «Դասողական  
ոյժի» մէջ. ուստի Շիլէրը ուսումնասիրումէր այդ զրւածքը:  
Այնուամենայնիւ նա քննում ու լուսաբանումէր ինդիրները  
բոլորովին բնքնուրցն կերպով: «Ես չեմ հանդսատանալ—գրում  
է նա Կէրնէրին—մինչև որ չթափանցեմ այդ նիւթի մէջ»:  
Շիլէրին լսելու համար ստորագրեցին 24 ուսանողներ, որոնցից  
6-ը ձրի էին, իսկ 18-ը վճարումէին մոտ 300 տալէր: Այդ  
գումարը բոլորովին բաւական էր համարում Շիլէրը, որովհե-  
տեւ միւս կողմից նոյն նիւթերը տալիս էր նա ապագրելու  
ժողովածուի մէջ որի համար նոյնպէս վարձ եր ստանում:

Մինչդեռ Շիլէրը կանսնաւոր շարունակումէր իւր գա-


սախոսութիւնները, միւս կողմից նրա ուշաղրութիւնը զրա-  
ւեցին ֆրանսիական մայրաքաղաքի սարսափելի դէպքերը:  
Շիլէրը սկզբում համակրանքով էր վերաբերում դէպի ֆրան-  
սիական յեղափոխութիւնը, մեծ հետաքրքրութեամբ կարդում  
էր նրանց «Մօնիստէօր» լրագիրը, որի մէջ հրատարակումէին  
աղքային ժողովի որոշումները: Ազգային ժողովը, կամենալով  
բարյապէս վարձատրել այն նշանաւոր մարդկանց, որոնք  
աղատութեան և հանրամարդկային գաղափարների քարոզիչներ  
էին համարում: «Փրանսիական քաղաքացու» դիպլոմ էր ու-  
ղարկումնրանց: Դիպլոմ ստացողների ցուցակի մէջ կլօպշտօ-  
կի, Պէստալոցցիի, և սրանց նմանների շարքում գտնուումէր  
և Շիլէրը, որի «Աւազակները» մ.ծ յաջողութեամբ խաղում  
էին ֆրանսիական բեմի վրա, համարելով Կարլին մի զօրեղ  
յեղափոխական: Բայց Շիլէրը, ինչպէս գերմանական նշանաւոր  
մարդկանցից շատերը, ի վերջոյ ստուաւ յեղափոխականներից,  
երբ նրանք սկսեցին անխնայ արիւն թափել և կախաղան  
հանեցին նոյն իսկ այն ինտելլիգէնսա անձնաւորութիւններին,  
որոնք մեծ ծառայութիւններ էին մատուցել յեղափոխութեան  
պատրաստելու գործում:

Այն օրից սկսեալ, որ Շիլէրը նորից տեսաւ մօրը և  
քրոջը, նրա սիրտը վեր էր կացել հայրենիքի համար, մանա-  
ւանդ նա տեսնել էր ուղում ծերունի հօրը, որը իւր նամակ-  
ներով խոսավանումէր, թէ ինքը «Իաւլանդ է Էպէլանդ»  
հոնտան վերաբերնածն և չհասկանալով իւր մտքի հօրիզոնից վեր  
եղած բաները, իզուր դանդատներ է արել որդու դէմ: Որդին  
ի հարկէ վաղուց մոռացել էր բոլորը, բայց չէր մոռանում  
սիրող հօր պատկերը: «Շվարիտ գնալու միտքը—գրումէ բա-  
նասաեղծը Կէրնէրին—ես չեմ կարող թողնել և իրաւունք  
չունեմ: Հայրս յօյս է դրել այդ բանի վրա և ես պարուաւոր  
եմ ցոյց տալ նրան այդ սէրը: Շուտով կը առանայ նրա հօթա-

նասուն տարին, ուրեմն չէ կարելի այլես սպասել առաջ նրան»։ Մի քանի օրից յետոյ զրումէ Շիլէրը նոյն բարեկամին, թէ մի նոր պատճառ էլ կայ ճանապարհորդութիւնը շուտացնելու համար։ Երեք ամիս էր ահա, որ Շիլէրի կինը իրան լաւ չէր զգում, շուտ-շուտ տկարանումէր և Շիլէրին վիշտ էր պատճառում։ Բայց այժմ վիշտը ուրախութեան փոխւեց, երբ նրանք իմացան, թէ ինչումն է բանը։ «Այժմ արդէն պարզ է—զրումէ բանաստեղծը—որ կինս պատճառաւոր է և ես պիտի շտապեմ, որ տեղ հասնելուց առաջ կինս դոնէ մի ամիս հանդստանայ։ Զեմ կարող քեզ բայատրել, թէ որպէս ուրախ է այժմ իմ սիրով։ Այժմ ես իմ ցաւի միայն կէսն եմ զգում։ Ինձ այնպէս է թւում, իբր թէ իմ կետնքի մարող չահը մի ուրիշ պատկերով նորից վառւումէ, ուստի ես հաշտումեմ իմ ճակատազրի հետ»։ Շուտով ստացաւ, իբր պրօֆէսօր, Վէյմարի զքսից հայրենիք զնալու իրաւունքը։ «Զեր առողջութեան վերականգնելը — զրումէ դուքսը — իմ կարեսը ցանկութիւններից մինն է։ Երանի թէ Զեր հայրենիքի օդը իրականացնէ, թէ իմ և թէ Զեր յոյսը։ Յայտնեցէք Զեր կնոշ իմ խորին յարգանքը և իմ կողմից յաջողութիւն ցանկութէ նրան, իւր առաջիկայ „պատերազմի“ մէջ»։ Ահա թէ որպիսի սիրովիր մարդ էր Վէյմարի դուքսը։ Երբէք ոչ ոքի խնդիրք չէր մերժիլ, եթէ հասրաւորութիւն ունենար կատարելու։ Նա մի տեսակ հայր էր իւր ամբողչ ժողովրդի համար և կարծես թէ պատրաստ էր կրծքին սեղմելու ամեն մի իրան զիմողին։ Քոլորովին ուրիշ մարդ էր ներկայացնում Վիւրտեմբերդի դուքսը։ Խնձու երեսումէր, տասն տարի շարունակ պահել էր նա չար վրէժը իւր սրտում։ Շիլէրը երկու անգամ խնդիրք ուղարկեց, որ թոյլ տայ իրան, գալ հայրենիք հանքային ջրերում բժշկւելու համար, բայց ոչ մի պատասխան չստացաւ։ Ուստի նա որոշեց զնող մինչև հայրենիքի սահմանը և այնտեղ

մի քաղաքում իշեանելով, հնար ունենար տեսակյելու իւր բարեկամների հետ, սահմանի վրա։ Օղոստոսի սկզբին Շիլէրը կնոշ հետ ճանապարհ ընկաւ գէպի հայրենիքի սահմանները։

Մի շաբաթ զժւարին, բայց յաջող ճանապարհորդութիւնից յետոյ, հասան նրանք Վիւրտեմբերդի սահմանին մօտ գտնւող Տէյլրոն քաղաքը, ուր իշեանեցին «Արեգակի» հիւ-




Վիւրտեմբերդի դուքսը։

բանոցում։ Շիլէրը տեղեկացրեց քաղաքային կառավարութեան, որ ինքը մասղիր է բաւական ժամանակ մնալ այդ քաղաքում։ Քաղաքապետը և բոլոր խորհրդականները զաղափար ունեին բանաստեղծի մասին, և զիտեին թէ ինչպէս պէտք է գնահատեն այլպիսի մի հիւրի այցելութիւնը։ Իսկոյն սենատոր Շուրլէրին ուղարկեցին բանաստեղծի մօտ իրեն պատգամաւոր քաղաքի կողմից։ Շիլէրը բարեկամացաւ Շուրլէրի հետ, և սիրումէր ականչ զնել նրան, երբ նա բայատրումէր իւր

սիրած աստղաբաշխական և աստղագիտական երևյթները:  
Եղդ առասպելական ահսութիւնները իւրացնում էր բանաս-  
տեղծը՝ Վալլէնշտէյնի պատկերը ստեղծելու համար:

Հիւրանոցի թանկութեան պամառովի Շիլլէրը շուտով  
տեղափոխւեց մի մասնաւոր բնակարան: Բանաստեղծի ծերուկ  
հայրը իսկոյն ամբողջ ընտանիքով շատապեց կարօտեալ որդուն  
ահսնելու: «Հայրս — զրումէ Շիլլէրը Կերնէրին — եօթանաս-  
նամեայ հասակում բոլորովին առողջ պատկեր է ներկայացնում:»  
Նա անդնդհատ աշխատումէ և հենց այդ բանն է նրան առողջ  
ու թարմ պահում: Կարօլինան, որը ամուսնուց բաժաննելով  
այժմ գտնուումէր Վիւրտեմբերդի սահմաններում, նոյնպէս  
եկաւ քրոջը և փեսային տեսնելու: Տեսաւ Շիլլէրը իւր մի շարք  
բարեկամներին և ծանօթներին: Բայց այդ բոլորը գեռ հայրե-  
նիք չեր... Թոյլ ոտներով, ծանր-ծանր շունչ քաշելով բարձ-  
րացաւ տկար բանաստեղծը խաղողի այղիների միջով Վարդ-  
բերդ սարի գագաթը, որտեղից բացւեց նրա աչքերի առաջ  
քաղցր հայրենիքի սրատղմայլ պատկերը... Մտարերեց արդ-  
եօք մարգարէ-բանաստեղծը, որ շատ գարեր առաջ Փասկա  
լեռան գագաթից նոյնափիսի կարօտով նայում էր Մովսէս մար-  
գարէն դէպի Քանանի հովիտները... Ահա հայրենի լեռներն  
ու ձորերը, ահա նրա ոլոր-մոլոր զետերն ու զետակները  
գարձեալ խաղաղ և անդորր վաղում էն կանաչ գաշտերի միջով:  
Միթէ իրաւ հայրենասէր բանաստեղծը կոտրւած սրտով  
պիտի նորից հեռանայ հայրենիքի սահմաններից, առանց նրա  
ողը ծծելու, նրա չուրը խմելու...



Շիլլէրի ապառաժը Ալպեան լեռներում:

XVII.

Զնայելով, որ արդէն  
զանազան պատրաստու-  
թիւններ էին տեսել Հեյլ-  
բորնում ձմեռելու նպատա-  
կով այնուամենայնիւ Շիլ-  
լէրը քանդեց այդ ծրագի-  
րը և որոշեց առանց այլւ-  
այլի տեղափոխւել Լիւդ-  
վիկսբուրգ, որը գտնուում էր  
Սոլիտիւդից միայն երեք  
ժամանակակից հեռաւորութեան  
վրա: Շուրջ Շիլլէրը նախազգու-  
շացնում էր բանաստեղծին,  
մի գուցէ զուքսը որևէ վնաս  
հասցնէ նրան, բայց Շիլլէրը հաւանական չեր համարում այդ,  
որովհետեւ ծերացած և հիւանդ գուքսը չեր կամենալ լարել  
իւր դէմ ամբողջ գերմանական ժողովրդի հասարակաց կարծի-  
քը, քանի որ Շիլլէրը այժմ որևէ զինուորական բժիշկ չեր, որի  
հետ կարելի է վարւել սրտի ուզածի պէս: Եւ Շիլլէրը չեր  
սխալում: Դուքսը որոշել էր «անուշաղիր թողնել» բանաստեղ-  
ծին, իբր թէ նա տոհասարակ այլևս գցութիւն չունէր: Իսկ  
Շիլլէրի սիրան էլ հենց այդ էր ուզում: Ուզիղ մի ամիս Հեյլ-  
բորնում մնալուց յետոյ Շիլլէրը գնաց քրոշ հետ Լիւդվիկս-  
բուրգ և տեղաւորւեց մի յարմար բնակարանում:  
Հաղիւ նրանք տեղաւորւել էին, երբ սկսւեց Լոտտայի  
«պատերազմը»: Սիրող ամսւափնը շատ վախում էր, և որքան  
էլ աշխատում էր իրան զսպել, այնուամենայնիւ նրա տարա-

կուսանքը և անհանգստութիւնը պարզ նշմարւումէր: Ծնունդի ժամին նա, իւր ուշադրութիւնը ցրւելու համար, խորասուցել էր Կվինտիլեանի «Դաստիարակչական սկզբունքների» մէջ: Երբ ծննդկանը աղատւեց, Շիլլէրի ուրախութեան չափ չկար: «Ես տեղեկացնում եմ Ձեզ — գրումէ նա իւր բարեկամ մի խմբազրին — իմ հոռագոյն սուենժագործութեան մասին, ոչ այն նպատակով, որ Դուք յայտարարէք Ձեր լրագրում, այլ որ Դուք էլ ուրախանաք ինձ հետ միասին: Ահա հինգ օր է, որ ես մէկ առողջ և առօդ աղոյ ունեմ, որը ինձ անսահման ուրախութիւն է պատճառում, որովհետեւ իմառաջին հեղինակունն է գեղարդում այդ ճիշճի մէջ:

Լիւդվիկսբուրգում այցելում էին Շիլլէրին նախկին ընկերները և գտնում էին, որ իրանց հանձարեղ բարեկամը սաստիկ փոխւել է գէպի լաւը, թէ նրա էութիւնը մի տեսակ կատարելագործւած կերպարանք է ստացել: Երիտասարդ օրերի բոլոր կոշտ ու կոպիտ աարդերք անյայտացել էին, նախկին անտարբերութիւնը հազուստի և արտաքին ձևերի մէջ այլ և չկար, ընդհակառակը նկատւում էր այժմ նուրբ ձևեր և շարժումներ: Նախկին կրակոտ և աղմկալի բնաւորութեան տեղ այժմ նկատւում էր մեղմ լրջութիւնը և սիրալիր վարւեցողութիւնը թէ գործի և թէ խօսքի մէջ: Իսկ Շիլլէրի մտաւոր առաջդիմութիւնը անմիջապէս աչքի էր ընկնում: Նրա հետաքրքիր խօսակցութիւնը զանազան առարկաների մասին միանգամայն հիացնում էր ընկերներին, որոնք միայն ցաւում էին, որ Շիլլէրի շարունակ կրկնող տկարութեան պատճառով, ստիպւած էին սահմանափակել իրանց այցելութիւնները:

Իսկ Շիլլէրը իւր կողմից շատ նպաստաւոր հայեացք ըստ կազմեց հին բարեկամների մասին: Ահա թէ ինչ է զրում նա կէրնէրին. «Իմ հին ծանօթներից շատերին եմ տեսնում ես, բայց միայն քչերն են հետաքրքրում ինձ: Ումանք, որ մի ժա-

մանակ լուսամիտ, առաջադէմ զլուխներ էին, այժմ բոլորովին նիւտաղաց են գարձել և մի տեսակ բանացել են: Մի քանի պարսններ մինչեւ օրս պահել են նոյն գաղափարները, որ մի ժամանակ ես ինքս եմ նրանց տւել. կնշանակէ որ սրանք զադարկ մարդիկ են»: Կային, ի հարկէ, մի քանի այնպիսիները, որոնք խկապէս առաջ էին գնացել: Իւր բարեկամ Հօֆէնի համար ցաւում էր, որ նա, թէ շատ առաջ է գնացել որպէս բժիշկ, բայց իրը զրող չէ արդարացրել այն յշյուրը, որ մի ժամանակ կարելի էր նրա վրա գնել:

Հայրենիքումն էլ հանգստութիւն չգտաւ տարաբագդ բանստաեղծը, որից ձեռք չէր վերցնում չարագուշակ հիւանդութիւնը: Որքան էլ Շիլլէրը, փիլիսօփայի լուրջ հայեացքներով զինւած, աշխատում էր մսիթարութիւն գտնել աղնիւաշխատանքի մէջ, այնուամենայնիւ որոշ բոպէներում նրա համբերութեան բաժակը լցւում էր և փիլիսօփայ-բանաստեղծը միանդամայն յուստիաւում էր: «Եցալիսի մի յամառ հիւանդութիւնը — զրում է նա բարեկամին — որը չնայելով բաղմատեսակ աղդեցութիւններին, ամենաչնչին փոփոխութեան անդամ չի ենթարկում ոչ գէպի լսուր, ոչ էլ գէպի վատր, վերջապէս կարող է յուստիատեցնել ինձանից էլ զորեղ կամք ունեցող մարդուն: Իմ վերջին նամակից յետոյ գեռ շատ բաներ են պատահել, որոնք ընդունակ էին ընկճելու ինձ. Իմ փոքրիկիս հիւանդութիւնը, որից նա կրկին կատարելապէս աղատւեց, իմ սեփական հիւանդութիւնը, որ ինձ շատ քիչ ժամեր է տւել պարապելու համար, իմ աղագայի անորոշութիւնը, և առաջնորդ հաստից համար կատարեալ բացակայութիւնը, որպիսին ինձ համար շատ կարեւոր կլինէր: Նեարդային ակարութեանս պատճառով, իմ զգացմունքները գտրձել են աւելի զրգուն և աւելի զգացուն բոլոր ծուռ, կոպիտ, անտաշ և անձոշակ բաների գէմ:

Ես այժմ մարդկանցից աւելի եմ պահանջում, քան թէ մինչեւ այժմ, և անբազգութիւն ունեմ շարունակ հանդիպելու այնպիսիներին, որոնք այդ տեսակէտից բոլորովին անխնայ են: Տաղէ երկինք, որ իմ համբերութիւնս չլերշանայ, և կեանքը, որը այդպէս յաճախ մօտենումէ մահու դռան, տակաւին որեւէ արժեք ունենայ իմ աչքին»:

Բայց վհատութեան բոպէները շուտով անցնումէին և բանաստեղծը կրկին մխիթարութիւն էր գտնում աշխատանքի մէջ: «Ես ինձ միշտ երշանիկ եմ զգում — ասումէր նա — երբ զբաղւած եմ և գործու յաջող է լնթանում»: Համարեա ամեն օր կարդումէր հօմերոսից և յաճախ մտածումէր վալլէնշտէյնի մասին: Երբ բանաստեղծը հիւանդ պառկած էր լինում անկողնում, նրա շուրջը շարւած զեղաշիշերի մէջ գտնումէր նոյնալէս կանտի «Դատողական ոյժի քննութիւնը»: Հէնց որ իրան փոքր ինչ լաւ էր զգում, սկսումէր զրել «Գեղարւեստագիտական նամակները», որոնց կարգալով մարդ գալիս է այն եղբակացութեան, որ նոյն իսկ տանջանքների ու ցաւերի միջոցին, Շիլլէրի հոգեկան աշխարհը մնումէր առողդ և թարմ դրութեան մէջ: Այդպիսի ծանր օրերում Շիլլէրը ժամանակ էր գտնում նոյն իսկ ուրիշներին օգնելու: Նա գնումէր շատ անդամ իւր ծերացած ուսուցիչ եանի ուսումնարանը և ձրի պարապումէր նրա աշակերտների հետ: Տասնեչորս տարօք պատանիները հետաքրքրութեամբ նայումէին, թէ ինչպէս բանաստեղծ պրօֆէսօրը նստելով իրանց կողքին, գլուխը ձեռքի վրա դրած, բացատրումէր նրանց տրամաբանութեան ու պատմութեան սկզբունքները, և ինչպէս նա երբեմն ոգեորւած վեր էր թռչում տեղից, երբ հարցը վերաբերումէր իւր սիրած մի հարցին:

Չմեռային ամիսները շատ տխուր էին անցնում Լիւդիկսբուրգում: Շիլլէրը չէր գտնում այնպիսի բարեկամներ,

որոնց հետ կարող էր մտերիմ շփումն և լուրջ խօսակցութիւններ ունենալ: Ուստի նա որոշեց ընտանիքով տեղափոխուել Շտուտգարտ: Այստեղ արդէն նա մնակ չէր: Շտուտգարտում շարունակ կարելի էր տեսնել զանազան գիտնականների և արևեստագէտների հետ: Ի միջի այլոց նա մօտիկ յարաբերութիւն ունէր իւր նախկին գասլնկեր արձանագործ Դանէկէրի հետ: Վերջինս աչքի լնկնող իսկական տաղանդ ունէր և չորս տարի հոօմում կատարելագործել էր իւր տաղանդը: Դանէկէրը շատ բան սովորցրեց Շիլլէրին՝ ընդհանրապէս գեղարւեստին վերաբերեալ և հանեց նրա բիւստը, որի հիման վրա նա յետոյ պատրաստեց մարմարեայ ահապին կիսարձանը: Շտուտգարտից Շիլլէրը մի փոքրիկ ճանապարհորդութիւն կատարեց գէպի Տիւբինդէն, ուր այցելեց նախկին ուսուցիչ Արէլին: Երբ Շիլլէրը նկարագրումէր նրա առաջ իւր ծանօթ զանազան մարդկանց, Արէլը աշխատումէր նրա խօսքերից գաղափար կազմել Շիլլէրի սեփական հասկացողութեան ու բնաւորութեան մասին, և ուրախանումէր տեսնելով, թէ ինչպէս հասունացել և կատարելագործւել է իւր սիրելի աշակերար:

Վաղահաս գարունը շատ նպաստաւոր ազգեցութիւն արաւ Շիլլէրի առողջութեան վրա: Նա իրան բաւական լաւ զգաց: Այնուամենայիւ նա չկամեցաւ երկար մնալ հայրէնիքում, որովհետեւ անհաստատ կեանքը դուր չէր գալիս նրան, ուստի և ճանապարհւեց նա մայիս ամսին: Իննը ամիս հայրենիքում մնալով, նա արդէն բաւական հանգստացել էր, որքան առհասարակ կարող է հանգստանալ մի մաքի ու սրտի հերոսը: Այստեղ վերջացրեց նա «Գեղարւեստագիտական նամակները» և առհասարակ այստեղ մշակեց իւր գեղարւեստագիտական սկզբունքները: Նորից պլազումէր նրա սրտում բանաստեղծական կրակը: Նա վաղուց էր, որ չէր սաեղծագործում, այլ մտածումէր, փիլիսօփութիւն էր անում: Ստեղծագործա-

կան կրակը թագնւել էր փիլիսօփայական մոխրի տակ: Տարկաւոր էր մի զօրեղ ձեռք, որ խառնշտորէր այդ կրակը: Այդ զօրեղ ձեռքը յայտնւեց ի դիմաց բանաստեղծների թագաւոր Գէօտէի, որի բարեկամութիւնը պիտի միանդամից հրդէհէր Շիլէրի զօրեղ, թէև փոքր ինչ վհատած սիրոլ: Գէօտէի աղդեյութեան տակ Շիլէրը նորից պիտի ձեռք առնէր իւր երկնազմայլ քնարը և այլես պիտի մի կողմ չնէր:

Որքան էլ Շիլէրը հեւանդ լինէր, այնուամենայնիւ յոյս ունէր, որ ինքը գեռ ժամանակ ունի ապրելու և դործելու: Իսկ ապրել ու դործել ասելով, նա հասկանումէր՝ ծառայել իւր կոչման ամենամեծ եռանդով և ամենահաւատարիմ կերպով: Շիլէրի համար հանդիսա կեանքը, ամստանութիւնը, բարեկամները, ծանօթները ինքն ըստ ինքեան նպաստակ չէին կազմում: Այդ բարիքները միայն շատ թէ քիչ նպաստող հանդամանքներ էին բանաստեղծ - փիլիսօփայի համար, ուրիշ ոչինչ նա, ի հարկէ, սիրումէր իւր կնոջ, սիրումէր բարեկամներին, բայց սրանց ամենքից նա լոելեայն պահանջումէր, որ կամ բայց սրանց ամենքից նա լոելեայն պահանջումէր, որ կամ թէ որոշ չսիրով նպաստաւոր լինին իւր գործունէութեան, կամ թէ զնուի չսանդարեն իրան: Շիլէրի ականջին միշտ հնչումէր գոնէ չխանդարեն իրան: Շիլէրի ականջին միշտ հնչումէր հանճարի ձայնը, թէ ոով որ իւր կնոջը, երեխային, իւր տուն հանճարի ձայնը, թէ ոով որ իւր կնոջը, երեխային, իւր տուն աեղը ինձանից աւելի է համարում; նա ինձ արժանի չէ: Աւետարանի այդ վճռական սկզբունքը անշուշտ յայտնի էր Շիլէրին, բայց եթէ նա նոյն իսկ աւետարանից գաղափար Շիլէրին, նոյն ձայնը կը իւր որտի խորքից: Դեռ մանկաչունար, նոյն ձայնը կը իւր որտի խորքից:

բած, արդէն ողեորւումէր ապագայ հոգեորական կոչումնի նա զիտէր, թէ ուր է ձգտում ինքը: Եւ իսկապէս էլ Շիլէրը միշտ հոգեորական մնաց իւր կեանքում: Տարբերութիւնը միայն այն է, որ Շիլէրը պաստօր էր ոչ թէ ըստ պաշտօնի, այլ կոչմամբ:

Այժմ երբ Շիլէրը արդէն գտնուումէր հասունութեան տարիներում, երբ երիտասարդական փոթորկալի ինդիրները արդէն լուծւած էին նրա համար, երբ նրա՝ ազքերը հեռուից հեռու նշմարումէին անողոք գերեզմանի անխուսափելի դուռը, Շիլէրը կամենումէր վերջնական կերպով պարզել իւր համար, թէ ով է ինքը, ինչ է իւր իսկական պարտականութիւնը... նա լոեց... և կրկն անդամ լուրջ կերպով խորասուզւեց ինքը իւր մէջ: Երեք տարի շարունակ Շիլէրի զրիչը ոչինչ չարտազրեց բանաստեղծական ասպարիզում: Բանաստեղծը, կարծես մնունալով իսկական կոչումը, դիառումէր, կարդումէր, քննումէր, մնածումէր... իսկ իւր հանուծ եզրակացութիւնները արտայայտումէր քննագատական - փիլիսօփայական յօդւածների միջոցով, որոնցով նա աւելի իրան էր կամենում վարժեցնել, քան ուրիշներին սովորցնել:

Շիլէրին դրազեցնումէին տիեզերական ամենամեծ հարցերը. ի՞նչ է մարդկային կեանքի նպատակը, ի՞նչ է բարյականութիւնը, ինչումն է կայանումմարդու իսկական արժանիքը, ո՞րն է ձշմարիտ ազատութիւնը, ինչպէս պէտք է դաստիարակել մարդկութիւնը... Զէ կարելի ասելի թէ Շիլէրը կարողացաւ այդ հարցերին վերջնական լուծում տալի հիմնական կերպով պարզել հանրամարդկային հանելուկները: Այդ բանը չարաւ Շիլէրը և չէր կարող անել: Տիեզերական հարցերը հետզետէ են պարզուումարդող մարդկութեան բուռն չանքերի շնորհիւ: Նոյն իսկ մեր օրերում դիտութիւնը գտնուումէ գեռ շնորհիւ: Այդ իսկ մեր օրերում դիտութիւնը գտնուումէ գեռ զբաղւած է պլիսամնկական հասակում: Մարդկութիւնը գեռ զբաղւած է պլիս-

ւորապէս հացի խնդրով, կամ թէ զւարձանում է մանկական խաղեր սարքելով, ազգերը ըմբշամարտում էն միմեանց հետ չարաձծի տղաների պէս: Ճշմարտութեան հանքերում աշխատում էն միայն սակաւաթիւ հանձարեղ անհատներ, կամ թէ համոլսարանների պառաւած ու վհատած պրօֆէսօրները: Բայց կդայ ժամանակ, երբ հացի խնդիրը արդէն լուծւած կլինի, երբ կվերջանայ երկրի երեսից եղբայրասպան արիւնալի և անարիւն կոխւր, երբ զինուրական քաջարի բանակները նիզակների փոխարէն կղինւեն հեռաղիտակներով և խոշորաց ցցներով, երբ առաջ կդայ հոգեկան ու բարցյական ցժի գումարապետութիւնը ... միւնցն ժամանակ նոր լոյս կծագի, և կլուծին բոլոր այն հարցերը, որոնք եռումէին բանաստեղծիկալիստի հոգեկան սրբարանում...:

Անուամենայնիւ Շիլէրի աշխատութիւնը ապարզիւն չանցաւ. նա որոշ չափով լուսաւորեց իւր շատիզը, նշաններ զրաւ, տեղ-տեղ բեկոն! ր տնկեց, որ չմոլորւէ իմացականութեան լարիրինթոսի մէջ:

Շիլէրը եկաւ այն եղբակացութեան, թէ մարդկային բնաւորութիւնը երկու կողմն ունի, մէկը աստուածային, որը մարդու մշտառեյակութիւնն է կազմում, իսկ միւսը անասնական, որը կազմումէ կեանքի նէ-նական հիմունքը: Այդ բանը, ի հարկէ, հոգոյ և մարմի հին հանելուկն է, որը միայն աստուածաբանական հանդերձը հանելով, դրական-բարցյական հագուստ է հազնում: Արանով անշուշտ գեռ հարցը չէ լուծւում, այնուամենայնիւ այդ էլ մի մեծ առաջդիմական քայլ է: Մարդը ունի հոգեկան ձգտումներ և մարմնական զգացումներ: Վերջիններս անհրաժեշտ են անհատական կեանքը պահպանելու համար, իսկ հոգեկան ձգտումները պայմանաւորում են ընդհանրական-տիեզերական կեանքը: Մարդկային հոգին՝ այնքնի միտրումէ միտր, սիրումէ միտր:

իսկ մարմինը պահպանչումէ բազմատեսակութիւն (բարդութիւն): Մարմինը ձգտումէ ստանալ բազմատեսակ ու բազմաբովանդակ զւարձութիւններ, և այդպիսով առնչութիւն ունենալ ամբողջ բնութեան հետ: Իսկ „հոգին“ ձգտումէ բոլոր երեւյթները չհնաւել այսինքն միտրեսակութիւն գանելնրանց մէջ, գտնել սկզբնական ցժը, որից բոլորը բղխում է: Այդպիսով մարդկային էակը ընկեր է մի կողմից կենդանիներին, միւս կողմից աստուածներին: Զգացմունքների աշխարհով չէ կարող բաւականանալ մարդը, որովհետեւ նա անասուն չէ: Մտաւոր, հոգեկան կեանքը նոյնպէս բաւական չէ մարդուն, որովհետեւ նա ողի չէ: Բուն մարդկայնութիւնը կայանումէ զգացմունքների ու զիտակցութեան ներդաշնակ միտրութեան մէջ: Եւ հինց այդ ուղղութեամբ պէտք է դաստիարակել ու կրթել մարդուն: Արա մէջն է կայանում իսկական ազատութիւնը: Մարդուն պէտք է բարձրացնել մինչեւ այն աստիճան, որ նա գէրէ լւննի զբացնաւեներին: Միտրամանակ չողէտք է մարդուն զրկել զգացմունքներից, փափկութիւնից, զգայուն բնաւորութիւնից, որ կարող է առաջանալ մոքի միակողմանի զարգացումից: Մարդը պիտի պահէ իւր բոլոր զգացմունքները, բայց պիտի կարենայ գէտակցաբար ողբանակտելնրանց: Ահա թէ ինչ է նշանակում ճշմարիտ աղատութիւն, որը չէ շնորհւում, այլ ձեռք է բերում երկար ու տոկուն աշխատութեան միջոցով:

Շիլէրը շեշտումէ իսկական աղատութեան գաղափարը, ի նկատի ունենալով այն արտաքին աղատական ձգտումները, որ Շիլէրի օրերում առաջ բերին ֆրանսիական յեղափոխութիւնը: Շիլէրի կարծիքով, այդպիսի արտաքին յեղափոխութիւնը չէ կարող հաստատ չետեսներ առաջ բերել եթէ մարդկային բնաւորութիւնը չըկացը, այլ մնայ նոյն անկատար զրութեան մէջ: Այդ տեսակէտից ահա թէ ինչ մարդարէտական բացականչութիւն է անում նա: «Մարտափելով աղա-

տութեան երեցյթից, որ միշտ սկզբում թշնամի է հանդիսանութիւն հասարակական կարգաւորութեան, մարդիկ նորից կվազեն ճորտութեան դիրկը, որտեղից ապա կվերադառնան դէպի վայրենական դրութիւնը: Բռնապետութիւնը կաշխատէ արդարացնել իւր գոյութիւնը, մատնացոյց անելով մարդկային բնաւորութեան թուլութիւնն վրա, իսկ աղաստամտութիւնը կհիմնէ իւր գոյութեան իրաւունքը մարդկային արժանաւորութեան վրա, մինչև որ վերջապէս կյայտնւի մի կըր ոյժ և կվճռէ սէղբունքների կոխուր բոռնցքի իրաւունքով»: Երբ Շիլէրը գրումէր այդ խօսքերը, դեռ ոչ ոք գաղափար չունէր նապօլէօնի մասին, որը իսկապէս մշտ տասն տարի յետոյ կարծես թէ գետնի տակից բուսաւ և իրականացրեց Շիլէրի գուշակութիւնը: Այս մեր կարծիքը մի փոքր տարրերւումէ այդ կէտում: Մեղ թւումէ, որ Շիլէրի գուշակութիւնը դեռ չէ կատարւել, այլ ներկայում դեռ շարունակութիւմէ նրա ակնարկած կոխւրը: Առ այժմ արդարութեան ձայնը ամենուրէք ունակուի է լինում, և ոչ մի աղերսանք, ոչ մի արցունք չէ կարող ազգել իրերի անբնական ընթացքի վրա: Եւ կարծես թէ իսկապէս հարկաւոր է լինելու կըր ոյժ գործադրել, ճշմարտութեան, և արդարութեան խեղլւած ձայնը վերջապէս լսել տալու համար...

Այդպէս թէ այնպէս, Շիլէրի սկզբունքը, թէ իսկական աղատ կեանք առաջ բերելու համար անհրաժեշտ է, որ մարդը դաստիարակի, անհերքելի ճշմարտութիւն է: Իսկ այդ դաստիարակութեան ամենազլխաւոր միջոցը, Շիլէրի կարծիքով, գեղարւեսան է, որի վրա տարաբաղդաբար բաւականաբով, գեղարւեսան է, որի վրա տարաբաղդաբար բաւականաբով:

«Ժամանակի ոգին — ասումէ Շիլէրը — նպաստաւոր չէ գեղարւեսան, գոնէ նրա այն ճիւղի համար, որ բանաստեղ-

ծութիւն է կոչում: Զանազան հանդամանքների ընթացքը այնպիսի ուղղութիւն է տւել մեր ժամանակին, որ գեղարւեսան իդէալը աւելի ու աւելի պարտութիւն է կրում: Բայց գեղարւեսար պիտի մաքառէ ժամանակի դէմ և համարձակ կերպով վեր բարձրանայ պահանջի շրջաններից, որովհետեւ գեղարւեսար Երինու աղջին է և չէ հարող յարձար-Ելնի-նական ծրագիններն: Ներկայումն տիրապետումէ նիւթական պահանջը և ընկճւած ժողովուրդը տառապումէ նրա լծի տակ: Նիւթական շահը գարձել է ժամանակի կուռքը, որի առաջ խոնարհւումն բոլոր ոյժերը և ծունդ են զնումնոյն իսկ բոլոր տաղանդները: Այդպիսի հանդամանքներում իսկական գեղարւեսար կորցնումէ իւր արժէքը և անհետանումէ աղմկալի շուկայից: Նոյն իսկ փիլիսօփայութեան հետազոտիչ ողին խումէ երևակայութեան ոյժից նրան պատկանող ասպարէզները, և որքան ընդարձակութիւնն զիտութեան սահմանները, նոյնքան սահմանափակութիւնն զեղարւեսաի շրջանը: Թէ փիլիսօփայի և թէ քաղաքադէտի հայեացքները դարձած են դէպի քաղաքական ասպարէզը, ուր իրը թէ պիտի որոշվի մարդկութեան վիճակը: Ի հարկէ յանդիմանութեան արժանի է այն սառնարիւն անհատը, որը ոչ մի կերպով չէ մասնակցում այդ ընդհանուր հարցին: Մանաւանդ իւրաքանչիւր մատծող մարդ պիտի հետաքրքրւի, թէ ինչ ձեռք է վճռելու այդ հարցը: Մինչև այժմ քաղաքական հասարակական հարցերը աշխատել են լուծել միայն ոյժի միջոցով, բայց այսակեղ ևս սկսել են հասկանալ, որ հարկաւոր է արդարացի դատաստան անել մարդկային շիտակ մտքի օդնութեամբ:

Մարդկային միտքը սկսել է զարթնել:

Բնութիւնը վարւումէ մարդու հետ այնպէս, ինչպէս բոլոր մեւս առարկաների հետ, քանի դեռ մարդը առարկայ է, այսինքն աշխատումէ մարդու համար, մինչև որ նա հասնումէ

ինքնադիտակցութեան: Այնուշեաւ մարդը լնո՞ւ պիտի շարուենակէ իւր կեանքը, պիտի դործէ իւր համար: Այժմ արդէն բնական անհրաժեշտութեան փոխարինումէ բարոյական անհրաժեշտութիւնը: Մարդը զարթնումէ թմրած դրութիւնից, նայումէ շուրջը և գտնումէ իրան մի որոշ պետական կաղմակերպութեան մէջ: Մարդը իւր ազատ կամքով չէ ստեղծել այդ կազմակերպութիւնը, այլ սա առաջ է եկել բնական անհրաժեշտութիւնից: Իսկ ինքնադիտակցութեան հասնող մարդը այլես չէ կամենում մնալ այն պայմանների մէջ, որոնց ստեղծել է բնութիւնը, այլ կամենումէ նորից գլուխացանար պայմաններ որոշել իւր կեանքի համար: Այդ նոյն երկոյթը նկատումէ զանազան ասպարէզներում: օրինակ՝ սեռական կեանքը մի ժամանակ ընթայել է բնական անհրաժեշտութեան համեմատ, առանց որ հարց լինէր սիրոյ կամ ընտանեկան կեանքի մասին: Բայց ժամանակի ընթացքում առաջ է ելեւ ուրացնունեց և ընտանեկան կեանքը հիմք է ստացել: Այդպէս է և պետական կազմակերպութեան հարցը: Որքան էլ նպատակայարմար կամ ամուր լինի այդ կազմակերպութիւնը, այնուամենայնիւ, որպէս կոյր ոյժերի արդիւնք, չունի նա այնպիսի հեղինակութիւն, որ ազատութիւնը պարտաւոր լինէր խոնարհել նրա առաջ: Ամեն բան պիտի յարմարէ այն նպատակին, որ կղնի իւր համար մարդկային միտքը: Այդպիսով արդարանումէ չափահաս գարձած ազգի ձգտումը՝ իւր բնական կազմակերպութիւնը փոխարինել բարոյական կազմակերպութեամբ: Բայց որպէսզի բարոյական կազմակերպութիւնը կարողանայ զօյութիւն ունենալ, անհրաժեշտ է, որ նրան պատկանող անհատները նոյնպէս զեկավարւեն բարոյական սկզբունքներով այսինքն խսկապէս բարոյական մարդիկ լինին: Բայց ի՞նչպէս զլուխ բերել այդ նպատակը նաև առաջ է դնացել քաղաքակրթութեան չնորհիւ, բայց անհատը չէ կարող բարձր համարել զին Յունաստանի որդուց: Այժմեան մարդը միակողմանի է, թէ իւր ընդունակութիւններով, թէ զգաց-


Բնականօրէն առաջ եկած պետական կազմակերպութիւնը — Շիլէրի կարծիքով — չէ կարող մարդուն տալ հարկաւոր գոստիարակութիւնը: «Երբ արհեստաւորը, ասումէ նա, կամնումէ հումնիւթից մի առարկայ պատրաստել, նա վարումէ այդ նիւթի հետ անխնայ կերպով, կարատումէ նրան, ձեւակերպումէ, փշրումէ, տաշումէ: Արհեստաւորի նպատակը առարկան է, իսկ նիւթը ինքն ըստ ինքեան նպատակ չէ կազմում: Այդպէս չէ կարող վարել մանկավարժը իւր սաների հետ և պետութիւնը իւր հպատակների հետ: Այդ դէպքում նիւթը արդէն ինքն ըստ ինքեան նպատակ է կազմում: Մանկավարժը իրաւունք չունի ձուլելու բոլոր աշակերտներին միւնոյն կազապարի մէջ, այլ պիտի աշխատէ պահպանել ու մշակել իւրաքանչիւր աշակերտի անհատական առանձնայատկութիւնները: Մի երեխայ կարող է առանձին սէր ունենալ դէպի երգը, միւսը դէպի մտածողութիւնը, երրորդը դէպի նկարչութիւնը և այն: Մանկավարժը չպիտի զսպէ նրանց ինքնուրոյն ձգտումները: Այդպէս էլ պետութիւնը իրաւունք չունի բոնանալու անհատական կեանքի վրա, այլ պիտի թոյլ տայ իւրաքանչիւրին, ապրել, գործել, մտածել, խօսել իւր հոգեկան հակումներին համեմատ: Բայց այդ դէպքում ի՞նչպէս Վկարողանայ պետական կազմակերպութիւնը իւր ամրութիւնը պահպանել:

Այսաւել ահա օգնութեան է զալիս գեղարւեստական քարոյական գաստիարակութիւնը:

Մարդը վատացել է հասարակական հանդամանքների շնորհիւ: Համեմատելով զին յոյներին ներկայ եւրոպացիների հետ, Շիլէրը գտնումէ, որ թէւ այժմ կեանքը շատ առաջ է դնացել քաղաքակրթութեան չնորհիւ, բայց անհատը չէ կարող բարձր համարել զին Յունաստանի որդուց: Այժմեան մարդը միակողմանի է, թէ իւր ընդունակութիւններով, թէ զգաց-

մունքներով։ Այժմ մէկը միայն լաւ արհեստաւոր է, միւսը ճարպիկ պաշտօնեայ, երրորդը լաւ գասատու, չորրորդը լաւ գերասան և այլն։ Իսկ հին յոյնը, թէ ոչ մի բանի մէջ մասնաւորապէս չէր վարժւում, բայց և այնպէս իւր բոլոր ընդունակութիւնները ներդաշնակ կերպով զարդացնումէր։ Նրանում հաւասարապէս զօրեղ էին զգացմունքն էլ, դատողութիւնն էլ, խելքն էլ, ճարպիկութիւնն էլ, կամքն էլ, բնաւորութիւնն էլ, մի խօսքով մարդկային բոլոր արժանիքները նա ունիր և բոլորն էլ համաշաւասար չափով։ Այժմեան մարդը կարծես թէ այլես մի կենդանի էակ չէ, այլ մի բազմամաս, բարձրագոյն մեքենայի որևէ օղակը, կամ բեեռն է։ Այդ հանդամանքը, որքան էլ անախորժ լինի, այնուամենայնիւ պիտի տեղի ունենար։ Սա ուրիշ մի բան չէ, բայց եթէ աշխատանքի բաժանման հետեւանքը։ Իսկ աշխատանքի բաժանումը անհրաժեշտ է, որպէս զիազարդի քաղաքակրթական առաջիմութիւնը հնարաւոր լինի։ Շիլլերը շատ ուղիղ է նկատում, որ եթէ բոլոր մարդկանց աչքերը միասին հաւաքէինք, դարձեալ չէին կարող դանել այն, ինչ որ գտել է հեռագիտակը։ Բայց որպէսզի գիւտերը հնարաւոր լինեն, անհրաժեշտ է, որ ամեն մարդ նուրբ զգացողութեան հասցնէ իւր որևէ մի յատկութիւնը։ Այնուամենայնիւ ցանկալի է, որ մարդիկ միաժամանակ պահպանեն իրանց մարդկայնական ամբողջութիւնը։ այսինքն մի կողմից մեքենայի օղակը կազմելով, միւս կողմից դարձեալ մնան իրը ամբողջական մարդիկ։ Եւ այդ բանը հնարաւոր դարձնող միակ միշտը, Շիլլերի կարծիքով, գեղարւեսան է։ Գեղարւեսար կարող է ներդաշնակութիւն մայնել մարդկային առանձնակի յատկութիւնների մէջ, որովհետեւ նա մի տեսակ իւնդրչնական դիրք է բարեհաջար ու ցամաք դատողութիւնների մէջ խորասուզւած փիլիսոփայի երակներում գեղարւեսար, օրինակ՝ մուղիկան, նոր կեանք է զարթեցնում և քաշում-յետ է տանում դէպի զգացմունք-

ների աշխարհը։ Անասնական կրքերի և մոլութիւնների մէջ թաղւած ողորմելի արարածին, օրինակ՝ հարբեցողին, նոյն գեղարւեսար կարողանումէ իւր հմայիչ պատկերներով քարշել յետ տանել զէպի հագեկան ուսուցանելուն երկնաղմացլ աշխարհը։ Եւ վերջապէս գեղարւեսան է, որ բոլոր մարդկանց ոգեսորումէ միւնցին երեցյաներով, միւնցին կեանքով և այդ-



Գէուտէ:

պիսով՝ բաժան-բաժան եղած մարդկանց հաւաքումէ նորից մէկ լըսի շուրջը և սպահպանումէ բարոյական ամբողջութիւնը։ Գեղարւեսին սյդպիսի մէծ գեր յատկացնելուց յետոյ, հասկանալի է, որ Շիլլերը ինքը չէր կարող այլեւ հեռու մնալ սեփական քնարից, որը նա վաղուց մի կողմէ ըրել։ Փիլիսոփայական-քննական զբաղմունքն էլ Շիլլերի համար մի անցուական շրջան էր կազմում։ Սա մի անհրաժեշտ և օգտակար զական շրջան էր կազմում։

կամուրջ էր, որով նա պիտի անյնէր, գեղարւեստի մի աւելի պայծառ զաշտը դուրս գալու համար: Դօն - Կարլոսի պատկերը ուսումնակրելու համար Շիլլերը ստիպւած էր ոտք դնել պատմութեան տապարէզը, ուր նրա ուշադրութիւնը դրաւեց Նիդերլանդիայի ապստամբութիւնը: Նա խորասուզւեց պատմական երեսյթների մէջ և մէկից միւսը անցնելով ընկաւ երեսնամեայ պատերազմների շրջանը, ուր նրա ուշադրութիւնը գրաւեց Վալլէնշակէյնի հսկայական պատկերը, և նրա սրտում նորից շարժւեց բանաստեղծական տարրը: Բայց նա զսպեց իրան... Նա պիտի դեռ Փիլիսօփայական տապարէզն էլ առակն ու վրա անէր, և խկապէս այդ էլ քաջութեամբ վերչացրեց: Փիլիսօփայական հետազօտութիւնները քարշեցին նրան, տարան ու նորից հասցըին գեղարւեստի բոցավառ սահմանները: Շիլլերը, իբր Փիլիսօփայ հասարակագէտ, եկաւ այն եղրակացութեան, որ մարդկային կեանքը պիտի իւր արժանաւոր գիրը ստանայ գեղարւեստի միջոցով, թէ ուրեմն բանաստեղծը պիտի լինի մարդկութեան ամենազօրեկ առաջնորդը: Փիլիսօփան զգաց իւր նիշնութիւնը և Շիլլերի սրտում կրկնակի վան այժմ բանաստեղծական կրակը: Նրա սիրով ոյժով բոցավառւեց բանաստեղծական կրակը: Նրա սիրով պատրաստ էր արդէն շատրւան անելու անկանոն և անզուսպ կերպով, բայց նոր բարեկամի, բանաստեղծների թագաւոր՝ կերպով, բայց նոր բարեկամի, բանաստեղծների թագաւոր՝ Գէօտէի ուժեղ ձեռքը օգնութեան հասաւ նրան... .



Գէօտէի տունը:

## XVIII.

Հայրենիքից վերագարձաւ բանաստեղծը հոգով հանգստացած և մարմնով բաւական կազզուրւած և որոշեց այլես հաստատուն կերպով շարունակել խաղաղ զործունէութիւնը, և կեանքի մնացեալ մասը ըստ կարելոյն օղտակար գարձնել թէ իւր ընտանիքի, թէ իւր աղջի և թէ առհասարակ ամբողջ մարդկութեան համար: Շիլլերը այժմ արդէն կատարելապէս հասունացած զրութեան մէջ էր թէ մաքով և թէ բնաւորութեամբ: Աղմկալի, կրքոս երիտասարդից պատրաստել էր այժմ մի կատարեալ մարդ, որը շատ լաւ էր զիտակցում իւր նպատակը, միջոցները և ոյժերը: Վստահանալով ներքին, հոգեկան զօրութեան, նա որոշել էր, նայելով Փիլիսօփական տանչանքներին, կուել կեանքի դէմ չփախենալ մահից և Փիլիսօփայական ամուր հայեացք ունենալով, շարունակ աշխատել մինչև կեանքի վերջին բոտէն: Շատ անգամ էր նա ուղղակի մահի աչքին նայել, ուսաի այլես չէր ստրսափում նրանից: Շարունակ յարարերութեան մէջ զանւելով նշանաւոր մարդկանց հետ, Շիլլերը չափում ու համեմատումէր սեփական ոյժերը և այդ համեմատութիւնից նա ոչ ընկճումէր, ոչ էլ

մեծամասնում։ Յունական բանաստեղծներին ուսումնասիրելով նա զաել ու նրբացրել էր իւր ձաշակը, անսահման երեակայութիւնը չափ ու սահմանի մէջ էր դրել։ Պատմութեան ուսումնասիրութիւնը լսյնացրել էր նրա մտաւոր հօրիզոնը և հարուստ նիւթ էր մատակարարել նրան առագայ ստեղծադրութեանց համար։ Փիլիսօփայտական հետազոտութիւնները խորացրել էին նրա աշխարհահյեղողութիւնը և հաստատուն սկզբունքներ էին տւել նրան՝ մարդկացին միաքը և ձաշակը գիտակցաբար մշակելու համար։ Հարկաւոր էր միայն որոշ ձեակերպութիւն տալ իւր դորձունէութեան։

Վերջին ձանապարհորդութեան ժամանակ, Շիլլերը Տիւրինդէնում ծանօթացել էր զրայտաճառ Կոտտայի հետ, որ մի լարգացած, խիստ գործունեայ երիտասարդ էր և Շիլլերը զատ համակրումէր։ Բանաստեղծը բացատրեց նրան, որ ինքը մատաղիր է հիմնել մի ամսագիր՝ «Ժամացոյց» անունով և Կոտտան յանձն առաւ ամսաղրի հոդատարութիւնը։ Հենց ամսադաշտ ամսաղրի հոդատարութիւնը, իսկոյն սկսեց ընթացք որ բանաստեղծը վերադարձաւ Ենա, իսկոյն սկսեց զիմսեց ամսադաշտին։ Նա մի ամսաղրւած յայտարարութեամբ դիմումը դոլոր յայտնի գրողներին, ի միջի այլոց կանտին, Ֆիլտէյին, բոլոր յայտնի գրողներին, ի միջի այլոց կանտին, Ֆիլտէյին, հաչէրդէրին, հումբոլդին և այլն։ Բայց գործի յաշողութեան հաչէրդէրին, հումբոլդին և այլն։ Իսկ ամսադաշտ ամենաղլխաւոր Շիլլերը ամենից կարեւոր էր համարում ամենաղլխաւոր բանաստեղծի, Գէօտէի աշխատակցութիւնը, ուստի և դիմումը բանաստեղծի, Գէօտէի աշխատակցութիւնը, ուստի և դիմումը հետեւ կունենայ թերթի յաշողութեան որ վճռական նշանակութիւն կունենայ թերթի յաշողութեան համար և մենք մեծ պատրաստակամութեամբ կենթարկեւնք համար այն պայմաններին, որոնց հիման վրա Դուք կամենաք բոլոր այն պայմաններին, որոնց հիման վրա Դուք կամենաք բարակարանին, աննկատելի կերպով վեր բարձրացան սանդուխներով և ներս մտան։ Լոտտան ցնծաց, յանկարծակի երկու բանաստեղծներին իւր տանը անսեղով։

առել, այսինքն դեռ կիսատ են։ Այդպիսով երկու մեծ բանաստեղծների մօտաւորութեան առաջին քայլը արւած էր, թէս այս դեռ բաւական չէր։

Ենայում հիմնւել էր մի «Բնազիտական ընկերութիւն», որը պատաւոր անդամներ էր ընտրել Գէօտէին, Շիլլերին և Շէրդէրին։ Երբ դեռ Շիլլերը հայրենիքումն էր, Գէօտէն շարունակ մասնակցումէր ընկերութեան պարբերական նիստերին։ Շիլլերն էլ, վերագանակուց յետոյ, մի երեկոյ ներկայացաւ ժողովին։ Ժողովից գուրս գալուց յետոյ մեր բանաստեղծները յանկարծ հանդիպեցին իրար և միասին առաջ գնալով, շարունակեցին խօսել նոյն նիւթի մասին, որով ժողովը զբարւել էր։

— Բնութեան այդպիսի հետազոտութիւնը, նկատեց Շիլլերը, չէ կարող բաւականացնել հասարակ մարդուն, որքան էլ նա աշխատէ ծանօթանալ բնութեան հետ։

— Այդպիսի հետազոտութիւնը զիմնականին էլ չի բաւականացնիլ — աւելացրեց Գէօտէն — պէտք չէ բնութիւնը կաոր-կաոր անել և „ազդիներ“ ստեղծել, այլ հարկաւոր է ընդունել նրան որպէս կենդանի և գործունեայ մի ամբողջական էակ, որը ձգտումէ մասեր առաջ բերել։

Գէօտէն աւելացրեց, որ այդ գաղափարը բնութեան մասին, կարելի է կորհուածուցուցնել։

— Ես կկամենայի, որ ինձ բացատրէին այդ բանը — հակառակեց Շիլլերը — բայց ես կասկածումէմ, որ այդպիսի մի հայեցքը հիմնած լինի փորձի վրա։

Այդպէս իրար հակառակելով, բանաստեղծները հասան Շիլլերի բնակարանին, աննկատելի կերպով վեր բարձրացան սանդուխներով և ներս մտան։ Լոտտան ցնծաց, յանկարծակի երկու բանաստեղծներին իւր տանը անսեղով։

Գէօտէն արծարծելով իւր միաքը, հասաւ բոյսերի ձեա-


Կերպութեան խնդրին և զրիչ վերջնելով, Շիլէրի աչքի առաջ գծագրեց մի նշանազրական բոյս, որը պիտի համարւէր բուսական աշխարհի ընդհանուր ախտար: Շիլէրը ուշազրութեամբ լսում և դիտումէր, թէ ինչպէս է Գէօտէն գծազրում օտարութիւնը: Երբ Գէօտէն խօսքն ու նկարը վերջացրեց, Շիլէրը գլուխը շարժելով տասց:

Սա ի՞նչ չէ, այլ ժառանձր է:

Գէօտէն մի փոքր վիրաւորւելով, բայց իրան զսպելով պատասխանեց. «Ինձ շատ դուք է գալիս, որ ես ունեմ այնպիսի զաղափարներ, որոնց մասին ինքս զաղափար չունեմ»: Շիլէրը հանգստութեամբ, կենտրօնանալով հարցի վրա, տասց. «Մի՞թէ փորձը երեւէ կարող է գաղափարին համապատասխան լինել, քանի որ գաղափարի էութիւնը հէնց նրանումն է կայանում; որ նա չէ կարող ճշտութեամբ համապատասխան լինել ոչ մի փորձին:

Վիճաբանութիւնը երկար տեղ և վերջացաւ նրանով, որ ոչ մէկը իրան յաղթւած չզգաց: Բայց երկուսն էլ պարզ տեսնումէին, որ իրանց հիմնական սկզբունքները իրար հակառակ էին: Շիլէրի սուր նկատողութիւնը երեակայական բոյսի մասին, բովանդակումէ իւր մէջ այն բոլոր տարբերութիւնը, որ առհասարակ դյուլթիւն ունէր Գէօտէի և Շիլէրի մէջ: Նրանց մտածողութեան եղանակները միմեանց հակապատկերն էին կազմում: Շիլէրը սովորաբար մասնաւոր երեսյթները ուսումնասիրելուցն էր եղբակացնում իւր ընդհանուր մտքերը: Իսկ Գէօտէն նախապէս գուշակելով մի ընդհանուր սկզբունք, աշխատումէր ապացուցանել նրան մասնաւոր երեսյթներով:

Ինչ էլ լինէր, նրանք երկուսն էլ ցանկանումէին աւելի ու աւելի մօտենալ իրար: Շիլէրը Գէօտէից տասն տարով փոքր էր, և երբ Գէօտէն արդէն բանաստեղծական դափնիներով դարդարւած էր, Շիլէրը դեռ չէր աղատւել դպրոցական



Լոտտոյի ցնծութիւնը:

նստարաններից: Բայց գեռ դպրոցական նստարանի վրա Շիլ-  
լերը ճանաչում, յարդում ու պաշտումէր Գէօտէին: Իսկ Գէօ-  
տէին առաջին անգամ աեղեկութիւն ունեցաւ Շիլէրի մասին,  
երբ «Աւազակները» հրատարակւեց: Գէօտէի առաջին երիտա-  
սարդութիւնը և սրա հետ միասին կրակու ու փոթորկալի  
ստեղծագործութեան տարեշրջանը անցած էր, իսկ Շիլէրը  
ամեն բան նոր էր սկսել, ուստի նրա զրիչը դուր չէր գտիս  
Գէօտէին: Սակայն վերջինս հեռւից հեռու զգումէր, որ այդ  
անգուրեկան զրիչը յամենայն գէպս մի տաղանդի սեփականու-  
թիւն է: Գէօտէն զգումէր, որ եթէ զերմանական բաղմաթիւ  
զրողներից մէկն ու մէկը սկսած փորձէր ախցեան հանդիսանալ  
մեծ բանաստեղծին, այդ մէկը ուրիշ ոչ ոք չէր կարող լինել,  
եթէ ոչ Շիլէրը: Այո, Գէօտէն զգումէր, որ հօրիզոնից բարձ-  
րանումէ մի նոր աստղ, որը չնայելով օտարութի գցնին, կարող  
է իրան հաւասար աղղեցութիւն ունենալ դիշերային խաւարի  
վրա: Գէօտէն զիաէր, որ տիեզերքի մէջ գցութիւն ունեցող  
աստղերը բոլորն էլ միևնոյն գցնի չեն, այլ կան ամեն գցնի  
աստղերը: Եւ ահա զերմանական հօրիզոնի երկու աստղերը, որքան  
էլ խորթ լինէին իրար, ինչոր ներքին ձգտում ունէին գէպի  
միմեանց: Շիլէրը վազուց խոստովանումէր, որ ինքը համ  
ատումէ, համ էլ սիրումէ Գէօտէին: Վերջինս էլ կարծէս թէ  
մի տեսակ արհամարանքով էր վերաբերում գէպի Շիլէրը.  
Բայց և այնպէս մի ներքին ոյժ մղումէր երկու բանաստեղծ-  
ներին զէպի իրար: Ի՞նչ հանելուկ էր այդ: Շատ պարզ է:  
Գերմանիայի երկու մեծ որդիները, չնայելով իրանց բնաւորու-  
թեանց և հայեացքների տարբերութեան, երկուսն էլ գերի  
էին բարձրագոյն իդէալներին, երկուսի երակների մէջ էլ վազում  
էր թարմ, եթերային արիւնը: Տէսդ սուաշին շփումներից Գէօ-  
տէն զգաց, թէ որպիսի մեծ օդուտ կարող է ստանալ Շիլէրի  
մօտաւորութիւնից: Բաւական ժամանակ էր արգէն, որ Գէօտէի



քնարը լուկ էր և ոչինչ չէր արտադրում: Բանաստեղծը գտնուում էր մի առաջակ մելամաղձոտ անշարժ զրութեան մէջ: Եւ ահա նրա առաջ կանդնած է մարմնով հիւանդ, բայց հոգով առողջ և կամքով զօրեղ ախոյեանը և դէպի դործէ մղում ամեն հանդիսողին: Գէօտէն էլ սպասումէր, որ մէկը առիթ տայ իրան, շարժէ իւր բարի նախանձը: Ոչ պակաս օգտառումէր և Շիլէրը փորձառու բանաստեղծի մօտաւորութիւնից: «Այդ երկու մեծ մարդկանց փոխադարձ աղդեցութիւնը — զրումէ չումբ բոլոր — շատ զօրեղ և շատ արժանաւոր էր: Իւրաքանչիւրը զդումբէր իրան ուժեղացած և քաշալերւած սեփական շաւզի վրա: Իւրաքանչիւրը հետզէտէ աւելի պարզ էր տեսնում, թէ ինչպէս իրանք զանազան ուղղութեամբ դէպի միւնոյն նպատակն են զնում: Բայց ոչ մէկը միւսին ճանապարհից չէր շեղում»: Երկուսի էլ զրօշակի վրա զրւած էր. Գէտութիւն, գեղարւեստ, մարդկայնութիւն, աղատութիւն, յառաջդիմութիւն: Ուստի նրանց յարաբերութիւնը օրէցօր մտերմանումէր:

Գէօտէն այն մարդկանցից էր, որոնք սովորաբար դժւառութեամբ են մէկի հետ բարեկամանում; բայց երբ արդէն բարեռութեամբ են մէկի հետեւալ նամակով. «Ես կուզենայի մի առաջարկութիւն անել ջեղ: Առաջիկայ շաբաթ պալատը զնումէ էյգէն անիս, և երկու շաբաթ ես լինելու եմ մէնակ և անկախ: Զէի՞ք կամենալ այցելել ինձ այդ ժամանակ, իմ տանը ապրել: Դուք կարող էիք այստեղ հանդիսա շարունակել ջեր զրադմունքը: Յարմար ժամերին մէնք կխօսակցէնք իրար հետ, կտեսնենք Յարմար ժամերին մէնք կխօսակցէնք իրար հետ, որոնք մեզ համապատասխան են, այնպիսի բարեկամների հետ, որոնք մեզ համապատասխան են, և առանց օգուտի չենք բաժանելի միմեանցից: Դուք կարող էք ապրել բոլորովին ջեր որտի ուղածի պէս և տեղաւորւել որպէս ջեր սեփական բնակարանում: Այդպիսով ես հնար

կունենայի ցցը տալու ջեղ իմ հաւաքածուներից կարեորները և մէր մէջ կկտուէին մի քանի թելեր: Ամսոյս տասնուշորսից սկսեալ ես պատրաստ կլինեմ ջեղ լնդունելու»:


Ի՞նչ զգացմունքներ զարթնեցին Շիլէրի սրտում, երբ նա կարգաց այդ նամակը: Ո՞ւր է ուրեմն Գէօտէի, այդ հպարտ քանաստեղծի, առակ զարձած անմատչելիութիւնը: Ո՞րպիսի պարզութիւն և ընկերական սէր է բղխում նրա անպանց նամակի իւրաքանչիւր բառից: Եւ որքան յարմար դէպիք էր գտել Գէօտէն: Ենայում սաստիկ „Ճաղիկ“ տարածւած լինելով, Շիլէրը ուղարկել էր կնոջը երեխայի հետ միասին Ռուդոլֆատ և ինքը մէնակ մնալով շատ տիրումէր: Շիլէրը ընդունեց հրաւերը, միայն նախապէս խնդրեց Գէօտէին, որ ի նկատի ունենալով իւր տկարութիւնը, որևէ կարդ ու կանօն չսպասեն նրանից: Բայցարեց նա, թէ ինչպէս ինքը շատ անգամ զիշերը հիւանդութեան ձեռքին տանջւելուց յետոյ միւս օրը մինչեւ կէսօր քնումէ: «Կարգաւորութիւնը — զրումէ անբազդ բանաստեղծը — թէե ուրիշ մարդկանց համար օգտակար է, իմ ամենավտանգաւոր թշնամին է»: Շիլէրը իւր պարզ բնաւորութեամբ, ոչ որից չէր թաղցնում ոչ իւր զրութիւնը, ոչ իւր պակասութիւնները:

Նշանակւած օրը գնաց Շիլէրը Վէյմար և մնաց Գէօտէի տանը երկու շաբաթ: Այդ ժամանակամիջոցը անցուցին բանաստեղծները շատ ուրախ և արդիւնաւոր կերպով: Նրանք միասին հետազոտեցին և քննցին մի շարք բանաստեղծական սկզբունքներ և զրւածքներ, խօսակցեցին զանազան գեղարւեստական երեսյթների մսսին, նշն իսկ բնական դիտութիւններով զբաղւեցին, օգտելով Գէօտէի հարուստ թանկարանից: Ի միջի այլոց խօսեցին «Ժամացցյի» մասին: Որպէսզի ամսագրի համար յօդւածների մի նոր աղբիւր աւելանայ, որոշեցին զիտական նամակադրութիւն ունենալ իրար հետ զանազան

հարցերի մասին: Գէօտէն կարծումէր, որ այդ կերպով մարդ ակամայ ստիպւած է լինում աշխատելու և աննկատելի կերպով նիւթ է ժողովւում:

Շիլկը շատ գոհ էր Գէօտէի հիւրասիրութիւնից: Վերադառնալով Ենա, զրումէ նա Գէօտէին. «Ես այստեղ եմ, բայց մտքով դեռ Վէյմարումն եմ: Ինձ ժամանակ է հարկաւոր, որ հաշիւ տամ ինքս ինձ բոլոր այն մտքերի մասին, որ Դուք իմ մէջ զարթեցրիք: Յցս ունեմ, որ այդ մտքերից ոչ մինը իդուր չի կորչիլ... Ժամանակը ցցց կտայ, թէ որքան կկանչեն այդ սերմերը»...

Ընթերցողի ուշադրութիւնն ենք գարձնում այդ երկու հանճարեղ անհատների բարեկամութեան վրա: Սովորաբար մարդիկ կապւում են իրար հետ նիւթական կապերով, կամ զանազան հաշվածք ի նկատի ունենալով, կամ աղղակցական-ինամիական կապերով, կամ ընդհանուր կրօնի, դաւանութեան միջոցով և այլն: Իսկ Շիլկը և Գէօտէին միացնող ցմր լցոն է, մաքի և սրտի հոգեկան լցոսր: Ահա միակ արժանաւոր կապը, որով պիտի մարդիկ իրար հետ կապւեն: ուրիշ աեսակ կապերը առհասարակ շատ չնին արժէք ունեն...



Զար ողիների արշաւանքը:

## XIX.

«Ժամացոյց» ամսագիրը սկսեց լցոս տեսնել: Արդէն յայտարարութիւնից երեսումէր, թէ ինչպէս է նայում Շիլկը այդ հրաարակութեան վրա: «Երբ մօսալուտ պատերազմը — զրումէ նա—սպառնումէ հայրենիքին, իսկ կուսակցական կարծիքների ու շահերի կռիւր աւելի ևս սարսափելի է զարձնում պատերազմը և վախեցնումէ մուզաներին, երբ փրկութիւն չկայ այդ թշնամուց ոչ մասնաւոր խօսակցութեան և ոչ զրականութեան ասպարիզում: աւելորդ չի լինիլ զբաղեցնել շփոթւած ընթերցողին բոլորովին հակառակ նիւթերով... Քաղաքական խառնաշփոթութեան մէջ մեր ամսագիրը կինի մուզաների համար փախուստի տեղ. նա աղաս կինի որևէ կրքից և կուսակցութիւնից: Բայց եթէ նա չի շփւիլ ժամանակակից գէպերի հետ, այնուամենայնիւ հարց զնելով անցեալ ժամանակի մասին, կղառնայ դէպի պատմութիւնը, իսկ ապագայ

աշխարհի մասին — դեպի փիլիսօփայութիւնը և այդպիսով կը վերականգնէ մարդկային աղնիւ իզէալը և հիմք կդնէ աւելի լաւ գաղափարներին, աւելի մաքուր ձգտութիւնն ու սովորութիւններին, որոնցից է միայն կախւած հասարակական դրութեան իսկական բարեփոխութիւնը։ Եւ այդ խօսքերը ասում էր Շիլէռը այն ժամանակ, երբ զլուխը կորցրած հասարակութեան առաջնորդումէին ոչ թէ դիտակցութիւնը և արդարութեան զգացմունքը, այլ խորամանկութիւնը, կոպիտ ցիքը, կուսակցական նեղ կիրքը . . .

Սկզբում ամսագրի դորձը լաւ էր դնում, բաւական բաժանորդներ ունէր և ընթերցող հասարակութիւնը հետաքրքրութմէր նոր ամսագրով։ Բայց բազմաթիւ չնչին դրողները այն աստիճանի ընտելացրել էին հասարակութեան անբովանդակ ընթերցանութեան, որ Շիլէրի ամսագիրը իւր բարձր գեղարւեսով և լուրջ փիլիսօփայութեամբ շուտով ձանձրակի դարձաւ ընթերցողի համար։ Մի շատ զաղարկ վէսլ, որը պատահմամբ տեղ ստացաւ ամսագրի մէջ, սաստիկ դուր եկաւ ընթերցող հասարակութեան, բայց Շիլէրը չէր կամենում այդպիսի գրւածքներով լցնել ամսագիրը։ Իսկ իւր «Գեղարւեստագիտական նամակները» սովորական ընթերցողը չէր կարդում, այլ կարդումէին գրչակ-գրախօսները, որպէսզի առիթ գտնեն մեծ բանաստեղծին քարկոծելու համար։ Եւ իսկապէս՝ զանազան ամսագիրների ու լրագիրների մէջ բան չէր մնում, որ չգրէին «Ժամացոյցի» լցու տեսնող համարների դէմ։ և բաժանորդների թիւր օրէցօր պակասումէր։ Ամսագրի աշխատակիցներն էլ միմեանց ետեկից հեռանումէին, մասսամբ վհասելով հասարակութեան անտարերութիւնից, մասսամբ անհամապատասխան գտնելով խմբագրութեան լուրջ պահանջներին։ Ասպարիզում մնացին միայն Շիլէրը և Գէօտէն, որոնց այլևս չյաջողւեց ազատել ամսագիրը բազմաթիւ գրչակների վայրիվեց

յարձակումներից և թշնամութիւններից։ Ամսագիրը դադարեց բաժանորդների քութեան պատճառով։

Այնուշեաւ Շիլէրը ուշաղրութիւնը կենտրօնացրեց իւր «Մուզաների այլմանախ» ժողովածուի վրա, որին և վիճակ-ւած էր մի սարսափելի կոիւ մղել դրչակների ամբողջ լէգիօնի դէմ։

Մի օր Գէօտէն յայտնեց Շիլէրին, թէ ինքը կամենումէ գրել մանրիկ ոտանաւորներ «Նւէրների» ձեռվի, վերաբերեալ զանազան պարբերական հրատարակութիւններին, և առաջարկեց Շիլէրին զետեղել այդ «Նւէրները» ժողովածուի մէ։ Երեք օրից յետոյ Գէօտէն ուղարկեց Շիլէրին մի տասնեակ «Նւէրները»։ Շիլէրը շատ հաւանեց և խնդրեց շարունակել։ Ապա ինքն էլ ընկերացաւ Գէօտէին և աշխատելով միասին զրեցին մի քսնի հարիւր ոտանաւոր «Նւէրներ», որոնք ուղղւած էին զանազան յայտնի զրողների և հիմնարկութիւնների հասցէին։ Այդ «Նւէրներից» շատերը երկու բանաստեղծները միասին էին պատրաստում, այնպէս որ շատ դժւար է որոշել, թէ որն է զրել մէկը և որը միւսը։ Երբեմն միւնցին ոտանաւորի մէջ մի շարքը սրան էր պատկանումէր միւսը նրան։ Կամ թէ միտքը պատկանումէր մէկ բանաստեղծին, իսկ ձեր և խօսքը միւսին։ Բայց առհասարակ աւելի կծու, թունաւոր, մարդակող նւէրները պատկանումէին Շիլէրին, իսկ աւելի կամ բարակութիւնների ամբողջ հասարակութիւնը զրողաց։ Բոլոր փոքր գրեմանիայի ամբողջ հասարակութիւնը զրողաց։ Բոլոր փոքր ի շատէ զրել ու կարգալ իմացողները հետաքրքրուեցին և մէջ խառնւեցին։ Բազմաթիւ զրողներ, գեղարւեստագիտներ, զիտնականներ, զանազան գործիչներ, քաղաքագէտներ և խմբագիրներ իրանց վիրաւորւած զգացին։ Քչերը մնացին առանց նւէրներ իրանց պատճառում միայն համարդարդ գրողներից միայն հանգուցեալ լէսին-ստանալու։ Առաջնակարգ գրողներից միայն հանգուցեալ

զի «Նւէրն» էր անպայման գովասանական, որովհետև Շիլլերը և Գէօտէն շատ բանով էին պարտական գերմանական այդ անմահ քննադատին: «Ես յիշում եմ զեռ — ասում է մի զրոյ — այն ժամանակը շատ լաւ և կարող եմ հաւատացնել, որ նոյեմբերից մինչեւ զատիկ «Նւէրներից» բաց ոչ մի զրականական երեսյթով մարդիկ չեին հետաքրքրում: Այնպէս էր թւում, իբր թէ ամբողջ Գերմանիայում հրդէհ է ծագել և օդնութեան են կանչում»: Թէ մասնաւոր խօսակցութեան և թէ նամակադրութեան մէջ միւնոյն ծաղրական ու վիրաւորական ոճն էր տիրապետում: Ամենուրէք նկատում էր լուռ զայրոյթ կամ աղմկալի բարկութիւն, ծածուկ կամ բացարձակ չարախնդութիւն: «Իւրաքանչիւր պատւաւոր մարդ — գանդատւում է Հէրդէրը — որը զլուխը քաշ ճանապարհն է գնում, կարող է յանկարծ խայտառակութեան զրօշմ ընդունել իւր ճակատի վրա, և այդ բանը կոչում է «Նւէր»: Վիլանդը, որին «Քնքոյշ կըս» էին անւանել, նոյնպէս միանգամայն սխալ էր համարում բանաստեղծական զօյգի արած քայլը: Գօտայի զուքոր զայրացել էր, իւր յարգելի մի անձնաւորութեան վիրաւորելու պատճառով: Լայպցիկում ու Բերլինում զայրոյթը աննկարապելի էր: Յայտնի հրապարակախօս Նիկոլայը «Մուզաների սյլմանախը» անւանեց «Զար ողիների այլմանախ»: Մի ուրիշ պատճառում էր, թէ հասարակական ընդհանուր արհաւերք զրոյ պնդում էր, թէ հասարակական ընդհանուր աւելացաւ, որովհետև ով զիտէ, թէ այդ ների թիւր մէկով աւելացաւ, որովհետև ով զիտէ, թէ այդ այլմանախը իւրաքանչիւր տարի ինչ է ծնելու: Նոյն իսկ զայլմանախը իւրաքանչիւր տարի ինչ է ծնելու: Նոյն իսկ զայլմանախն գերմանական գաղթականութիւնների մէջ մեծ փոթորիկ էր տիրապետում «Նւէրների» առիթով:

Մեր բանաստեղծները նմանեցնում էին իրանց «Նւէրները» Սամփսօնի աղւէսներին: Յիշեցնում էնք ընթերցողին Սասուածացնի այդ հսկային, որը էշի ծնուռով հազար մարդ սպանեց: Տաշնչի այդ հսկային, որը էշի ծնուռով հազար մարդ սպանեց: Սամփսօնը, կամենալով վրէժ առնել փղտացիներից, երեք Սամփսօնի աղւէսներին պատկերները և ամենաքաղցր զգացմունքները...» Բայց թէ այն մարդիկ, որոնք նուէր էին ստացել և թէ նրանք, որոնք ոչինչ չստանալով զայրացել էին, աչ ու ձախ յարձակւում էին հրդէհածիդ աղւէսների վրա: Շուտով սկսեց բանաստեղծական և արձակ զրւածքների մի ամբողջ հոսանք, իրը պատասխան բանաստեղծական զօյգին: Այդ զրւածքները մեծագոյն մասամբ տափակ ու բութ բաներ էին, որոնց մէջ քննադատութեան և սրամատութեան տեղը բռնում

հարիւր աղւէս բռնեց, պոչերը միմեանց կապեց, կշկիռներին մի-մի չահ տնկեց և վառելով չահերը, քշեց աղւէսներին գէպի փղտացոյ բանակը: Տեսեանքը հասկանալի է: Նմանօրինակ զեր պիտի խաղային «Նւէրները» փղտացի զրողների և ամեն տեսակ գործիքների շրջաններում, որը և իսկապէս խաղային: Քնդհանրապէս այդ նուէրները արդարացի էին, գեղեցիկ և շատ սրամիտ: Նրանք յարձակւում էին բթամտութեան, անձաշակութեան, փոքրոգութեան և սրանց նման արատների վրա: Երկտող մի ոտանաւորի մէջ շատ պարզ ու ճշգրիտ կերպով բնորոշւում էր այս ու այն զործիքի ամբողջ ովին, գործը, ընթացքը, ուղղութիւնը, և ոչ միայն որոշում էր, այլև յանցառորը պատճւում էր ամենաանխնայ կերպով: Այնուշետև մնում էր, որ պատճւած անհատը հերքէր իւր վրա բարձած մեղադրանքը: Եւ իսկապէս էլ շատերը փորձում էին այդպէս անել, բայց իրանց պատասխանով աւելի սկայնում էին իրանց, աւելի ծանրացնում էին իրանց զրութիւնը, իրանք իրանց ծեծում էին:

Միայն սակաւ անհատներ, օրինակ Կէրնէրը, հումբօղը և այլն, կարողացան ըստ արժանոյն գնահատել «Նւէրների» նշանակութիւնը: «Ինչ որ առանձնապէս գնահատելի է այդ «Նւէրների» մէջ — զրում է Կէրնէրը — այդ՝ կատակն է բարձր մաքով առած: Կատակով արտայայտում էք զուք ամենասուր մատծողութեան արդիւնաւոր եղբակացութիւնները, երեակայութեան ամենասիրուն պատկերները և ամենաքաղցր զգացմունքները...» Բայց թէ այն մարդիկ, որոնք նուէր էին ստացել և թէ նրանք, որոնք ոչինչ չստանալով զայրացել էին, աչ ու ձախ յարձակւում էին հրդէհածիդ աղւէսների վրա: Շուտով սկսեց բանաստեղծական և արձակ զրւածքների մի ամբողջ հոսանք, իրը պատասխան բանաստեղծական զօյգին: Այդ զրւածքները մեծագոյն մասամբ տափակ ու բութ բաներ էին, որոնց մէջ քննադատութեան և սրամատութեան տեղը բռնում

Էր ստոր զրպարտութիւնը և բացարձակ մասնութիւնը: Գէօտէին և Շիլլէրին աշխատումէին պատկերացնել, որպէս պէտութիւն և էլեկտրո-հակառակութիւննէլ, որպէսզի մի կողմից վայր զցէին նրանց հեղինակութիւնը ժողովրդի աչքին, միւս կողմից զօրեղների ձեռքը զէնք տային, հանձարեղ բանաստեղծներին զսպելու համար: Երկու բանաստեղծներին պատկերացնումէին իրը դրօշակակիրներ մի խումբ չար ողիների, որոնք պիտի վայր զլորեն բարոյականութեան սիւնը, եթէ եկեղեցոյ և պետութեան ներկայացուցիչները չզսպեն նրանց (նկարը զլսեակցում): Բարեբազարար կառավարութեան ներկայացուցիչները շատ աւելի խելացի և ազնիւ էին, քան թէ այդ մատնիչ-հրապարակախօսները: Լոյս տեսան միմեանց ետևից: «Փոխադարձ նւէրներ Ենայի թուղթ մրոտողներին», «Գրականական Ճիպոտներ», «Մոծակների այլմանախ», «Զօրութիւն և արդարութիւն» և սրանց նման անզօր ու անարդար գրքոյներ: Մանաւանդ աչքի էին ընկնում այն զրւածքները, որոնք աշխատում էին գայթակղութեան խնձոր զցել Երկու բանաստեղծների մէջ անշատել նրանց միմեանցից, թշնամացնել իրար հետո: Ոմանք նկարագրումէին Շիլլէրին իրը մի խաբւած, ողորմելի արարած, որին Գէօտէն մոլորեցնումէ և իւր ձեռքին խաղալիկ է դարձնում: Միւսները Գէօտէին էին խեղճացնում և Շիլլէրին զօրեղացնում: Օրինակ ոմն Իէլխարտ զիշողաբար վերաբերւելով զէպի Գէօտէն, ամբողջ գայթակղութիւնը վերագրումէր չարամիտ Շիլլէրին: Վերջապէս Շիլլէրը առաջարկեց Գէօտէին, որ իրանք մի ընդհանուր պատասխանով ցոյց տան իրանց համերաշխութիւնը և փակեն այդ չարանենդ կրիտիկանների բերանը: Իսկ Գէօտէն չամաձայնէց, ասելով: «Եյն մարզը, որի համար թանկ է իւր հեղինակութիւնը, պիտի առիթ տայ ամենքին արտայայտելու բոլորը, ինչ որ սրաներում ունեն: Մենք այդպէս էլ արինք: Ես կարծումէմ, որ

«Նւէրները» գեռ շատ նիւթ կտան մեր հակառակորդ չար ոգոյն: Սակայն մենք կշարունակենք այժմ մեր գրական գործունէութիւնը, իսկ բացասելու տանշանքը կթողնենք իրանց»: Գէօտէի միտքը այն էր, որ արդէն իրանք հակառակորդներին ուժասպառ արած լինելով, պիտի նորից դառնան գէպի իրանց իսկական կոչումը և այժմ որպէս արժելու բանաստեղծական աշխատութիւններով ցոյց տան, թէ որքան բարձր են իրանք, համեմատած հակառակորդների հետ: Այդպէս մտածելով Գէօտէն զրգեց Շիլլէրին, որ նա աշխատէ վերջացնել «Վալլէնշտէյնը», որի լոյս տեսնելը ամենալաւ պատասխան կլինէր բոլոր հակառակորդզրչակներին: Շիլլէրը այդպէս էլ արաւ...»

Ի միշի այլոց բանաստեղծը շատ տիսուր լուրեր ստացաւ իւր ծննդավայրից: Գասպարը ծանր հիւանդ էր: Շիլլէրը իսկցն նիւթական օգնութիւն ուղարկեց և սիրալիր նամակներով միխթարեց նրան: Բայց ծերունու հիւանդութիւնը օրէցօր լուրջ կերպարանք էր ստանում: Այդ գեռ բաւական չէր...



Վաղամեռամ Նանէտը:

Բանաստեղծի փոքրիկ քոյրը, գեռահաս Նանէտը, որը հայրենիքում պատրաստւումէր բեմգուրս գալու եղբօր ստեղծած կանացի գերերի մէջ, ծաղիկ հասակում, յանկարծահաս հիւանդութիւնից յեաց, գերեզման մտաւ: Շիլլէրի վիշտը անսահման էր, որովհետեւ հազիւ բողբոջող քոյրիկը Շիլլէրի աչքին ներկայացնումէր անմեղութեան, չքնաղութեան և վառկենսունակութեան մի ներդաշնակ պատկեր: Շիլլէրը խորառուցեց անլողհատ աշխատանքի մէջ, որ կարողանայ թեթե-


ւայնել իւր վիշտը: Բայց, ինչպէս երևումէ, անբաղզութիւնը կոխել էր Գասպարի ընտանիքին. Շիլէրի երկրորդ քյորը, Լուիզան, նոյնպէս հիւանդայաւ: Եղասքեթը միանդամայն շւարած էր մնացել: Շիլէրը կկամենար ինքը անձամբ գնար հայրենիք՝ օգնութեան համելու, բայց ի նկատի ունենալով սեփական տկարութիւնը, վախենումէր, մի գուցէ իւր ներկայութեամբ աւելի ծանրացնէ մօր նեղութիւնը: Ուստի նա մի ուրիշ միջոց մտածեց. իսկոյն փող ուղարկեց Խրիստօֆինսային և աղերսանօք խնդրեց, որ անմիջապէս ծնողներին օգնութեան հասնէ: Խրիստօֆինան իսկոյն ճանապարհ ընկաւ: Շուտով Լուիզան և հայրը կրկին առողջացան, բայց բանաստեղծի մաքից չէր հեռանում նանէտի պատկերը: Մի օր Գօտէն բացատրեց Շիլէրին, թէ ինչ ներդործութիւն են անում արեգակի ճառագայթները բոյսերի աճեցողութեան և գունաւորութեան վրա: Ֆիզիկական այդ խորհրդաւոր երևոյթը կենդանացրեց բանաստեղծի վշտացած հոգոյ մէջ նանէտի լուսափայլ պատկերը և Շիլէրը ստեղծեց «Յէրէրայի գանդատը»... Աստուածուհին կորցրել է իւր աղջիկը, որին տարել է երկրի ողին: Դժբաղդ մայրը չդիտէ, ինչ միջոցով յարաբերութիւն ունենայ իւր աղջկայ հետ: Ի վերջոյ նա գտնումէ մի գաղտնի միջոց: Նա գցումէ հողի մէջ ծաղիկի սերմեր: Սրեգակի ճառագայթների աղղեցութեան տակ այդ սերմերը կանաչումէն և իրանց արմատը դէպի երկրի խորքը ուղղելով, միւս հողմից իրանց գյոնդգօյն դէմքերը դէպի արեն են դարձնում (դէպի Ցէրէրան): Այդպիսով մայր և աղջիկ դարձեալ վայելում են միմեանց սէրը, դարձեալ հոգեկան առնջութիւն են ունենում իրար հետ:

Այդպէս էր և Շիլէրը: Նա էլ իւր բոլոր հոգսերի, բոլոր վշտերի հետ հաշտելու համար միակ և ամենալաւ միջոցն էր համարում ծաղիկների կենդանի սերմեր շաղ տալ հողի մէջ և

վայելել նրանցից բուսնող գյոնդգօյն ծաղիկների զմայլուն պատկերները... եւ հէնց սրա մէջ էր կայանում բանաստեղծի ամբողջ գործունեութիւնը...

Դէպի ծաղիկները և ծառերը ունեցած սէրը արտայայտեց նա և մի կենսական նոր քայլ անելով:

Շիլէրը յոդնել էր զանազան մասնաւոր բնակարաններից:



Շիլէրի այգին:

Նա որոշել էր մի սեփական բնակատեղի ունենալ, այն էլ ըստ կարելոյն փոքր ինչ հեռու քաղաքային աղմուկից, ծառերի ու ծաղիկների շրջանում: Մի պատահական դէպի շատ նպաստաւոր հանդիսացաւ բանաստեղծի ցանկութիւններին: Մի հանգուցեալ պրօֆէսօրի այդետունը, որը գտնւումէր քաղաքի ծայրին, ծախումէին: Աս ներկայացնումէր մի ընդարձակ, գեղեցիկ այգի, որի մէջ կար և մի փոքրիկ տուն: Այդին ընկած էր գետակի բարձր ափին, որտեղից երևումէր հեռաւոր լոռեր գետակի բարձր ափին, որտեղից երևումէր հեռաւոր լոռեր:

Ների գեղեցիկ աեսարանը: Շիլլէրը իսկոյն զնեց այդ կալւածքը և մայիսի կէսին տեղափոխւեց այնտեղ:

Մի բոպէ բանասաեղծը հոգեկան հանգստութիւն զգաց: Նրան թւումէր, որ ինքը այժմ է միայն դառնում մարդկային հասարակութեան հաստատ անդամ: «Ես ողջունում եմ Ձեզ իմ այգուց — զրումէ նա Գէօտէին — ուր տեղափոխւել եմ այսօր: Գեղեցիկ աեսարանը տարածւած է իմ առաջ, արեգակը մեղմիկ կերպով մնաս բարե է անում և սոխակները երգում են: Իմ շուրջը ամեն բանի մէջ չերմութիւն է նկատում և իմ առաջին երեկոն սեփական տան մէջ անդորր օրեր է դուշակում»:

Այսաեղ ահա սկսեց նա շատ ժամեր անցուցանել Գէօտէի հետ, որը յաճախ դալիս էր Վէյմարից: Գէօտէի ազգեցութեան տակ նոր ոյժով զարթնեց Շիլլէրի սաեղծագործական ողին: Գէօտէի հետ ունեցած վիճարանութիւններն ու խօսակցութիւնները կարողանում էին բաւականութիւն տալ երիտասարդ բանաստեղծի հարցասիրութեան. շատ մուժ խնդիրներ պարզւեցին նրա համար, շատ տարակուսանքներ փարատւեցին: Միւս կողմից ազգում էին Շիլլէրի վրա Գէօտէի փարատւեցին: Միւս կողմից ազգում էին Շիլլէրի վրա Գէօտէի սաեղծագործութիւնները: Կարգալով նրա «Վիլհելմ Նոր սաեղծագործութիւնները», Շիլլէրը զդում էր այնպիսի զօրեղ գեղարւեստական ախորժանք, որ բոյցավառւում էր նրա սրառում սաեղծագործելու կրակը: Փիլիսօփայական ուսումնասիրութիւնների ազգեցութեան տակ Շիլլէրի քնարը լուս էր մնացել, բայց ազգեցութեան ժամանելու էր թուլացել, այլ աւելի ևս զօրութիւն էր չէր ժանդուել, չէր թուլացել, այլ աւելի ևս զօրութիւն էր ստացել: Վերջապէս փիլիսօփայական մտքի ապառաժը տրաքեց ներքին ոյժերի ազգեցութիւնից և բանաստեղծական թագնուներքին այժմ էրի ազգեցութիւնից և այնաստեղծական համար մի շարք բանաստեղծութիւններ միմեանցից գեղեցիկ, լէրը մի շարք բանաստեղծութիւններ միմեանցից գեղեցիկ, միմեանցից հիւթալիի: «Իդէալները», «Կանանց արժանիքը», «Դմեանցից հիւթալիի:

«Զբոսանքը» և այլ շատերը, որոշւում են նուրբ կազմութեամբ և պարունակում են իրանց մէջ վերին աստիճանի խորին զգացմունքներ: Իսկ «Ստւերների թագաւորութեան» մէջ ներկայանում է մեր առաջ Շիլլէրի ամբողջ հոգին: Այդ բանաստեղծութիւնների նիւթը կազմում է այն զանազանութիւնը, որ զցութիւնն ունի բարձր իդէալների և իրական կեանքի մէջ:

Մինչդեռ բանաստեղծը միսիթարւում էր այդ մելամաղձոտ երգերով, կրկին մի շատ տխուր տեղեկութիւն ստացաւ հայրենիքից: Գասպարը արգէն կնքել էր իւր երկրաւոր կեանգը: Որպէս ողբաց հիւանդ բանաստեղծը սիրելի հօր պատճառով Որպէն վշտի է են-թարկել պարտիվնոկ որդին իւր սիրող հօրը, որպէս թունարել է նրա սիրտը իւր փախառութով, որպէս քացրել է նրայց սերը՝ թողներով լուիզա:



Իուիզա: Հուիզա: Ապահով ճանապարհը և մանելով հասարակական գործիչի փշալի ասպարէզը ... Ուս հայր, հայր, դաւացրել եմ քեզ, յուսահար եմ արել քեզ... Բայց ների՞ր քո տարաբազէ որդուն, իմացի՞ր, որ նա սիրում է քեզ, միայն թէ հանձարը ակամայ քարշում տանում է նրան անապահով շաւիդներով: Իսկ մայրը... Միակ որդուց հեռու, այժմ ի՞նչ պիտի անէ նա: Բայց այդ գառն արցունքները կոկորդի մէջ խեղդելով, բանաստեղծը միսիթարկան նամակ զրեց մօրը. «Օ, թանկազին մայր, այժմ գուինքդ որոշիր քո վիճակը, և ինչ էլ որոշելու լինես, զու պիտի այսուհետեւ հոգսից ազատ լինես: Որտե՞ղ կկամնաս տարել իմ մօտ, թէ Խրիստօֆինայի՞ մօտ, կամ թէ զուցէ հայրենիքնում: Որն էլ ընտիզայի մօտ: Որն էլ ընտիզալու լինես, մինք կհոգանք քո ապրուստը: Ինչ որ հարկաւորի քեզ քո անդորր կեանքի

համար, դու կստանաս: Իմ հոգար այսուշետեւ այն կլինի, որ դու ոչինչ հոգս չունենս: Այդքան ծանր տանջանքներից յետոյ դոնէ քո կեանքի երեկոն պիտի հանդիսաւ լինի, և ես յոյս ունեմ, որ դու երեխաներիդ և թոռներիդ ծոցում դեռ շատ ուրախ օրեր կվայելես... Իմ բարի Լուիզային ցանկանումեւը յաջողութիւն իւր նպատակի մէջ (Լուիզան պատրաստւումէր ամուսնանալ), և այն աղնիւ երիտասարդին, որը խնդրումէ նրա ձեռքը, ցանկանումեւը բազգաւորութիւն»:

Շիլէրը շատ ախուր էր, ուստի Գէօտէն որոշեց միառժամանակ մնալ Ենայումեւ միսիթարել բարեկամին: «Ես չեմ կարող Շիլէրին այս զրութեան մէջ մնակ թողնել — զրումէ նա իւր մի բարեկամին, որը պիտի նրա կողմից զբոսից ներոզութիւն խնդրէ — Շիլէրը, ի հարկէ, համբերութեամբ գիմանումէ, բայց հենց այդ ինդիալարդունիւնից նրա առողջութեան վտանդ է սպառնում: Այդ բանը ես Զեղ ծածկաբար եմ ասում: որովհետեւ ինձ ախորժելի չէ այդ մոսին բացարձակ խօսելը...»

Եւ իսկապէս ծանր օրերը շուտով անցան և Շիլէրը միսիթարութիւն դառաւ աշխատանքի մէջ, ամեն չանք գործ զնելով, որ «Վալէնշաելյնը» կարողանայ նորողւած թատրոնի բացման համար հասցնել:



Վալէնշտէնի բանակը:

## XX.

Լիւտերի ձեռքով կատարւած եկեղեցական բարեկարգութիւնը մեծ թշւառութիւնների պատճառ դարձաւ արեմանեան Եւրոպայում: Կաթոլիկ և բողոքական համայնքները չեն ընդունում միմեանց զյութեան իրաւունքը: Այդ փոխարձ ատելութիւնը շատ թանկ նստեց գերմանական ժողովրդին: Գերմանիայի մեծ ու փոքր պետութիւնները բաժանեցին Երկու իրար թշնամի խմբերի: Գերմանական ընդհանուր կայսրը, որ միաժամանակ Աւստրիայի թագաւորն էր, դարձաւ կաթոլիկական խմբի պարտադիվնը և որոշեց արմատախիլ անել բողոքականութիւնը, կամ թէ բնաջինչ անել բողոքականներին: Վերջիններին օդնութեան հասաւ Շվեյցայի թագաւոր Գուստուս Ադոլֆը, որը տաղանդաւոր գնդապետ լինելով, սկսեց միմեանց ետևից յաղթել կայսրի կողմակից գորապեաններին:

Գուշակելով վերջնական պարտութիւնը, կայսրը ստիպւած էղաւ օդնութեան կանչելու իւր ամենատաղանգաւոր, բայց պաշտօնից զրկւած զօրապետ Վալլէնշտէյնին: Վերջնս յանձն առաւ սեփական զօրք կաղմակերպել և պատերազմ մղել, այն պայմանով միայն, որ ինքը լինի զօրքի անկախ հրամանատարը և ոչ ոքից, նոյն իսկ կայսրից, ոչինչ կախում չունենայ պատերազմի դաշտում: Կայսրը ճարահատեալ համաձայնեց: Տէս որ Վալլէնշտէյնը դրօշակը բռնեց, իսկոյն փոխւեց պատերազմի ընթացքը: Գուստաւ Սովորֆը ընկաւ պատերազմի դաշտում: Բողոքական զօրապետները միմեանց ետեից յաղթւումէին, այնպէս որ Վալլէնշտէյնը կարող էր միանդամայն բնաջինչ անել հակառակորդ զօրքերը, եթէ կամենար: Բայց նա սկսեց ձգձգել և ինչոր գաղտնի բանակցութիւններ ունէր շվեդական զօրապետների հետ: Լուր տարածւեց, թէ Վալլէնշտէյնը կամենումէ դաւաճանել իւր կայսրին: Կայսրը կրկին որոշեց պաշտօնանկ անել Վալլէնշտէյնին, որը սակայն տեսնելով իւր անկումը, ստիպւած էղաւ բացարձակ ընդդիմանալու կայսրին: Բայց ստորագրեալ գնդապետները իրանց զօրքերով անցան կայսրի կողմբ: Վալլէնշտէյնը կենտրօնացաւ մի ամրոցում, իրան հաւատարիմ փոքրիկ զօրքի հետ: Բայց այստեղ ևս ծախան հաւատարիմ փոքրիկ զօրքի հետ: Ճառագիր կաղմեցին և զօրտպետին սպանեցին:

Ամբողջ գրւածքը բաղկացած է երեք առանձին դրամաներից: Առաջին զրաման բազկացած է միայն մի գործողութիւնից և ներկայացնումէ զօրապետի ամբողջ բանակը, իւր խառնիճանձ և բազմատեսակ զինւորներով: Սրանք ոչ թէ մեր ժամանակի պէս վիճակով ընտրւած, հաստկակից և հայրենաժամանակի պիտի զուգագույն յայտնի և անցայտ անկիւններից ամբողջ Եւրոպայի զանազան յայտնի և անցայտ անկիւններից առողջ վերսպայի զանազան յայտնի և անցայտ անկիւններից առողջ վերցրել և Վալլէնշտէյնի հեղինակաւոր դրօշակի տակ սուր են վերցրել և Վալլէնշտէյնի հեղինակաւոր դրօշակի տակ

բաղդ և ազատ կեանք են որոնում: Ահա թէ ինչ են խօսում և ինչ են երգում այդ աներկիւդ սրիկաները: Զէ՞ որ մենք քաջ զօրապետի մարդիկն ենք, եւ նրա անւան բոլորովին արժան ենք. Զէն խնայում Վալլէնշտէյնի զօրքերը Ոչ թշնամու, ոչ հարազատ դոյքերը, Ոչ ցանքսերը, ոչ էլ հասուն արտերը: Եւ մի ակընթարթում, որպէս հեղեղը, Զեռք են բերում իրանց հարկաւոր տեղը, Որպէս կրակի բոցը խաւար դիշերին Հրդէհում ու տիրանումէ աներին... Պարծենալու համար չէ իմ պատմածը, Կը հաստատեն ամենքն իմ ասածը, Եւ կը պատմեն որդիները, թոռները, Թէ զօրքերից ինչ են տեսել հայրերը:

Վախտմէյստրը նկատումէ, թէ զինւորին հարկաւոր է ժիշութիւն, նուրբ դիտողութիւն, խելք ու կարգապահութիւն: Իսկ մի հրացանաձիդ այդ բոլորը երկրորդական բան համարենով, պատասխանումէ.

Ազատութիւնն է զինւորին անհրաժեշտ. Ինչու եմ ես դպրոցին տեղ հրամեշտ: Թէ չի մնացի դպրոցի նեղ սենեակում: Մի՞թէ պիտի ես դաս սովորեմ բանակում: Ես ուղում ուրախ ապրել և անդորր, հետաքրքիր մի բան տեսնել ամեն օր, Վայրկենական ուրախութիւն ճաշակել, Ոչ յետ նայել, ոչ ապագան գուշակել: Էլ ինչու եմ կայսրին ծախել իմ կաշին, Թէ հոգսերը չահիլ կեանքս պիտ' մաշին: Թող հրամայեն կրակի միջով անցնել,

Կամ կատաղի ալիքները լռեցնել,  
Զեմ սարսափիլ չեմ խուսափիլ, բնաւին,  
Իսկ սրանից բայց զործ մի՛ յանձնէք զինւորին:  
Մի նորեկ զինւոր ոգեսորւելով ընկերակցի խօսքերից,  
աւելացնումէ.

Զինւորի կեանքն է  
Թմբուկ ու նուադ,  
Նա թափառումէ  
Ամբողջ ժամանակ,  
Վատահ իւր սրին,  
Աղատ, համարձակ,  
Քշումէ նա ձին:

Բայց կոտորածների մէջ վաղուց վարժւած ու փորձւած  
զինւորները նոյն խոկ բարոյական բարձր հիմունքներ են գտնում  
պատերազմական կեանքի մէջ և իրանց անհամեմատ աւելի  
բարձր են համարում սովորական մարդկանցից.

Դէհ, ընկերներ, պէտք է հեծնել ձիանքը,  
Թռչել զէպի ազատութիւն ու կեանքը,  
Պատերազմի դաշտումն է մեր արժանիք,  
Սյնտեղ է մեր սիրտը լինում երջանիկ:  
Իւր անձի վրա պիտի յուսայ զինւորը,  
Թէ չէ վաս տեղ կը մընացնէ իւր օրը....  
Աղատութիւնն չքացել է աշխարհից,  
Տէր ու ծառայ միշտ կախւած են իրարից:  
Խարէութիւն ու նենդութիւն է տիրում:  
Ժողովուրդը սարկութիւն է սիրում:  
Զինւորն է միայն ազատ մարդը աշխարհում:  
Մահի աչքին նա աներկիւղ է նայում...  
Երկինքն է նրան օրեր տալիս երջանիկ,  
Աշխատելու չունի զինւորը կարիք:

Հողագործը մշակումէ սև հողը,  
Եւ այնտեղ է որոնում իւր սև փողը,  
Նա անընդհատ քանդումէ միշտ իւր օրում:  
Փորում, քանդում, վերջն էլ իւր փոսն է փորում:  
Սյնուամնայնիւ զինւորն էլ ունի իւր վիշտը: Զնայելով  
ազատ կեանքին, նա էլ սրտի խորքում զիտակյունմէ, որ ինքը  
անբաղդ է, որ իրան շատ ու շատ բան է պակասում:  
Սուրբ բահ չէ, ոչ էլ գութան կամ արօր,  
Նրանով հերկողն չի՞նի երբէք բաղդաւոր:  
Մեղ համար չեն ծլում, ծաղկում բոյսերը,  
Մեղ համար չեն հասունանում հասկերը:  
Սնտուն-անտէր թափառումէ զինւորը,  
Չունի նա կին և գուրսն է ամբողջ օրը,  
Հեռուից է տեսնում նա քաղաքները,  
Անցողակի՝ կանաչաղարդ դաշտերը.  
Գիւղականի այդեքաղին ու հնձին,  
Երդի ձայնը չէ համում նրա ականջին:

Սյդպիսի չարքաշ կեանք է վարում զինւորը յօդուտ իւր  
թագտորի, ուստի կամենումէ, որ իշխանը յարդէ նրա իրա-  
ւունքները: Երբ բանակի մէջ լուր է տարածւում, թէ կայսրի  
հրամանով զօրքի մի մասը պիտի վալլէնշտէյնից հեռանայ ու  
գնայ հեռաւոր երկիրներ, զինւորների մէջ անբաւականութիւն  
է ծագում:

Միթէ կարիք կայ վիճելու այն մասին,  
Թէ կայսրին ենք մենք ամենքս միասին...  
Բայց չենք ուղում, որ մեզ իզուր քաշկուտեն,  
Աննպատակ ու անխնայ կտրտեն:  
Չէ որ օգուտ է իշխանին ու թագին,  
Թէ զինւորը զին է տալիս իւր կեանքին:  
Ինչով է կայսրն այնպէս զօրեղ, ինքնակալ,

Ո՞ւմ պիտ՝ լինի նա սրա համար չնորհակալ.  
Ինչով է նրա խօսքը կշիռ ստանում,  
Ինչպէս է նա քրիստոնէից զլուխ կանգնում:  
Թող որ կրեն նրա լուծն այն մարդիկը,  
Որ ուտումէն նրա առատ բարիքը,  
Կամ սեղան են նստում նրա հետ փառաւոր.  
Ի՞նչ է ստանում այդ մեծ բաժնից մի զինոր...

Բուն դրամայի մեջ աճքի է ընկնում զլխաւոր հերոսի  
անձնաւորութիւնը: Վալլէնշտէյնը տաղանդ է, որը թէև ար-  
տայայտումէ ոչ գեղարւեստի կամ գիտութեան մեջ, այլ  
քաղաքականութեան և պատերազմի խառնաշփոթ ասպարի-  
դում: Իրը գնդապետ և քաղաքագէտ նա նշանաւոր ոյժ է:  
Նրան չէ հետաքրքրում սովորական կեանքը, այլ նրա հսկայա-  
կան հոգին սնուցանում է ինքն իրան մեծամեծ ծրագիրներով:  
Վալլէնշտէյնը շատ փառասէր է, բայց այդ փառասիրութիւ-  
նը այն ծիծաղելի պարծենկոտութիւններ: Յոլոր տաղանդաւոր  
մարդիկ փառասէր են լինում, ուստի շատ նուրբ հոգեբանա-  
կան հարց է, թէ ինչ է իսկապէս փառասիրութիւն կոչւած  
զգացմունքը: Յամենայն դէպս նա արատ չէ: Աստուածաբան-  
ների կարծիքով նոյն իսկ Աստուած տիեզերքը ստեղծել է  
իւր փառքի համար: Նոյնն է անում հանձտը, որի համար  
աշխարհքը, մարդկային կեանքը մի լայնածաւալ կտաւ է, որի  
վրա նա նկարում է իւր հոգեկան պատկերը:

Վալլէնշտէյնը կամենում է հաստատ խաղաղութիւն տալ  
Գերմանիային: Նա ինքը պաշտօնապէս կաթոլիկ էր, բայց նրա  
հոգոյ մեջ թափանցել էին մարդկայնութեան ազատ սկզբունք-  
ները: Բնական է, որ նրա աճքից ընկել էր կայսերական տունը  
իւր անընդունակ աշխարհակալութեամբ և ֆանատիկոս ոգով:  
Վալլէնշտէյնը կամենում էր ձեռք բերել իւր համար հարազատ

Բօհէմիայի թափուր ֆնացած գահը, դառնալ հաւասար իշխան  
գերմանական բազմաթիւ գահակաների շարքում և կայսերա-  
կան տան ազդեցութիւնը թուլացնելով, համերաշխութիւն  
ստեղծել գերմանական բոլոր երկիրների մէջ, առանց կրօնի  
խտրութեան: Ընթերցողը  
աեսնումէ, որ Վալլէն-  
շտէյնի սրտում արդէն բող-  
բոչումէր նոյն այն միտքը,  
որը մեր դարում այնպէս  
փառաւոր կերպով իրագոր-  
ծեց Բիսմարկի հանձարը:  
Վալլէնշտէյնը ուրեմն Բիս-  
մարկի նախահայրն էր:

Հոգեկան գորեղ յատ-  
կութիւնների շնորհիւ  
Վալլէնշտէյնը կարողա-  
նում էր մարդկանց քարշել  
գէպի ինքը, կենտրոնացնել  
ամենքին իւր շուրջը: Մագ-  
նիսական գորութեամբ կա-  
րողայաւ նա առանց կայս-  
րի օգնութեան ահագին  
զօրք կաղմել իւր համար:  
Հեռաւոր տեղերից, գէնք

Վալլէնշտէյն:

կրելու ընդունակ երիտա-  
սարդները, լսելով Վալլէնշտէյնի անունը, վաղում՝ գալիս էին  
և նրա զրօշակի տակ մտնում: Երիտասարդ գնդապետ Մակ-  
ոլ շատ էր ըմբռնել, թէ ինչ ոյժ է Վալլէնշտէյնը: «Մի  
անդամընդ միշտ նա այնպէս է ծնւած, որ չէ կարող ծռոտե-  
լով յարմարւել ուրիշների կամքին: Տիրապետելու հոգին յա-



տուկ է նրան և նա կանգնած է տիրապետին հարկաւոր բարձրութեան վրա: Եւ այդ մի բազգաւորութիւն է: Քիչ մարդիկ կան, որ իշխելու ընդունակ էն: Բազմութեան շահի համար կարեռ է, որ մեկը կարողանայ կենտրօն դառնալ հաղարների համար: Վալլէնշտէյնը ներկայացնումէ իբր մի ամուր ապառաժ, որի վրա կարելի է յենւել ուրախութեամբ և վստահութեամբ: Ախորժելի է տեսնել, թէ ինչպէս նա ամենքին սիրտ ու հողի է ներշնչում, թէ ինչպէս իւրաքանչիւր բնական ձիրք մի որոշ պատկեր է ստանում նրա աղջեցութեան տակ: Նա թոյլ է տալիս, որ իւրաքանչիւրը դառնայ այն, ինչ որ կոչումը պահանջումէ: Վալլէնշտէյնը աշխատումէ, որ իւրաքանչիւրը իրան պատշաճ տեղը ունենայ: Այդպիսով կարողանումէ նա իւր սեփականութիւնը դարձնել բոլոր ոյժերը:»

Այնուամենայնիւ այդպիսի մեծ ոյժն էլ պիտի չկարողանար շօշափելի փոփոխութիւն մայնել տիրող կարգերի մէջ, որովհետեւ դեռ հողը պատրաստ չէր: Ամենավճռական ըովէին Վալլէնշտէյնի զօրքերը դաւաճանեցին իրանց զօրապետին: Այդ բանը վաղուց գուշակումէին Վալլէնշտէյնին շրջապատող խորամանկ զօրականները և զգուշացնումէին նրան ասելով.

Մակրնթաց շրի հզօր թեերը  
Քաշումտանումէն կանգնած նաւերը.  
Նոյնպէս բազմութեան ուժեղ հոսանքը  
Զեափոխումէ անհատի կամքը:  
Ով հոսանքի մէջ չէ ինսյում անձը,  
Կը սթափեի, եթէ թուլանայ սանձը,  
Շուտ կը գիտակցէ իւր թուլութիւնը,  
Կը յիշէ նորից հին դրութիւնը,  
Դողլոցուն սրտով զգալով ահը,  
Կը թողնէ իսկըն նոր ճանապարհը:

Բայց Վալլէնշտէյնը, մեծ մարդկանց յատուկ պարզասրտութեամբ, աւելի հաւատ է ընծայում մարդկանց, քան նրանք արժանի են: Եւ աչա կառավարչական խորամանկ ինտրիգները շատ շուտով ծանր կերպարանք տւին Վալլէնշտէյնի ցանկութիւններին և գցեցին նրան անխուսափելի ծուղակի մէջ.

Միթէ իրաւ անկարող եմ յետ դառնար, եւ յանցանքը իմ ուսերից վեր բառնար, Միթէ պիտի խօսքից անցնեմ դէպի գործ, Քանի որ ես անումէի միայն փորձ: Վկայ է Մեծ Աստուած, երկնքի Տէրը, Որ վճռւած չէին իմ այդ մոքերը . . . . Իսկ պատահմամբ առաջ եկած անցքերը, Անձրազիր, անցողական դէպի երը Կը կապկպեն, կը շղթայեն միասին, Սարսափելի գանգատ կանեն իմ մասին . . . . Եւ ինչ պիտի կարենայի ես անել, Կարո՞ղ էի անշարժ կարգը տատանել, Սրբագրծւած և անսասան է հինը, Աւանդութեան վրա զրած է հիմը. Ժողովրդի մանկական կոյր հաւատը Կազմումէ նրա անխախտելի արմատը . . . . Այդ չէր լինիլ ոյժի կոխւ ոյժի դէմ, Որը մղել ես իմ կեանքում լաւ զիաեմ: Ես թշնամուց չեմ վախենում բնաւին: Թէ երեայ ամբողջ ոյժով իմ աչքին: Եթէ ցոյց տայ իմ թշնամին քաշութիւն, Իմ հոգոյն էլ կը ներշնչէ զօրութիւն: Բայց վախումէմ ես այնպիսի կուողից, Որ խայթումէ աներեսյթ անկիւնից,

Վախկոտութեամբ ասպարիզից խուսափում.  
Այդ երկչոտից եմ ես իրաւ սարսափում:  
Վտանգաւոր չէ ինձ երբէք այն ոյժը,  
Որ անվեհեր զործաղումէ աշխցիք.  
Վտանգաւոր է իմ աչքին չնչինը,  
Որ չէ կորցնում երբէք ստոր իւր զինը,  
Որ եղել է միշտ և կլինի յաւիտեան,  
Որ կազմումէ ամբողջ կեանքը մարդկութեան:  
Աւանդութիւնն է մարդկութեան դայեակը,  
Սրբութիւն է ներշնչում ժամանակը.  
Ինչ մնացել է նախնիներից թանկազին,  
Համարումէն որդիները երկնային:  
Ով շարժումէ անշարժելին իւր տեղից,  
Կը հալածէի, կը քարկոծէի ամբոխից.  
Բայց մի անգամ թէ յաղթեցիր զօրութեամբ,  
Այնուհետև քեզ կը պաշտեն սրբութեամբ:

Այդպիսի մի չնչին, բայց խորամանկ թշնամի՝ Վալլէնշտէյնի  
ամենամօտ բարեկամ զօրապետ Օկտավիո Պիկոլոմինին է, որի  
անունով է ինքւած երկրորդ դրաման: Նա խորամանկ քաղա-  
քագէտ է և հին-աւանդապահ զօրական: Օկտավիօն պատրաս-  
տեց Վալլէնշտէյնի անկումը, քանդելով նրա ոտների տակը:  
Նրա շնորհիւ զօրապեաները հեռացան Վալլէնշտէյնից: Մկրդ-  
բում այդ բանից Վալլէնշտէյնը շատ չէր վհասում, բայց նրա  
սիրտը վշարացաւ, երբ իմացաւ, որ իւր զինաւոր թշնամին  
Օկտավիօն է.

Տասնեակ տարի միասին գործել, ապրել ենք,  
Մի կտոր հացը ընկերաբար կիսել ենք,  
Իսկ այժմ երբ կրծքին ընկած սրտակից,  
Համարումէմ վստահ ընկեր, կարեկից,  
Նա նենդութեամբ զոհ է բերում իմ կեանքը,

Եւ հրումէ սուր դանակը իմ կուրծքը:  
Նրանից զրկւեն ինձ մեծ յաւ չէ պատճառում,  
Յաւ է, որ մարդ ընէրին է վաճառուն:  
Բայց և այնպէս Վալլէնշտէյնը չէ վհատում, այլ տես-  
նելով, որ ինքը մէնակ է մնացել, սիրտ է առնում և որոշում  
է վճռական կերպով զործի անցնել.  
Ճիմայ է լաւ, որ կորցնելով բոլոր յոյս,  
Զեմ ունենալ ոչ կասկած, ոչ տարակոյս:  
Կրկին ազատ է իմ կուրծքը, իմ հոգին,  
Գիշեր է պէտք իմ աստղալի երկնքին:  
Զգձգելով վծիռը մինչ այդ օրը,  
Տատանելով էի հանում ես սուրբ,  
Այսուհետև զօրեղ կլինի իմ ձեռքը,  
Քանի որ նա պիտ պաշտպանէ իմ կուրծքը:  
Օկտավիօն, կատարեցիր քո դերը,  
Կտրատեցիր ծառի բոլոր ձիւղերը,  
Ես կանգնած եմ անօգնական և անտուն:  
Անապատում, որպէս անձիւղ ծառի բուն:  
Սակայն բունը ունի իւր մէջ զօրութիւն.  
Նա կը ծլէ, կառնէ կրկին յարութիւն.  
Հոգի՞ն է, որ ստեղծումէ մարմինը.  
Վալլէնշտէյնը չի կորցնիլ իւր դինը:  
Զեր զօրքերը սովորել են միշտ յաղթել  
իմ դրօշակի տակ, ոչ իմ դէմը կանգնել:  
Երբ մարմինը անշատումէ իւր զիսից,  
Հոգոյ տեղը շուտ կիմացւի նրանց գործից:  
Վալլէնշտէյնին վերաբերող քաղաքական դրամայի հետ  
զուղընթաց մեր առաջ արծարծւումէ մի մասնաւոր սրտա-  
ձմիկ դրամա, ուր մեծամեծ ծրագիրներին փոխարինումէ  
երիտասարդական վառ սէրը մի դեռահաս զցզի մէջ, որի

կեանքի քնքոյշ անիւր ընդհարւումէ զօրապետների ահռելի  
անիւների հետ և ոտնատակ է լինում:

Օկտավիոյի որդին, երիտասարդ գնդապետ Մակոր և  
Վալլէնշտէյնի միակ ժառանգ, օրիորդ Տէկլան սիրում են մի-  
մեանց առաջին սիրոյ բոլոր թարմութեամբ և սրբութեամբ:




Տէկլա:

Բայց նրանց ծնողների փոխա-  
դարձ թշնամութիւնը դնումէ  
սիրաբորբոք զշյգին անելա-  
նելի դրութեան մէջ: Մակոր  
չդիտէ ինչ անել: Հայրենասի-  
րական զգացմունքը չէ թոյլ  
տալիս, որ նա Վալլէնշտէյնի  
հետ միասին գաւաճանէ և  
կռւէ իւր հօր դէմ: Իսկ եթէ  
անցնէ նա հօր կողմը և Վալ-  
լէնշտէյնին թողնէ ծանր ճրգ-  
նաժամի մէջ, ի՞նչ կպատահի  
Տէկլայի հետ, որը նրան այն-  
պէս սիրումէ: Ես նրանն  
եմ — ասում է Տէկլան —  
նա է ինձ նոր կեանք ներ-  
շնչել . . .

Ի՞նչ էի ես, երբ դեռ նրա պայծառ սէրը  
Զէր զարթեցրել իմ գեղեցիկ յոյսերը:  
Զնչին լինել չեմ կամենում իմ աքին,  
Զնչին չէ նա, ով սէր ունի թանկաղին:  
Երջանկութիւնն ոյժ է տալիս իմ կամքին,  
Լուրջ է կեանքը, եթէ լուրջ է մեր հոգին:  
Տեսնելով որ Մակոր վախենումէ, մի դուցէ ուրիշները

Թոյլ չտան նրանց բաղդաւոր լինել, միմեանց պատկանել, նա  
պատասխանումէ.

Բայց չէ որ մենք բաղդաւոր ենք մեզ զգում՝  
Զէ՞ որ դու ինձ, և ես քեզ եմ պատկանում:  
Մենք ընտրել ենք, մենք սիրել ենք փոխադարձ,  
Տամերաշխ ենք, միացած ենք մենք անդարձ:




Մակոր

Ուստի պահենք հողոյ խորքում մեր սէրը.  
Շաղկապւած են յաւիտեան մեր սրտերը:  
Երկնքիցն է նա մեզ համար վայր իշել,  
Ուստի երկրին մենք չենք կարող նրան դիշել:  
Մակոր էլ իւր կողմից, Տէկլայի սիրոյ աղդեցութեան  
տակ բոլորովին փոխել է իւր հայեացքը կեանքի մասին: Նա  
մինչեւ այժմ միայն պատերազմական կեանքով էր ոգեսրւում

և սրանից դուրս կեանք և երջանկութիւն չէր հասկանում;  
 իսկ այժմ բոլորովին ուրիշ երդ է երգում հօր առաջ.  
 Ոչ, հայր, կեանքն էլ բարիքներ ունի,  
 Որից զինւորը գաղափար չունի:  
 Մենք տեսնում ենք սոսկ կեանքի ափերը,  
 Որպէս ծովային աւաղակները,  
 Որ զիշեր-ցերեկ նաւի մէջ ապրում,  
 Ծովածոցերն են միայն ճանաչում:  
 Հողը գոյութիւն չունի նրանց համար,  
 Ափ են դուրս դալիս գողութեան համար,  
 Իսկ թէ ինչ գանձեր թագնւած են ներսում,  
 Նրանք չեն տեսնում նոյն իսկ երազում:  
 Ինչու համար է մեր տաժան կեանքը,  
 Այդ զինւորական ծանր աշխատանքը,  
 Որ խլել է իմ ծաղիկ հասակը,  
 Անմշակ թողել իմ սիրտ ու միաքը:  
 Ենունդ չէ ստացել իմ անբաղդ հողին,  
 Զուրկ է մնացել լոյսից թանկազին:  
 Ի՞նչ լոյս պիտի տան խղճուկ զինւորին  
 Հրացանը, սուրը, խրխնչացող ձին,  
 Կամ կոտորածի խուլ շառաչիւնը,  
 Կամ թէ անգայ փողի հնչիւնը,  
 Ծառայութեան խիստ տաժան ժամերը,  
 Զիսավարժութեան խիստ հրամանները:  
 Ոչ, ի՞նչ երջանիկ, քաղցր է այն օրը,  
 Երբ յետ է դառնում խղճուկ զինւորը:  
 Եւ ծածանումէ ուրախ դրօշակը,  
 Խաղաղութիւն է հնջում նուազը:  
 Իսկ գարնանային նոր բացւած վարդը,  
 Զարդարումէ նրա վառ սաղաւարտը:

Եւ քաղաքային լայն գարպասները  
 Ներս են հրաւիրում խաղաղ գնդերը:  
 Աշտարակները և պատնեշները  
 Լցւում են ուրախ բարեկամները:  
 Զանգատներից բոլոր զանգերը,  
 Թնդեցնում են մարդկանց սրտերը:  
 Ուրախ բազմութեան արագ ընթացքը  
 Դժւարացնումէ գօրքի գնացքը:  
 Միիթարելով հայրը ծերացած,  
 Գրկումէ որգուն վաղուց կարօտած:  
 Նախկին ձողիկը դարձել է մեծ ծառ,  
 Ուրախ շարժումէ ծիւղերը պայծառ:  
 Ամօթիսած կյար ժպտում նորեկին,  
 Որ թողել էր նրան դայեակի կրծքին:  
 Երջանիկ է նաև, ով տուն մտնելիս,  
 Մի սիրող սիրտ է ընդառաջ դալիս:  
 Բայց մարդիկ կամենում են խլել Մակսից նրա հրեշտակին: Օկտավիօն աշխատումէ համոզել Մակսին, որ թողնելով  
 ամեն բան, ճանապարհ ընկնէ իւր հետ միասին, որովհետեւ  
 այդ է պահանջում կյարի հրամանը, իսկ Մակսը պատասխանումէ:  
 Պիտի փախչեմ, որպէս երկչոտ սրիկայ,  
 Պիտի դառնամ փախստական, անզգայ:  
 Ոչ: Իմ Տէկլան պիտի տեսնէ իմ ցաւը,  
 Պիտի զգայ խորտակւած սրտիս դաւը,  
 Պիտի տեսնէ, պիտի թափէ արցունքը,  
 Պիտ այտերից ներքեւ վաղեն ակունքը:  
 Ոչ, անգութ են մարդիկ, անգութ է կեանքը,  
 Նա է միայն իմ պահապան հրեշտակը.  
 Նա իմ հոգին կպաշտպանէ սարսափից,

Նա չի թոյլ տալ, որ ես զրկւեմ իմ խելքից:  
Միմիթարւած նրա խօսքով սրտակից  
Չեմ վախենալ ոչ մահից, ոչ սև հողից:  
Վերջին ըռպէներին Մակոր խնդրումէ Տէկլային, որ նու  
ինքը վճռէ Մակոր ընթացքը.



Սրտաձմիիլ հրաժեշտ:

Ոչ, երեսդ մի՛ դարձնիր ինձանից,  
Ազնիւ հրեշտակ, մի՛ վախենար ոչ ոքից:  
Խոստովանի՛ր, թող ամենքն էլ իմանան,  
Որ միմեանց մենք սիրումենք անսահման:  
Բաղդաւորին է հարկաւոր թագյնել,  
Իւր գաղտնիքը սրաի խորքումը սկաշել.  
Քօղարկելու կարիք չունի անյոյսը,  
Նա կարսղ է լինել պարզ որպէս լոյսը:

Ես պիտի գնամ, պիտ' հեռանամ, օ՛ Տէկլա,  
Դու պիտ' ներես և ինձ չատես, ի՛մ Տէկլա.  
Բայց մի հայեացք բցի՛ր իմ վրա կարեկից,  
Ասա, որ դու ինձ միշտ կմնաս սրտակից:

Եւ անմեղ աղջիկը որոշումէ, որ Մակոր գնայ... Երի-  
տասարդը շուտով մեռնումէ պատերազմի դաշտում: Օրիորդը  
ինքնասպանութիւն է դործում: Վալլէնշտէյնը սպանւումէ  
իւր զինւորների ձեռքով:

Գէօտէն և Շիլլէրը կամենումէին առաջ բերել թատրօնի  
ասպարիզում մի նոր իդէալական - գեղարւեստական ուղղու-  
թիւն, այսինքն բեմը ծառայեցնել ժողովրդի դուտ գեղարւես-  
տական ծաշակը իշնելու համար, որովկետե նրանք գեղարւեստից  
էին սպասում ամեն բան, թէ բարոյականութիւն, թէ զիտակ-  
յական կեանք: Այդպիսով նրանք պիտի մաքառէին այն մարդ-  
կանց դէմ, որոնք միայն կամենումէին „զբաղեցնել“, զւարձա-  
ցնել ամբոխին: Իդէալական ուղղութեան հիմքը որոշ չափով  
դրւած էր արդէն Գէօտէի «Իֆիդէնիայով» և Շիլլէրի «Իօն  
- կարլոսով», բայց սրանք միայն անկատար փորձեր էին:  
Հարկաւոր էր մի աւելի զօրեղ պիէս, որը շօշափելի ազգեցու-  
թիւն անելով հասարակութեան վրա, լրջօրէն լրմոնել տար  
նրան գեղարւեստի բուն իդէալական գեղեցկութեան գաղա-  
փարը: Եւ այդ յոյսը զրել էին մեր բանաստեղծները «Վալ-  
լէնշտէյնի» վրա:

Աշա թէ ինչու Շիլլէրը վերաբերւումէր դէպի այդ նիւթը  
վերին աստիճանի զգուշութեամբ և դողդողալով, կարծես մի  
տեսակ վախումէր ինքը իւր դործից: Որքան աւելի խորա-  
սուզումէր բանաստեղծը այդ նիւթի մէջ այնքան աւելի

համոզւումէր, որ իւր առաջ դրած է մի ծանր, պատասխանատու գործ: «Այն հիմքը — գրումէ նա Կերնէրին — որի վրա կառուցւած է ամբողջ «Վալլէնշտէյնը», դորքն է, որ ներկայացնումէ մի անսահման մակերևոյթ, որը ես միայն աննկարագրելի գւարութեամբ եմ կարողանում պատկերացնել իմ երեակայութեանս մէջ: Որպէս պիտի շնորհակալ լինեմ երկրնքից, երբ վերջապէս այդ Վալլէնշտէյնը անհետանայ իմ աչքից և իմ գրասեղանի երեսից: Կարծես թէ ես ստիպւած եմ մի ամբողջ ծով խմել ուստի երբեմն վերջնական ծայրը բոլորովին աչքից կորցնումէմ: Սկզբում նա այդ դրաման զրում էր արձակ ոճով, բայց շուտով փոխեց այդ մասին իւր կարծիքը: «Ամեն բան — գրումէ նա — պիտի ենթարկի բանասաւեղական գաղափարին և այդ բանի համար ծառայումէ չափոր (բիտմը) թէ որպէս ներկայացուցիչ և թէ որպէս գործիք: Չափոր ստեղծումէ մի տեսակ գեղարւեստական մժնոլորտ բանաստեղծական աշխատութեան համար, որովհետև չափուի ազդեցութեան տակ ամեն մի անհարթութիւն մի կողմ է մնում և միայն նուրբ հոգեկան նիւթն է կարողանում յարմարւել այդ մժնոլորտին: Մի ուրիշ անգամ գրումէ Շիլլերը Գեօտէին դարձեալ Վալլէնշտէյնի առիթով: «Ինձ օրէցօր հաւանական է թւում, որ ես ոչ մի բանի մէջ այնպէս անընդունակ չեմ, որպէս բանաստեղծութեան մէջ: Ի՞նչ պիտի անեմ ես: Ես պիտի գործ գնեմ «Վալլէնշտէյնի» վրա մինչեւ ութ ամիս ժամանակ, բայց վախենում եմ, որ առաջ բերեմ մի անարժեք բան: Ինչ որ ես մինչեւ այժմ զուլս եմ բերել դրամատիկական ասպարիզում, մի առանձին բան չէ և չէ կարող քաշալերել ինձ: Այնպիսի մի արհեստական զրւածք, որպիսին «Թօն - Կարլոսն» է, այլևս զգւեցնումէ ինձ, թէև ես ինձ ներումէմ, ի նկատի առնելով իմ այն ժամանակւայ տարեշրջանը: Այժմ ուզում եմ գնալ մի անձանօթ, գուցէ չփորձւած

ընթացքով, որովհետև վերջին երեք-չորս տարւայ մէջ բոլորովին ուրիշ գաղափար եմ կազմել բանաստեղծութեան մասին»: Բայց նա կրկին սիրտ էր առնում և գործը շարունակումէր: Այդպիսի աշխատանքը շատ ծանր ներգործութիւն էր անում Շիլլերի առողջութեան վրա: «Սովորաբար — գրումէ նա — մի օր այդպիսի լու տրամակրութիւն ունենալուց յետոյ, հինգ կամ վեց օր ստիպւած եմ լինում տանջւել ու զջալը: Գեօտէն ամառը եկաւ մի բանի օրով բարեկամի մօտ և միասին բաւական խօսակցեցին «Վալլէնշտէյնի» մասին: Ուշադրութեան արժանի է, թէ որպիսի բարեկազնութեամբ և աչալըշութեամբ աշխատումէր Շիլլերը այդ նիւթի վրա: Այդ ապացոյց է, որ հանձարեղ ստեղծագործութիւնը հեշտութեամբ պուլս չէ գալիս, այլ պահանջումէ երկար ու լուրջ աշխատութիւն: Եւ որքան մեծ է հանձարը, այնքան աւելի հոգացողութեամբ է կատարում նա իւր գործը: Շիլլերը աշխատում էր ամեն մի դէպքից որևէ օգուտ քաղել իւր աշխատութիւնը կատարելագործելու համար: Երբ մի գեներալ այցելեց նրան, բանաստեղծը խօսք բայց պատերազմական երևոյթների մասին: Գեներալը գաղափար տւառ նրան մի սարսափելի կոսորածի մասին, որից Շիլլերը վերցրեց Մակսի մահւան տեսարանի նկարագրութիւնը:

Հոկտեմբերին բեմ դրին «Վալլէնշտէյնի բանակը», որը կազմումէ դրամայի առաջին մասը և բաղկացած է միայն մի գործողութիւնից: Նորոգւած և պայծառ լուսաւորւած թատրօնում ասեղ զցելու տեղ չկար: Օրւայ տօնային նշանակութիւնը ի նկատի առնելով, նախ կարդացւեց բեմից բանաստեղծի նախարանը.

Այսօր ահա սկսումէ նոր շրջանը,  
թատերական բեմի նոր աստիճանը,  
Բանաստեղծն էլ թողնելով հին դնացքը,

Սովորական կեանքի չնչին ընթացքը,  
 Պիտի հասնէ ժամանակի բարձրութեան,  
 Պատկերացնէ բարձր կեանքը մարդկութեան:  
 Որովհետեւ բարձր նիւթն է երկնային  
 Արտացոլում կեանքի խորքը մարդկային,  
 Նեղ շրջանը նեղ է դարձնում մեր հողին,  
 Բարձրանում ենք մենք համեմատ մեր կեանքին . . .  
 Ազատութեան կռիւ են մղում աղգերը,  
 Գեղարւեսոր պիտ' տարածէ թերը,  
 Եւ թատրօնի լուսաճաճանչ բեմերը  
 Պատկերացնեն ալեկոծւած շրերը . . .  
 Մոայլ է դեռ ու պղտոր է մեր կեանքը,  
 Խաղաղութեան լուսոյ մարած է շողքը,  
 Պետութիւնն է սարսափելի զինարան,  
 Քաղաքացին չունի հանդիսա յենարան,  
 Զօրականն է տիրապետում ամենքին,  
 Աշխատաւորն տէր չէ իւր աշխատանքին,  
 Եւ անպատիժ բռնութիւնը ամեն տեղ  
 Ցոյց է տալիս իւր երեսը խիստ տղեղ . . .

Բուն պիէսի ներկայացումը գերազանց էր: Հասարակութիւնը մեծ հետաքրքրութեամբ կամենում էր տեսնել պիէսի շարունակութիւնը, բայց ստիպւած էր երեք ամիս սպասելու, որովհետեւ դեռ պատրաստ չէր:

Միայն յունվարի վերջին բեմ զրին երկրորդ մասը, Պիկոլոմինին: Սրա համար նախապատրաստութիւններ էին տեսնում մեծ եռանդով: Նոյն իսկ դուքսն էլ մասնակցում էր դորձին, որովհետեւ շատ էր կամենում, որ պիէսը յաջողութիւն ունենայ: Երկու բանաստեղծները յոյս էին դրել, որ «Վալէնշաէյնի» յաջողութեամբ էտէալական «—պառ-նի-նը յաղթող կհանդիսանայ: Տակաւին յունվարի սկզբին Շիլէրը ընտանի-



Մէնակ մնացած Գէօտէն:

քով եկաւ Վէյմար, ուր և մնաց ամբողչ հինդ շաբաթ: Թէ Գէօտէն և թէ Հեղինակը մեծ եռանդով հսկումէին, որ գերասանները լաւ պատրաստւեն և մանաւանդ մեծ չանք էին գործ դնում: որ գերասանները ըմբռնեն բանաստեղծութեան ողին: Վերջապէս հասաւ նշանակւած երեկոն: Ամեն կողմից, մանաւանդ Ենայից և Երփուրտից հանդիսականներ էին եկել, այնպէս որ թատրոնը հազիւ տեղաւորեց ամենքին: Հանդիսականներին վերին աստիճանի զգածւած և յուրեւած էին խաղի ժամանակ, առանձնապէս զօրեղ աղդեցութիւն էին անում այն քնարական կտորները, որոնք թափանցւած էին սիրով և արտացոլումէին բանաստեղծի վառ երեակայութիւնը: Ինքը բանաստեղծը շատ զգածւած և ուրախ էր, և շարունակ շնորհակալութիւն էր յայտնում գերասաններին, մոռանալով որ դիսաւոր շնորհակալութիւնը հինց իրան է վերաբերում:

Չորս ամսից յետոյ բեմդրին վերջին մասը՝ «Վալէնշտէյնի» մահը, որի տպաւորութիւնը արդէն արտաքոյ կարգի զօրեղ էր, այնպէս որ նոյն խև ամենաանտարբեր սրտերն էլ շարժւեցին: Մակոի և Տէղայի անշատման տեսարանի առաջ շատերը երեխայի պէս լաց էին լինում: Ամբողչ հասարակութիւնը կարծես սուրդի մէջ էր: Միւս օրից սկսեալ մի ամբողչ շաբաթ հասարակութեան խօսակցութեան առարկան «Վալէնշտէյն» էր:

Ամառը կրկնեցին «Վալէնշտէյնը» Վէյմար հիւր եկած պրուսական թագաւորի և թագուհու ներկայութեամբ: Այդ առիթով բանաստեղծը արժանացաւ թագաւորական գոյգի տեսութեան: Ի միջի այլոց թագուհին շատ քաղցր խօսքեր ասաց բանաստեղծի հեղինակութիւնների մասին: Նոյն առիթով դքսուհին ուղարկեց Շիլէրի համար մի արծաթեայ սերվիդ:

«Վալէնշտէյնի» համար Շիլէրը բաւական լաւ վարձատրութիւն ստացաւ Վէյմարի, Բերլինի և այլ տեղերի թատ-

րօններից: Գրավածառ կոտասն հրատարակեց ամբողջ գրւածքը 3500 օրինակի քանակութեամբ, որ և իսկոյն սպառւեց: Ուստի կէրնէրը խորհուրդ տւաւ Շիլլէրին, որ այնուշեաւ էժան գներով չտայ դրավածառներին իւր ձեռադիրները, և Շիլլէրը պայմանաւորւեց կոտայի հետ, որ իւրաքանչիւր նոր պիեսի համար վճարէ իրան 300 դուկատ (մօտ 1500 լ.): Տեղինակի անունը տարածւեց Եւրոպական միւս երկրներում: Մրանսիական փոխ-մինիստրը որոշեց թարգմանել «Վալլէնշտէյնը» Փրանսերէն լեզով: Անդիական գրավածառները առաջարկեցին Շիլլէրին իւրաքանչիւր դրամայի թարգմանութեան համար 60 ֆունտ-ստերլինդ, միայն այն պայմանով, որ թարգմանութիւնը լոյս տեսնի իսկականից մի շաբաթ առաջ:

«Վալլէնշտէյնի» միջոցով Շիլլէրը ահազին ժողովրդականութիւն ձեռք բերաւ: Մայիս ամսին Երֆուրտաի պրուսական օֆիցիէրները տօնախմբութիւն սարքեցին ի պատիւ Շիլլէրի: Տարիւրաւոր սպաների և գնդապետների մատուցած բուռն յարգանքը առժամանակ մոռացնել տւաւ հիւանդ բանաստեղծին իւր բոլոր հոգսերը:

Այժմ Շիլլէրը այլևս չեր կասկածում իւր կոչման մասին, այլ գեղարւեստական ամուր վրձինը բռնած, ստեղծագործում էր փորձւած վարպետի կատարեալ վստահութեամբ: Նա այլևս վերջնականապէս համոզւած էր, որ ինքը բանաստեղծ է: Իսկ մամնաւորապէս իւր ոյժը գտնում էր դրամայի ասպարիզում: Ուստի և որոշեց այսուհետեւ բոլոր ժամանակը նւիրել Մէլպոմէնայի տաճարին, որի նշանակութեան մասին նա շատ մեծ գաղափար ունէր:



Շիլլէրի բնակարանը Վէլմարում:

## XXI.

Վերագառնալով Ենա, Շիլլէրը իսկոյն սկսեց նոր նիւթ որոնել: Երկար տարիներ շարունակ «Վալլէնշտէյնի» վրա աշխատելով, յոդնել էր նա զանազան սպաներից, գեներալներից և առհասարակ աղմկալի տեսարաններից, ուստի կամենում էր գտնել այնպիսի նիւթ, որը միջոց տար նրան՝ հոգեբանական ահսարաններով զբաղելու: Բանաստեղծի տրամադրունական ահսարաններով զբաղելու: Թե աղմկալի գրում էր քրոջ և հօր մահը, որոնց պատճառով թեան վրա աղդում էր քրոջ և հօր մահը, որոնց պատճառով նրա սիրաը կոտրած էր: Շիլլէրը կամենում էր մի տեսակ սուդ անել, լայ լինել բանաստեղծական լայով: Ահա թէ ինչու նա գտնել էր մարդկայնական մի նիւթ: Սկզբում նա որոնում էր բուն մարդկայնական մի նիւթ: Սկզբում նա որոշեց իւր նիւթը պատմութիւնից չվերցնել, և թաղրելով որ գուն մարդկայնական նիւթը գմւար կիբնի պատմութեան մէջ գտնել բայց շուտով նա հասկացաւ իւր սխալը, երբ նրա գտնել բայց շուտով նա հասկացաւ իւր սխալը, երբ նրա ուշադրութիւնը զրաւեց շոտանդական թաղուհի Մարիի տապեսլ պատկերը և նա անմիջապէս գործի անցաւ:

Սակայն մի ընտանեկան աննպաստ հանգամանք ստիպեց

Շիլէրին գործը լնդհատել: Տիկին Լոտտան սաստիկ հիւանդացաւ նեարդային տենդով, այնպէս որ մի քանի օր շարունակ գտնւումէր մահւան դրանք: Շիլէրը մոռացէլ էր իւր հիւանդութիւնը և զիշեր ցերեկ ծառայումէր հիւանդին: Սարսափելի հոգեկան տանչանք էր զգում բանաստեղծը, երբ կինը տաքութեան մէջ ցնորումէր: Շուտով զօքանչը և քենին օդնութեան հասան և մեծ հոգացողութեամբ պահպանումէին հիւանդին, այնպէս որ նա համարեա գերեզմանի դռնից յետ դարձաւ և սկսեց քիչ-քիչ լաւանալ: Նա կորցրել էր խօսելու ընդունակութիւնը և միայն երկար շաբաթներից յետոյ լեզուն յետ ստացաւ և գիտակցութեան եկաւ: Ապա սկսեց նա արագութեամբ առողջանալ և բանաստեղծը որոշեց ի կատար ածել մի նոր կենսական ծրագիր:

Բանն այն է, որ Շիլէրը վաղուց մտածումէր վերաբնակւել Ենայից Վէյմար: Ենայումնա մի առանձին գործ չունէր, որովհետեւ այլևս դասախոսութիւններ չէր կարդում և միայն տիտղոսով էր սրբօֆէսօր մնում: Այն երկու հարիւր տալէրը, որ նա շարունակումէր ստանալ դքսից իրը սրբօֆէսօր, իսկապէս մի նպաստ էր հիւանդ բանաստեղծին: Միւս կողմից նա կամենումէր Վէյմար տեղափոխւելով աւելի ևս մօտ լինել Գէօտէին, որի ազգեցութիւնը անպայման նպաստաւոր էր Շիլէրի համար: Իսկ այժմ «Վալէնշտէյնի» պատճառով մի ամիս Վէյմարում մնալը, Շիլէրի համար սպարզեց, որ ինքը իրը դրամատուրգ մեծ օգուտ կստանայ, թատրօնական շրջանից մօտ լինելով: Եւ ահա Շիլէրը որոշեց վերջնականապէս տեղափոխւել Վէյմար, չնայելով որ արդէն Ենայում սեփական տուն ունէր, ուր նա դեռ իւր սուղ միշոյներով բաւական նոր ծախք էր արել: Առհասարակ նիւթական տեսակէտից նրա համար աւելի յարմար էր Ենան, ուր նա արդէն հաստատւել էր, ծառի նման արմատներ էր ձգել: Բայց մենք

Ծնթերցողի հետ վաղուց պայման ենք դրել, որ աաղանդներից դժւար է նիւթական տրամաբանութիւն պահանջել...

Դժւարութիւնը միայն այն էր, որ Վէյմարում կեանքը բաւական թանկ էր, համեմատած Ենայի հետ, ուրեմն ստացւող եկամուտը կարող էր պակասութիւն անել: Ուստինա զիմեց գքսին զրաւոր կերպով և պարզոքն բացատրեց թէ իւր յանկութիւնը և թէ կարիքը: Դուքսը ուրախութեամբ կրկնապատկեց նրա ռոճիկը և պատասխանեց նրան հետեւել կերպով. «Զեր ներկայութիւնը Վէյմարում մեր հասարակական յարաբերութիւնների համար օգտակար կլինի, և Զեր աշխատանքը գուցէ աւելի կհեշտանայ, եթէ տեղս մի փոքր հաւատ կընծայէք թատրօնի սիրահարներին և Զեր զրւածքների մասին վաղօքք ըաղափար կտաք նրանց: Մանաւանդ ինձ ուրախութեամբ այն գաղափար կտաք նրանց: Մանաւանդ ինձ ուրախութեամբ այն յցոր, որ կարող կլինեմ յաճախ տեսնել Զեր և միջոց ունենալ յցոր, որ կարող կլինեմ յաճախ տեսնել Զեր և միջոց ունենալ գէմ առ գէմ ցոյց տալու Զեր իմ խորին յարգանքը և բարեկամութիւնը»: Վէյմարի բոլոր միւս բարեկամներն էլ շատ ուրախ էին և ամեն կերպ աշխատումէին բանաստեղծի վերաբնակւելը հեշտացնելու համար: Շուտով մի յարմար բնակարան վարձեցին բանաստեղծի համար Գէօտէի տան մօտ: Գէօտէի աշխատութեամբ պալատը ընդմիշտ յանձն առաւ հայթայթել կերպով առելափայտը: Շուտով Շիլէրը լնտանիքով կանօհարկաւոր վառելափայտը: Շուտով Շիլէրը որոշեց փոքրիկ մայրաքաղաքում:

Երբ նրանք աեղափոխւեցին Վէյմար, դարը վերջանալուց մի քանի շաբաթ էր մնացել: Վէյմարում մտածումէին հանգանի շաբաթ էր մնացել նոր դարի գոլուստը: Բայց գործը գիսաւոր կերպով ողջունել նոր դարի գոլուստը: Եյց գործը չյաջողւեց ու կիսատ մնաց, որովհետեւ ոչ ոք սիրտ չունէր, ոչ ոք տրամադիր չէր... Եյց ժամանակ գերմանական ժողովրդի քափական վիճակը շատ վատ էր: Երկու մեծ ազգեր՝ Ֆրանսիան և Անգլիան մրցումէին միմանց գէմ համաշխարհային զեկը ձեռք առնելու համար և սրանց մրցութեան մէջ բոլոր միւս

աղդերը ունատակ էին լինում: Գերմանիան համարեա մի խաղալիկ էր դարձել միւսների ձեռքին և հարեան զօրեղ աղջերը յանում քաղաքական իրաւունքների ոտնակոխ էին անում թոյլ աղջերի իրաւունքները: Շիլէրը փորձեց դոնէ մի բանաստեղծական արձան կանգնեցնել անշատւող դարի համար: Նա ծրագրեց և սկսեց գրել մի ընդարձակ բանաստեղծութիւն, բայց չկարողացաւ շարունակել... Հայրենիքը քարուքանդ էր արած և Շիլէրի բանաստեղծութիւնն էլ մնաց աւերակ ու կիսակործան դրութեան մէջ...

Բայց սրան փոխարինեց մի ուրիշ արժանաւոր գործ: Վաղուց արդէն Շիլէրը զրումէր մի ընդարձակ երդ, որի դաղափարը ծագել էր նրա մտքում, երբ նա ամուսնանալուց առաջ մի ամառ անցկացրեց Ռուգոլշտատում: Այստեղ բանաստեղծը ծանօթացել էր զանդ ձուլող մէկ վարպետի հետ և երբեմն այցելումէր նրա ձուլաբանը: Յիշեալ երդի մէջ մեր առաջ ներկայանումէ ձուլածու-վարպետը, որը իւր օգնականներին ու աշակերտներին հրամաններ տալով և կարգադրութիւններ անելով ձուլումէ զանդը, ըստ որում համեմումէ իւր հրամանները խորիմաստ խօսքերով կեանքին վերաբերեալ: Այդ վարպետի բերանով Շիլէրը նկարագրումէ մարդու թէ անային և թէ հասարակական կեանքի կարեոր երեցյթները: Այդ բանը հնարաւոր է գտանում, որովհետեւ զանդը մասնակից է քրիստոնէական աշխարհի ամենակարեօր ուրախութիւններին և արտմութիւններին, սգաւորի հետ զանդը սուգ է անում, իսկ ուրախացողների հետ ուրախանումէ: Զանդի երգով մի տեսակ մասնակցումէր Շիլէրը հին դարի թաղման և ողջունումէր նոր դարի գալուստը...

Զանդը մասնակից է մեր կեանքին մեր ձնւելու օրից սկսեալ.

Նա քաղցրահնչիւն ձայնով ցնծալի Ողջոն է տալիս մանկան սիրելի Դեռ նրա կեանքի առաջին քայլում՝ երբ նա շարունակ ընած է լինում... Բայց սահում գնումէն ամիս ու տարի, Դառնումէ տղան մի մարդ քաշարի, Հպարտ և անզուսպ մտնումէ կեանքը, Ցուպը ձեռք առած չափում աշխարհը: Գալիս է ժամը, գառնումէ նա տուն, Գործի մէջ փորձւած, խելօք, իմաստուն: Երիտասարդը ժիր ու քաշարի, Որպէս հրաշգեղ մի սիւն տաճարի, Տեսնումէ կյոսին իւր հանդէալ կանգնած, Պարկեշտ ու համեստ, դէմքով ամօթխած: Նրա սրտում մի նոր ձնումէ տենչանք: Առաջին անգամ զգումէ տանչանք: Արցունք թափելով վառւած աչերից, Նա խոյս է տալիս սերտ ընկերներից, Դէս ու դէն ընկած՝ կյոսին որոնում, Մինև սրտագին ողջոն է առնում, Ծաղիկ է քաղում դաշտում, ծաղկոցում, Սիրուհու համար պահումէ ծոցում: Օ՛, քնքոյշ տենչանք, օ՛ քաղցր ժամեր, Առաջին սիրոյ երշանիկ յոյսեր: Երանի՛ մնայիք միշտ և յաւիտեան Առաջին սիրոյ օրեր ցնծութեան: Ապա վարպետը ընդհատելով երդը, առաջարկումէ փորձել թէ արդեօք հալւածքը պատրաստ է ձուլելու համար, թէ արդեօք ժամանակը պատրաստ է ձուլելու համար... Համար արդեօք ժամանակը պատրաստ է ձուլելու համար, թէ արդեօք ժամանակը պատրաստ է ձուլելու համար...

Երբ լրջութիւնը քնքուշութեան հետ  
 Եւ զօրութիւնը համեստութեան հետ  
 Շաղկապւած կաղմում են սիրտ միութիւն,  
 Յառաջ է գալիս ներդաշնակութիւն:  
 Ուստի լաւ քննիր, երբ ամուսնութեան  
 Կապով կապում ես կեանքդյաւիտեան:  
 Արդեօք բռնժում են սրտերն իրար.  
 Կիրքն է կարձատե, զղջումը երկար:  
 Եւ աչա սիրուն ծամերն հարսնական  
 Զարդարում են սուրբ պատիկ կուսական,  
 Զանդը կանչում է ուրախ հանդիսին,  
 Գալիս է սիրող զոյզը միասին:  
 Բայց նարօափ ու զիխաշորի հետ  
 Անսահման կիրքը կորչում է անհետ:  
 Հէնց որ անցնում է կարճ մեղրամիսը,  
 Վերջանում է և կեանքի մայիսը:  
 Կիրքը կորչում է, սէրը զօրանում:  
 Ծաղիկը թափւում է պտուղը հասնում:  
 Տղամարդը գնում է ապրուստ ձարելու,  
 Քրտինք թափելով փող աշխատելու:  
 Եւ զիշեր-ցերեկ չարչարւում է նա,  
 Որ տուն պահելու միջոց ունենայ...  
 Դրսից աշխատանք բերում է հայրը,  
 Ներսում իշխում է կարդասէր մայրը...  
 Տունը օրէցօր առաջ է գնում:  
 Թէ տանտիկնը երկար չէ քնում...  
 Իսկ հայրը կանդնած բարձր պատշգամբում,  
 Միշտ հարստութեան մասին է մտածում:  
 Հայեացք է քցում դէպ' ցանկապատը,  
 Պարձանքով դիտում իւր շրջապատը,

Նայում դէպ' հեռու — կանանչ արտերը՝  
 Ազատութիւն է խոստանում Տէրը:  
 Հպարտանում է, ինքն իրան խաբում:  
 «Այժմ հարուստ եմ, էլ չեմ սարսափում»:  
 Սակայն վիճակը փոխւում է յանկարծ,  
 Ուրախ օրերը փախչում են անդարձ:  
 Ահա բորբոքւած մետաղը պիտի վազէ դէպի կաղապարը:  
 Երբ մարդկային ձեռը հսկում է հրեղէն ոյժն վրա, սա բարիք  
 է առաջայնում: Բայց եթէ հրակը ականչ չէ դնում մարդու  
 հրամանին սարսափելի է նրա ընթացքը:  
 Սե ամպի միշից օրհնանք է բղխում:  
 Երկրին անհրաժեշտ անձրեւ է հեղում:  
 Բայց և նոյն ամպից սաստիկ կայծակում:  
 Որից ահռելի հրդէհ է ծագում:  
 Լսէք, ինչպէս է զանդը շառաչում:  
 Կարմիր երկինքը մարդկանց գուրս կանչում:  
 Բայց այդ ցերեկ չէ, արև չէ փայլում:  
 Սարսափ է տիրում ամեն մի քայլում:  
 Ծուխ ու կրակը աճում, զօրանում:  
 Միմեանց ետեից աները վառում:  
 Կրակը չէ խնայում:  
 Հարուստի կալածքը,  
 Նրան էլ է մօտենում:  
 Հրդէհի ընթացքը...  
 Շատրւան անելով:  
 Բարձրանում է չուրը,  
 Կամարին զարնելով:  
 Մեղմացնում է հուրը:  
 Բայց աչա մանէլով:  
 Գալիս է թռչելով,

Բոցասէր մըրիկը,  
Բորբոքում կրակը.  
Տանելով վառ կայծեր,  
Վառումէ անխնայ,  
Ամբարի չոր փայտեր,  
Որ ոչինչ չմնայ...

Եւ ահա տուն ու տեղ աւերակ է դարձած,  
Պատուհան ու գռներ ամայի մնացած.  
Նայումէն սարսափով ամպերը վերևից,  
Բայց բան չեն հասկանում անբաղդի արևից:  
Նա նորից առնումէ զաւաղանը ձեռը,  
Եւ համեստ հայեացքով դնում ուսին իւր բեռը...  
Երբ արդէն զանգը ձուլւած է, պէտք է թոյլ տալ, որ  
նա պաղէ, և աշխատաւորները հանգստանան, մանաւանդ որ  
արդէն երեկոյ է.

Իրիկնաղանզը զարկեցաւ,  
Մի աստղ էլ նշմարեցաւ,  
Աշակերտը աղտաւեցաւ,  
Իսկ վարպետը միշտ ունի ցաւ...

Ճանապարհորդի արագ քայլերը  
Մթին անտառից դէպ' տուն են տանում,  
Յոդնած հովիւի ուրախ գառները,  
Վերադառնալով մէ-մէ են անում:  
Իսկ լայնածակատ կաթնատուները,  
Դանդաղ քայլերով ցրւում տուները,  
Եւ բառաչելով մանում զոմերը.  
Ողջունումէն նրանց սոված հորթերը...  
Տիրապետումէ ամեն տեղ խաւար,  
Զարթնումէ չարը, որոնում աւար.  
Սարսափ չէ բերում ազնիւ դիւղացուն,

Եթէ օրէնքը լինումէ զարթուն:  
Օրէնքի, կարդաւորութեան ու հանգիստ կեանքի իմաստը  
երգելուց յետոյ, ծերունի վարպետը աշխատումէ շարժել  
աշակերտաների աշխացմը, չլինի թէ նրանք ենթագրեն, իբր թէ  
արդէն զանգի գործը վերչացած է և ծուլութեան մէջ թաղ-  
ւան.

Այժմ կոարեցէք բիրա կաղապարը,  
Որ իրագործեց իւր գաղափարը:  
Թողէք որ սրտով վառւած աչքերով  
Մենք զւարձանանք զանգի պատկերով:  
Մուրճը ձեռք առած՝ խվէք անխնայ,  
Մինչե որ ձեռ իսպառ չքանայ.  
Որպէսզի զանգը լցո աշխարհ ենի,  
Ձեռ պիտի նախ ջայր ու կլո-ը լինէ:  
Վարպետը պիտի փորձառու ձեռքով  
Զեր կոտրատէ իմաստուն կերպով:  
Բայց վայ է, թէ նա մոռանայ խաղը,  
Ուժգին կը վաղէ հալւած մետաղը,  
Եւ որոտմունքի ձայնով սոսկաղի  
Ցիր ու ցան կանէ բանան ատելի...  
Վայ է, եթէ քաղաքացու կրծքի տակ,  
Բորբոքւել է անշիշելի հուր-կրակ,  
Ժողովուրդը համբերութիւնը կորցրած,  
Մուրը ձեռին՝ ոտքի կանգնում միացած:  
Զարհուրելի զողանշումէն զանգերը,  
Արտահնչում արիւնուշտ վանկերը,  
Ամենուրէք աղատութիւն են ձայնում,  
Աշխատաւորն, գործը թողած, զէնք առնում...  
Կորսարեր է առիւծին զրդուել  
Վտանգաւոր է վագրի ճանկն ընկնել,

Բայց մարդիցը սարսափելի բան չկայ,  
Եթէ դառնայ նա անդութ և անդայ ...

Կաղապարը փշրելուց յետոյ, վարպետը գտնումէ, որ  
բաղդաւորապէս զանդը շատ յաջող է դուրս եկել և նրա  
յնծութեան չափ չկայ.

Յաշողութիւն Աստուած տւաւ,  
Մետալեղին տղան ծնաւ,  
Ահա տեսէք, փայլուն ու հարթ,  
Աստեղափայլ, շքեղազարդ,  
Փայլումէ թաղը,  
Որպէս կրակը:  
Եւ շքաղրոշմի սիրուն պատկերը,  
Արւեստագէտի գովումէ ձեռը:  
Դէհ, ներս եկէք, ժողովւեցէք,  
Ընկերական խումբ կազմեցէք,  
Նորածնին կնունք տօնենք,  
Զանդը ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ կոչենք:  
Թողէք լինի նրա կոչումը այս օրից,  
Կախւած մնալ երկնքի տակ աստղալից,  
Որ կայծակից վերջնելով օրինակ,  
Հաւատարիմ մնայ կոչման շարունակ ...



Գլուխ:

Շիլեր:

XXII.

Վէյմար տեղա-  
փոխւելուց յետոյ Շիլ-  
երը սկսեց օգնել Գէօ-  
տէին, թատրօնի գոր-  
ծը ընդհանրապէս  
բարեկարգ դրութեան  
մէջ դնելու: Սյն ըէ-  
պէրտուարը, որ սո-  
վորաբար ընդունւած  
էր Վէյմարի և այլ  
տեղերի գերմանական  
թատրօններում, մի-

անդամայն թոյլ էր բարձր ժեռութակ տեսակէտից: Կօցէբուի,  
Շրէգէրի և սրանց նմանների արհեստական պիկաները, որոնց  
արժանիքը աւելի արտաքին էֆֆէկտների մէջ էր կայանում:  
շատ լաւ էին ընդունւած ժողովրդի կողմից: Բայց սրա պատ-  
ճառը այն էր, որ ժողովուրդը զեռ բաւական զարգացած  
ճաշակ չուներ, աւելի նուրբ պիկաներ պահպանելու համար: Հէնց  
ճաշակի կրթելն է երկու բանաստեղծների պիտառը նպա-  
սուկը: Գէօտէն լինելով քնարերգական մեծ հանձար, այնքան  
նշանաւոր ոյժ էր իրը զրամատիկական զրող: Իսկ Շիլերը  
այդ մասում արդէն գերազանց էր: Բայց մեր բանաստեղծը  
չէր բաւականանում սեփական ինքնուրոյն պիկաներով, այլ  
բէպէրտուարի բազմաւեսակութեան համար, ուրիշ միջներով

էլ ծառայութիւն էր մատուցանում թատրօնին: Օրինակ նոս  
բարեխովեց բեմ դնելու համար Գէօտէի «Էգմօնտը», Լէսոփինդի  
«Նաթան իմաստունը» և մի շարք ուրիշ կարևոր զրւածքներ:  
Ապա Շիլլէրը սկսեց առանձին ուշաղրութիւն դարձնել Շէկո-  
պիրի զրւածքների վրա: Նա թարգմանեց ի միջի այլոց «Մակ-  
բէար» և յարմարեցրեց զերմանական բեմի համար: Աշխատեց  
նա նոյնպէս մի քանի կօմիկական պիէսներ բարեփոխելու կամ  
թարգմանելու վրա: Շիլլէրը ինքը միայն ողբերգութիւններ էր  
գրում, բայց նա զուրկ չէր կօմիկական տաղանդից: Ընդհակա-  
ռակը՝ նա հինգ իւր ողբերգական զրւածքների մէջ էլ տեղ-տեղ  
շատ զօրեղ կօմիզմ էր մացնում: Իսկ եթէ նա չէր սիրում  
կտտակերգութիւններ զրել, այդ նրանիցն է, որ չափազանց  
չու-չ էր տրամադրւած: Բայց իւր «Հանդստութեան ժամերին»  
հինգ մասամբ իրը հանդստանալու միջոց համարելով, նա թարգ-  
մանում կամբարեփոխումէր օտարազգի կօմիկական նշանաւոր  
պիէսներ: Վերջններիս մէջ ամէնակարեռը կարելի է համա-  
րել իտալական զրող Գօցցիի «Տուրանդօտ» յայտնի կտտա-  
կերգութիւնը: Սյդ զրւածքի մէջ հերոսուհին հանելուկներ է  
առաջարկում և բացատրութիւններ է պահանջում: Իսկականի  
մէջ այդ հանելուկները իտալական-ազդային բնաւորութիւն  
ունէին: Իսկ իւր թարգմանութեան համար Շիլլէրը յօրինեց  
ինքնուրցն հանելուկներ, որոնք մի-մի գեղեցիկ բանաստեղ-  
ծութիւններ են ներկայացնում: Ամեն անդամ «Տուրանդօտ»  
ներկայացնելուց Շիլլէրը նորոգումէր հանելուկները և այդ-  
պիսով առաջ եկան մօտ 15 հատ փոքրիկ հանելուկ-բանաստեղ-  
ծութիւններ: Սյդ հանելուկները ոչ թէ չոր ու յամաք սրա-  
մտութեան արդիւնք են, այլ մի-մի գողտրիկ սրտազմայլ  
բանաստեղծութիւններ: Օրինակ աստղալից Երկինքը Շիլլէրը  
նկարագրումէր, որպէս մի ընդարձակ մարգագետին՝ ոսկեղէն  
ոչխարներով, ուր հսկումէ հովիւր՝ եղջիւրը բոնած և այլն:

Մինչդեռ սովորական հանելուկների առարկան ինքն ըստ ինքեան  
ոչ մի նշանակութիւն չէ ունենում, Շիլլէրի հանելուկներից  
իւրաքանչիւրը վերաբերումէ մի բարձրագոյն առարկայի, որի  
պատկերը արդէն զեղեցիկ ու վեհ տպաւորութիւն է անում  
մարդու վրա: Սովորական հանելուկը լուծելու համար հարկա-  
ւոր է զլուխ կոտրել, յիշողութեան շտեմարանը տակն ու վրա  
անել, որպէսզի կարելի լինի դանել սրամտութեան առարկան:  
Իսկ Շիլլէրի հանելուկները հեշտութեամբ հասկացւումէն և  
մարդու առաջ յանկարծակի պատկերացնումէն տիեզերական  
մի վեհապանծ տեսարան, մարմնացած գեղեցկութեան մի  
փոքրիկ աշխարհ:

Բայց այդ բոլոր աշխատանքները միայն լրացուցիչ նշա-  
նակութիւն կարող էին ունենալ: Իսկ նորոգւած զերմանական  
բեմի իսկական զարդը պիտի կազմէին Շիլլէրի սեփական պիէս-  
ները: Սյդ բանը նա դիտեր, Ուստի Վէյմարում շուտով սկսեց  
շարունակել իւր «Մարի — Ստիւարտը»: Գարունքին Շիլլէրը  
մի փոքր իրան տկար էր զգում և առհսասարակ չէր կարողա-  
նում ուշաղրութիւնը կենարօնացնել: Ուստի նա գքսի առա-  
շարկութեամբ տեղափոխւեց Էտէրսբուրգի գեղեցիկ ամրոցը,  
ուր հանդստութեան ու մէսակութեան մէջ վերջացրեց այդ  
զուտ հոգեբանական ողբերգութիւնը, որի հետ այժմ կծանօ-  
թայնենք ընթերցողին:

Շօտլանդիայի թագուհի Մարին երկրորդ անդամ ամուս-  
նանումէ մէկ աղնւականի հետ, որի կարգադրութեամբ սպա-  
նել էին նրա առաջին ամուսնուն: Ֆողովուրդը ապստամբում  
է, թագուհին փախչումէ Շօտլանդիայից և, սահմանը անցնե-  
լով, կամենումէ պաշտպանութիւն գտնել անզլիական հողի

վրա: Բայց Մարին շուտով հասկանումէ իւր սխալը: Անզլիայում իսկցն նրան ձերբակալումէն և բանտարկում, միայն թէ ոչ նրա իսկական յանցանքի (?) համար: Մարին մեղադրում էն, իբր թէ նա մասնակից է եղել մի դաւավրութեան, որը նպատակ էր ունեցել սպանել անզլիական թագուհի ելիզաւետային: Վերջինս սակայն լաւ գիտէ Մարիի անմեղութիւնը, բայց իւր սրառում բոլորովին ուրիշ հաշիւներ ունի:

Ելիզաւետան և Մարին միենցն հօր աղջիկներն են, միայն թէ առաջինը տալօրինի ծննդեան պտուղ է: Ուրեմն անզլիական գահը ըստ օրինաց պիտի ժառանգէր Մարին, բայց ելիզաւետային յաշողել է ձեռք զյել զահը և ամուր բազմել նրա վրա: Ժողովուրդի մեծամասնութիւնն էլ բողոքական լինելով՝ ելիզաւետայի կողմն է, որովհետև Մարին կաթօլիկուհի է և եթէ գահը ժառանգէ, կարող է վտանգ սպառնալ բողոքականութեան: Այդ տեսակեար ի նկատի ունենալով, անզլիական քաղաքագետները կամենումէին որևէ պատրւակով վերջ տալ Մարիի կեանքին և առ միշտ կտրել կաթօլիկների յօյը:

Բայց ելիզաւետան իւր անձնական հաշիւներն ունի: Նա նախանձումէ Մարիի գեղեցկութեան և շքեղութեան և ատում ու թշնամութեամբ է վերաբերում դեպի իւր հօր օրինական զաւակը, ուստի յանկանումէ անհետացնել նրան աշխարհի երեսից:

Մարին համակրող կաթօլիկները թէ Անզլիայում և թէ Ֆրանսիայում քանիցս փորձումէն դաւադրութիւն կազմել և ազատել Մարին բանտից, բայց չէ յաշողուում: Բանտարկեալի դրութիւնը աւելի ևս վատանումէ: Բայց ելիզաւետային շրջապատողների մէջ կային այնպիսիները, որոնք չէին ուղում Մարիի մահը, ոմանք անարդար համարելով այդ, ոմանք էլ անձնական շահ ունենալով:

Շիլէրը նայումէ շոտանդական թագուհու վրա ոչ կրօ-

նական, ոչ էլ քաղաքական տեսակէտից: Բանաստեղծի զբցն ուղղութիւն տւողը բուն մարդկայնական զգացմունքն է. նա կարեկցումէ Մարին: Շիլէրը թէև համոզմունքով կաթօլիկական ֆանատիկոս ուղղութեան զէմ' էր, բայց դրամայի մէջ նա Մարիի կողմն է և նրա հակառակորդին համարում է մի կեղծ, կոպիտ ու մնափառ կին, զերծ քնքոյշ սեռի բոլոր



Մահապարտ Մարին աղօթում է:

բարեմասնութիւններից: Մարին թէև դեռահաս տարիներում սխալ է գործել, բայց նա բանտում զղացել է, հոգեկան տանչանքներ կրելով նրա սիրտը մաքրւել, պարզւել է, այժմ նա բոլորովին անարդար է հաղածւում: Ահա այդ հոգեբանական տարրի վրա է կենարօնացած բանաստեղծի ուշադրութիւնը: Այն աղօթքները, որ գուրս են թռչում անմեղ զատապարտաւածի սրտից, այն մեծահողի ներողամառութիւնը, որ ցոյց է տալիս

նա կախաղանի դէմ կանգնած, խորին ազդեցութիւն են անում  
հանդիսատեսի վրա: Իսկ որպիսի՞ սառնութիւն է զգում մարդ  
դէպի էլիզաւէտան, քնքոյշ սեռի այդ բարձրաստիճան ներկա-  
յացուցիչը, որ ստոր նախանձից և ունայն սնափառութիւնից  
դրդւած՝ քարացնում, զսպում է իւր խիղճը և արիւնակից  
քրոշը կախաղան է հանում: Մի ապացոյց, թէ որքան կարող  
է այլասեռել մարդուն բարձր դիրքը:

Դրամայի մէջ նախ և առաջ աչքի է ընկնում թշւառ  
թագուհու դիւթիչ պատկերը: Մարին ի բնէ փայլում է գեղեցիկ սեռի բոլոր արժանաւոր յասկութիւններով: Նա դաստիա-  
րակւել է պալատական բարձր շրջաններում և իւրացրել է  
ամենանուրբ ձեռք շարժւելու և խօսելու մէջ: Այն ոչ-կանոնա-  
ւոր քայլերը, որ նա արել է ամուսնական կեանքի մէջ, պէտք  
է վերագրել շրջապատող խառնաշփոթ հանդամանքներին և  
նրա չահիլ հասակին: Ինքն ըստ ինքեան նա մի շատ արժանա-  
ւոր արարած է, որ անմեղ փուռում է տաժան կապանքների  
մէջ:

Յանկարծ բացում են բանտի դռները և առաջարկում են  
նրան գուրս գալ: Թէ ուր և ինչու, Մարին ոչինչ չգիտէ: Սա-  
կայն նա առ այժմ ցնծում է: Վանդակում փակւած սոխակը  
ի՞նչ կզայ, երբ յանկարծ բացեն վանդակի դռուր և թշլ  
տան նրան գուրս թռչել: Մարին գուրս վազեց դէպի ծառաս-  
տանը և սկսեց թռչկոտել ազատ օդում: Դայեակը չէ կարո-  
ղանում հասնել նրա ետեից, խնդրում է կամաց գնալ, իսկ  
Մարին պատասխանում է.

Թողէք, որ նորից ինձ ազատ զգամ,  
Թողէք, որ կրկն երեխայ դառնամ,  
Եւ մարգագետնի դալար խոտի վրա  
Ոտներիս ոյժը նորից յետ ստանամ:

Զէ՞ որ ազատ եմ ես խաւար բանտից,  
Ազատ եմ մռայլ այն խորիսորատից...  
Դայեակը յիշեցնում է նրան, թէ այդ ազատութիւնը  
պայմանաւոր է, թէ բերդի պարիսպներից հեռու չեն իրանք  
և միայն ծառերն են թագյնում պարիսպները նրա աչքերից:  
Մարին պատասխանում է.

Օրջնեալ լինին տերեախիտ ծառերը,  
Որ թագյնում են իմ ամրոցի պատերը:  
Թող որ ազատ ու բազզաւոր ինձ կարծեմ:  
Ինչու պիտի ախորժ քնից ես զարթնեմ:  
Ազատ արձակ տարածւած է աշխարհքը,  
Ոչ մի սահման չէ նշմարում իմ աչքը...  
Ահա այնտեղ մառախլապատ լեռները  
Որոշում են հայրենի սահմանները:  
Դէպի հարաւ վազող այն խիտ ամպերը  
Պիտ' այցելեն ֆրանսիական ափերը...  
Սրագաթե ամպեր, օդային նաւեր,  
Ուր էք գնում, ովքե՞ր են ձեր նաւորդներ,  
Բարեւ ատրէք իմ սիրելի ֆրանսիային,  
Ուր անցրել եմ մանկութիւնս թանկագին:  
Բաժանեւած և անշատւած եմ աշխարհից,  
Զեղանից բաց չունեմ ոչ մի կարեկից:  
Ազատ էք դուք, ազատ լողում լուսնի տակ,  
Այդ թագուհուն չէք դուք երբէք հպատակ...  
Ափն է հանում ձկնորսը իւր նաւակը,  
Ապարդիւն է անցնում նրա ժամանակը.  
Թէ այդ բանտից ազատէ նա իմ անձը,  
Կ'աւգահովէ նրա կեանքը իմ գանձը:

Բայց շատ կարծ է տեռում Մարիի երշանկութիւնը: Նու-  
տով ծառաստանում յայտնուում է էլիզաւէտան: Մարին սաս-

տիկ յուզւումէ և վրդովլում, թէե ակամայ զսպումէ իրան  
և սրտածմիկ աղերսանքով խնդրումէ էլիզաւէտային՝ վերա-  
դարձնել իւր աղատութիւնը, ըստ որում առ միշտ հրաժար-  
ւումէ նրա գահի վրա աչք ունենալուց.

Ես Զեր գահից հրաժարւում եմ յաւիտեան,  
Զեմ նախանձում ես Զեր թազի մեծութեան:  
Ուժասպառ են իմ հոգեկան թևերը,  
Մարին չեմ, այլ միայն նրա ստւերը:  
Անգութ բանար առ միշտ փշրեց իմ հոգին,  
Թառամել է վարդ ծաղիկը իմ կեանքին:  
Այժմ քշրիկ, հասած է ժամանակը,  
Որ խնայեք իմ նազելի հասակը,  
Արտասանէք ողորմութեան Զեր խօսքը,  
Որ վերջանայ իմ անհուն տառապանքը:  
Արտասանի՞ր, արտասանի՞ր այդ խօսքը,  
Վերադարձրու աղատութիւնս, իմ կեանքը . . .

Սակայն Մարին այնպէս վհատած չէր, որպէս բոպէաբար  
ինքն իրան թւումէր: Աղատութիւն ստանալու համար, նա  
ներումէր բոլորը, արեան թշնամուն քշրիկ էր անսանում:  
Բայց երբ այդ քշրիկը արհամարանքով վերաբերեց դէպի  
նրա աղերսանքը, իսկոյն Մարիի սրտում բորբոքւեց թաղնւած  
կրակը և նա այլևս չկարողացաւ իրան տիրապետել.

Ինձ տիրապետմ . . . Ես համբերել եմ,  
Որքան կարող եմ: Զէ՞ որ ես մարդ եմ:  
Էլ հեռու ինձնից, գառան հեղութիւն,  
Զե՞ռք վերցրու ինձնից, համբերողութիւն:  
Իսկ դու, իմ զայրցիթ, քակտի՞ր քո կապանք,  
Ազատ հնչեցրու սրտիս արձագանք:  
Իսկ դու, որ թոյն ես պարզեել օձին,  
Թունաւոր նետեր տնկիր իմ լեզւին . . .

Մարիի հետ համեմատած՝ կատարեալ հակապատկեր է  
ներկայացնում թագուհի էլիզաւէտան, որի հոգին ամբողջովին  
թափանցւած է աւագանական եղանականին: Նա կաթօլիկ է,  
կրօնամոլ չէ, աղատամիտ է, բայց այդ միայն ըստ երկոյթին:  
Իրօք նա մի բողորովին ունայն և ընկած կին է, շրջապատւած  
խարդախ և մարդկային պատկերը կորցրած ստորագրեալ իրա-  
ւագէտներով: Ամեն բան այդ շրջանում կեղծ է և քաղաքա-  
կանութեան գոյներով ներկւած: Սէրն էլ, յարգանքն էլ, պա-  
տիւն էլ, համակրութիւնն էլ բարեկամութիւնն էլ կեղծ էն  
ու գունաւորւած: Կեղծութեան մի կենդանի տիպար է մա-  
նաւանդ կոմս Լէյստէրը, որը մի ժամանակ սիրելիս է եղել  
Մարիին, ապա տեսնելով նրա թշյլ զրութիւնը, սկսել է էլի-  
զաւէտային սիրել, այժմ էլ տեսնելով, որ էլիզաւէտայից յօյն  
չկայ, կրկին աչք է տնկել Մարիի վրա: Կոմս Լէյստէրը մէկն  
է այն մարդկանցից, որոնց սիրար թէե զուրկ չէ նուրբ զգաց-  
մունքներից, բայց բնաւորական և բարոյական ամրութիւն  
չունեն, զուրկ են կամքից և հոգեկան քաշութիւնից: Նրա  
սրտում նորից զարթնել է Մարիի սէրը.


Եւ իմ սրտում զարթնել է նախկին սէրը,  
Լցոսի նման փայլումէ նրա պատկերը,  
Կենդանացաւ աչքիս առաջ անցածը,  
Ես զգացի, թէ ինչ է իմ կորցրածը:  
Մարսափելով եմ ես տեսնում նրան բանտում,  
Եւ տանհցւում եմ, տոչորւում եմ իմ սրտում:

Բայց երկչու կոմնը չէ ուզում բացարձակ կերպով պաշտ-  
պան հանդիսանալ սրտի առարկային և կամ աղատել, կամ  
ինքն էլ մեռնել: Զարմանալի է, որ այդպիսի մէկին Մարին  
կարողանումէ սիրել: Այդ սիւալլը պէտք է վերագրել մասամբ  
նրա հոգոյ պարզութեան, մասամբ չափաղանց ներողամիտ բնա-  
ւորութեան:

Բոլորովին հակառակն է ներկայացնում Մօրտիմէրի սէրբ: Մօրտիմէրը հոգով - բանաստեղծ մի երիտասարդ է: Նա ծնւած է բողոքական մի խիստ աղանդին պատկանող ծնողներից, որոնք աշխատել են սնուցանել նրան խիստ կրօնական աւանդութիւններով: Բայց Մօրտիմէրի ի բնէ զօրեղ հոգին չէ խորտակւել կրօնական ահռելի ճնշարանի տակ: Մոլորւած երիտասարդը թողել է հայրենիքը և երկար թափառելով վերջապէս հասել է իտալիա, արեւելեան չերմ ճառագայթների և գեղեցիկ արւեստների աշխարհը: Հոօմում եկեղեցոյ արտաքին շուքից զմայլած, նա իբր թէ կաթօլիկ է զարձել: Շիլէրը կամեցել է դուրս բերել նրան իբր մի ֆանտասիկոս - կաթօլիկ, բայց չէ կարողացել. երեւում է, որ Շիլէրը չէր կարողանում ըմբռնել խական ֆանտասիկոսի էռոթիւնը: Մօրտիմէրին զրաւողը ոչ թէ բուն կրօնական սկզբունքներն են, այլ գեղարւեստի հոգեզմայլ փայլն է, որ նա տեսել է Հոօմի հրաշագեղ տաճարի մէջ: Նրա հարազատ՝ բողոքական եկեղեցին զուրկ է պատկերներից, զուրկ շքեղ տաճարից, փայլուն արդուղարդից, այնտեղ լուսում է լոկ վերացական խօսքը: Բայց ...

Բայց ի՞նչ տեսայ, երբ ներս մտայ  
Եկեղեցի, ուր արւեստ կայ ...  
Հզօր սիւներ, հսկայ կամար,  
Լոյս, ճառագայթ հոգոյ համար,  
Բազմատեսակ սուրբ պատկերներ,  
Եւ երինային քաղցր ձայներ,  
Առաստաղ ու պատ զարդարւած,  
Շուքով փայլով բոցավառւած,  
Եւ լուսափայլ Աստուածածին,  
Տիրոջ սեղմած իւր սուրբ ծոցին,  
Մարմին առած Աստուածութիւն,  
Եւ հրեշտակաց մ.ծ բազմութիւն ...

Երբ Մարին յարձակւումէ ելիզաւէտայի վրա և պաշտամումէ իւր պատիւր, երկուա լէյստէրը վերջնականապէս հրաժարւումէ նրանից, կամենալով իւր կաշին փրկել իսկ Մօրտիմէրը նոյն տեսարանից ոգեսորւած վառւումէ Մարիի սիրով և որոշումէ կեանքը զոհ բերել նրա համար.



Մօրտիմէր:

Դու յաղթեցիր, զու չարդեցիր թշնամյդ,  
Ես վառւած եմ վեհ բարձրութեամբ քո հոգով:  
Այժմ աչքիս մեծ ես զու և փառահեղ,  
Աստուածուհու նման զօրեղ և ահեղ.  
Արքայական բարկութիւնով ես փայլում,  
Գեղեցկագոյն կինն ես ամբողչ աշխարհում...  
Ով ուզումէ քեզ աղատել ու տիրել,  
Պիտ' կարենայ մահը զրկել ու սիրել:

Ի՞նչ է կեանքը, եթէ ոչ մի ակնթարթ,  
Նոյնն է մաշը, կը ինչու է վախում մարդ:  
Թող ինձ տանեն, ձեռ ու ոտս կտրատեն,  
Հըրաբորբոք ունելիքով յօշոտեն,  
Գէթ մի բոպէ ես վայելեմ քո սէրը,  
Եւ համբուրեմ քո սիրոտենչ պոօշները:  
Օ՛, Մարիա, ես կամ պիտ' քեզ ազատեմ;  
Կամ քո կրծքին իմ խեղճ հողին աւանդեմ:  
Եւ կենդանի Աստծոյ անւամբ երդւումեմ;  
Սիրումեմ քեզ և քո սիրուց այրւումեմ...

Մօրտիմերը իրօք իւր կեանքը վտանգի ենթարկելով փորձեց ազատել Մարիին բանտից, բայց չկարողացաւ և ինքնապանութեամբ վերջ տւաւ իւր կեանքին:

Մարիի պատկերը չցամաքեցրեց բանսաստեղծի արցունքը... Վշտահար մայրը չեր հեռանում նրա աչքից... իսկ քոյրի՞կը... նանէ՞ար... Շիլէրը չգիտէր ինչպէս միսիթարել ինքն իրան... Եւ նրա հոգոյ խորքում աւելի ու աւելի պայծառանումէ անարատ կնոջ աստուածային պատկերը... Ուստի Մարիի գրաման վերջայնելուց յետոյ, բանսաստեղծը անմիշապէս զբաւեց Օրլէանի կըսի աւելի ևս վեհ պատկերով... Գործը մեծ արագութեամբ առաջ էր զնում և կարծ ժամանակից յետոյ պատրաստ էր «Օրլէանի կըսի» վեհապահն տեսարանը...



## XXIII.

«Օրլէանի կըս»

Դրամայի հերոսուհին,  
Աննան, պատմական  
անձնաւորութիւն է, որը  
մասնակցել է Փրանս  
- անգլիական պատերազ-  
մին, - տասնուվեցերորդ  
դարում և իւր անվե-  
հերութեամբ ոգեսորել է  
զօրքին Այլպիսի մի  
սուղ պատմական աւան-  
դութեան վրա հիմնե-

Օրլէանի կոյսը:

լով, Շիլէրը ստեղծել է դիւթիչ տեսարանների մի ամբողչ շարք, ո-  
րոնց հետ զուղընթաց արծարծւումէ մեր առաջ հերոս - օրիորդի  
հոգեկան բարձր տեսարանը, որը ամենանիւթական մարդուն  
անդամ քարշում, տանումէ գէպի իդէալի աշխարհը և սիրտ  
է ներշնչում վհատածին, ընկճաւծին և կիսաշունչ վայր զլոր-  
ւածին: Գիւղական ընտանիքի ծոցում մնւած զեռահաս հովիւ-  
- աղիկը մռանումէ իւր անձն ու կեանքը, երբ տեսնում է,  
որ հայրենիքին վտանգ է սպառնում: Օտարները յաղթահարել  
են ֆրանսիացուն և սպառնումէն վերջ տալ նրա աղջային  
անկախութեան: Սակայն ֆրանսիայի գեղջկուհին տակաւին  
գաղտնի զօրութիւն ունի թագնւած իւր, ըստ երկոյթին թոյլ  
որտի մէջ: Հայրենասէր, հաւատով լցւած գեղջկուհու մարմնա-  
ցումն է Օրլէանի կըսը:

Գիւղացի Տիբօն, տեսնելով, որ պատերազմը օքէցօր մօտենումէ իրենց գիւղօրայքին, որոշումէ պսակել իւր երեք աղջիկներին և հրամայումէ պատրաստւել հարսանիքի համար: Առաջին և երկրորդ աղջիկը համաձայն են և ուրախ: Իսկ ամենից փոքրը, Աննան, չի էլ մտածում մարդու զնալու մասին: Այդ հանգամանքը անբաւականութիւն է պատճառում ծերունուն: Եւ առհասարակ Աննայի բնաւորութիւնը օտարուի է թւում հօրը, որը գանգատւումէ, ասելով.

Փախչումէ նա միշտ ուրախ քոյրերից,  
Լեռան ամայի գլուխը բարձրանում,  
Հաւը չխօսած դուրս գնում անկողնից,  
Երբ մուլթ գիշերը սարսափ է ազդում,  
Եւ չէ բաժանւում ոչ ոք իւր անից,  
Ուրւականի պէս նա դուրս է սողում:  
Դէպ՝ ողիների խաղաղ աշխարհը.  
Եւ ճանապարհի բաժանման կէտում  
Լեռան ոգու հետ գաղտնի խօսակցում:  
Ինչու անպատճառ միայն այս տեղում  
Արածացնումէ նա միշտ իւր հօրը,  
Ցնորքների մէջ ամբողջ ժամերով  
Կռապաշտական այդ ծառի մօտը,  
Որից փախչումէն ահ ու սարսափով  
Բոլոր բաղդասոր արարածները,  
Որովհետեւ չէ երբեք ապահով.  
Այստեղ ապրումէն դժոխքի քաջքերը  
Հեթանոսական խաւար օրերից:

Տիբօն երազում տեսել է Աննային՝ բազմած արքայական գահի վրա և կարծումէ, թէ այդ երազը նախազդուշացնում է նրան իւր աղջկայ փառասիրական ձգտումներից: Այդ ժա-

մանակ մօտենումէ նրանց գիւղացի Բէրտրանը, որը քաղաքից է զալիս, ձեռին մի սաղաւարտ:

Բէրտրանը պատմումէ, թէ ինչպէս քաղաքում մեծ շփոթութիւն է տիրում՝ պատերազմի դաշտից ստացւած տիսուր լուրերի պատճառով և թէ ինչպէս փողոյներում մեծ բազմութիւն է շարժւում: Այդ խառնաշփոթութեան ժամանակ մէկ գնչու կին կամեցել է Բէրտրանին զօռով ծախել այդ սաղաւարտը: Բէրտրանը հաղիւ ձեռքն է վերցրել սաղաւարտ նայելու, երբ շարժւող ամբոխի աչեղ ալիքը քշել-հեռացը բել է գնչուհուն և սաղաւարտը մնացել է Բէրտրանի ձեռքին: Աննան խլումէ Բէրտրանի ձեռքից սաղաւարտը, բացականէլով թէ նա իւր համար է ուղարկւած: Ապա Բէրտրանը, լսածների հիման վրա, պատմումէ, թէ ինչ ծանր զրութեան մէջ է ֆրանսիան: Թշնամին արդէն խլել է երկրի մ.ծ մասը և այժմ պաշարել է Օրլէանը: Արդէն կրած պարտութիւնների աղդեցութեան տակ՝ ֆրանսիական զօրքը կորցրել է եռանդն ու ինքնավստահութիւնը: Սարսափը տիրապետել է նոյն իսկ քաջ զինորականների սրտին: Իզուր է անցնում զօրապետների խրախոյսը. զինորները փախչում են թշնամու առաջից գառների պէս: Ֆրանսիայի բոլոր յշյաերը կորած են և արդէն խօսք է բացւած հաշտութեան մասին: Հաշտութեան անունից զայրանալով, Աննան բացականչում է.

Հաշտութեան մասին պէտք չէ խօսք լինի՝  
Զինւած գալիս է քաջ սղատիչը.  
Թշնամու բաղդը շուտ Օրլէանի  
Շըշտկայքումը փշրւած կլինի:  
Բաժակը լցւած է և հունձը հասած.  
Գալիս է կյուր մանդաղը բռնած՝  
Թշնամու առատ արար հնձելու,  
Աստղերին հասած փառքը չնչելու:

Մի վախէք բնաւ, այլ հաստատ կացէք.

Մինչև որ գարին գեղնէ արտերում,

Լուսինը լրանայ — հաստատ իմացէք,

Մի հատ թշնամի չի մնալ ֆրանսիայում;

Եւ անդիսցու հզօր ձիերը

Կը գաղրեն խմել Լուսրի չրերը...

Իսկ երբ Բէրտրանը նկատում է, թէ այլս հրաշքներ չեն  
կատարւում աշխարհքում, Աննան պատասխանում է.

Թռչելով կը գայ ճերմակ աղաւնին,

Արծիւի նման անվախ-համարձակ

Եւ կը յօշոտէ այդ բազէներին,

Որ հայրենիքը քանդում են արձակ...

Թէւ նա ինքը մի խեղճ արարած,

Բայց նրա հետ է կենդանի Աստուած,

Որ մի խղճակի կը յսի թոյլ ճեռքով

Կը հանդիսանայ իւր պայծառ փառքով:

Տիբոն ու Բայմօնտը զարմանում են Աննայի խօսքերի  
վրա և նրա ողերութիւնը բացատրում են սաղաւարտի աղ-  
զեցութեամբ: Աննան շարունակում է.

Պիտի կործանւի՝ այդ պետութիւնը,

Դրախտանման գեղեցիկ երկիր,

Որին սիրում էր Աստուածութիւնը

Աչքի բիբի պէս: Պիտի կը նա

Միշտ օտար աղջի գուռ շղթաները:

Օտար իշխանը հեռուից եկած,

Որի նախնիքը մեղ մօտ չեն թաղւած,

Որի ականջին խորթ է մեր լեզուն,

Մեղ հետ չի անցրել անմեղ մանկութիւն,

Խնչպէս պիտ՝ անէ նա մեղ հայրութիւն:

Ամենքը գնում են, մշնակ թողնելով Աննային: Իսկ սա

աւելի ու աւելի սիրտ առնելով, վերջապէս որոշում է ի կատար  
ածել իւր վաղուցւայ մտադրութիւնը, այսինքն նուիրւել հայ-  
րենիքի աղաւառութեան գործին.

Մնաք բարե, լեռներ, և դուք արօաներ,

Դուք իմ սիրելի խաղաղ հովիտներ,

Ես ձեր տեսութեան այլես չեմ գալու,

Եկել եմ վերջին բարես տալու:

Դու մարդագետին, որ ես չրեցի,

Դուք սիրուն ծառեր, որ ես տնկեցի,

Աճեցէք ուրախ: Մնաք բարե ձորեր,

Սառն աղբիւրներ: Եւ գու արձագանք,

Հովտի ազնիւ ձայն, գու էլ մնաս բարե.

Աննան գնում է, գնում է անդարձ:

Խաղաղ անկիւններ իմ ուրախութեան,

Մէնակ եմ թողնում ես ձեզ յաւիտեան:

Անտէր անպաշտապան իմ խղճուկ գառներ,

Ցիր ու ցան եղէք, անտառը փախէք:

Ուրիշ տեսակ հօտ պիտ՝ արածայնեմ

Արիւնաշաղախ կարմիր գաշտերում:

Երկրային ունայն ցանկութիւն չունեմ:

Հոգոյ հրամանն եմ միայն կատարում:

Նա որ Քորեբի լեռների վրա

Վառւած թփիցը Մովսէսին կոչեց,

Եւ Փարաւօնի մօտն ուղարկեց:

Նա, որ Հէսսէի երկիւզած որդուն,

Դեռահաս հովտին, իւր գործիք գարձրեց,

Նա, որ սիրում է միշտ հովիւներին,

Այդ ծառի ճիւղից ինձ հրաման տւեց,

«Գնա, վեյշիր գու ինձ աշխարհին».

«Կարծը մետաղից գու հաղուստ հազի՞ր,

Եւ քնքոյշ կուրծքդ պողպատով պատի՛ր,  
Որ նենդ կրակն ունայն աշխարհի  
Անարատ սիրտդ երբէք չի այրի:  
Պասկ հարսնական մաղիդ չի դպչիլ,  
Քնքոյշ մանուկը կրծքիդ չի կպչիլ,  
Բայց զինւորական փառք ու պարծանքով  
Քեզ կը պսակեմ իմ հզօր ձեռքով»:

Եւ իսկապէս, հէնց որ Աննան յայտնւումէ զօրքի մէջ, իսկոյն  
պատերազմի ընթացքը փոխւումէ: Հայրենի զօրքերը սիրտ  
Էն առնում անարատ կոյսի ներկայութիւնից, իսկ թշնամի-  
ները բոլորովին վհատում են և սկսում են երկոսութեամբ  
փախչել ասպարիզից:

Զարմացած այդ զաւած ու չտեսնւած երեսյթների վրա,  
Փրանսիացիք չեն կարողանում հասկանալ, թէ ինչ զօրութեամբ  
է հովիւ աղջիկը կարողանում այդպիսի հրաշքներ գործել:  
Հերոսուհին ներկայանումէ թագաւորի առաջ և հետեւալ բա-  
ցատրութիւնն է տալիս.

Մի անգամ, երբ ես երկար զիշերը  
Ջերմեռանդ սրտով այդ ծառի տակին  
Նստած, քնի դէմ մաքառում էի,  
Սուրբ կոյսը յանկարծ զրօշակը ձեռքին,  
Հովիւ աղջկայ պարզ շորեր հագած,  
Իմ առջև կանգնեց և այսպէս ասաց.  
«Ես եմ, իմ Աննա, վեր կաց, թող հօտը,  
Կանչումէ քեզ Տէրդ ուրիշ պաշտօնի,  
Առ այդ զրօշակը, կապի՛ր այդ սուրբ,  
Գնա, աղատի՛ր իմ ժողովուրդը...»

Մի անարատ կոյս աշխարհի վրա  
Մեծ արժէք ունի, եթէ կամենայ  
Սիրտը մարմնաւոր սիրուց աղատել

Եւ մեծ գործերին կեանքը նւիրել:  
Նայի՛ր, ես էլ իբր անարատ մի կոյս  
Ծնեցի Տիրոջ, մարդկանց կեանքի լոյս»:

Սրբեալիսկոպոսը հաւատումէ Աննայի պատգամաւորութեան,  
Հիմնւելով նրա պատմած հրաշքների վրա: Իսկ կոմա Դիւնուան,  
աւելի զրական հասկացողութիւն ունենալով ասումէ.

Ես հաւատում եմ ոչ թէ հրաշքներին,  
Ես հաւատում եմ կոյսի աքերին,  
Եւ նրա հայեացքի սուրբ անմեղութեան:

Թագաւորը նշանակումէ Աննային բոլոր զօրքերի հրա-  
մանատար և առաջարկումէ նրան նախկին սպարապետի սու-  
րը: Իսկ Աննան, հրաժարելով այդ սրից, յայտնումէ, թէ  
գերեզմանատան մատուռի մէջ մի հին սուր է պահւած, և  
խնդրումէ բերել տալ այդ սուրը: Իսկոյն կատարումէ նրա  
պատւէրը: Բացի այդ նա պահանջումէ հետեւեալը.

Հրամայի՛ր տան ինձ մի սպիտակ գրօշ,  
Վրան ծիրանի շրջանակ քաշած.

Շրջանակի մէջ սուրբ կոյսը որոշ,  
Յիսուս մանուկն էլ իւր կրծքին կպած:  
Սյուպէս էր դրօշը, որը ցցց տւեց  
Աստուածամայրը, երբ ինձ յայտնեց:

Սյու ժամանակ գալիս է թագաւորի մօտ թշնամու բա-  
նակից մէկ պատգամաւոր և առաջարկումէ հաշտութիւն կա-  
պել, քանի դեռ Օրէանը չեն խել ֆրանսիայից: Աննան թա-  
գաւորից խօսելու իրաւունք ստանալով պատասխանում է  
թշնամուն.

Հաշիւ տւէր դուք երկնից Աստուծոյն  
Այն արեան համար, որ դուք թափել էք:  
Բանալիները յե՞տ դարձրէք իսկոյն  
Մեր քաղաքներին, որ դուք խել էք:

Եւ լաւ իմացէք՝ Մարիամի որդին  
Ֆրանսիան չի յանձնիլ օտարի կամքին:  
Գնա, շտապիր, երբ տեղ կը հասնես,  
Յաղթական դրօշը տնկած կը տեսնես,  
Եւ Օրլէանը իւր տիրոչ ձեռքին:

Ֆրանսիացիք շարունակում են յաղթել: Օրլէանը աղատ-  
ումէ: Անմեղ ու համեստ հովիւ աղջիկը անողոք է պատե-  
րազմի դաշտում, ուր հարցը հայրենիքին է վերաբերում:

Մի անզիացի ասպետ կամենումէ փախչելով աղատուել  
կյսի սրից: Բայց տեսնելով, որ փախչողներին իրանց զօրա-  
պետի հրամանով սպանում են, ճարահատեալ կանգ է առնում:  
Աննան մօտ է դալիս և ասպետը, ընկնելով նրա ոսները,  
աղերսումէ չպանել իրան: Երիտասարդ ասպետը խնդրումէ  
խղճալ իւր ծնողներին, մանաւանդ դեռահաս հարսնացուին,  
որը սպասումէ նրան: Ասպետի հայրը շատ հարուստ կալա-  
ծատէր է, նա մեծ փրկանք կվճարէ իւր որդոյ կեանքը բաշ-  
խելու համար, բայց կյսը անողոք է. նա չպիտի խնայէ ոչ ոքին,  
որը դուրս կհանէ նրա հանդէալ պատերազմի աստուածուհին:

Ծնողների անուննին ես դու խօսում,  
Տարաբաղդ մարդ, բայց ինչո՞ւ ես մոռանում,  
Որքան մայրեր մեր երկրի մէջ անդաւակ,  
Որքան որբեր առանց հայր էք դուք թողնում:  
Որքան սիրուն հարսնացուներ ձեր ձեռքով  
Մնացել են անտէր և անապահով:

Իսկ ասպետի գանգատին, թէ շատ ծանր է օտարութեան  
մէջ մեռնելը, հերոսուհին պատասխանումէ.

Ո՞վ է կանչել ձեղ այդ օտար երկիրը,  
Ո՞վ է խնդրել փչացնել մեր արտերը,  
Մեր սեփական հողիցը մեղ դուրս հանել,  
Մեր սրբազն քաղաքները կործանել:

Ինչո՞ւ զրիք դուք ձեր ունայն սրտերում:  
Ֆրանսիացուն գերի դարձնել իւր երկրում:  
Հալածւածի համբերութիւնն հատել է,  
Վրիժառութեան ժամը արդէն հասել է:

Ասպետը տեսնելով, որ ոչ մի կերպով չէ կարողանում շարժել  
հակառակորդի սիրար, նորից ձեռքն է առնում սուրը և յար-  
ձակում է զործում, բայց կյսի սրի հարւածից իսկոյն վայր  
է ընկնում ու մեռնում:

Սյդպիսով շարունակ յաղթութիւններ տանելով, հերոսու-  
հին ինքն էլ զարմանումէ իւր ոյժի վրա.

Սուրբ կյս, դու ես ինձ զօրութիւն տալիս,  
Ոյժ ես ներշնչում անզօր բազուկիս:  
Սարսափումէի ես սուր տեսնելիս,  
Չեռքերս դողում և սիրտս լալիս:  
Մարդու մարմինը անշունչ ընկնելիս,  
իբր սուրբ տաճար լինէր քանդւելիս:  
Բայց երբ կարիքի բոպէն է զալիս,  
Կարծես թէ սրիս ողի են տալիս...

Կյսը համնումէ իւր նպատակին, աղատումէ հայրենիքը  
թշնամու ձեռքից և հնարաւոր է դարձնում թաղադրութեան  
հանդէսը: Բայց դեռ զործը չփերչացած, կյսի հոգեկան աշ-  
խարհում մի տարաբաղդ փոփոխութիւն է կատարում: Ան-  
նան հանդիպումէ պատերազմի դաշտում անզիական երիտա-  
սարդ գեներալ Լիօնէլին, որի զեղեցիկ աչքերը ազգում են նրա  
վրա... Կյսը առաջն անդամ էր սէր զգում և խնայելով Լիօնէ-  
լին, չէ սպանում նրան: Սյդ բոպէից սկսումէ կյսի սրտում  
մի ծանր ճնաժամ: Նրա բարձր կոչումը և մարմաւոր սիրոյ  
կըակը հակառակում են միմեանց: Եւ երբ ամենքը ուրախ  
մասնակցում են աղդային տօնին, նա սուդ է անում:

իմ ականջին միայն հասնէր  
 կոտորածի խուլ աղմուկը:  
 իւր զօրութիւնն յետ ստանար  
 Պարտամնուաց իմ բազուկը:  
 Մինչ նազելի այդ մեղեղին  
 Սնունդ է տալիս իմ խեղճ սրտին,  
 Եւ վշտալի արցունքներով  
 Կեանք ներշնչումնրա նուրբ լարին:  
 Ապա մի փոքր մտատանջւելուց յետոյ կոյսր նորից շա-  
 րունակումէ.  
 Բայց կարո՞ղ էի սպանել նրան,  
 Երբ ես այն այրող ազքին նայեցի.  
 Նրան սպանէի՞... Ո՞չ աւելի շուտ  
 Կը ցանկանայի կորուստն իմ անձի:  
 Ես յանցաւա՞ր եմ, որ խնայեցի,  
 Խղճիս լսեցի ու կարեկցեցի...  
 Սակայն հերոսուհին գիտակցումէ, որ խնդիրը կարեկցութեան  
 մէջ է.  
 Բայց կարեկցութիւնն ուր էր մնացել  
 Երբ ուրիշներին կոտորումէիր:  
 Եւ քո նուրբ խիղճն ինչո՞ւ էր բթացել,  
 Երբ քո ոտների մօտ տեսնումէիր  
 Զոքած դեռահաս քնքոյշ պատանին.  
 Ինչո՞ւ ուշագիր չեղար նրա ձայնին:  
 Օ՛, նենդաւո՞ր սիրա, դու սուտ ես խօսում  
 Յաւիտենական լուսոյ առաջին.  
 Կարեկցութիւնը չէր քեզ ներշնչում,  
 Երբոր նայեցիր նրա աչքի միջին:  
 Ինչո՞ւ նայեցի սիրուն աչերին,  
 Ինչո՞ւ տեսայ ես այն աղնիւ դէմքը.

Զէնքը հանգիստ է, կոհւր վերջացաւ,  
 Երդի ու պարի ժամը սկսւեցաւ.  
 Նւագների ձայնից փողոցն է թնդում;  
 Անթիւ ճրագներից տաճարը փայլում:  
 Թարմ ճիւղերից կամար են հիւսում;  
 Ծաղկի փունչերով սիւներ զարդարում:  
 Ըսդհանուր սիրով ամենքը վառւած,  
 Անվերջ ցնծութեամբ սրտերը լցւած:  
 Իսկ ինձ, որ այդ բոլոր փառքի ծնողն եմ  
 Զէ զրաւում ընդհանրական մեծ բաղդր,  
 Ուրախ տօնից խոյս է տալիս իմ սիրտ,  
 Եւ թռչումէ դէպ' թշնամու բանակը:  
 Ասպարիղից ստիպւած եմ դուրս փախչելու՝  
 Կրծքիս տակի ծանր մեղքը ծածկելու։  
 Մի՞թէ պիտի տղամարդի պատկերը  
 Իմ անարատ սրտի միջին ցոլանայ:  
 Աս, երկնային մոռանալով պարտքերը,  
 Աշխարհային սիրոյ համար թրթռայ:  
 Ես, որ բարձրեալ Աստուծոյ քաջ զինուր եմ  
 Մեր թշնամու սիրով պիտի հրապուրւեմ:  
 Խնչպէս պիտի արեգակին վեր նայեմ,  
 Եւ ամօթից կաթւածահար չլինեմ:  
 Ապա լսելով հեռւից հնչող մի մեղեդի, կոյսի սիրու  
 բոլորովին ճմլումէ.  
 Աւաղ, վայ ինձ, ի՞նչ հնչիւններ...  
 Միշտ նրա ձայնն եմ ես լսում,  
 Եւ շարունակ աչքիս առաջ  
 Լոկ նրա պատկերն եմ տեսնում:  
 Երանի ինձ յափշտակէր  
 Պատերազմի փոթորիկը,

Հէնց այն ըոսէին իսկոյն բուն զրին  
 Յանցանքը սրտումս ու ծանր մեղքը...  
 Իմ հովւական գաւազանը  
 Ինչու սրով փոխեցի,  
 Ո՞, սուրբ կաղնի, քո խօսքերը  
 Ինչու ի զուր լսեցի:  
 Ո՞չ, երկնային թագուհի,  
 Ինչու ինձ երևացիր,  
 Ես արժանի չեմ թագիդ,  
 Վեր առ նրան, յետ ստացիր:  
 Թէւ տեսայ երկինքը բայց,  
 Աստուածների լոյս-գէմքեր,  
 Բայց իմ աչքը նայումէ յած,  
 Երկնքին չեմ նւիրւած...  
 Ինչու ինձ վրա բեռնեցիր  
 Սյդ կոչումն երկնային:  
 Ինչպէս պիտի կարծրացնէի  
 Փափուկ սիրտս երկրային:  
 Զօրութիւնդ կուղես յայտնել,  
 Պէտք է անմեղ հոգիք ընտրել  
 Որ անմահ են, բայց չեն զգում:  
 Որ արդար են, լաց չեն լինում:  
 Քնքոյշ կոյսին դու մի՛ ընտրիր,  
 Խեղձ հովւուհուն մի ուղարկիր:  
 Շատ իմ պէտքն է պատերազմը,  
 Երկիրների կարգն ու կազմը:  
 Լեռանց խաղաղ գագաթներում  
 Գառներս էի արածացնում:  
 Բայց իմ առաջ գու բացեցիր  
 Իշխանական պալատները,


Կոչումն գու որոշեցիր.  
 Ինչումն է ուրեմն իմ մեղը:  
 Սյդ միշոցին ներս են գալիս զօրապէտները, հերոսուհու  
 զրօշակը բերելով և յայտնում են, թէ նա պիտի զրօշակը  
 տանէ թագաւորի առջև: Տերոսուհին սարսափի մէջ է ընկ-  
 նում, երբ նայումէ զրօշակի վրայի Աստուածամօր աչքերին.  
 Նա է, նա է, ուղիղ այդպէս երևաց.  
 Ինչպէս է նայում ինձ աչքերը յառած,  
 Եւ զայրոյթից ճակատը խիստ կնճռած...  
 Գալիքս ես քո աղախնին պատժելու.  
 Առ կայծակը և հարւածիր իմ զլուխը.  
 Ես իրաւունք չունիմ այլես ապրելու,  
 Որովհետեւ պղծել եմ քո անունը...  
 Այնուամենայնիւ զօրապէտների պահանջից սախլւած, ակամայ  
 վերցնումէ զրօշակը և դուրս գնում: Ամենքը հետեւում են  
 նրան:  
 Բայց տարաբաղդ հերոսուհու ներքին յուզմունքները  
 բոլորովին ուրիշ կերպ է հասկանում կշյր ամբոխը, որի  
 ներկայացուցիչը հէնց քաշարի աղջկայ հարազատ հայրն է:  
 Այն օրից, որ Աննան անյայտացել է, Տիբոն ընկել է հոգաի  
 մէջ: Նա մի գլուխ պնդումէ, թէ իւր աղջկան մոլորեցրել են  
 չար ոգիները և թէ նա իւր բոլոր մեծ գործերը կատարումէ  
 սատանայի զօրութեամբ, ուստի միջոց է որոնում նրա «Հո-  
 գին աղատելու», եթէ նոյն իսկ մարմինը կորսւի.  
 Տեսան դու, որպէս տատանւումէին նրա քայլերը,  
 Որպէս մռայլւած ու տիսուր էին նրա աչերը,  
 Զգումէ խեղձը իւր դրութիւնը ծանր գժոխային,  
 Հասել է ժամը, որ ես աղատեմ իմ երեխային...  
 Ես կամենում եմ վրա հասնել նրան անսպասելի  
 Եւ վայր գլորել նրան իւր ունայն բաղդից սոսկալի:

Ստիպելով պիտի յետ տանեմ դէպի իւր Տէր-Աստուածը,  
Հոգին թող փրկւի, թէկուզ բնաւին կորցնէ անձը:  
Ամենքը սկսում են հալածել հերոսուհուն, մոռանալով նրա  
անվեհեր անձնւիրութիւնը: Վերջին մարդը, որ հաւասարիմ  
է մնացել նրան, զիւղացի երիտասարդ Թայմօնդն է, որը սի-  
րումէ Աննային և սարսափելի փոթորիկների մէջ չէ կամե-  
նում մէսակ թողնել նրան: Բայց սա էլ ուղումէ իւր առհա-  
նակակ խեւով Լորժառութաստիւակ դառնալ հերոսուհու-  
զլին, ասելով:  
Զէք կամենում դուք նորից ուշքի դար  
Չեր Աստուծոյ հետ կրկին հաշտել  
Ապաշխարել ու ձեր մեղքը զջաւ  
Սուրբ Եկեղեցոյ ծոյն ընդունել:  
Որպէս խոցւումէ հերոսուհու սիրտը այդ դառն ու յիմար  
նկատողութիւններից.  
Ախ, Թայմօնդ, դու ես միակ էակը,  
Որ հաւատարիմ ընկեր ես մնացել  
Երբ արտաքսել է ինձ ամբողջ աղջը,  
Եւ իմ զործերն իսպառ ուրացել:  
Դու էլ ես փնտրում իմ մէջ չար ողոյն.  
Ախ այդ ծանր է շատ, ծանր է իմ հոգոյն...  
Ոչ, թշւառ չեմ ես, որպէս կարծում ես,  
Թէրութիւն ունեմ, բայց ընկած չեմ ես:  
Թէւ հալածւած, երկրից աքսորւած,  
Անապատի մէջ ուշքի եմ եկած:  
Երբ փառքի շողքով դեռ փայլում էի,  
Վէճ կար իմ սրտում, նախանձում էի...  
Այդ փոթորիկը օղը թարմացրեց,  
Իւ փոթորիկն էլ իմ սիրտը սրբեց.  
Թող լինի՝ այժմ, ինչ լինելու է,


Սիրտս անվրդով դիմանալու է...  
Տեսնում ես ահա մայր մտաւ արև,  
Բայց հաստատ է, որ իւր պայծառ փայլով  
Վաղը նա կրկին կտայ մեզ բարեւ.  
Նոյնպէս հաստատ է, որ մի օր կլինի  
Ճշարպութիւնը ամենին յայտնի:  
Եւ իսկապէս վերջիվերջոյ ճշմարտութիւնը պարզումէ կոյր  
ամբոխի և նրա նենդաւոր ներկայացուցիչների համար: Փրան-  
սիան կրկին նեղ տեղ է ընկնում: Թշնամիները սկսում են  
յաղթող հանդիսանալ: Բայց հերոսուհին չէ համբերում հայ-  
րենիքի պարասութեան, բանտից փախչումէ, կրկին հայրենի  
զորքի զլուխն է անցնում և վերջնական շարդ է տալիս թշնա-  
միներին: Ապա նա դառնումէ դէպի հայրենակիցները և բա-  
րյապէս ջարդուն է նրանց իւր վերջին խօսքերով.  
Միթէ ճշմարիտ էլ ինձ չե՞ն ատում,  
Չե՞ն անիծում ինձ և չե՞ն զրպարտում,  
Իմ վրա բարի աչքով են նայում:  
Այժմ տեսնում եմ ես պարզ բոլորը,  
Ահա հարազատ իմ թագաւորը,  
Ահա ֆրանսիայի սուրբ դրօշակները,  
Բայց ուր է արդեօք ծածանում իմը...  
Թշմարաւը հրամայումէ բերել նրա դրօշակը: Երբ հերոսու-  
թագաւորը հրամայումէ բերել նրա դրօշակը: Երկինքը նրա աչքին կարմրա-  
չին դրօշակը ձեռք է առնում, երկինքը նրա աչքին կարմրա-  
չին դրօշակը է ստանում, և նա շարունակում է.  
Տեսնում էք ահա հրաշալի դյներ,  
Բայց եցին երկնից սկեղէն գոներ,  
Աստուածամայրը լուսով է պատած,  
Անմաշ մանուկը սուրբ կրծքին կպած,  
Եւ շուրջը կանգնած խմբեր հրեշտակաց:  
Ժպտալի գէմքով՝ իւր բաղուկները

ՄԵՂՆԵԼ է դէպ' ինձ:

Ծանր զրահից գոյացան թւեր,  
Երկիրը յետ մնայ, ևս թռչումեմ վեր,  
Կարճատե է յաւն ու բովէական,  
Ուրախութիւնը՝ յաւիտենական:  
Վերշին խօսքը ասելուց Սննայի ձեռքից վայր է ընկնում  
Դրօշակը և ինքն էլ անշնչացած փռւումէ նրա վրա:



«Օրլեանի կոլալ» բեմի վրա:  
(Շիլէրը նսղում է իւր օմեակից)



Վշտահար թագուհին:

#### XXIV.

Ամառային շոքերը սկսեցին: Շիլէրը իրան թոյլ էր զգում, ուստի որոշեց զնալ Դօբէրան, ծովային լողարաններից օդուելու համար: Այդ որոշումը մնաց առանց իրագործելու, որովհետև երեխանները կարմրուկ հսնեցին և տիկինն էլ հիմքանդաւ: Յետոյ, երբ ամենքը առողջացան, դնացին Դրէդ- զէն կէններին հիւր: Ի միջի այլոց բանաստեղծը այցելեց այն պէտքացմունքներ զարթնեցին բանաստեղծի սրտում, երբ այդ սիր զգացմունքներ զարթնեցին բանաստեղծի սրտում, երբ այդ տնակը տեսնելով, մատքերեց նա երիտասարդական աղմկալի, անապահով օրերը և քաղցր տանչանքները... Դրէզզէնից անապահով օրերը և քաղցր տանչանքները... Դրէզզէնից զօնը Հայոցիկ, ուր ներկայ եղաւ «Օր- բանաստեղծը» ճանապարհեց Լայզլիկ, ուր ներկայ եղաւ «Օր- էսմի կըսի» ներկայացման: Զնայելով սաստիկ շոքին, թատ- րոնը ամբողջովին լիքն էր: Խաղամիշոյններին թատրոնը թնդե-



յնումէին անընդհատ կեցէներով բանաստեղծի հասցէին։ Ներկայացումը վերջանալուց յետոյ իսկոյն թատրօնի ընդարձակ հրապարակը լցւեց բազմութեամբ և ամենքը աշխատումէին մօտիկից տեսնել բանաստեղծին։ Հէնց որ Շիլէրը դուրս եկաւ թատրօնից, ամենքը վերցրին իրանց զլիսարկները և սկսեցին յարգանք մատուցանելով ճանապարհ բանալ, որ բանաստեղծը անցնէ։ Նոյն իսկ երեխաները հետաքրքրումէին բանաստեղծի անձնաւորութեամբ, ուստի ծնողները բարձրացնում էին մանրիկներին իրանց ձեռների վրա և ասում. «Ահա յեւ Շէլլ»։

Վէյմար վերադարձաւ բանաստեղծը ուրախ տրամադրութեան տակ և աւելի ևս մսիթարւեց, տեսնելով որ այստեղ մի լաւ շրջան է կազմւել։ Գէօտէն շաբաթական կանօնաւոր երեկոյթներ էր տալիս, որին մասնակցումէին նշանաւոր պրականագէտներ, դուքսը իւր որդիների հետ և մի շարք բարձր գուսակարգի տիկիններ։ Սյդպիսով ուրեմն երեկոյթը թափանցւած էր մի կողմից բարձր ու զօրեղ մտքերով, միւս կողմից գեղեցիկ սեռի չքնաղ զգացմունքներով... իսկ զեղարւեսուր այդպիսի շրջանների հոգին ու սիրտն էր։ Սյդ շրջանում ծնւեցին մի շարք երգեր, որ շարադրումէին Շիլէրը և Գէօտէն, իսկ ձայնագրումէին Կէրնէրը և Ցէլտէրը։ Շիլէրը ուրախութեան մէջ էլ լրջութիւն էր որոնում և հարձեւուն էր «Ետիտանուն»։ Անբովանդակ ուրախութիւն նա չէր հասկանում։ Նուայն գաղափարին էր, թէ մարդկանց գաստիարակութեան ամենալաւ միջոցն է, որ նրանց ուրախութիւնների և դւարձութիւնների մէջ խառն լինի «իմացականութեան և զիսակցութեան աղը»։ Ի միջի այլոց Շիլէրը մի ճառ արտասանեց, որի մէջ պաշտպանումէր այն միտքը, թէ հոգեկան ուրախ տրամադրութիւնը կազմումէ բոլոր աղնիւ և բարի երեկոյթների աղբիւրը։ Փոքրիկ հոգիներ, որինք սուգ են անում

անցեալի համար և վախենումէն ապագայից, անընդունակ են ըմբռնելու կեանքի սուրբ տարրերը և սքանչանուլու նրանցով։ Նմանօրինակ մտքեր է անցուցանում բանաստեղծը և իւր այն նշանաւոր երգերի մէջ, որոնք այդ երեկոների տրղիւնքն են։ Մի երգ վերաբերումէ „փունչի“ կազմութեան։ Այդ բաղադրեալ խմբէրը ներկայացնում է կեանքի ու տիեզերքի գաղադարը։ Մի բաժակ փունչը մի տիեզերք է։ Կիտրոնը շաքարը չուրը և «ողին» (սպիրտը), որոնցից պատրաստում են փունչը, չուրը և անձնական բանաստեղծին տիեզերքի չորս տարրերը և մարդկաշեցնում են բանաստեղծին տիեզերքի չորս տարրերը։ Որպէս կիտրոնի հեղուկը կային կեանքի չորս պայմանները։ Որպէս կիտրոնի հեղուկը համեմում են շաքարով, նոյնպէս հարկաւոր է գաժան կեանքին խառնել մի մեղմացնող տարր, որովհետեւ կեանքի միջուկը թթու է։ Ոգելից հեղուկը համեմատում է Շիլէրը փափուկ զգացմունքի հետ, որը կեանքին վեան+ արուկ միակ զօրութիւնն է։ Մի ուրիշ երգի մէջ Շիլէրը համեմատում է գեղարւեսուր արդիւնքները բնական բերքերի հետ։ Հարաւային երկիրները սրա փոխարւեսակ ունեն, իսկ հիւսիսային երկիրները սրա փոխարւեսակ ունեն, իսկ հիւսիսային երկիրները սրա փոփելով մայրէն գեղեցիկ արւեստներ ունեն։ Մի կողմից գովելով մայրէն ստեղծագործութիւնը, միւս կողմից յիշում է բանութեան ստեղծագործութիւնը, թէ մարդն էլ կարողանում է ստեղծագործել, որովհետեւ արւեստը նոյնպէս միացնում է իւր մէջ Եվրոպին պատկան էր կրակի հետ, ինչպէս ամեն մի բնական տուրը։ Ունկն էր կրակի հետ, ինչպէս ամեն մի բնական տուրը։ «Ուստի—ասում է նա—թողէք որ այս հրեղէն հեղուկը մեղամար ապացոյց լինի, թէ ինչ կարող են զլուխ բերել մարդիկ, իսձ+» և աշխատանքի օգնութեամբ։ Եւ այդպէս Շիլէրը դիկ, իսձ+ և աշխատանքի օգնութեամբ։ Խմբիթով աւելի ևս թանհարողանում է թանկագին խմբիթով աւելի ևս թանկագին երգեր յօրինել։ Ահա թէ ինչպէս է հասկանում բանաստեղծ իդէալիստը հասարակ զւարձութիւնը և ժամանակ անցկացնելը։ Մոգական զօրութեամբ նա երկնային ողի է ներշնչում ամեն մի բանին, որին ձեռք է զպցնում։

Այդ ժողովները նոյնպէս մի լաւ միջոց էին՝ երկու բանաստեղծներին աւելի և մտերմացնելու համար։ Բայց նոյն այդ ժողովները առիթ տւին չարամիտ մարդկանց նորից փորձել՝ Շիլէրին և Գէօտէին միմեանցից հեռացնել։

Բաւական ժամանակ էր, որ Գէօտէի քնարը լռած լինելով, հասարակութիւնը սկսել էր մոռացութեան տալ նրան և իւր ուշադրութիւնը կենտրօնացնել Շիլէրի վրայ, որի ողբերգութիւնները ցնցում էին ամենքին։ Վէյմարում ամենքը սիրում ու համակրում էին Շիլէրին և ոգեորւած նրա աշխատութիւններով, պատրաստ էին իրանց սէրը և չնորհակալութիւնը հրապարակօրէն արտայայտելու, հէնց որ մի ամենափօքրիկ առիթ պատահէր։ Այդ արամագրութիւնից որոշեց օգտել յայտնի թատերագիր Կոյշբուն, միայն թէ յէտին մրտքով։ Նա կամենում էր վրէժ առնել Գէօտէից։

Կոյշբուն տնուանի թատերագիր էր, որի պիէսները շորունակ խաղացում էին Գերմանիայի բոլոր թատրօններում։ Բայց այդ պիէսների զլխաւոր արժանիքը կազմում էին աւելի նրանց արտաքին, տեխնիկական տարրերը։ Ոչ մի խորութիւն, հոդերանութիւն, խակական ստեղծագործութիւն չկար նրանց մէջ։ Այնուամենայնիւ Կոյշբուն նշանաւոր տեղ էր բռնում։ Մասնաւրապէս Վէյմարի հասարակութեան մէջ նա ի միջի սցոց կարողանում էր փայլել նուրբ հատվածական ձեւրով։ Այդպիսով նա մի տեսակ մրցակից էր Գէօտէին, որը իւր կողմից բոլորովին չէր համակրում ոչ նրա պիէսների ուղղութիւնը, ոչ էլ նրա անձնաւրութիւնը։ Կոյշբուի յարաբերութիւնը Գէօտէի հետ օրէցօր աւելի վատանում էր, որովհետեւ Գէօտէն որպէս թատրօնի կառավարիչ, նրա պիէսները միայն իրատած էր թօղլ տալիս բեմ գնել։ Մի ուրիշ աւելի զօրեղ հանգամանք էլ աւելացաւ։ Կոյշբուն կամենում էր անդամակցել Գէօտէի երեկոյթներին և մի պալատական օրիորդ, որը

համակրում էր Կոյշբուին, կարողացաւ համազել մի շարք ուրիշ անդամների, որ նրան ընդունեն։ Բայց Գէօտէն նախապէս կանոնագրութեան մէջ մի նոր կանօն մտցնել տւաւ, որի հիման վրա նոր անդամ կարելի էր ընդունել միայն ընդհանուր համաձայնութեամբ։ Կոյշբուն ըմբռնեց, որ այդ նոր կանօնը հէնց իւր գէմ է յօրինած, ուստի և որոշեց երկպառակութիւն զցել Գէօտէի գրական շրջանի մէջ։

Նա մտածեց օգտւել այն հանգամանքից, որ Վէյմարցիք վաղուց ցանկանում էին յարգանքի ցոյց անել Շիլէրին։ Կոյշբուն կամենում էր հրապարակօրէն հոչակել Շիլէրին իբր գերմանական բանաստեղծութեան պարագանելիք և այդպիսով եղենեաց պսակը Գէօտէի ծերացած զլխից պոկելով գնել Շիլէրի թարմ զլխի վրա։ Տօնախմբութիւնը պիտի տեղի ունենար Վէյմարի քաղաքային նորակառոյց դաշլիճում։ Նկարչական ձեմարանի վերատեսուչը հսկում էր տօնախմբութեան գեղարեսական պատրաստութեան վրա։ Մրազրում էին ի միջի այլոց մի ներկայացում, կազմած Շիլէրի պիէսների նշանաւոր կառոներից։ Օրէսանի կոյսի դերը պիտի խաղար յայտնի կոմիտէսի էյնզիդէր կին-բանաստեղծ Սէրօն պիտի արտասանէր Զանգի երգի։ Եւ այդպէս զանազան կերպով պիտի մասնականգի երգի։ Եւ այդպէս զանազան կերպով պիտի մասնականգի երգի։ Ինքը Կոյշբուն երկու շէին նշանաւոր անձնաւրութիւններ։ Ինքը Կոյշբուն երկու կառու էր վերցնում, Օրէսանի կոյսի ծերունի հօր դերը և զանգի էր վերցնում, Օրէսանի կոյսի ծերունի հօր դերը պահանջութեան պիտի գերցինս պիտի մաւրճի հարւածով զանգը, որի միջից ներկայացման վերջում կոտրէր կարգոնի զանգը, որի միջից պիտի յայտնէր Շիլէրի կիսարձանը, և նոյն բոլէին քնքոյշ պիտի յայտնէր Շիլէրի կիսարձանը, և նոյն բոլէին քնքոյշ պիտի պիտի պատահ գնէին ներկայ եղող բանաստեղծի զլխին։ Ճեռները պիտի պատահ գնէին ներկայ եղող բանաստեղծի զլխին։

Բոլոր այդ նախապատրաստութիւնները նկատի ունենաւ ոչ ոք չէր կասկածում, որ տօնախմբութիւնը մէծ յարկ ոչ ոք չէր կասկածում, որ տօնախմբութիւնը մէծ յարկ չողութիւն կունենայ։ Առաջնակարգ ընտանիքներում զբաղւած չողութիւն կունենայ։ Առաջնակարգ ընտանիքներում զբաղւած էին ամենաեռանդուն կերպով, հազուստներ էին պատրաստում,

աեւտեր էին սովորում և այլն: Երեկի անձնաւորութիւններ խօստացել էին ներկայ գտնւել տօնախմբութեան: Շիլլէրը նոյնապէս պարզասրութեամբ խօսք էր տւել, առանց խորը թափանցելու խնդրի մէջ: Երբ արդէն տօնի օրը մօտ էր, բանաստեղծը հասկացաւ, որ խնդրի մէջ անմաքուր տարր կայ և Գէօտէի մօտ ասաց, որ ինքը իւր կողմից հիւանդ պիտի ձեւանայ և չմանակցէ տօնախմբութեան: Նա դէմ չէր, որ իւր իսկական համակրողները ազատ կերպով ուրախանային, միայն չէր կամենում, որ յատկապէս Կօցէրուի յետին միտքը իրագործէի: Իսկ սրա համար նա իւր բացակայութիւնը բաւական էր համարում: Գէօտէն լուռ էր և չէր խառնւում գործին: Շիլլէրի դրութիւնը իսկապէս կրիտիկական էր: Գէօտէին չլիրաւորելու համար, նա կցանկանար, որ այդ շցցը բոլորովին տեղի չունենար: Միւս կողմից դժւարանումէր վիրաւորել իւր այն անկեղծ բարեկամներին, որոնք ամենայն պարզամտութեամբ էին գործին մասնակցում, և այդպիսիների մէջ կային մարդիկ, որոնք Կօցէրուից շատ աւելի բարձր էին:

Բարեբաղդաբար գործի զեկավարները սխալւած էին մի քանի հաշիւների մէջ: Նրանք կարծումէին, թէ հեշտ է Գէօտէին տապալել, բայց իրանց սխալը հասկացան, Երբ հանդիպեցին շօշափելի դժւարութիւնների: Նախ և առաջ գրադարանապետը, որ Գէօտէին համակրող էր և գործի էութեան հետ ծանօթ էր, մերժեց տալ Շիլլէրի կիսարձանը, պատճառքերէով, թէ նա կարող է վնասւել տեղից շարժւելով: Այդ արդէն մի մեծ հարւած էր տօնախմբութեան գործին, որովհետեւ պսակ դնելու միտքը պէտք էր մի կողմ թողնել, որի պատճառով տօնի նշանակութիւնը կիսով չափ կորչումէր: Բայց արդէն կամին կարելի էր գիմանալ, Եթէ առաջ չդարձ աւելի կարևոր դժւարութիւն: Տօնախմբութիւնը, ինչպէս ասացինք, պիտի տեղի ունենար քաղաքային տան նորակա-

ույց գահիճում՝ որը միակ յարմար և պատշաճ տեղն էր ամբողջ Վէյմարում: Երբ տօնախմբութեան նախընթաց օրը տօնի զեկավարները դիմեցին քաղաքապետին և ամենայն համեստութեամբ խնդրեցին գահիճի բանալիները, քաղաքապետը, որ Գէօտէի պաշտողներից մէկն էր, ամենայն քաղաքապետութեամբ մերժեց, բացատրելով թէ հազիւ նորոգւած գահիճում չէ կարելի բեմ կառուցանել: Ոչ մի միջնորդութիւն չկարողացաւ կոտրել քաղաքապետի երկաթեայ կամքը:

Այդպիսով խորտակւեց Կօցէրուի ամբողջ ծրագիրը: Շիլլէրը ուրախ էր, որ գործը այդպիսի վախճան ունեցաւ, որովհետեւ նա ոչ մի գնով չէր կամենալ Գէօտէի բարեկամութիւնը ծախել: Երկու բանաստեղծները առաջւայ պէս մնացին չերմ բարեկամներ և երբէք մի բառ անդամ չէին խօսում Կօցէրուի ծրագիրների մասին:

Տօնախմբութեան անյաջող եքից յետոյ Շիլլէրի համակրողները աշխատումէին որևէ ուրիշ ձեռվ գնահատել բանաստեղծի տաղանդը: Այդ համակրողների թւին էին պատկանումնոյնպէս գքսուհի Լուիզան և գուքսը: Վաղուց արդէն գքսուհուն զբաղեցնումէր մի միտք Շիլլէրի ընտանիքին վերաբերեալ: Բանն այն էր, որ Վէյմարում գեռ շատ գորեղ էր դասակարգային նախապաշարմունքը, որի պատճառով շատերը մի տեսակ բարձրիցն էին նայում Շիլլէրի ընտանիքի վրա, որա ազնւական չինելու պատճառով: Նոյն իսկ պաշտօնապէս նրա ազնւական շինելու պատճառով: Նոյն իսկ պաշտօնապէս պալատում մուտք ունենալ չէին կարող բանաստեղծը և իւր պականը: Ինքը Շիլլէրը այդ բանին ոչինչ նշանակութիւն չէր տակինը: Իսկ Լոտտայի համար, որ ազնւական տան աղջիկ էր և լիս: Իսկ Լոտտայի համար, որ ազնւական տան աղջիկ էր և առաջ մուտք էր ունեցել պալատում, այժմ դժւար էր տեսնել, թէ ինչպէս իւր մայրը, քոյրը և բոլոր շրջապատողները այդ պականը իւր մայրը, քոյրը և բոլոր շրջապատողները այդ պականը դնելու նշանակութիւն իրան: Ի հարկէ այդ բանը նրա ամուսնունը գերազանցումէն իրան: Ոչ մի միջնորդութիւն չկարողեց դնելու վրա էլ ազդումէր: Եւ ահա գքսուհին համոզեց գքսին,

թէ ժամանակ է այդ պահասը լրացնել, օդու ելով այն հանդա-  
մանքից, որ ամբողջ Վէյմարը համակրումէ Շիլէրին և ու-  
րախութեամբ կողունէ նրա ազնականացնելու լուրը: Բայց  
այդ գործը կախւած էր ոչ թէ դքսից, այլ ընդհանուր գեր-  
մանական կայսրից: Ուստի դքսի կարգադրութեամբ նրա քար-  
տուղար Թօխտը խնդիրք ուղարկեց կայսերական պալատ:  
Խողիրքի մէջ Թօխտը մատնացցց է անում Շիլէրի նշանա-  
կութեան վրա ասելով, թէ նրա պատամական դրւածքները  
հաւանութիւն են գտել զիտնական աշխարհում, իսկ նրա բա-  
նաստեղծութիւնները մեծ զարկ են տւել հայրենասիրական  
ոգջն և գերմանական լեզւին: Այդ խնդրագրի մասին լսելով,  
Շիլէրը ասաց Թօխտին. «Շատ շնորհակալ եմ Ձեզնից, յար-  
դելի բարեկամ, այդպիսի երեկի դիպլոմատիկական վկայու-  
թեան համար: Ի հարկէ, հեշտ բան չէ իմ կեանքից որեւէ  
բան գտնել, որը առանձին նշանակութիւն ունենար կայսրի և  
Հայոց-Աւան համար, սակայն Դուք գերազանց կերպով էք  
վարել, շեշտելով լեզու աշած ծառայութեան վրա»: Շուտով  
կայսրից ստացւեց Շիլէրի ազնւականութեան հրովարտակը,  
որև դուքսը ուղարկեց բանաստեղծին հետեւել նամակի հետ  
միասին. «Այդ հրովարտակը թող ծառայէ Ձեր և Ձեր ընտա-  
նիքի օգտին: Ինձ համար մեծ ուրախութիւն է տեսնել Ձեր  
շքաղրօշմը»: Գտնեցան մարդիկ, որոնք խօսակցութեան առար-  
կայ դարձրին այդ նորութիւնը: Գանգատումէին, թէ Շիլէ-  
րը, ազատութեան և հաւասարութեան քարողիչը, այժմ  
ազնւական է դառնում: Ասենք՝ որոշ ճշմարտութիւն կար այդ  
խօսքերի մէջ, բայց Շիլէրը ինքը ի՞նչ մեղաւոր էր: Թէ ինչ-  
պէս էր նոյում բանաստեղծը այդ երեցիթի վրա, երեսում է  
նրա խօսքերից, որ զրեց նա հումբոլդին. «Դուք անշուշտ  
ծիծաղած կինէք, լսելով մեր նոր ափաղոսի մասին: Բայց  
այդ նորութիւնը մեր դքսի «քմահաճութեան» արդիւնքն է:

Սակայն քանի որ արդէն գործը կատարւած է, թող ծառայէ  
նա Լոլոյի և իւր երեխաների օգախն»:

Տեսնելով որ Վէյմարում արդէն ամենքին հաճելի է իւր  
ներկայութիւնը, Շիլէրը որոշեց առ միշտ բնակութիւն հաս-  
տատել Վէյմարում և աշխատեց սեփական տուն ձեռք բերել,  
որովհետեւ վարձած բնակարաններում նա իրան բաւականաչափ  
հանդիստ չէր զգում: Շիլէրի ընտանիքը վաղուց բարեկամա-  
կան յարաբերութեան մէջ էր Վէյմարաբնակ անզիայի Մէկի-  
շի ընտանիքի հետ: Մէկիշը զարգացած մարդ էր և գրակա-  
նագէտ, ըստ որում նա էր թարգմանել անգլիերէն լեզուի  
Շիլէրի «Մարի Ստիւարտը»: Այդ անգլիացուն հարկաւորեց  
ծախել իւր տունը, որը շատ յարմար էր Շիլէրի համար:  
Վէրջինս իսկոյն ծախեց Ենայի կալւածքը առած գնով և մի  
բան էլ աւելացնելով գնեց Մէկիշի տունը: Այդ տան երեսը  
գարձրած էր գէպի արեւելք, տան առաջ կանաչ լուս էր տա-  
րածւած, և այդ հանգամանքները համապատասխանումէին  
բանութեան սիրահար բանաստեղծի ճաշակին: Տունը փոքրիկ  
էր, բայց երկյարկանի: Շիլէրը վերցրեց իւր զբաղմունքների  
համար վերեի հարկը, ուր յոլանումէին առաւտեան ճառա-  
գայթները և մինչև կեսօր դուրս չէին գտիս սենեակից: Լու-  
սամատի վրա կախւած էր մի կարմրագոյն վարագոյր, որի առաջ  
գրած էր Շիլէրի զրասեղանը: Յայտնի է, որ Շիլէրը շատ էր  
սիրում կար միը գոյնը, որը միշտ նպաստաւոր ներգործու-  
թիւն էր անում նրա տրամադրութեան և աշխատանքի վրա:  
Հաղիւ տեղաւորել էր Շիլէրը սեփական բնակարանում:  
Երբ հեռակա եկած լուրերը նորից վրդովեցին բանաստեղծի  
սիրար: Նրա մայրը հիւանդացած լինելով գնացել էր Շիլէրը նա-  
գարա կուիզայի տունը, ուր խնամումէին նրան: Շիլէրը նա-  
մակ էր զրել նախկին լնկեր՝ բժիշկ հօֆէնին, որ մօրը բերէ  
Սոլիտիւդ և ամեն կերպ հոգ տանէ հիւանդին, ըստ որում

բոլոր ծախսերը Շիլէրը վերցնում էր իւր վրա: Բայց մայրը չէր կամեցել հեռանալ աղջկանից, թէև շատ էր ուրախացել որդոյ երախտիքը տեսնելով: «Թո զօրեղ սէրը — զրում է նա որդոյն — և հոգացողութիւնը ինձ համար, հաղարապատիկ կվարձատրէ Աստուած: Իմ որդոյ նման որդի չկայ ամբողչ աշխարհում»: Հիւանդութիւնը գնալով ծանրացաւ և երբ արդէն մահը մօտ էր, Եղիսաբեթը պահանջեց որդու մեղալիոնը, սեղմեց կրծքին և լաց լինելով, հոգին աւանդեց: Մօր մահւան բօթը ստանալով Շիլէրը զրեց Լուիզային. «Ո՛հ, սիրելի քոյր, ահա մեր սիրելի ծնողները այլևս չկան և մեզ միացնող սկզբնական կապը կտրւած է: Թող ուրեմն մենք մեր միայնակութիւնը զգալով, աւելի ևս սերտ կատերով կապւած լինենք իրար հետ: Մի մոռանար, որ դու սիրող եղբայր ունես: Կեանքը մեզ բաժանել է իրարից, բայց բարեկամական զգացմունքը պիտի անքակտելի մնայ»:

Մօր մահից յետոյ Շիլէրի սիրտը լցւեց վշտալի նախագուշակութիւններով... Բանաստեղծի գէմքի վրա նկատւում էր ինչոր մեղմ տանջանք... Նրա աչքերը կարծես աւելի խոշորացել ու առանձին փայլ էին ստացել... Նրանք շողշողում էին Երեկոյեան արշալյան հետմահանդաւընելու...

Նրա սիրտը լցւել էր կարեկցական նրբագոյն զգացմունքներով... Նա խղճում էր, կարեկցում էր ոչ թէ իրան, ոչ...այլ մօտաւորներին, հեռաւորներին, բոլոր մարդկանց, իւր մայրիկին, քոյրերին, նաև կտին... Այդ բոլորը ի՞նչպէս կարելի է արտայայտել մարդկային սովորական բառերով... Թերես գեղարւեստը, այն էլ ամենանուրբ գեղարւեստը կարողանայ մուղիկական հնչիւններով պատկերացնել այդ վիշտը, արցունքի չերմ կաթիւների ձեռվ մարմնացնել աստուածների հոգեկան ելևէշը...

Այդ արամազրութեան արդիւնքն էր Մեսսինական թագուհու տանջալի դրաման...

Մեսսինան մի յայտնի ծովափեայ քաղաք է, Միջերկրական ծովի Սիցիլիա կղզու վրա և այժմ պատկանումէ Իտալիային, իսկ մի ժամանակ անկախ իշխանութիւն է եղած: Մեսսինայի թագաւորը մի ծանր յանցանք է գործել որի պատճառով նզովք է մտել արքայական ամբողչ ընտանիքի մէջ: Զնայելով ձեռք առնւած բոլոր միջոցներին, տարաբաղդը ընտանիքը չէ կարողանում ազատ մնալ վերջնական կործանումից:

Թագաւորը արդէն երկու արու զաւակ ունէր և ուրախ կեանք էր անցուցանում կնոց և երեխաների հետ: Այդ ժամանակ նա մի սարսափելի երազ է տեսնում: Նրա անկողնի մէջ բուսել էին երկու եղենիներ, որոնք իրանց թարմ ու զօրել ծիւղերով միմեանց էին փաթաթւել: Յանկարծ այդ եղենիների մէջ մի մանուշակ է բուսնում, որը շուտով բոյավառումէ և, վառելով եղենիները, այրում մոխիր է գարձնում ամբողչ տունը:

Խորիմաստ պատգամախօսը բացատրում է թագաւորի երազը այն մտքով, թէ թագուհին պիտի մի աղջիկ ծնէ, որը կապատճառ է դառնալու թէ թագաւորացն եղբայրների մահւան և թէ ամբողչ արքայական տան կործանման: Խսկապէս շուտով մի աղջիկ է ծնում: Թագաւորը հրամայում թագուհին շուտով մի աղջիկ աղջիկ աղջիկն: Հրամանը ըստ է անմիջապէս ծովը քցել փոքրիկ աղջիկն: Հրամանը ըստ երեցիթին կատարում էն: Բայց իրօք թագուհին ազատում է երեխային և իւր հաւատարիմ ծառայ - Դիէգոյի ձեռքով ու երեխային և իւր հաւատարիմ ծառայ - Դիէգոյի ձեռքով ու զարկումէ կուսանոց, ուր ծածուկ պահում, մեծացնում են երեխային:

Ի միջի այլոց աճում-մեծանումէն թագաւորի որդիները՝ Գօն-Մանուելը և Դօն-Ցէզարը: Նրանք երկուսն էլ առողջ են,

առցոյ ու գեղեցիկ, և կարող էին իրանց կեանքով մեծ ուրախութիւն պատճառել ծնողներին, եթէ միայն մի արդելառիթ հանգամանք ըլինէր: Տարաբաղդաբար հարազար եղայրները մանկան օրերից սկսեալ չեն կարողանում հաշտ ապրել իրար հետ: Մի ինչոր անհասկանալի թշնամական տարր կայ նրանց փոխադարձ վարեցողութեան մէջ: Այդ թունաւոր տարրը հետդէաէ զօրեղանումէ և լուրջ կերպարանք է ստանում: Երբ արդէն երկու եղայրները հասունացած տղամարդիկ էին դարձել, նրանց թշնամութիւնը այնքան սաստկացել էր, որ նրանք իւրաքանչիւր բոպէ պատրաստ էին միմեանց կեանքի թելը կտրելու: Եթէ բանը արիւնչեղութեան չէր հասնում, այդ նրանիցն էր, որ աչալուրջ հայրը հզօր բազուկով հեռու էր պահում նրանց միմեանցից և չէր թոյլ տալիս ընդհարւելու:

Բայց ահա թագաւոր-հայրը գերեզման մտաւ և երիտասարդ իշխանազների համար անկախ գործունէութեան ժամանակամիջոցը սկսեց: Մեսսինայի աղքաբնակութիւնը բաժանեց երկու հակառակորդ կուսակցութիւնների և սկսւեց զարհուրելի եղայրասպան կոիւր:

Վերջապէս ժողովուրդը զիտակյութեան եկաւ և դիմելով թագուհուն, պահանչեց, որ նա հաշտեցնէ եղայրներին, որպէս զի դադարէ աննպատակ արիւնչեղութիւնը: Հակառակ դէպքում ժողովրդի ներկայացուցիչները սպառնումէին երկուսին էլ դուրս վռնդել երկրից և իրանց համար նոր իշխան ընտրել: Այդ սպառնալիքից ազատւելու համար, թագուհին հրաւիրեց որդիներին իւր մօս և յորդորեց նրանց՝ վերջ տալ փոխադարձ հակառակութեան: Մօր սիրոյ աղդեցութեան տակ եղայր-ները սկսեցին մօտենալ միմիանց և շուտով երկուսն էլ զղացին և զիտակցեցին, որ իրանց փոխադարձ թշնամութիւնը անսիտ թիւրիմացութիւնների արդիւնք է: Նրանք հաշտւեցին, երկապա-

սակութիւնը վերջացաւ, արիւնչեղութիւնը դադարեց, զէնքը մնաց առանց գործադրութեան...

Բայց անխուսափելի նզովքը շարունակումէր ներգործէլ...

Թագուհի մայրը ուրախ է, տեսնելով որդիների համերաշխութիւնը: Ուրախութիւնը կատարեալ անելու համար, նա յայտնումէ որդիներին, որ նրանք մի քոյր ունին, որին նոյն օրը պիտի տեսնէն: Ամենքի ուրախութեան չափ ու սահման չկայ: Դօն-Մանուէլը իւր կողմից աւելացնումէ, որ ինքը արդէն մի արժանաւոր հարսնացու ունի, որին այսօր պիտի բերէ մօր տունը: Նշնանման պատմութիւն է անում և Դօն-Ցէղարը իւր մասին:

Տարաբաղդաբար այստեղ դարձեալ թիւրիմացութեան պատճառ կայ: Թէ թագուհու և թէ նրա որդիների խօսքը վերաբերումէ միևնոյն անձնաւորութեան, գեռահաս թէատրի-չէին, որի վրա անդիտակյաբար սիրահարւել են հարազատ չէին, որի վրա անդիտակյաբար սիրահարւել են հարազատ չէին երայրները: Եւ այդ թիւրիմացութիւնը խիստ աղետալի հէտեւանքներ է ունենում: Ամենքից առաջ Դօն-Մանուէլն է հասկանում, որ իւր սիրոյ առարկան հարազատ քոյրն է: Նա խիցն փաթաթւումէ գտնւած քոյրիկի վզովը և եղայրական համբոյր է զրոշմում նրա պուշներին: Այդ ըռպէին յայտնւումէ Դօն-Ցէղարը և խանդից վառւելով տեղնուտեղը սպանում է թիւրիմացութիւնը կարծելով, թէ իւր որդուն աւազակերեց եղրօրը: Թագուհին կարծելով, թէ իւր որդուն անիծում է նրա ներն են սպանել, դառն արյունք թափելով անիծում է նրա սպանողին: Երբ Դօն-Ցէղարը հսականումէ սիսլը, նայելով մօր և քրոջ աղերսանքին, խիցն վերջ է տալիս իւր կեանքին: Այդպիսով պատզամախօսի դառն նախազուշակութիւնը բողջութեամբ կատարւումէ:

Այդ բոլորը մի պարզ և անհետաքրքիր, առասպել է, որը ըստ երեցյթին ոչ մի իմաստ չէ պարունակուս: Բայց Շիլէրի վրիմը չէր կարող անհնառ բան արտազրել: Միայն թէ այս

անգամ իմաստը շատ խորն է թագնւած և ինքն իրան աչքի չէ ընկնում...

Անդեղատ սարսափների ենթակայ, դժբաղդ ընտանիքը ամբողջ մարդկային ցեղն է, որին կարծես թէ շարունակ հետեւմ է ինչոր գաղտնի նզովք: Հազարամեակների ընթացքում անդդհատ շարունակում է եղբայրասպան կոհւը, աղզը աղզին բնաշինչ է անում և անհետացնումէ աշխարհի երեսից... Յանուն ինչ բանի... ինչ հաստատուն հիմք ունի այդ անվերջ արիւնհեղութիւնը... Ոչինչ սա մի անրմբոնելի թիւրիմացութին է, որ թունաւորումէ մարդկային ցեղի ամբողջ կեանքը:

Մելամաղձոտ առասպելի ձեռվ մարդասէր բանաստեղծը արցունք է թափում տարաբաղդ մարդկութեան ծանր վիճակը տեսնելով: Բայց նրա արցունքը ով է հասկանում...

Ինչ վերաբերումէ դրամայի գեղարւեստական բնաւորութեան, ուշադրութեան արժանի է մի նորութիւն: Շիլլերը, նմանւելով հին յունական դրամաստեղծներին, մացրել է դրամայի մէջ երգեցիկ խմբի դերը: Երգեցիկ խումբը յունական դրամաների մէջ ինքն բատ ինքեան ներգործական դեր չունէր: Երգեցիկ խումբը մի տեսակ հաստրակական—ամբողջութեան ներկայացուցիչն էր, բատ որում բեմի վրա աշխատումէր նա բացատրել, պարսաւել կամ քաշալերել այն բոլորը, ինչոր կատարումէր բուն դերակատարների ձեռքով: Շիլլերի դրամայի մէջ երգեցիկ խումբը շեղումէ նախկին կոչումից, որովհետեւ նա մի ամբողջութիւն չէ կազմում, այլ բաղկացած է երկու իրար հակառակ խումբերից, որոնցից մէկը կողմանակից է Դօն-Մանուկին, իսկ միւսը՝ Դօն-Ցէղարին: Երկու եղբայրների ընդհարումների և հաշտութեան մէջ մասնակցումէն նրանց խմբերը և որոշ չափով դերակատարի կոչումէն ստանձնում:

Այդպիսով Շիլլերի դրաման մնումէ անհամապատասխան

թէ հին յունական և թէ նոր-եւրոպական գեղարւեստի ողջն: Կարելի է ասել, որ Շիլլերը փորձումէր՝ ինչոր երրորդ ամսական գեղարւեստ ստեղծելու, և եթէ մեր բանաստեղծը երկար կեանք ունենար, գուցէ և պիտի կարողանար իրագործել եւր տակաւին մռայլ և անորոշ գեղարւեստական ծրագիրը: Եւր անգամ ամենամեծ զիւտերը սկզբնական շրջանում չափանց մռայլ են լինում և հասարակ մահկանացուների համար անտեսանելի... Յաւալի է միայն, որ Շիլլերը երկար կեանք չունեցաւ, որ կարողանար իւր փորձերը կրկն ու կրկն նորոգելու:

Այնուամենայնիւ «Մեսսինայի հարսնացուն», իւր մի հանձարեղ փորձի արտայայտութիւն, մեծ տպաւորութիւն է անում հանդիսատեսի վրա: Բեմի առաջ նստած հանդիսականը ակամայ վերափոխումէ մի առասպելական զարհուրելի աշարհ, և ակամայ մռացութեան տալով իրական կեանքը, գեղեցկութեան հզօր թերով սլանումէ վերացական աշխարհ: Ները և տեսնումէ իւր առաջ հանրամարդկային արտասուալի սերը և տեսնումէ իւր առաջ հանրամարդկային արտասուալի պատմութիւնը գոյնզգոյն ապագիների միջով: Իսկ մարդկային սիրտը ու միտքը այդպէս կախարդել կարող է միայն Շիլլերի նման ինքնուրոյն հանձարը...

Եւ իսկապէս «Մեսսինայի հարսնացուի» ներկայացումը շատ զորեղ տպաւորութիւն արաւ: Ինքը հեղինակը անգամ սասպորեղ տպաւորութիւն արաւ: Ինքը հեղինակը անգամ սասպորեղ տպաւած էր խաղի ժամանակ: Երբ երգեցիկ խումբը ներս բերաւ Դօն-Մանուկի զիակը և վայր դրեց դժբաղդ թագուհու առաջ, Շիլլերը մի տեսակ սարսուռ զգալով դարձաւ գէպի Գէօտէն—ասելով: «Այդ արդէն էսէկան ազնիւթեան է»...

Աւելի էլ զօրեղ տպաւորութիւն արաւ «Մեսսինայի հարսնացուն» Լառուխտէտի հանքային չրերում: Ամառը այստեղ էր Վէյմարի դերասանական խումբը: Լսելով որ բանաստեղծը

նոյնպէս շրերումն է, հալլէյի, կայացիկի և Ենայի ուսանողները շտապեցին Լառվաշտէտա, որ առիթ ունենան համակրական յոյց անելու բանաստեղծի հասցէին։ Տեղի ունեցաւ «Մեսսինայի հարսնացուի» Ներկայացումք։ Մի անըմբոնելի դիսլածով, Ներկայացման ժամանակ դուրսը սկսեց սարսափելի փոթորիկ, Երկինքը անընդհատ որոտումէր և կայծակները վերջ չունէին։ Թատրօնը լիքն էր։ Այն բովէին, երբ գժբաղդ թագուհին ընկնելով որդոյ դիսկի վրա դէպի Երկինք բողոքելով հայժակ ու որոտում է պահանջում մարդասպանի զլխի համար, սարսափելի կերպով որոտաց Երկինքը և բոլոր հանդիսականները զարհուրած վեր թռան տեղներից, Շեղարշեստի և հայր Շնունշան ձիահաճուաւ ապաւցունշան ներդոյ։ Ներկայացումից ըլ կշանալով, Երախտապարտ ուսանողութիւնը շրջապատեց բանաստեղծի բնակարանը և չէր դադարում սերենադա Երգելուց։



Խնձորի պատմութիւնը։

## XXV.

Նոր դարի սկզբում Եւրոպան գտնւումէր սարսափելի խառնակ գրութեան մէջ։ Եւրոպական շատ գահականեր, ֆրանսիական յեղափոխութիւնից սարսափած, սկսեցին կաշկանդել լուսաւորութեան քայլերը։ Գրաքննութիւնը ծայրայեղ խստութեան հասցրին։ Յենդուրան անխնայ հալածումէր ամեն մի աղաս, բարձր և գեղեցիկ սկզբունք։ Լեսսինգի, Գեօսէի և Շիլէրի աշխատութիւնները այլասեռում, կրծատումէին ամեն կերպ։ Բեմից գուրս էին վոնդում ամենակարեօր պիեսները։ Շէկսպիրի Մակբետը արգելեցին, «որպէսզի ժողովուրդը չընտելանայ այն մտքին, թէ թագաւորներին անդամ կարելի է սպանել»։ «Արքայ Լիրը» բեմից վոնդեցին, որպէսզի հանդիսական չկարծէ, թէ անբաղդ կեանքի աղեցութեան տակ սատեսը չկարծէ, թէ անբաղդ կեանքի աղեցութեան տակ արքաներն էլ կարող են խելազարւել։ «Ֆիէսկօն» և «Վալ-



Ծովակը ժպտալով կանչումէ դէպ՝ ցած,  
 Մանուկը քնած է ափի մօտ պառկած.  
 Լսումէ նա միայն  
 Արնդի քաղցր ձայն,  
 Եւ հրեշտակային  
 Երգեր զբախտային:  
 Իսկ երբ նա զարթնումէ ուրախ, երշանիկ,  
 Զրերը կանգնած են նրան շատ մօտիկ.  
 Եւ ձայն է դալիս  
 Անդունդի խորքից.  
 Մանուկ սիրելիս,  
 Մի փախչիր ինձնից,  
 Արի, ներս մտիր,  
 Մոցումն քնիր:  
 Հաղիւ ձկնորսը լռեց, զեռահաս հովիւր, նստած մի բարձր  
 տեղում, շարունակեց նոյն զմայլուն մեղեղին, միայն թէ բո-  
 վանդակութիւնը յարմարեցնելով իւր կոչման.  
 Մնաք բարե մարգեր,  
 Պայծառ արօտներ,  
 Ամառն անցաւ,  
 Գնալու ժամի հասաւ:  
 Դարձեալ մենք կգանք, սարը դուրս կգանք,  
 Երբ կկուն կանչի, թռչուններն երգեն,  
 Եւ ծաղիկները դաշտը զարդարեն,  
 Սիրուն մայիսի վտակները զարթնեն:  
 Հէնց որ հովիւն ընդհատեց երգը, մի մելամաղձոտ, բայց  
 քաջութեամբ ներշնչւած երգ սկսեց Ալպեան որսորդը, որ նստած  
 էր ապառաժի ծայրին.  
 Լեռը որոտումէ, գետինը շարժւում,  
 Սառցի վրա որսորդը բնաւ չէ տատանւում:

Առաջ է գնում  
 Սառցապատ դաշտով,  
 Որ բնաւ չէ ծաղկում,  
 Չէ ծածկում խոտով:  
 Չէ նշմարում նա ոչ քաղաք, ոչ դիւդ,  
 Տեսնումէ միայն թանձր մառախուզ.  
 Ամպերի ճեղքից  
 Հաղիւ որոշում,  
 Կանանչ դաշտերը  
 Փուած ներքեռմ:  
 Կարծես մելամաղձոտ երգերի աղջեցութիւնից, պայծառ  
 Երկինքը սկսեց ծածկել ամպերով և լեռների մէջ լոելի եղաւ  
 ինչոր աչեղ թնդիւն... Ծերունի ձկնորսը դուրս թռաւ խրձ-  
 թից և որդուն հրամայեց ուռկանը քաշել: Հովիւր հայեցք  
 քյեց իւր հօտի վրա, մի գուցէ կովերը ցրւած լինին: Անվեհեր  
 որսորդն անգամ բարւոք համարեց թողնել սրածայր ապա-  
 ռածը և օր-առաջ ներքեւ իշնել: Ամենքն էլ զգումէին, որ  
 սաստիկ փոթորիկ է լինելու... Բայց փոթորիկներից չէ վախե-  
 նում հերոս ժողովուրդը, որը ունի Շտառուֆախէրի, Տէլի,  
 Մում հերոս ժողովուրդը, որը ունի Շտառուֆախէրի, Տէլի,  
 Կինը գիշտալի, Ռուդէնսի և Ատտինհառուզէնի նման ներկայացու-  
 թէլիստալի, Ռուդէնսի և Ատտինհառուզէնի նման ներկայացու-  
 թէլիստալի: Ծանօթանանք ժողովրդի այդ արժանաւոր որդիների  
 շիներ: Ծանօթանանք ժողովրդի այդ արժանաւոր որդիների  
 շիներ:  
 Շտառուֆախէրը լնկել է մի տեսակ անհասկանալի տըխ-  
 րութեան մէջ, որի պատճառը չէ կարողանում հասկանալ նրա  
 կինը Գէրարուղան, և զիմումէ նրան հարցնելով:  
 Ինչու իմ բարեկամ, դու գարձեալ տխուր ես.  
 Քանի օր է արդէն, նկատում եմ այդ ես:  
 Ի՞նչն է քո ծակատի կնճիռը շատացնում,  
 Ի՞նչն է քո պարզ սիրտը ծնշում ու վշտացնում:  
 Հարազատ քո զինն եմ, մի թագցնիր ինձանից.

Թող, որ ես էլ լինեմ քո վշտին մասնակից...  
Աշա տես քո տունը, պալատի է նման  
Թանկագին փայտերից՝ մի պատկեր աննման...  
«Տունը գեղեցիկ է—պատասխանումէ ամուսինը—բայց  
նրա հիմքը խախուտ է»...

Իսկ քաշարի կինը շարունակումէ ոգեորել ամուսնուն.  
«Չէ՞ որ ես մի փորձառու մարդի աղջիկ եմ: Շատ անգամ  
հօրս մօտ հաւաքւումէին ժողովրդի զիսաւորները, կարդում  
էին հին կայսրների մագաղաթեայ հրովարտակները և քննում  
էին երկրի բարօրութեան հարցը: Ես ուշադրութեամբ լսում  
էի նրանց խելացի խօսքերը: Ուրեմն լին լուշ և ուշ դարձրու իմ  
խօսքին: Քեզ սպառնումէ կուսակալը. պատրաստ է քեզ  
վնասելու, որովհետեւ դու չես թողնում, որ շվեյցարացին  
մոռանայ իւր ժառանգական իրաւունքները և զերի դառնայ  
իշխանական տանը: Քեզ պէս են արել և մեր արժանաւոր  
նախնիները: Եւ ահա վաղուց կուսակալը մտքումը դրել է  
խորտակել քեզ, կամենումէս դու սպասել, մինչև որ նա իւր  
չար միտքը իրագործէ: Ամուսնոյ հարցին, թէ ինչ կարող է  
անել ինքը, նա պատասխանումէ. «Դու զիտես, թէ ինչպէս  
մեր դաւառում ամենքը զանգատում են կուսակալի ազա-  
հութիւնից և չարագործութիւնից: Բայց աւելի լաւ չեն միւս  
գաւառի կուսակալները: Օր չէ անցնում, որ ծովակի միւս  
կողմից աղետաբեր լուրեր չը ստացւին կուսակալների ապօրինի  
վարմունքի մասին: Ուստի հարկաւոր է, որ բոլոր երեք դա-  
ւառներից համախոհները մի խորհուրդ կազմեն և որոշեն, թէ  
ինչպէս կարելի է այդ լուծից աղատել: Քաշարի կնոշ խօսքերը  
վառեցին ամուսնոյ սրտի մէջ այն կրակը, որ վաղուց ծած-  
կաբար պատրաստումէր բորբոքելու: Ամուսինը հետզհետէ  
սիրտ առնելով կնոշ խօսքերից, որոշումէ ճանապարհւել դէպի  
Ուրիի գաւառը, ուր ունի լաւ համամիտ բարեկամներ:


Եյդ համախոհներից մէկն էլ վիլհելմ Տէլլն է, մի աներ-  
կիւղ և փորձառու որսորդ, որի կեանքը պատկերանում է  
նրա կնոշ դանդասների մէջ:  
Երբ դու գնումես, սիրոս դողումէ,  
Կարծումեմ, թէ չես վերադառնալու:



Տէլլի կինը:

Իմ աչքի առաջ պատկերանումէ,  
Ինչպէս սառցապատ լեռների միջին  
Գու մոլորումէս, ժայռիցը թռչում  
Եւ անշնչացած ներքեւ զլորւում:  
Կամ թէ կատաղած այծը վայրենի  
Անդունդի ծայրին քեզ վայր է հրում,  
Կամ թէ ձիւնի շերտն է վրադ թափիւում,  
Կամ թէ խաբուսիկ սառուցն է վլչում,

Եւ դու շփոթւած անդունդն ես թռչում;  
Ահ ու սարսափով կենդանի թաղում:  
Բայց Տէլլը չե կարող իւր կոչումը թռջնել, և նա այն-  
պէս անփորձ և անզգոյշ չէ, որ հեշտութեամբ վտանդի են-  
թարկւէ.




Վիլհելմ Տէլլ:

Ով կամենումէ աշխարհում ապրել,  
Պիտի կարենայ կուել, մաքառել:  
Բնութիւնն ինձնից հովիւ չէ ստեղծել,  
Իմ կոչումն է միայն զէնքով հալածել . . .  
Միայն նաև ունի կեանքի իրաւունք,  
Ով որ շարունակ նրան ձեռք է բերում:  
Ով թարմ հայեացքով իւր շուրջն է դիտում՝  
Սեփական ոյժին և Սատծուն դիմում:

Նա դուրս է դալիս ամեն վտանդից,  
Եւ չէ զարհուրում ոչ մի փորձանքից:  
Փորձանքից զղարհուրելով, Տէլլը պատրաստ է հարկաւոր դէպ-  
քում գործի մէջ նետւելու. Նա խօսել չէ սիրում:  
«Տէլլը փրկումէ մոլորած գառնին անդունդի ծայրից.  
Ի՞նչպէս կարող է բարեկամներին մերժել իրանից:  
Բայց ինչ անումէք, արեցէք, միայն ինձ միք հարցնել  
Ես չեմ կարող ոչ քննութիւն անել, ոչ հարցեր լուծել:  
Սակայն երբ որոշ գործի համար ես ձեզ հարկաւորւեմ,  
Կանչեցէք ինձի և ես ձեր առաջ պատրաստ կկանգնեմ»:  
Տէլլից ոչ պակաս անվեհեր, բայց աւելի նուրբ ու բանաստեղ-  
ծական հոգի ունեցող գործիչ է Մէլխտալը: Նա բորբոքւում  
է լսելով, որ հօրը կուրացրել են կուսակալի արքանեակները.  
Ոչ ի՞նչ երկնային անդին պարզե է մեզ աչքի լցուր,  
Լուսով է ապրում կենդանի աշխարհ, մինչեւ իսկ բջուր...  
Բայց նա պիտի մնայ շրջապատւած միշտ թանձր խաւարով,  
Պիտի չը զմայլէ ոչ կանանչ հովտով, ոչ ծաղիկներով:  
Ոչ էլ սառցապատ դաշտերի ցոլուն ճառագայթներով:  
Սարսափելի է առանց տեսնելու ապրել աշխարհում:  
Մահը ոչինչ է. ինչո՞ւ խղճալով դուք ինձ էք նայում:  
Ես ունիմ երկու ողջ-առողջ աչքեր, բայց հնար չունեմ:  
Որ մէկը հանեմ և իմ խեղճ հօրը սրտանց նւիրեմ,  
Արտացղումէ իմ աչքերի մէջ լուսեղին մի ծով,  
Բայց այդ ծովիցը մի շող հաղորդել նրան անզօր եմ . . .  
Որպիսի՞ երկոտ թշւառական եմ:  
Որ իմ անձնական ապահով կեանքը  
Ի նկատի առած, հօրս յանձնել եմ,  
Երբ զրաւական դադանի ձեռքը:  
Երկոտ զղուշութիւն, էլ ինձնից հեռու,  
Ես պիտի դառնամ արեան վրիժառու,

Ես պիտի գնամ՝ խստիւ պահանջեմ  
 Հօրս աչքերը բիրտ կուսակալից,  
 Հզօր բաղուկով դուրս պիտի բարշեմ  
 Պահապանների բազմութեան միջից:  
 Ոչինչ չեմ սպասում այլևս կեանքից,  
 Սիրտս պայթում է անլերջ յուզմունքից:



Մէլիստալ:

Ֆիւրստը նկատում է, թէ կուսակալը ապրում է բարձր  
 ամրոցի մէջ և նրա դէմ Մէլիստալը ոչինչ չէ կարող անել: Իսկ  
 վերջինս պատասխանում է.

Թէկուզ բնակւի բարձր լեռների  
 Յաւիտենական սառցապատ զլիսին,  
 Օգնութեամբ մի խումբ քաջ ընկերների  
 Մէնք շուտ կհասնենք նրա դռներին,

Եւ կխորտակենք հզօր ամրոցը:  
 Բայց թէ կթեքէք ձեր պարանոյը,  
 Յանձն առնելով թշնամու լուծը,  
 Եւ եթէ տուն ու տեղի վախիցը  
 Ոչ ոք չի ուզիլ գալ իմ ետքիցը,  
 Ես հովիւներից ժողով կկազմեմ  
 Որոնց սիրտն առողջ ու թարմ է հոգին,  
 Եւ նրանց առաջ ազատ կպատմեմ  
 Թէ ինչ սարսափ է տիրում մեր կեանքին . . .  
 Միթէ մենք բնաւ ոչ մի ցժ չունենք,  
 Որ մեր պատիւն ու կայքը պաշտպանենք:  
 Ինչու Ենք սովորել աղեղը լարել  
 Ծանր կացինը արագ տատանել:  
 Ինչու նոյն ինքն անբան կենդանին  
 Զէնքի է դիմումյուսահատ ժամին:  
 Յողնած եղչերուն մերթ կանդ է առնում,  
 Եւ եղչիւրներով շնկերին սպառնում:  
 Այծը սեղմելով ժայռին իւր ոտքը,  
 Հրումէ որոկանին անդունդի խորքը:  
 Գիւղացու ընկեր՝ համբերող եղը,  
 Հանդարտ թեքումէ լծի տակ վիզը,  
 Երբ զայրայնումէս նրան իզուր տեղը,  
 Գործի է դնում սուր եղչիւրները,  
 Նետումէ տիրոջ գէպի ամները:

Մի փոքր ուրիշ կերպ է առաջանում Ռուդէնսի անվեհե-  
 րութիւնը և եռանդը: Նա սկզբում խոյս էր տալիս հայրենա-  
 կիցներից, կարծելով թէ մի խումբ խաշնարած երիտասարդներ  
 ոչինչ չեն կարող անել, բայց տեսնելով որ նրանք կատակ չեն  
 անում, միտքը փոխեց: Մէկ էլ որ կառավարութեան պաշ-  
 անում անդումիւնները այն աստիճանի հասան, որ

այլես ոչ մի սիրտ չէր կարող դիմանալ: Ահա թէ ինչու է  
նկարագրում Ռուդինը իւր վերածնութիւնը.

Սյդքան չար գործեր տեսայ, լոեցի,  
Եւ իմ աչքերս դիտմամբ զոցեցի.  
Զգայուն սիրտս բարկութեամբ լցւած՝  
Երկար ժամանակ իզուր զսպեցի:  
Այսուհետև էլ լոռութիւն պահել՝  
Նշանակումէ պարզ դաւաճանել,  
Ոչ միայն կայսրին, այլև իմ ազգին:  
Իմ արիւնակից ազգը թօղեցի,  
Բնութիւնից դրւած կապը քանդեցի,  
Եւ դարձայ ձեզի պաշտպան, կողմնակից,  
Բայց ահա քօղը ընկաւ իմ աչքից...

Ահա այդ եռանգուն երիտասարդները իրանց համամիտ-  
ների հետ միացած գաղտնի խորհուրդ են կազմում, ուր կազ-  
մակերպումեն իրանց պահանջը... Գործի ողին լաւ է բնո-  
րոշում Շտառուֆախերը, ասելով.

Սյդպէս պիտի մենք հայրենի երկրում,  
Սեփական տանը՝ ծածկաբար սողանք,  
Որպէս չարագործ գողերն են անում,  
Թէև չունենք մենք ոչ մի բուն յանցանք...  
Եւ իսկապէս այդ մի բուռն հովիւները գողեր ու աւազակներ  
չեն, որոնք յանցանքի մէջ զւարձութիւն են որոնում: Նրանք  
ուրիշ բան չեն պահանջում, եթէ ոչ իրանց մարդկային իրա-  
ւունքը.

«Սյդ երկիրը մենք ինքներս ենք ստեղծել,  
Սեփական ձեռքով՝ տոկուն չանքերով...  
Մէզը ցրել ենք մոայլ դաշտերից,  
Եւ արեգակին ճանապարհ բացել,  
Ահարկու ժայռը չարդել ու փշրել

Անդունդների վրա ուղիներ շնել:  
Մեր հազարամեայ անհուն աշխատանք  
Օտարն է ուղում այժմ ժառանդել,  
Եւ մեր սեփական սուրբ հողի վրա  
Մեր ձեռք ու ոտքը շլթայով կապել...  
Բայց ոչ, բռնութիւնն էլ սահման ունի:  
Երբ հալածւածը ուրիշ ճար չունի,  
Անտանելի է դառնումնրա բեռը,  
Դէպի երկինք է մեկնում իւր ձեռը,  
Եւ խնդրում անխախտ իւր իրաւունքը,  
Անձեռնմանի որպէս աստեղքը...  
Քանի որ ուրիշ միջոց չէ մում,  
Մերկացրած սուրն է իւր ձեռքը առնում:  
Սյդպիսի յոյսերով ներշնչած նրանք նկատումեն, որ  
արշալոյսը բացւումէ, երկինքը սկսումէ կարմրել, և այդ  
կարմիր լշով երդւելով նրանք հաստատումեն իրանց դաշ-  
կացութիւնը: Ապա սկսումեն ցրւել, իրանց հետ տանելով  
Շտառուֆախերի նախազգուշական պատգամը.

Սյժմ ամեն մէկդ անձայն-անձպտուն,  
Խաղաղ ու հանգիստ գնացէք ձեր տուն:  
Հովիւր թող իւր հօտը պաշտպանէ,  
Եւ դաշնակցութեան անդամներ ճարէ:  
Ինչ որ լինում է, թողէք դեռ լինի,  
Մինչև դանակը ոսկորին համնի:  
Բայց երբ որ կդայ վրէժի օրը,  
Կը հատուցանենք նրանց բոլորը,  
Հաշիւր կանենք մենք հանդիսաւոր,  
Թէ ընդհանրական և թէ մասնաւոր:  
Թուն ժողովրդից ոչ պակաս ցանկանում է հայրենիքի  
ազատութիւնը ազնւական դասակարգը, որի ներկայացուցիչը

Աստինհառւէղէնն էր: Մահամերձ պառկած, նա հետաքրքրում է դորձերի ընթացքով, կեանք և ուրախութիւն է զգում, լսելով նոր դաշնակցութեան մասին: Մանաւանդ ուրախացնում է նրան զիւղացու մասնակցութիւնը և նա ասում է.


Կարողանում է ուրեմն զիւղացին,  
Առանց զիմելու աղնւականին,  
Գլուխ կանգնել իւր փրկութեան դորձին,  
Լոկ վստահացած սեփական ոյժին:  
Կարիք չունի՞ նա մեծերի անւան՝  
Կարող ենք հանգիստ մտնել գերեզման:  
Առանց մեղ էլ նա կարող է ապրել  
Եւ մարդկութիւնը միշտ առաջ տանել:

Առհասարակ ծերունի բարօնը, չնայելով աղնւական ծագման, ազատութեան և հաւասարութեան չերմ պաշտպան է: Լսելով թէ ինչպէս կուսակալը ստիպել է Տէլլին խնձորը դնել հարազատ որդոյ զլիսին և նետ արձակել խնձորի վրա, և թէ ինչպէս նետը իսկապէս խնձորին է կպել ու տղան ազատ է մնացել մահից, բարօնը խիստ զայրանում է իշխող դաստկարդի դէմ և ձեռքը դնելով տղայի զլիսին, ասում է.

Ահա այս զլիսին անկած խնձորից  
Չեր ազատութեան ծառը կը բուսնի,  
Հինը կը քանդւի, աւերախներից  
Սրժանավայել նոր կեանք կը ծլի...  
Աղնւականները ամրոցից կիշնեն,  
Հաւատարմութիւն քաղաքին կերդւեն,  
Եւ նրա հզօր պատնէների դէմ  
Թագաւորները ուժասպառ կլինեն...  
Ահա իշխաններն, մեծամեծները,  
Զրահաւորւած առաջ են գալիս,  
Անթիւ - անհամար սուր նիզակները

Գիւղացու տկլոր կրծքին դէմ տալիս:  
Բայց աղնւականի ծաղիկը թոռմեց,  
Եւ աղատութեան դրօշը ծածանեց:

Մակայն այդ բաշարի և աղնիւ գործիչներից ոչ մէկը չէ կարող դրամայի զլիսաւոր հերոսը համարւել: Ինքը Վիլհելմ Տէլլը, որի անունով դրաման կնքւած է, ուրիշ մի բան չէ,



Տէլլի որդին

բայց եթէ մի քաշարի լեռնական և ընդունակ նետաձիզ: Բայց Վիլհելմ Տէլլ դրամայի զլիսաւոր հերոսը ինքը ժողովուրդն «Վիլհելմ Տէլլ» դրամայի զլիսաւոր հերոսը ինքը ժողովուրդն է, որը մի կողմից արտայայտում է յիշեալ ներկայացուցիչների միշոցով միւս կողմից հենց ուղղակի ինքն իրան, որևէ հասամակ ձինորսի, կամ մի զիւղացի կնոջ, կամ մի երեխայի լեզով ու գործով: Ահա այդ բուն ժողովորդի մի քանի նշանաւոր յատկանիշների վրա մատնացոյց կանենք:

Շվեյցարական ժողովուրդը վերին աստիճանի աշխատասեր է: Շարունակ տեսնում ենք, թէ ինչպէս քրտինք թափելով զբաղւած է նա տնտեսական գործերով, ձկնորսը իւր ռուկանով՝ երկրագործը գութանով, որսորդը նետով... Շվեյցարացին շարունակ գործ ունի հողի ու ջրի հետ: Նա ոչ միայն օգտումէ գոյութիւն ունեցող բնութիւնից, այլև ինքը իւր կողմից ազդումէ հզօր բնութեան վրա: Նրանց բնակւած լեռները մի ժամանակ ծածկւած են եղել գաղանաբնակ, անանցնելի անտառներով, իսկ լճերի մէջ միայն օձեր են լողալիս եղել: Անտառների թանձրութեան պատճառով արեգակի ծառագյթները հաղիւ էին թափանցում մինչև երկրի մակերեւոյթը, ուստի երկրի վրա միշտ տիրապետումէր թանձր մասախուղը: Այդ բոլորը կերպարանափոխել է շվեյցարացին տոկուն աշխատութեամբ և ահա թէ ինչ իրաւունքով է նա ասում.

Այդ երկիրը մենք ինքներս ենք ստեղծել  
Սեփական ձեռքով, տոկուն շանքերով...  
Մէջը ցըել ենք մռայլ դաշտերից,  
Եւ արեգակին ձանսապարհ բացել...

Այդպէս արիւն քրտինքով հայրինիք ստեղծելուց յետոյ, բնական է որ ժողովուրդը կամենումէ խաղաղ կեանքով ապրել: Նա հասկանումէ իւր անձեռնմխելի իրաւունքները, որոնց ոտնակոխ անողին չէ կարող անպատիժ թողնել: Բառումզարտէնի արիւնը զլսին է տալիս, երբ լսումէ, թէ կամեցել են իւր կնոջ անպատւել. մի բոպէ մռանումէ նա ծառն էլ, անտառն էլ, և տուն վազելով կացնահար է անում յանդուզն պաշտօնեային: Հասարակ մշակները չեն կամենում աշխատել կառուցւող բերդի վրա, նախագուշակելով, որ այդ բերդը ծառայելու է իրանց հալածողներին: Որմն աղիրներից մէկը լիձն է դցում գործիքները և երդումէ այլես չաշխատել: Շտառուֆախերը, լսելով կնոջ վտան-

դաւոր խօսքերը, ասումէ. «Բայց դու լաւ մտածե՞լ ես, ինչ որ ինձ խորհուրդ ես տալիս: Ի՞նչ կարող է անել աշխարհի տիրապետների դէմ մի փոքրիկ խանարած ժողովուրդը: Ահա այդ տունը, որով դու ուրախ ես, չէ՞ որ կարող է զոհ զնալ պատերազմական կրակին»: Իսկ կինը պատասխանում է, թէ ինքը իւր ձեռքով տունը կրակ կտայ, եթէ իւր սիրոր այն աստիճան ստորանայ, որ բաւականանայ միայն նիւթական-անցողական բարիքներով: Կառավարութիւնը մի ձող է անկում ձանապարհի վրա և ձողի ծայրին մի զիսարկ ցցելով, հրամայումէ որ անցորդները երկրպագեն զիսարկին՝ ի նշան պետական հաւատարմութեան: Ժողովուրդը ծաղրաբար է վերաբերում դէպի այդ օտարոտի հրամանը և ամենքը սկսում են խցյու տալ այն ձանապարհից: Իսկ կանայք ու երեխաները ժողովում ձողի շուրջը, և ծաղրաշարժ պատմածքներ են յօրինում թէ ձողի և թէ ձողատիրոջ մասին: Նոյն իսկ ժողովրդի ամենագուեհիկ խաւերը արդէն հասկացել են իրանց իրավունքը և պատրաստ են ոտքի կանգնելու: «Մինչև անգամ սառցարանների ստորոտներում—պատմում է Մէլխտալը—գտայ ես մարդաբնակ խրճիթներ և ամեն տեղ նկատում էի ատելութիւն դէպի բռնաւորները, որովհետև նոյն իսկ կեանատելութիւն գտայ, ուրիշ բառից մասին նոյն Մէլխտալը պատմում է. իսկ մի ուրիշ գաւառի մասին նոյն Մէլխտալը պատմում է. «Արդէն հնչել էր այդ հովիաներումնոր սարսափների ձայնը... Ես գտայ, որ այդ շիտակ հոգիները վրդովւած են կառավաես գտայ, որ այդ շիտակ հոգիները վրդովւած են կառավաես գտայ, որ այդ շիտակ հոգիների պատճառով: Նրանք մեկնում էին ժամանակակից կոշտացած ձեռները, պատերից իշեցնում էին ժամանակակից կոշտացած ձեռները, պատերից իշեցնում էին նրանց աչքերը...»:

«Վիլհելմ Տէլլը» արդէն Շիլէրի վերջին նշանաւոր աշխատութիւնն է: Շիլէրը այժմ հասել էր ամենաբարձր զրութեան՝ թէ հայեացքների և թէ գեղարւեստի տեսակէտից: «Աւազակներից» մինչև «Վիլհելմ-Տէլլը» մի երկար և չափազանց դժւարին ճանապարհ էր, որը սակայն անցաւ Շիլէրը մեծ յաջողութեամբ: Տաղանդը, ի հարկէ, երկուսի մէջ էլ նյոն բնածին ցյժն է: Տարբերութիւնը միայն զարդացման աստիճանի մէջն է: Մինչդեռ «Աւազակների» հերոսը մի անփորձ և թերուս, թէև ազնիւ և քաշարի երիտասարդ է, շփոթւած ու մոլորւած, որ անտառների մէջ է փրկութիւն որոնում, սրտ հակառակ՝ «Վիլհելմ-Տէլլի» մէջ ներկայանում է մեր առաջ մի խելօք, աշխատասէր և անվեհեր ժողովուրդ, որը ամենապայծառ զիտակյութեամբ պահանջումէ իւր անձեռնմխելի իրաւունքները և մեծ տոկունութեամբ ու զօրեղ կամքով իրագործում է իւր սրբազն ծրագիրը: Գեղարւեստի մասին խօսեն անգամ աւելորդ է: «Աւազակների» գեղարւեստը շատ թոյլ է, անմշակ և փայր ի վերոյ: Իսկ «Վիլհելմ-Տէլլի» մէջ իւրաքանչիւր բառ, իւրաքանչիւր հնչիւն յցյց է տալիս փորձեած ու բանիմաց վարպետի ձեռք: Շիլէրը հասել էր իւր կոչման մէջ շատ բարձր կէտին, սակայն չէ կարելի ասել, թէ նա չէր կարող դրանից աւելի բարձր աստիճանի հասցնել իւր գրից: Բնդհակառակը. գեռ Շիլէրի հոգին շատ զօրեղ էր, գեռ նա շարունակում էր զարգանալ, և ով զիտէ թէ ուր կարող էր հասցնել բանը, եթէ միայն...



Հիւանդ բանաստեղծի ննջարանը:

## XXVI.

Վաղուց յանկանումէր Շիլէրը Բերլինը տեսնել, և այդ յանկութեան մանաւանդ առիթ էր տալիս նրա բարեկամ գերասան իֆլանդը իւր նամակներով: Վերջապէս ապրիլին ճանապարհ ընկաւ բանաստեղծը ընտանիքի հետ միասին: Սյատեղ ահա Շիլէրը պարզ տեսաւ, թէ որքան մեծ էր իւր ժողովրդականութիւնը: Ի պատիւ բանաստեղծի մեծ յաջողութեամբ ներկայացրին «Վալլէնշտէյնը», «Օրլէանի կոյսը» և «Մեսսինայի հարսնացուն»: Առաջին պիեսի մէջ զիխաւոր հերոսի գերը խաղումէր իֆլանդը և, գործ դնելով իւր ամբողջ տաղանդը, մեծ բաւականութիւն էր պատճառում հեղինակին և ոգեսորւած հասարակութեան: Ամենքը հետաքրւումէին բանաստեղծի անձնաւորութեամբ: Նշանաւոր արւեստագէտներ և փիլիսոփաներ նորոգումէին հին ծանօթութիւնը բանաստեղծի հետ: Թագաւորազն Ֆերդինանդի կողմից Շիլէրը հափրւեց ձաշի: Իսկ Լուիդա թագուհին, որ Շիլէրի ընթերցող

աշխատէ նրա համար: Շիլլէրը Բերլինում՝ ժամանակ արդէն խնդիրը արձարձւումէր, և այդ ծրագիրը մանաւանդ պաշտպանութիւն էր գտնում թագուհու կողմից: Վէյմար վերադառնալուց յետոյ բանաստեղծը ստացաւ Բերլինից կիսապաշտօնական առաջարկութիւն: Թագաւորը նշանակումէր նրան երեք հազար տալէր տարեկան ռոճիկ: Բայցի սրանից Շիլլէրը պաշտօն պիտի ստանար համալսարանում առանձին ռոճիկով: Ի միջի այլոց նրա տրամադրութեան տակ էին գնում պալատական շքակառքերից մինք:

Շիլլէրը լաւ էր հասկանում այդպիսի պատւաւոր առաջարկութեան արժեքը և գիտէր, թէ որքան նպաստաւոր է իւր համար այդ նոր բանը նիւթական տեսակէտից: Բայց մի քանի ուրիշ հանդամանքներ գժւարացնումէին խնդիրը: Շիլլէրը նկատի ունենալով իւր տկարութիւնը, վախենումէր, լէրը նկատի ունենալով իւր տկարութիւնը, մի զույէ Բերլինի խիստ եղանակը աննպաստ ազգեցութիւն անէ իւր առողջութեան վրա: Միւս կողմից Բերլինը գուր չէր դալիս ափիկին կոտային, և այդ հանդամանքին լուրջ ուշադրութիւն էր դարձնում սիրող ամուսինը: Վերջապէս Շիլլէրը էր կամենում վիրաւորել Վէյմարի դքսին, որը միշտ առիթ էր կամաց ապացույցնելու իւր բարեկամական զգացմունքը էր զանում ապացույցնելու իւր բարեկամական զգացմունքը: Այնուամենայնիւ Շիլլէրը գէպի Շիլլէրը և նրա ընտանիքը: Այնուամենայնիւ Շիլլէրը ի նկատի առաւ, որ ինքը պարտաւոր է հօգալ ընտանիքի ապագան և մի բան յետ գցել սև օրւայ համար, երբ ինքը մեռած կլինի, կամ առնեազն անընդունակ կլինի աշկամ կազմութիւնը կազմում են ընդհանուր մարդկութեան սեփականութիւնը, որը չէ կարելի շահագործել որևէ մի ժողովրդի չնչին - նիւթական պիտոյքների համար՝ ի վես ընդհանուր մարդկութեան:

Ներից մէկն էր, յանկութիւն յայտնեց, որ բանաստեղծը առմիշտ տեղափոխւէ Բերլին, մայրաքաղաքի բեմին մօտ լինելու համար: Թէ թատրոնում և թէ տներում և փողոցներում խօսակցութեան առարկան Շիլլէրն էր: Ամենքը գովում, փառաբանումէին նրան, երբէք չէր լսում որևէ անախորժնկատէան նրանքի կամ գրւածքների մասին: Բանկատողութիւն նրա կեանքի կամ գրւածքների մասին: Բանաստեղծի փառքը գաղաթնակէտին էր հասել արդէն, թէ նրա հոգոյ խորքերում տակաւին անսպառ դանձեր էին թաղնւած...

Շատ ժամանակ էր արդէն, որ Բերլինում յանկանումէին գէպի իրանց քարշել Շիլլէրին և Գէօտէին: Բայց սրանցից ոչ մէկը չէր յանկանում այդպիսի քայլ անել: Մեր բանաստեղծներին գուր չէր գալիս այն ուղղութիւնը, որ տիրապետում էր Բերլինում: «Նւէրների» մէջ Բերլինի գործիչները աչ ու ձախ քարկոծւած են և ոչ մէկը գովասանքի չէ արժանացած: Գէօտէն ու Շիլլէրը գանգատումէին, թէ Բերլինում ամեն բանի վրա նայում են նիւթական շահէ առէսակէտից: Ժամանակակից ընդհանուր ողին խիստ չնչին անդեղարւեստական է: Իդէալների և բնաւորութիւնների փոխարէն արւեստագէտները աննպատակ և անմիտ պօրտրետներ էին նկարում, այլաբանութեան տեղ տիրապետում էր հասարակ ծաղրաբանութիւնը, հանրամարդկան սկզբունքներին փոխարինումէին թթու: Նախապաշտում մունքները: Շիլլէրի և Գէօտէի համոզմամբ գեղարւեստը ինչպէս և գիտութիւնը կազմում են ընդհանուր մարդկութեան սեփականութիւնը կազմում են ընդհանուր կազմութիւնը մարդկութեան սեփականութիւնը, որը չէ կարելի շահագործել որևէ մի ժողովրդի չնչին - նիւթական պիտոյքների համար՝ ի վես ընդհանուր մարդկութիւնը:

Այնուամենայնիւ բերլինցիք հասկանում էին թէ որքան մէծ օգուտ կունենայ գեղարւեստը և մասնաւորապէս թատրոնը Բերլինում: Եթէ Շիլլէրի նման մի նշանաւոր հանձար

կան զգացմունքի համար: Երբ լսեցի, թէ Զեղ հրաւիրել են Բերլինից, ես ի նկատի ունենալով Զեր բարի սիրտը, սպասում էի որ Դուք հէնց այնպէս կը վարդէք, որպէս այժմ անում էք: խնդրում եմ Զեղ՝ գրել ինձ, թէ արդեօք ինչ միջոցներ են հարկաւոր, որ հնարաւոր լինի գնել Զեր ընտանիքը մի այնպիսի դրութեան մէջ որ Դուք սահպւած չ'լինէք զզալու թէ ինչու փոքրիկ շրջանի պատճառով զրկւեցիք մեծ ասպարիզից: Պարզապէս բացատրեցէք ինձ Զեր ցանկութիւնը: Ընդունեցէք բարես»: Շիլլէրը պատասխանեց, թէ ինքը բոլորովին բաւական կ'լինի, եթէ իւր ռոճիկի վրա 400 տալէր աւելացում լինի: Դուքսը յայտնեց իւր համաձայնութիւնը և աւելացրեց. «Ամենաթանկագին բարեկամ, ընդունեցէք իմ անկեղծ շնորհակալութիւնը: Ես անսահման ուրախ եմ, որ կարող եմ Զեղ ընդ միշտ մերը համարել: Ես շատ կը ցանկայի, որ բերլինցիք էլ իրանց կողմից նպաստեին Զեր դրութեան բարւոքելուն, առանց մեզ ի նկատի ունենալու»: Եւ այդպէս Շիլլէրը որոշեց մնալ Վէյմարում:

Այժմ արդէն բանաստեղծը կարող էր նիւթապէս ապահոված համարւել: Տարեկան ութ հարիւր տալէր հաստատ ռոճիկ էր ստանում: Կարող էր գրել իւրաքանչիւր տարի մի պիէս, որը կը բերէր մօտ 700 տալէր: Բայի այդ՝ նրա աշխատութիւնների հրատարակութիւնից բաւական եկամուտ էր ստացւում: Իսկ ամբողջ ծախսը հասնում էր տարեկան 1300 տալէրի: Ուստի բանաստեղծը յշյս ունէր այժմ մի բան յետաձգել ընտանիքի ապագայի համար: Ահա թէ ինչ է գրում նա այդ ժամանակ Հումբուլին. «Իմ զրամատիկական զրւածքների վերաբերմամբ ես համաձայնութիւն եմ կայացրել զրավածառ կօտապայի և թատրօնական բեմերի հետ: Այդպիսով հնար ունեմ մի բան ձեռք բերել իմ երեխանների համար և եթէ ես կ'ենդանի մնամ մինչև յիսնամեայ հասակս, յոյս

ունիմ անկախ զրութիւն պատրաստել փոքրիկներիս հտմար: Ինչ էլ լինի, մենք ապրում ենք շատ ախորժելի դրութեան մէջ, և ես գեռ ոչ մի բոպէ չեմ զզացել, որ հրաժարւել եմ Բերլին տեղափոխւելուց»:

Տարաբաղդաբար Շիլլէրը այլևս չէր կարողանում աչքի լնկող դործ սկսել: Ճանապարհորդութիւնը կրկին զարթեցրել էր նրա սրտում ազատ բնութեան սէրը, մեծ բանաստեղծը նորից երեխայ էր դարձել և հայրենի լեռներն ու անտառները կ'ենդանացել էին նրա երևակայութեան մէջ: Բանաստեղծը մոռացութեան տալով մեծ ու բարդ գրամանները, կարողանում էր միայն ստեղծել մանկական պարզ և անպահպահ փոքրիկ պատկերներ, որոնք սակայն խորքում շատ մեծ միտք էին պարունակում: Այդպիսինների թւին է պատկանում, օրինակ «Ալպեան որսորդը», ուր մայրը աշխատումէ համոզել զեռահաս որդուն՝ միայն հալալ աշխատանքի վրա յշյս գնել, բայց որդին չէ ուզում լսել այդ մասին.

Կուզե՞ս տանել փոքրիկ դառնին՝

Արածացնել զետի ափին:

Որպէս խեղճ է մեղմ ու չեղիկ,

Ուտումէ միայն խոտ ու ծաղիկ:

— Ո՞, մայրիկ, ոչ, ես պիտի գնամ;

Լեռների վրա այծեամ որսամ:

Տար կովերի ուրախ հօտը,

Դէպ՝ անտառի կանանչ խոտը,

Եւ զանգակի քաղցր ձայնին՝

Ներդաշնակիր քո մեղեղին:

— Ո՞չ մայրիկ, ոչ, ես պիտի գնամ,

Ժայռերի վրա այծեամ որսամ:

Դու չե՞ս ուզում այգում գործել,

Մառ ու ծաղիկ հանդիսա չըել.

Բարձր լեռանց գագաթները  
Կը կոտրատեն քո ոտները:  
— Ո՞հ, հանգիստ թող ծաղիկները,  
Հրապուրումն ինձ լեռները:  
Եւ պատանին էլ չսպասեց,  
Նետը ձեռին առաջ դիմեց,  
Վաղեց, գնաց, հասաւ վերջը,  
Սարսափելի լեռնակիրձը:  
Նրա քայլւածքից խիստ սարսափած,  
Փախաւ այծեամին կրակ դարձած:  
Եւ ժայռերի մերկ ծայրերով  
Արշաւեց նա ահ ու դողով,  
Հսկայական ճեղքւածքներից,  
Թռիչք էր անում վտանգալից:  
Իսկ յետեից քաջ որսորդը  
Հետեւումէր՝ բռնած նետը:  
Ապառաժի հասաւ ծայրին,  
Խորխորատը բացւեց աչքին,  
Խեղձ այծեամին բռնեց աշը,  
Աչքի առաջ տեսաւ մահը.  
Դէպի առաջ՝ խոր անդունզը,  
Իսկ յետեից քաջ որսորդը:  
Եւ վշտալի լուռ հայեացքով  
Նայեց դէպ՝ յետ աղերսանքով,  
Կանգնեց որսորդն նետը լարած,  
Այծեամիկին նշան դրած:  
Սակայն յանկարծ լեռան ողին  
Մեր օրսորդի փայլեց աչքին:  
Նա տարածեց իւր հովանին,  
Պաշտպանելով իւր այծեամին,

Եւ գառնալով քաջ որսկանին,  
Հարցրեց նրա խղճի ձայնին.  
— Լայն աշխարհքում տեղ չէս գտնում...  
Իմ փարախից ի՞նչ ես ուզում...

Բայց շուտով կրկին Շիլլերի ուշադրութիւնը առիթ  
գտաւ զբաղւելու ամենալուրջ հարցերով, թէև մի փոքր ուրիշ  
կերպով:

Ցէլտէրը Բերլինից մի յօդւած էր ուղարկել Գէօտէի  
վրա, որի մէջ խօսելով երգասայցութեան ճեմարանի մասին,  
այն միտքն էր պաշտպանում, թէ մուղիկայի առաջդիմութեան  
կարելի է նպաստել եկեղեցական երգասայցութեան միջոցով և  
թէ հէնց այդ պատճառով կառավարութիւնը պիտի աշխատէ  
մօտեցնել միմեանց արւեստը և կրօնական զգացմունքը: Այդ  
յօդւածը խիստ հետաքրքրեց Շիլլերին, որը իսկոյն մի նամակ  
դուեց Ցէլտէրին: Շիլլերը պնդումէր, թէ եկեղեցական երգա-  
սայցութիւնը չէ կարող որևէ նշանակութիւն ունենալ երաժշ-  
տական արւեստի զարգացման համար, ուստի ինդրին պէտք  
է նայել բոլորովին հակառակ տեսակէտից: Պէտք է հարցը  
այն ձեռով դնել, թէ ինչ օգուտ կստանայ կրօնը, եթէ կրօնական  
հիմնարկութեան մէջ մուղիկա մտցնեի: Ուրեմն ոչ թէ կրօնն է  
օգնում մուղիկային, այլ մուղիկան՝ կրօնին: Ահա այդ տեսակէտից  
Շիլլերը անհրաժեշտ է համարում, որ պետութիւնը կամ եկե-  
ղեցին գործին նիւթապէս օգնեն: Շիլլերը աւելացնումէ, թէ  
Էռնել չէ կարող այլու այն որոշ-նեան մէջ հաաց ոչի մէջ մնալ-  
այժմ ժամանակ է, ուստի նա պիտի դիմէ մուղիկայի օգնութեան,  
եթէ կամենումէ պահպանել իւր նշանակութիւնը: Բերլինը  
կարողացել է սնահաւատութեան խաւար դարեշրջանում վառել  
կրօնական աղատութեան խելացի չահը: Այժմ էլ նա պար-  
տաւոր է միացնել զեբհ-նի-նը լոյն հետ, վերակազմելով և

աղնւացնելով կրօնը: Որպիսի՞ սրամտութեամբ թափանցումէ մարդարէ -քանաստեղծը ապագայ մարդկութեան ամենամեծ խնդրի մէջ...

Շուտով Շիլլէրի կինը պիտի ծննդաբերութիւն ունենար: Տիկինը առանձնապէս վստահութիւն ունէր Ենայի մի բժշկի վրա, ուստի ժամանակաւորապէս տեղափոխւեցին Ենա: Մի երեկոյ կառքով զբօննումէին քաղաքի շրջակայքում: Շիլլէրը, թեթև հագնւած լինելով, սաստիկ մրսեց և տուն վերադառնալով անկողին մտաւ: Մի քանի օր շարունակ նա ստամոքսի սաստիկ ցաւ էր զգում: Երբ նա տան վերին յարկում անկողնի մէջ սրտնեղումէր, կինն էլ պառկած էր ներքեկ յարկում: Շուտով բերին հիւանդ բանաստեղծի մօտ նորածին աղջկան, որին ընդունեց նա մեծ բաւականութեամբ: Փոքը ժամանակից յետոյ բանաստեղծը կաղղուրւեց և Ենայում մի քանի ուրախ շաբաթներ անցկացնելով, վերադարձաւ կրկին Վէյմար, ուր մի պատահական տօնախմբութիւն գրաւեց նրա ուշադրութիւնը:

Վէյմարում պատրաստումէին ընդունելու ոռւսական մեծ իշխանուհի Մարիա Պավլովնային, իւր ամուսնոյ՝ Վէյմարի թագաժառանդի հետ, որը հէնց նոր ամուսնացել էր Պետերբուրգում: Բարձրաստիճան հիւրերի ընդունելութեան առիթով Գէօտէն կամեցաւ մի բանաստեղծութիւն պատրաստել, բայց նրան չյաջողւեց: Ուստի զիմեց նա Շիլլէրին, խնդրելով, որ մի փոքրիկ պիտի գրէ, որը կարելի լինի բեմ դնելի ի պատիւ նորապսակների: Սկզբում Շիլլէրը չէր ուզում համաձայնել, որովհետեւ սովորութիւն չունէր պատւէրի համեմատ բանաստեղծութիւններ շարադրելու: Բայց Գէօտէն

չվիրաւորելու համար համաձայնեց փորձել: Շիլլէրը մի առանձին ընդունակութիւն ունէր՝ ամենասովորական երկոյժներից այլաբանութեան միջոցով բարձր տեսարաններ ստեղծել: Միաժամանակ նա աշխատումէր, որ նիւթը կապ ունենայ նորահարս իշխանուհու կեանքի և ամուսնական քայլի հետ: Հիւսիսային իշխանուհին, թողնելով կայսերական ծնողների ընդար-



Մեծ իշխանուհի Մարիա Պավլովնա:

ձակ աշխարհը, գալիս էր՝ փոքրիկ, բայց լուսաւոր, երկիրը բաղդատորացնելու համար: Չորս օրւայ ընթացքում ստեղծեց բանաստեղծը մի փոքրիկ, չքնաղ ու զեղեցիկ պիէս՝ «Գեղեցիկ արւեստների բարեմաղթութիւնը» վերնագրով: Նորապսակները եկան և տօնախմբութիւնները սկսեցին, ուր երաժշտութիւնը, հրավառութիւնը և ամեն տեսակ ուրախութիւնները միմեանց հետ մրցումէին: Չորրորդ օրը նրանք թատրօն գնացին, ուր մեծ բաւականութեամբ լսեցին արւեստների բարե-

մաղթութիւնները։ Այդ բանաստեղծութիւնը մի տեսակ գեղարւեստական կտակ է, որ բանաստեղծը կազմեց մահւան նախօրեակին... որովհետեւ դա Շիլէրի վերջին աւարտած աշխատութիւնն էր...

Տօնախմբութիւնները վերջանալուց յետոյ այլևս Շիլէրը իրան լաւ չէր զգում։ Նրա Փիզիկական ոյժերը շոշափելի կերպով պակասել էին։ Երեսի գոյնը այնպէս դալկացած էր, որ տեսնողները սարսափումէին։ Նրա քայլերը տատանւումէին և ընթացքը անհաստատ էր։ Ոյժերը վերականգնելու համար նա մի ձի գնեց, որ առաջիկայ գարնան կարողանայ երբեմն զրունելու գնալ։ Բայց առ այժմ ձմեռը խիստ էր, ուստի բանաստեղծը չէր կարողանում կազդուրել։ Ջրօրհնէնքին երկու բանաստեղծները միաժամանակ հիւանդացան և անկողին մտան։ Երիտասարդ գիտնական ֆոսր չէր հեռանում Շիլէրի անկողից և նոյն իսկ գիշերը արթուն մնալով հսկումէր բարեկամին։ Հիւանդին տանջումէր մանաւանդ աղիքների ցաւը։ Նա սոված էր մնում, ուստի և աւելի ուժասպառ էր լինում։ Այսուամենայնիւ նա իրան բաւական հանգիստ էր զգում հոգեպէս։ Իսկ բոլորվին մոռանումէր ցաւը, երբ երեխաններից մէկը, մանաւանդ ամենափրեկը, հայրիկի մօտն էր գալիս։ Մի օր երբ հիւանդը կամենումէր սենեակում մի քանի քայլ անել, ֆոսր բռնեց նրա կռներից, մի գուցէ վայր ընկնէ։ Շիլէրը հարցրեց, թէ արդեօք ինքը արդէն այնքան թշոյլ է, որ կարող է վայր ընկնել։ Ապա դողդողալով մօտեցաւ նա սեղանին, մաքրեց մոմակալը և կատակով բացականչեց։ «Ֆօս, ես շատ էլ վատ չեմ, տես ինքս իմ ձեռով մաքրեցի ճրագը»։ Կէսօրից յետոյ նա իրան անհանդիստ զգալով, ինողեց կնոշը՝ հեռանալ սենեակից։ Տեսնելով, որ կինը չէ կամենում, նա նորից ու նորից պահանջեց։ Հազիւ Լոտտան գռնից գուրս գնաց, բանաստեղծը ուշաթափւելով ընկաւ ֆոսի գիրկը։ Հիւանդը նախագուշակե-

լով ուշաթափութիւնը, կամեցել էր, որ կինը ներկայ չկանի, մի գուցէ վախենայ։ Ֆօսի օդնութեամբ սթափւելով, նա հարցրեց, թէ արդեօք Լոտտան նկատեց։ Երբ ֆօսը բացասական պատասխան տւաւ, նրա տրամադրութիւնը կրկին լաւացաւ։ Մի քանի օր ծանր գրութիւնը շարունակւեց։ Մի երեկոյ Շիլէրը, չնայելով ծանր զրութեան, սկսեց համոզել ֆօսին, թէ այս գիշեր նրա ներկայութիւնը աւելորդ է։ Բայց ֆօսը ոչ մի կերպ չհամաձայնեց մէնակ թողնել նրան և հասկացաւ հեւանդի խորամանկութիւնը։ Շիլէրը զիտէր, որ ֆօսը հրաւիրւած է դիմակահանդէս, և չէր կամենում, որ նա այդ զւարձութիւնից զրկւի, Բայց աղնիւ երիտասարդը բացէ ի բաց հրաժարւեց դիմակահանդէսից։ Շիլէրը տեսնելով նրա յամառութիւնը, սեղմեց նրա ձեռքը և սկսեց կատակներ անել։

Մի քանի շաբաթից յետոյ հիւանդը նորից իրան լաւ զգաց և գնաց Գիօտէին այցելութեան, որը դեռ չէր կարողանում գուրս գալ սենեակից։ Երկու բանաստեղծները փաթաթւեցին միմեանց պարանոցով և առանց մի բառ արտասանելու, մի քանի ըռպէ լոելեայն միմեանց աչքին նայեցին։ Ոչ մէկը չէր կամենում նորոգել անցեալ ծանր օրերի յիշատակը...

Շուտով Շիլէրը սկսեց զրել մի դրամա ուռսական հերոս «Ինքնակոչ Դիմիտրիի» կեանքից։ Այդ դրաման, ի հարկէ, պիտի չի երջացնէր նա։ Բայց այն մի քանի կտորները, որ կարողացել է բանաստեղծը զլուխ բերել, ցոյց են տալիս, որ «Ինքնակոչ Դիմիտրին» անկասկած գերազանցելու էր թէ «Վալլէնշտէյնին», թէ «Օրլէանի կոյսին» և թէ Շիլէրի բոլոր միւս ստեղծագործութիւններին։

Գուցէ վաղաժամանակ տնից գուրս գալն էր պատճառը, որ հիւանդութիւնը շուտով նորոգելով և աւելի ևս լուրջ կերպով։

Ուշագրութեան արժանի է, որ ուղիղ այդ ժամանակ Շիլէրը մտածումէր մի շարք հեռաւոր ճանապարհորդու-

թիւններ կատարելու մասին։ Նա շատ էր ցանկանում Շվեյցարիան տեսնել և Վիլհելմ Տէլլի հայրենիքը համեմատել իւր նկարագրածի հետ։ Եւ երբ նրա շրջապատօղները այդ մասին ծրագիրներ էին կազմում, նա ասաց. «Այդ ծրագիրների համար ի նկատի ունեցէք ոչ աւել, քան առաջիկայ երկու տարին»։ Ի միշի այլոց կամենումէր տեսնել անտառապատ Բառէրբախը, ուր անցուցել էր նա ազատութեան առաջին տարին։ Այնտեղից կկամենար նա դնալ Շվարիա՝ սիրելի քոյրերին տեսնելու համար։ Վերջապէս ցանկանումէր տեսնել Միջերկրական ծովը, կամ թէ գոնէ առհասարակ որևէ ծով։ Մինչև Միջերկրականի ափը շատ թանկ կնստէր (որովհետեւ այն ժամանակ երկաթուղի չկար), ուստի մտածեց նա Կօպէնհագէն դնալ «Հիւսիսային ծովը» տեսնելու, և յանկարծ ոգեորւերով բացականչեց. «Ես յոյս ունեմնոյն իսկ Զինսատան դնալու։ Այդ միտքը դժւար երագործելի է, սակայն եթէ աշխատէք իմ յոյսը բոլորովին կտրել, ես ինձ անբաղդ կղդամ»։

Այդպէս յոյսերով լիքն էր դեռ հիւսնդ բանաստեղծը, մինչդեռ շրջապատօղները գուշակումէին նրա մօտալուտ մահը։ Առհասարակ բանաստեղծի բնաւորութեան մէջ այժմ ամեն բան մի տեսակ վեհութեամբ էր թափանցւած։ Նա վերին աստիճանի սիրալիր էր ամենքի հետ։ Աննկարաղբելի մեղմութեամբ էր ներշնչւած նրա ամբողջ էութիւնը, որ արտայայտումէր նրա բոլոր խօսքերի և շարժումների մէջ։ Մի տեստկ զուտ երկնային խաղաղութիւն էր նկատում նրանում։ Հերդէրի դրած «Մարդկային ցեղի պատմութիւնը» Շիլլէրը առաջ չէր հաւանում։ Իսկ այժմ նոյն գիրքը կարդալով, ասաց. «Այդ գիրքը ինձ վրա այժմ բոլորովին ուրիշ տպաւորութիւն է անում և ինձ շատ է դուր գալիս»։ Երաժշտութեան սէրը նոյնպէս աւելի սաստկացել էր։ Բայց առանձնապէս նա միիթարութիւն էր դտնում իւր Երեխաների

շրջանում։ Աեղան նստելուց փոքրիկները սեղմումէին դէպի նրան աչ ու ձախ կողմերից և իւրաքանչիւրը ինքն էր կամենում հայրիկի կողքից կպած լինել։ Փոքրիկ կարօլինան ամեն տեսակ խաղեր էր սարքում հայրիկի հետ։ Հիւսնդ բանտառեղծը բարձրացնումէր ամենից փոքրին՝ էմիլիային և նայելով նրա անմեղ աչերին, կարծես կամենումէր զգալ իւր կեանքի շարունակութիւնը և այդպիսով հաշտւել մահւան հետ։

Վերջին անգամ իրան առողջ զգալով, նա նորից եռանդուն կերպով զբաղւեց «Խնքնակոչ Դիմիտրիով» և յոյս ունէր անպատճառ վերջացնել։ Որքան ուրախացաւ նա, երբ կրկին անգամ կարողացաւ ֆօսի հետ զբօնելու դնալ։ Հազիւ բողբոչող ծառերը աւետումէին նրան մօտալուտ գարունը և նոր կեանք էին ներշնչում հիւսնդ բանաստեղծին։ Դքսուհին, զքսի մայրը և մեծ իշխանները հերթով հրաւիրումէին նրան թէ յիմելու և ուրախութեամբ լսումէին նրա հոգեղմայլ խօսակցութիւնը, աշխատումէին ըմբռնել հայր հանող առևել վէրջին հառաժայլները... Մի օր ծառաստանում քենիի հետ զբօնելով Շիլլէրը ասաց. «Ի՞նչ լաւ կլինէր, եթէ ես կարողանայի մի բան յետ գցել Երեխաներիս համար, որպէսզի նրանք ուրիշներից կախւած չլինէին, որովհետեւ այդ միտքը ինձ շատ է անհանգստացնում»։

Շուտով սկսեց Շիլլէրը կարգի բերել իւր գրամական յարաբերութիւնները, նամակներ գրեց բարեկամներին և ազգականներին, ի միշի այլոց և բրոջը, Լուիզային. «Բաւական ժամանակ է, իմ բարի ու սիրելի Լուիզա, որ քեզ չեմ զրում, բայց այդ նրանից չէ, որ քեզ մնուացել եմ, այլ որովհետեւ բոլոր ժամանակը կերպով հիւսնդ եմ եղել։ Ահա քանի ամիս է, որ ես յուսահատւած ու վհատած եմ և չեմ հաւատում, թէ կարող եմ առողջանալ։ Սիրտս այդպէս տխուր լինելով, չեմ կամենում իմ նամակներով ուրիշներին ցաւ պատ-

ճառել: Իսկ այժմ, քաջալերւելով քոյրական սիրով, նորից կապ եմ հաստատում: որը, եթէ Աստուած կամենայ, շուտով չի կտրւիր:

Ապրիլի 29-ի Երեկոյեան նա պատրաստումէր թատրօն գնալ կարօինայի հետ, երբ Գէօտէն ներս մտաւ: Վերջնս չկամեցաւ յետ պահէլ նրան թատրօնից, բայց ինքը տկարութեան պատճառով չկարողացաւ նրա հետ գնալ: Գէօտէն վերադարձաւ տուն, առանց գուշակելու, թէ ինքը վերջին անդամն էր տեսնում Շիլէրին: Ներկայացման վերջին Թօսը Եկաւ Շիլէրի օթեակը և գտաւ նրան սաստիկ տենդի մէջ, այնպէս որ ատամները կրծտումէին: Տուն համնելուն պէս նա մի փունչ խմեց, և փոքր ինչ համուարտեց: Մայիսի մէկին առաւտեան, Թօսը գալով Շիլէրի մօտ, գտաւ նրան բազմոցի վրա պառկած, կէս քնած, կէս զարթուն: «Ահա ես կրկին պառկած եմ», ասաց նա նւազած ձայնով: Փոքրիկները միմեանց ետևից մօտենում ու համբուրումէին հիւանդ հայրիկին, բայց նա, կարծես, այլես չէր հետաքրքրում նրանցով: Մի քանի ժամաց յետոյ նա իրան լաւ զգաց և սկսեց ուրախ խօսակցել շրջապատվածների հետ: Նա բոլորովին չէր վախենում մահից և ասումէր. «Մահը վատ բան չէ, քանի որ ընդհանուր Երեւոյթ է, որովհետեւ ում զբաղեցնումէ ընդհանրականը, սարսափ չէ ազգում իւր անձնականը»: Հաւատարիմ Թօսը կրկին կամենումէր զիշերը նրա մօտ մնար, բայց Շիլէրը բաւական էր համրով մօտ հերկացնելի էր կիշտիկների կամ ախորժելի էր իւր մօտ տեսնել միայն Լոտտային և քենիին: Յաճախ յիշումէր Վոլցողէնին, որը քաղաքից բացակայ էր: Գուցէ հիւանդ բանաստեղծը կամենումէր խօսակցել այդ վստահելի բարեկամի հետ, փոքրիկների ապագայի մասին:

Մայիսի 6-ին Երեկոյեան հիւանդը սկսեց խօսքերը շփոթել: Պատահմամբ մի լրագրի համար նկատելով, նա բացա-

կանչեց: «Դուրս տարէք այդ թերթը... Աւելի լաւ է, տւէք ինձ առասպեկներ և ասպետական պատմածքներ. միայն նրանց մէջ կարելի է նիւթ գտնել ամեն մի զեղեցիկ և վսեմ բանի համար»: Հետեւեալ երեկոյ քենիի ներկայութեամբ խօսք բացեց նա գեղարւեստի հիմնական հարցերի մասին, բայց կարօինան աշխատումէր, որ նա քիչ խօսէ և հանգիստ պահէ իրան: Նկատելով այդ, Շիլէրը ասաց. «Դէհ, քանի որ այլես ոչոք չէ հասկանում ինձ և ես ինքս էլ ինձ չեմ հասկանում, ուստի կը լռեմ» և լռեց... Իսկոյն նա քուն մտաւ և սկսեց Երազի մէջ խօսալ: «Մի՞թէ այդ է երկինքը», բացականչեց նա յանկարծ և նորից զարթնեց և մեղմ ժպտալով դէպի վերև նայեց... Ապա նկատելով, որ քենին սենեակից կամենումէ դուրս գնալ, նա ասաց. «Ես յօյս ունեմ, որ այս զիշեր լաւ կը քնեմ, եթէ Աստուած կամենայ»: Այդպէս անցաւ դարձեալ Երկու օր: Ամսի 8-ին ամբողջ օրը նա հանգիստ էր և շարունակ ֆնջում էր: Յանկարծ նա խնդրեց բերել իւր մօտ փոքրիկ էմիլիային, բռնեց նրա ձեռքը և աչքերին նայելով սկսեց լաց լինել: Շրջապատող կանանց հարցին, թէ ինչպէս է զգում իրան, նա խորհրդաւոր կերպով պատասխանեց. «Շատ լաւ...» Արդեօք հասկացան, թէ հիւանդ բանաստեղծի լեզով ինչ է նշանակում „Շատ լաւ“: Ապա նա բացել տւաւ լուսամտի վարդշրջը, աչքը գցեց դէպի շառագունած հօրիզոնը, ուր ար եւր մայր էր մտնում...

Ի՞նչ պատկերներ նկարեցին բանաստեղծի հոգոյ մէջ գալկացած արեգի վերջին ճառագայթները... Ի՞նչ տեսարաններ ներկայացան նրա աչքերի առաջ... Ահա Նէկտար գետը կրկին գուրս է թռչում Սև-Լեռների կրծքից, և ոլորւում է կանաչաղարդ հովիտներով: Ահա քաջարի Գասպարը զբաղւած է իւր ծառաստաններով, իսկ մայրիկը մելամաղձոտ դէմքով սպասումէ միակ որդոյ վերալարձին: Ահա Երիտասարդ Երա-

ժիշտը տեղաւորումէ փօստային սայլակի մէջ բանաստեղծ ընկերոջ արկղները... Ահա, ահա, կեանքը սահումէ, ամեն ինչ փոխումէ ուրիշ կերպարանք է ստանում: Ահա նա՛... Նարլօտան, որի արիւնաշաղախ սրտից տակաւին հոսում է չերմ արիւնը... Բայց ի՞նչ արած, օրէնքը և պարտականութիւնը այդ են պահանջում... Արդէն բոլորը անցած է, արեր մայր է մտնում... Սակայն մի՞թէ արեղը երբեկ իսկապէս մայր է մտնում... Զէ՞ որ այդպէս միայն մարդկանց է թւում, այդ խղճալի արարածներին, որոնք սեղմած են իրանց կոպիտ զգացմունքների սահմանի մէջ: Մի՞թէ Շիլէրի կեանքը վերշացած է, մի՞թէ հանձարը կարող է անհետանալ, մի՞թէ հոգեկան ճառագայթները կարող են առ միշտ հանգչել... Ո՞չ... „Սարսափ չէ ազդում իւր անձնականը“... Եւ ահա ցոլացաւ մեծ բանաստեղծի հոգոյ մէջ տիեզերական կեանքը, անհուն և անսահման էութիւնը, լուսեղէն անձայր ովկիանուր իւր հսկայական ալիքներով: Եւ հիւանդ բանաստեղծը հոգեկան խաղաղութիւն զգալով, աչքերը կամացուկ խփեց, զլուխը բարձին դրեց և քնեց:

Միւս օրը նա երկար խօսումէր «Ինքնակոչ Դիմիտրիի» մասին: Միքանի անգամ խնդրեց Աստուծուն, որ իրան աղատէ երկար տանջանքներից: Յետոյ սկսեց համօղել Լոտային, որ առաջիկայ տարին երեխաների հւտ գնայ հանքային ջրերը:

Մայիսի 9-ն առաւօտեան նա քուն մտաւ, որը տեսեց մինչեւ ժամի տասը: Յետոյ նա գիտակցութիւնը կորցրեց և սկսեց ցնորել: «Ո՞վ է արձակել այն թնդանօթները... Ո՞վ է զեկավարում զօրքի ձախ թեր: Շղթայակասպ գնտակները բոլորովին փշումէն մարդու մարմինը... Որքան շքեղ է այդ գունդը, սպիտակ և կապոյտ»...

Բծիշկի կարգազրութեամբ վաննա զրին հիւանդին: Թէև նրան ըստ երեխյթին ախորժելի չէր այդ, բայց նա առհասա-

րակ միշտ հնազանդումէր բժշկի հրամաններին: Ապա մի բաժակ շամպան խմացրին: Յետոյ նա զլուխը դրեց բարձի վրա և հանգիստ նայեց դէպի շրջապատողները, որոնց այլես չէր ճանաչում: Վերջին անգամ նա մի անորոշ հայեցք քցեց շուրջը, կամեցաւ ինչ որ ասել, բայց չկարողացաւ նշանակել: Վերջապէս բոլորովին թուլացաւ, շնչառութիւնը խանգարւեց: Կինը չոքեց անկողնի մօտ և բռնեց ամուսնոյ ձեռքը: Կարօլինան տաքացրած բարձիներ էր գնում հիւանդի սառած ոտներին: Յանկարծ հիւանդի դէմքը այլայլւեց, զլուխը թէքւեց դէպի յետ և մի մեղմ հանգստութիւն պատկերացաւ դէմքի վրա... Ամենից մէծ երեխան, կարլը, գետնի վրա չոքած հեկեկումէր, երկրորդն էրնէստը կծկւել էր անկիւնում և լուռ արտասունք էր թափում: Իսկ փոքրիկ կարօլինան ուրախ խաղումէր, երբ յանկարծ տեսնելով հայրիկի հանգիստ դէմքը, ժպտալով բացականչեց. «Հայրիկը մեռել է», ապա լսելով մօր հեկեկանքը, ինքն էլ բռնկւեց և լաց լինելով վազեց ու մտաւ մայրիկի գիրկը...

Բանաստեղծի մահւան բօթը անմիշապէս տարածւեց, վշտացնելով անթիւ սրտեր: Փողոցում անցուղարձ անողների դէմքին նկատումէր ընդհանուր տիսրութիւն: Խւրաքանչիւր գերմանացի իւր անձնական կորուստն էր տեսնում բանաստեղծի մահւան մէջ: Միմիանցից անշատւած սրտերը, նորից համերաշխ էին գառնում ընդհանուր վշտի աղդեցութեան ներքոյ: Թատրօնը փակ էր, ոչ մի դերասան չէր կամենում բեմ դուրս գալ և հասարակութեան ոչ մի անգամ չէր մտածում զւարձութեան մասին:

Գերմանիայի բոլոր կողմերից բանաստեղծին համակրողները դիմումէին սգաւոր այրիին, ապացուցանելով իրանց ցաւսկցութիւնը խօսքով ու դործով: Դքսուհին իւր վրա


վերցրեց բանաստեղծի երեխաների դասահարակութեան գործը: Իշխան Դայլբէրզը թոշակ նշանակեց այրին: Բոլոր գերմանական թատրօններում սգահանդէներ կազմեցին, ուր ներկայացրին հանգուցեալ բանաստեղծի ողբերգութիւնները, որոնք ընդունւում էին մեծ ոգեռութեամբ: Յառաջ եկան բազմաթիւ երգեր ուստանաւորներ, որ կարդում էին հանդիսատեսների առաջ կամ զետեղում էին մամուլի էշերում: Բերլինում ներկայացրին հանգուցեալի բոլոր պիեսները: Իսկ առանձին շուքով ներկայացրին «Մեսսինայի հարսնացուն» հանգուցեալի ընտանիքի օգտին: Զանազան ծրագիրներ կազմեցին՝ Շիլլէրի որբերին ընդմիշտ ապահովելու համար:

Երբ յայտնի քանդակագործ Դանէկէրը լսեց բարեկամի մահւան լուրը, որոշեց իւր տաղանդին վայել մի ծառայութիւն մատուցանել հանգուցեալի անւան և իսկոյն գործի անցաւ: Նա պատրաստեց թանկադին մարմարինից Շիլլէրի հսկայական արձանը, որը մինչև օրս համարւում է քանդակագործութեան առաջնակարգ հրաշագործութիւններից մինք:

Վերին աստիճանի վշտացած էր Գէօտէն ընկերի մահւան պատճառով: «Ես կարծում էի, թէ շուտով ինքս ինձ կորյունելու եմ—դրում է նա—բայց ահա կորյունում էմ իմ բարեկամին... Նա չբաւականացաւ թատրօնական սգահանդէս կազմելով, ուր դրամատիկական ձեռվ դրին «Զանգի երգը», որից յետոյ Գէօտէն կարդաց իւր նշանաւոր «Մահարձանը»: Գէօտէի սիրով չը հանդարտում: Երկար մտատանշելուց յետոյ նա որոշեց մսիթարել իրան, զլուխ բերելով կիսատ մնացած «Խնքնակոչ Դիմիտրին»: Շիլլէրը բաւական ծանօթացրել էր նրան պիեսի ծրագրի հետ և խորհրդակցել էր նրա հետ մանրամասնութիւններին վերաբերեալ: Գէօտէն իսկոյն գործի անցաւ, բայց շատ չարչարւելուց յետոյ վերջապէս ըմբռնեց, թէ այդ հսկայական դրամայի ստեղծագործութիւնը միայն Շիլլէրի գործն է: «Բա-

նաստեղների թագաւորը առաջին անգամ զգաց իւր անդօրութիւնը և բոլոր ոյժով գիտակցեց, թէ ինչ է կորցրել ինքը ի դիմաց Շիլլէրի: «Այժմ ահա — զրումէ նա — ես իսկապէս զրում եմ, որ իմ վերքը անբուժելի է»...


Թաղումը տեղի ունեցաւ լցով կիրակի, կէս զիշերին: Մայիսեան մի հրաշալի զիշեր էր: Պապղուն ամպիկները խաղ էին անում ոսկեփայլ լուսնետոկի հետ, մերժ շրջապատելով



Բանաստեղծի գերեզմանատեղին:

ու ծածկելով նրա դէմքը, մերժ հեռու փախչելով և չքափայլ նորահարսին մէնակ թողելով աստղապարդ երկնակամարի վրա: Մի խումբ արւեստագէտներ և գիտնականներ անձպտուն յառաջ էին ընթանում, տանելով հանգուցեալ բանաստեղծի ածիւնը: Երբ դագաղը վայր դրին գերեզմանատանը, չքացան բոլոր ամպերը, երկնաքը բոլորովին պարզւեց և լուսնի սպիտակ ծառադայթները վերջին անգամ ցոլացին քնած բանաստեղծի դէմքի վրա: Իսկ ծառաստանի բազմաթիւ սոխակները կարծես բան էին հասկանում:... Երբէք այնպէս սրտաձմլիկ

Կերպով չեն ծլվլացել, որպէս այդ ծանր ըռապէներին: Երբ  
դադաղը իշեցրին վիրապի խորքը, մռայլ ամակերը ամեն կողմից  
հաւաքւեցին և թանձր քողով ծածկեցին ոսկեզարդ նորահարսի  
գունատւած դէմքը... Վհատած խումբը կոտրւած սրտով զի-  
մեց տուն. իսկ կենսուրախ սոխակները շարունակում էին  
իրանց սրտայցոյ երգը...



## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ա երջացնելով գրքիս հրատարակութիւնը, յայտնում ենք մեր  
շնորհակալութիւնը այն անձանց, որոնք բարոյապէս կամ նիւթապէս  
աշակցել են մեզ Եթէ չլինէին մեր այդ սակաւաթիւ բարեկամները,  
մնաք վաղուց վերջնականապէս վհատելով, խորտակւած սրտով հեռա-  
ցած կ'լինէինք մայրենի գրականութեան սարսափելի ասպարիզից...  
Իսպա իւրաքանչիւր անգամ, երբ մենք յուսահատութեան անդունդի  
ծայրն էինք հասնում, յանկարծակի յայտնուում էր մի անկեղծ բարեկամ  
և մենք նորից սիրտ էինք առնում: Եւ ահա վերջապէս իրադործւած  
է մեր համեստ նպատակը: Չիսոսելով մեր կրած բազմատեսակ զրկանք-  
ների մասին, կը յայտնենք միայն, որ այդ հրատարակութիւնը նստել  
է մեզ 3000 բուբլի (դեռ կազմն էլ չհաշւած): Այդ ծախսի միայն  
կէսն է առ այժմ ծածկւած, իսկ միւս կէսը մնում է մեր վրա իրը  
պարտք: Յոյս ունենք, որ գոնէ այժմ, այսինքն մեր գրքի հետ ի մօտոց  
ծանօթանալուց յետոյ, ընթերցող հասարակութիւնը կօգնէ մեզ այդ  
պարտքը հատուցանելու, որպէս զի մենք հնարաւորութիւն ունենանք  
հետզհետէ աւելի կատարելագործելու մեր տակաւին անվարժ գրիչը:

Առանձնապէս յայտնում ենք մեր շնորհակալութիւնը հետևեալ  
անձանց. տ. Ծ. Կաճկաճեանին, տ. Մ. Տէր-Միքայէլեանին, օր. Ինկ-  
օվկսէփեանին, պ. Ա. Աշկերտանին, պ. Հ. Աշկերտանին, պ. Յ. Աշկերտանին,  
պ. Յ. Ադամեանին, բժշկապետ Աղասարեանին, բժշկապետ Բու-  
դուղեանին, դօկ. Աշկերտ Տէրտէրեանին, բանաստեղծապրօֆ. Ամբատ  
Շահազեղին, ինժ. առել. Զահիմախսազեանին, Իներլինի ուսանող  
Ալէքսանդր Պողոսեանին և մեր բոլոր ազնիւ բարեկամներին...

Ա. Թարույեանց.



ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ


- 1) Երկու վէպիկներ, Բագու, 1887 (սպառ.) . . . . . 20 կ.
- 2) Հայ ժողովրդի արհեստագործութիւնը, Թիֆլ. 1898 (սակաւ) . . . . . 40 կ.
- 3) Ընտանիքի կեանքը, Բագու, 1899 (սպառ.) . . . . . 20 կ.
- 4) Գէօտէ, Թիֆլ. 1901 . . . . . 30 կ.
- 5) Շիլէք. Օրլէանի կոյսը, Թիֆլ. 1901 (սակաւ.) . . . . . 20 կ.
- 6) » Վիլհէլմ Տէլլ, Թիֆլ. 1901 . . . . . 15 կ.
- 7) » Աւագակներ, Բագու, 1902 . . . . . 15 կ.
- 8) Բանաստեղծ—հղալիստ. հատ. I. . . . . 1 ր. 50 կ.
- 9) » » հատ. II. . . . . 1 ր. 50 կ.
- 10) Թառայեանց. Թագնւած կայծեր, դրամա, 5 զործ. 6 պատկ.

(Եքեղ, պատկերազարդ հրատարակութիւն) Մամուլի տակ է:

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

- 1) Զուդէրման. Հալրենական տուն, դրամա 4 զործ.
- 2) » Սօդօմի կործանումը, դրամա, 5 զործ.
- 3) Բրանդէս. Հիւր, դրամա, 2 զործ.
- 4) Բիօրնսօն. Զեռնոց. դրամա, 3 զոր.
- 5) Բարիէր. Մարմարեայ գեղեցկութիւներ.
- 6) Թառայեանց. „Արշալոյս“, ողբերգութիւն 4 զործողութեամբ.
- 7) » » «Հասարակական զանգակահար» (Ա. Կածկածեան).

Բոլոր գրքերը և հեղինակի հասցէն կարելի է ստանալ Բագրի և Թիֆլիսի  
հայ գրավաճառներից:



4933

83.092ChE